

ISSN 1829-4383

Արցախի պետական համալսարան
Арцахский государственный университет
Artsakh State University

Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета

Artsakh state university
PROCEEDINGS



ՊԵՐՎ 1 TOM 1 VOLUME 1

2018

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

СОЦИАЛЬНЫЕ НАУКИ SOCIAL SCIENCES

Ստեփանակերտ

Հրատարակվում է 1998թ-ից.
Պարբերականությունը՝ տարեկան մեկ անգամ
Издаётся с 1998г. Периодичность - ежегодно
Issued since 1998. Frequency – annual

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
Публикуется по решению ученого совета Арцахского государственного университета.
Published by the Decree of the Academic Council of the Artsakh State University.

Խմբագրական խորհրդի նախագահ՝ ր.գ.թ. Սարգսյան Ա.Յու.
Председатель редакционного совета: к.ф.н. Саргсян А.Ю.
Chairman of the Editorial Board: Ph. D. in Philology Sargsyan A.Yu.

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ. Ավանեսյան Վ.Մ.
Главный редактор: д.и.н. Аванесян В.М.
Editor-in-chief: Doctor of History Avanesyan V.M.

Խմբագրական կոլեգիա
Редакционная коллегия
Editorial board

1. Աղաբալյան Ն.Է., ԱՀ ԿԳՍ նախարար – Агабалиан Н.Э., Министр образования, науки и спорта АР - Aghabalyan N.E., Minister of Education, Science and Sport of AR
2. Սուվարյան Յու.Մ., տ.գ.դ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս – Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Suvaryan Yu.M., Doctor of Economics, Academician of NAS RA
3. Ղազինյան Գ.Ս., ի.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս – Газинян Г.С., д.ю.н., академик НАН РА - Ghazinyan G.S. . Doctor of Law, Academician of NAS RA.
4. Ասրյան Շ.Շ., տ.գ.թ. – Асрян Ш.Ш., к.э.н. – Asryan Sh.Sh., Ph.D. in Economics
5. Բալայան Վ.Ռ., պ.գ.դ., – Балаян В. Р., д.и.н. – Balayan V.R., Doctor of History
6. Ղազարյան Հ.Ս., ր.գ.թ. – Газарян А.С., к.ф.н. – Ghazaryan H.S., Ph.D. of Philology
7. Ենգոյան Ա.Փ., ր.գ.դ. – Енгоян А.П., д.п.н. – Engoyan A.P., Doctor of Political science
8. Հարությունյան Վ.Ն. ր.գ.դ., Арутюнян В.Н. , д.ф.н. – Harutyunyan V.N., Doctor of Philology
9. Խանյան Ս.Ա., ր.գ.դ. – Ханян С.А. д.ф.н. – Khanyan S.A., Doctor of Philology
10. Կարապետյան Ի.Կ., մ.գ.դ. – Карапетян И.К., д.п.н. - Karapetyan I.K., Doctor of Pedagogics
11. Կարապետյան Վ.Ս., հ.գ.դ., պրոֆեսոր – Карапетян В.С., д.п.н.- Karapetyan V.S., Doctor of Psychology
12. Հայրապետյան Է.Ա., մ.գ.թ. – Айрапетян Э.А., к.п.н.- Hayrapetyan E.A., Ph. D. in Pedagogics
13. Հարությունյան Գ.Հ., մ.գ.դ. – Арутюнян Г.Г., д.п.н. - Haroutyunyan G.G., Doctor of Pedagogics
14. Հովհաննիսյան Լ.Շ., ր.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Hovhannisyan L.Sh., Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences
15. Մանասյան Ս.Ս., փ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Manasyan A.S., Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences
16. Մարգարյան Գ.Գ. կ.գ.թ., /գիտ. քարտուղար/ – Маргарян Г. Г., к.б.н., ученый секретарь – Margaryan G.G., Ph. D. in Biology, Scientific Secretary
17. Մխիթարյան Ա.Մ., հոգեբ.գ.թ. – Мхитарян А.М., к.п.н. – Mkhitaryan A.M., Ph. D. in Psychology
18. Մուսայելյան Հ.Գ., ր.գ.դ. – Мусаелян О. Г., д.ф.н. – Musaelyan H.G., Doctor of Philology.
19. Յարամիշյան Վ.Բ., հոգեբ.գ.թ. – Ярамишян В.Б. –к.п.н. - Yaramishyan V.B., Ph. D. in Psychology.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՕՖԵԼՅԱ ԲԱԲԱՅԱՆ ԳՐԱԲԱՐԸ ԵՎ ՄԵՆՔ.....	10
ՇՈՂԵՐ ՄԻՆԱՍՅԱՆ , ՀԱՄՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՆՕՐԻՆԱԶՈՓ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՈՒՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	19
ՍԻԼՎԱ ՄԻՆԱՍՅԱՆ XX ԴԱՐԻ ՄԵԾ ԼԵԶՎԱԲԱՆԸ (ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ-100).....	29

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԷՂՈՒԱՐԴ ՄԿՐՏՉՅԱՆ ՁՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆԻ «ԱԶԳԱՅԻՆ ՈԳՈՒ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՐԹՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ..	36
ԶԱՐԻՆԵ ՄԱՌԱԶՅԱՆ ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՐՑԱԽԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	44

ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

ՆՈՒՆԵ ԱՎԱԳՅԱՆ «ՌՈՒՄԵՐԵՆՆ ՕՏԱՐԱԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԴԱՍԸՆԹԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ, ՈՐՊԵՍ ՌՈՒՄԵՐԵՆՆ ՈՐՊԵՍ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒՄ.....	51
ՍՈՒՄԱՆՆԱ ՄԿՐՏԻՉՅԱՆ ՊՈԵՏԻԿ ՏԵՔՍՏԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՌՈՒՄԱՅ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ (Վ. ԿՈՆՈՊԼՅՈՎԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ).....	59
ՍՈՒՄԱՆՆԱ ՄԿՐՏԻՉՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ «ՇԱՐԺՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅԵՐ» ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՀԱՄԱՐ.....	66
ԱԳԱԹԱ ՄԱՖԱՐՅԱՆ ԴԵՎ ԱՐՔԵՏԻՊԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԱԿԱՆ և ՏԵՔՍՏԱՅԻՆ ՆՑՈՒԹԵՐՈՒՄ.....	71
ՆԱՏԱԼՅԱ ԿՐԻՎՈՇՄԱՆՈՎԱ ԲԻԼԻՆԳՎԻԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԴՆԵՍՏՐՈՒՄ.....	79
ՌԻՏԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՈՒ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԱՆԳԼԵՐԵՆ ՊԱՏՄԱԿԱՆ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ.....	84

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆ ԲԵՐԻԼ ԲԱԶՄԱՄԱԿԱՐԴԱԿ ԱՆԸՆԴՀԱՏ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԵՐՁԴՆԵՍՏՐՅԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓՈՒԼ.....	98
ԼՅՈՒԴՄԻԼԱ ՎԱՍԻԼՅԵՎԱ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՈՂԵՌՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....	104

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԳԵՆԻ, ԱՆԱՍՏԱՍԻՅԱ ԳԵՆԻ Տ.Գ.ՇԵԲԵՆԿՈՒ ԸՆՎԱԼՆ ՄՊՀ-Ի ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....	109
---	------------

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՎԱԼԵՐԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ ՄԻՐԻԱՅԻ ԱՐՇԱՎԱԽՄԲԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ.....	115
--	------------

ԱՐԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ «ԹՈՒՖՆԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ԹԲՀ) ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....	128
---	------------

ՏԱՐՈՆ ՀԱԿԸԲՅԱՆ ԼԱԶՄԱՍՄԱՂԱՄԱԿԱՆ ԻՀԱԾԻՃԱԿԸ ԱՀԱԽԸՂՄ (1993 թ. հրդիսիս-խեթկեմբեհ ամիսնեհիմ).....	135
--	------------

ՆԱՏԱԼԻԱ ՏԱՆՇԻՆԱ ԼՈՒԻ-ՖԻԼԻՊ ՕՐԼԵՆԵԱՆՅՈՒ ՊԱՐԻՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ (ՎԻԿՏՈՐ ԲԱԼԱԲԻՆԻ «ՕՐԱԳՐԻ» ՆՅՈՒԹԵՐԻՑ).....	143
--	------------

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԼՎԱՐԴ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆԵՐԿԱՆ ԿԱՌՈՒՅԵԼ ԱՆՑԱԼԻ ԴԱՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՈՎ.....	150
--	------------

ԱՇՈՏ ՂՈՒԼՅԱՆ ԼՂՀ ՀՈՉԱԿՈՒՄՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՅՈՒՄԸ..	155
---	------------

ՀՐԱՅՐ ՓԱՇՏՅԱՆ, ԼԻԱՆԱ ԲԱԼԱՅԱՆ ՓԱԹԵԹԱՅԻՆ ԵՎ ՓՈՒԼԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ. ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՍՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ...	164
--	------------

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ.....	173
--	------------

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ, ԱՆՅՈՒՏԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀԱՐԿԱԳԱՆՁՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ԱՀ-ՈՒՄ.....	180
--	------------

ԱՆՅՈՒՏԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ԱՐՏԱԿ ՄԻՐՉՈՅԱՆ, ՄՇԵՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԸ ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	187
---	------------

ՈՌԻՉԱՆ ԶԱԽԱՐՅԱՆ, ԼԻԼԻԹ ԱՎՇԱՐՅԱՆ ԱՀՕԱԽԻ ՀԱՆՀԱԺԵԼԱՕԹՅԱՆ ԲՆԱԿԱԱՕԹՅԱՆ ԿՅԱՆՄԻ ԱՀԱԿԻ ԲԱՀԵԼԱՄՄԱՆ ԿԱՆԽԱԽԵՄԱՆ ԷԿԱՆԱՄԵՆԻԿԱԿԱՆ ՄԵԹԱԴՆԵՀԸ.....	197
--	------------

ԺԱՍՄԵՆ ԶԱՔԱՐՅԱՆ ՀՆԱ-Ի և ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՓՈԽԿԱՊԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ-ՌԵԳՐԵՄԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	207
---	------------

ՇՈՒՇԱՆ ԶԻՐՈՅԱՆ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԴԵՐԸ.....	214
---	------------

ՀԱԿՈՒ ՂԱՀՐԱՍՄԱՆՅԱՆ

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	223
--	------------

ՄԱՆՈՒՇ ՄԻՆԱՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	234
--	------------

СОДЕРЖАНИЕ

АРМЯНСКИЙ ЯЗЫК

ОФЕЛИЯ БАБАЯН

ГРАБАР И МЫ..... 10

ШОГЕР МИНАСЯН, АСМИК ГАЗАРЯН

НЕЗАКОНОМЕРНЫЕ ГРАММАТИЧЕСКИЕ ЯВЛЕНИЯ В СИСТЕМЕ
ИМЕННЫХ ЧАСТЕЙ РЕЧИ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫК..... 19

СИЛЬВА МИНАСЯН

ОДИН ИЗ ОСНОВАТЕЛЕЙ И НОВАТОРОВ ЛИНГВИСТИЧЕСКОЙ МЫСЛИ
20-ОГО ВЕКА И ЗНАМЕНИТЫЙ УЧЕНЫЙ / АШОТ АБРААМЯН -100/..... 29

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ЭДУАРД МКРТЧЯН

МОНОГРАФИЯ ЗУХРЫ ЕРВАНДЯН. «ОТОБРАЖЕНИЕ
НАЦИОНАЛЬНОГО ДУХА В ПРОИЗВЕДЕНИЯХ ВАРДАНА АКОПЯНА»..... 36

ЗАРА САРАДЖЯН

АПРЕЛЬСКАЯ ВОЙНА В ПРОИЗВЕДЕНИЯХ ПИСАТЕЛЕЙ АРЦАХА..... 44

ИНОСТРАННЫЙ ЯЗЫК

НУНЕ АВАКЯН

ОБРАЗОВАТЕЛЬНАЯ КОНЦЕПЦИЯ КУРСА “РУССКИЙ ЯЗЫК КАК
ИНОСТРАННЫЙ”, ОТВЕТВЛЕННАЯ ОТ МЕТОДОЛОГИИ ИЗУЧЕНИЯ
РУССКОГО ЯЗЫКА КАК РОДНОГО..... 51

СУСАННА МКРТИЧЯН

ИСПОЛЬЗОВАНИЕ ПОЭТИЧЕСКИХ ТЕКСТОВ НА УРОКАХ РУССКОГО
ЯЗЫКА (НА ПРИМЕРЕ ЛИРИКИ В. КОНОПЛЕВА)..... 59

СУСАННА МКРТИЧЯН

МЕТОДИЧЕСКИЕ РЕКОМЕНДАЦИИ ДЛЯ ВЕДЕНИЯ ЗАНЯТИЙ ПО ТЕМЕ
«ГЛАГОЛЫ ДВИЖЕНИЯ»..... 66

АГАТА САФАРЯН

ЭКСПЛИКАЦИЯ АРХЕТИПА «ДЕМОН» В ЯЗЫКОВОМ И ТЕКСТОВОМ
МАТЕРИАЛЕ..... 71

НАТАЛЬЯ КРИВОШАПОВА

ОСОБЕННОСТИ БИЛИНГВИЗМА В ПРИДНЕСТРОВЬЕ..... 79

РИТА ПЕТРОСЯН

ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ ГРАММАТИЧЕСКОЙ И
КОММУНИКАТИВНОЙ КОМПЕТЕНЦИИ СТУДЕНТОВ – ИСТОРИКОВ
ПОСРЕДСТВОМ АНГЛИЙСКИХ ПРОФИЛЬНО-ОРИЕНТИРОВАННЫХ
ТЕКСТОВ..... 84

ПЕДАГОГИКА

СТЕПАН БЕРИЛ

СОЗДАНИЕ СИСТЕМЫ НЕПРЕРЫВНОГО МНОГОУРОВНЕВОГО
ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ – НЕОБХОДИМЫЙ ЭТАП
ФОРМИРОВАНИЯ ИННОВАЦИОННОЙ ЭКОНОМИКИ
ПРИДНЕСТРОВЬЯ..... 98

ЛЮДМИЛА ВАСИЛЬЕВА

ПОДГОТОВКА ПЕДАГОГИЧЕСКИХ КАДРОВ В ПРИДНЕСТРОВСКОМ
УНИВЕРСИТЕТЕ В УСЛОВИЯХ МОДЕРНИЗАЦИИ ОБРАЗОВАНИЯ..... 104

ВАЛЕНТИНА ЕНИ, АНАСТАСИЯ ЕНИ

ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКОЕ СОПРОВОЖДЕНИЕ УЧАСТНИКОВ
ОБРАЗОВАТЕЛЬНО-ВОСПИТАТЕЛЬНОГО ПРОЦЕССА ПГУ ИМ. Т.Г.
ШЕВЧЕНКО..... 109

ИСТОРИЯ

ВАЛЕРИЙ АВАНЕСЯН ЗАВЕРШЕНИЕ СИРИЙСКОЙ ЭКСПЕДИЦИИ И ПОЗИЦИЯ ПОЛИТИЧЕСКИХ ПАРТИЙ ВО ФРАНЦУЗСКОМ ПАРЛАМЕНТЕ.....	115
--	-----

АРАРАТ ВАРДАНЯН СОДЕЙСТВИЕ БЛАГОТВОРИТЕЛЬНОГО ФОНДА “ТУФЕНКЯН” РАЗВИТИЮ ОСВОБОЖДЕННЫХ ЗЕМЕЛЬ РЕСПУБЛИКИ АРЦАХ.....	128
---	-----

ТАРОН АКОПЯН ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРЦАХЕ (ИЮНЬ-СЕНТЯБРЬ 1993Г.).....	135
---	-----

НАТАЛЬЯ ТАНЬШИНА ПОЛИТИЧЕСКИЕ ЗАРИСОВКИ ПАРИЖА ЛУИ-ФИЛИППА ОРЛЕАНСКОГО (ПО МАТЕРИАЛАМ «ДНЕВНИКА» ВИКТОРА БАЛАБИНА).....	143
---	-----

ПОЛИТОЛОГИЯ

АЛВАРД АБРААМЯН СТРОИТЬ НАСТОЯЩЕЕ УЧИТЫВАЯ УРОКИ ПРОШЛОГО.....	150
--	-----

АШОТ ГУЛЯН ПРОВОЗГЛАШЕНИЕ НКР И ИНСТИТУЦИОНАЛИЗАЦИЯ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ.....	155
---	-----

ГРАЙР ПАШАЯН, ЛИАНА БАЛАЯН ПАКЕТНЫЕ И ПОЭТАПНЫЕ ВАРИАНТЫ: ИХ РОЛЬ В ВОСПРИЯТИИ ОБРАЗА КАРАБАХСКОГО ПРОТИВОСТОЯНИЯ.....	164
---	-----

ЮРИСПРУДЕНЦИЯ

ГАЯНЭ НЕРСИСЯН ГОСУДАРСТВЕННО ПРАВОВЫЕ ВЗГЛЯДЫ МХИТАРА ГОША.....	173
--	-----

ЭКОНОМИКА

ЛИЛИК БЕГЛАРЯН, АНЮТА ГАСПАРЯН СОВРЕМЕННЫЙ ИНСТРУМЕНТАРИЙ НАЛОГОВЫХ СБОРОВ В АР.....	180
---	-----

АНЮТА ГАСПАРЯН, АРТАК МИРЗОЯН, МГЕР МХИТАРЯН ПРОБЛЕМЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИНВЕСТИЦИОННОЙ ПОЛИТИКИ В АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКЕ.....	187
--	-----

РУЗАН ЗАХАРЯН, ЛИЛИТ АВШАРЯН ЭКОНОМЕТРИЧЕСКИЕ МЕТОДЫ ПРОГНОЗИРОВАНИЯ УЛУЧШЕНИЯ КАЧЕСТВА ЖИЗНИ НАСЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ.....	197
--	-----

ЖАСМЕН ЗАКАРЯН КОРРЕЛЯЦИОННО-РЕГРЕССИОННЫЙ АНАЛИЗ ВЗАИМОСВЯЗИ ВВП И ОСНОВНЫХ ОТРАСЛЕЙ ЭКОНОМИКИ.....	207
---	-----

ШУШАН ЗИРОЯН РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ СТРАНЫ, СТРУКТУРНЫЕ ИЗМЕНЕНИЯ И РЕГУЛИРУЮЩАЯ РОЛЬ ГОСУДАРСТВА.....	214
---	-----

АКОП КАГРАМАНЯН КОНКУРЕНТНАЯ СИТУАЦИЯ, ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ И ПУТИ ИХ РАЗРЕШЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ.....	223
--	-----

МАНУШ МИНАСЯН НЕИЗБЕЖНОСТЬ ЭКОНОМИЧЕСКИХ КРИЗИСОВ В РАЗВИТОЙ РЫНОЧНОЙ ЭКОНОМИКЕ.....	234
---	-----

CONTENTS

ARMENIAN LANGUAGE

OPHELIA BABAYAN

GRABAR AND WE..... 10

SHOGER MINASYAN, HASMIK GHAZARYAN

GRAMMATICAL IRREGULARITIES IN THE SYSTEM OF NOMINAL PARTS
OF SPEECH IN MODERN ARMENIAN..... 19

SILVA MINASYAN

ONE OF THE FOUNDERS AND INNOVATORS OF THE XX CENTURY'S
LINGUISTIC THINKING AND THE FAMOUS SCIENTIST
/ ASHOT ABRAHAMYAN -100 /..... 29

LITERATURE

EDWARD MKRTCHYAN

“DEPICTION OF NATIONAL SPIRIT IN THE WORKS OF VARDAN
HAKOBYAN” ZOUKHRA YERVANDYAN'S MONOGRAPHY..... 36

ZARA SARAJYAN

THE APRIL WAR IN THE WORKS OF THE WRITERS OF ARTSAKH..... 44

FOREIGN LANGUAGES

NUNE AVAGYAN

EDUCATIONAL CONCEPT OF THE COURSE «RUSSIAN AS A FOREIGN
LANGUAGE» AS THE BRANCH OF THE METHODOLOGY OF TEACHING
RUSSIAN AS A NATIVE LANGUAGE..... 51

SUSANNA MKRTICHYAN

USING POETIC TEXT AT RUSSIAN LESSONS (ILLUSTRATED BY
V.KONOPLEV'S LYRICS) 59

SUSANNA MKRTICHYAN

METHODOLOGICAL RECOMMENDATIONS FOR CONDUCTING CLASSES ON
THE TOPIC «MOTION VERBS»..... 66

AGATHA SAFARYAN

THE EXPLICATION OF THE «DEMON» ARCHETYPE IN LANGUAGE AND
TEXT MATERIAL..... 71

NATALIA KRIVOSHAPOVA

FEATURES OF BILINGUALISM IN PRIDNESTROVIAN REGION..... 79

RITA PETROSYAN

PECULIARITIES OF DEVELOPMENT OF GRAMMAR AND
COMMUNICATIVE COMPETENCE OF STUDENTS-HISTORIANS THROUGH
ENGLISH PROFILE-ORIENTED TEXTS..... 84

PEDAGOGY

STEPAN BERYL

CREATING A SYSTEM OF CONTINUOUS MULTILEVEL PROFESSIONAL
EDUCATION - A NECESSARY STAGE OF FORMATION OF INNOVATION
ECONOMY OF TRANSNISTRIA..... 98

LYUDMILA VASILYEVA

TRAINING OF TEACHERS IN TRANSNISTRIAN UNIVERSITY IN THE
CONTEXT OF THE MODERNIZATION OF EDUCATION..... 104

VALENTINA ENI, ANASTACIA ENI

PSYCHOLOGICAL-PEDAGOGICAL SUPPORT OF PARTICIPANTS OF THE
EDUCATIONAL PROCESS IN PGU AFTER T.G. SHEVCHENKO..... 109

HISTORY

VALERY AVANESYAN COMPLETION OF THE SYRIAN EXPEDITION AND THE POSITION OF POLITICAL PARTIES IN THE FRENCH PARLIAMENT.....	115
ARARAT VARDANYAN THE TUFENKIAN CHARITABLE FOUNDATION ASSISTANCE TO THE DEVELOPMENT OF THE LIBERATED LANDS OF THE REPUBLIC OF ARTSAKH.....	128
TARON HAKOBYAN MILITARY-POLITICAL SITUATION IN ARTSAKH (JUNE - SEPTEMBER1993).....	135
NATALYA TANSHINA POLITICAL SKETCHES OF PARIS BY LOUIS-PHILIPPE OF ORLEANS (BASED ON THE MATERIALS OF THE "DIARY" BY VIKTOR BALABINE)....	143

POLITICAL SCIENCE

ALVARD ABRAHAMYAN BUILDING THE PRESENT WITH THE PAST LESSONS.....	150
ASHOT GHOULIAN PROCLAMATION OF NKR AND INSTITUTIONALIZATION OF INTERNATIONAL RELATIONS.....	155
HRAYR PASHAYAN, LIANA BALAYAN PACKAGE AND STAGE OPTIONS: THEIR ROLE IN PERCEPTION OF THE IMAGE OF KARABAKH CONFRONTATION.....	164

JURISPRUDENCE

GAYANE NERSISYAN THE POST-LEGAL HUMMANITARIAN VIEWS OF MKHITAR GOSH.....	173
--	-----

ECONOMY

LILIK BEGLARYAN, ANYUTA GASPARYAN MODERN TOOLSET OF TAX COLLECTION IN AR	180
ANYUTA GASPARYAN, ARTAK MIRZOYAN, MHER MKHITARYAN PROBLEMS OF IMPROVING THE INVESTMENT POLICY IN ARTSAKH REPUBLIC.....	187
RUZAN ZAKHARYAN, LILIT AVSHARYAN ECONOMETRIC METHODS FORECASTING THE IMPROVEMENT OF LIFE QUALITY OF THE ARTSAKH REPUBLIC POPULATION.....	197
ZHASMEN ZAKARYAN CORRELATION AND REGRESSION ANALYSIS OF THE RELATIONSHIP BETWEEN GDP AND THE MAIN SECTORS OF THE ECONOMY	207
SHUSHAN ZIROYAN DEVELOPMENT OF ECONOMY OF THE COUNTRY, STRUCTURAL CHANGES AND THE REGULATORY ROLE OF THE STATE.....	214
HAKOB GHAHRAMANYAN COMPETITIVE SITUATION, MAIN PROBLEMS AND WAYS OF THEIR RESOLUTION IN ARTSAKH REPUBLIC.....	223
MANUSH MINASYAN INEVITABILITY OF ECONOMIC CRISES IN THE DEVELOPED MARKET ECONOMY	234

ՀՏԴ. 809. 198.1Հայոց լեզու

Օֆելյա ԲԱԲԱՅԱՆ

ԱրՊՀ, Բ.Գ.Թ., պրոֆեսոր, ակ.Ս. Աբրահամյանի անվամբ հայոց լեզվի ամբիոն

E-mail: o.e.babayan@mail.ru**ԳՐԱԲԱՐԸ ԵՎ ՄԵՆԷ**

Գրաբարը՝ հին հայերենը, մեր նախնիների խոսակցական լեզուն է եղել: Մինչև գրավոր լեզու դառնալը հայերենն անցել է պատմական զարգացման երկարատև ուղի՝ նախագրային ժամանակաշրջան: Այն գրավոր լեզու է դարձել V դարի սկզբին, երբ ստեղծվել են մեսրոպյան գրերը: Հայոց լեզվի գրային շրջանի մեջ ընդունված է տարբերակել երեք փուլ՝ **հին, միջին և նոր:**

Բանալի բառեր՝ գրաբար, ժամանակակից հայոց լեզու, արևելահայերեն, արևմտահայերեն, դասական ուղղագրություն, գրաբարյան քարացած հոլովածներ, բայական համակարգ:

Օ. Բաբայան**ГРАБАР И МЫ**

Грабар является основой армянского языка и помогает правильно понимать многие явления современного армянского языка, происхождение и развитие слов и словоформ, учит классическому правописанию, которое сохраняется на западном армянском языке. Наша политическая независимость также изменила функционирование армянского языка, сегодня большое значение придается знанию как габара, так и восточноармянского и западноармянского языков. В статье объясняется ряд устойчивых фраз габара, которые используются в современном армянском языке.

Ключевые слова: грабар, современный армянский язык, восточноармянский, западноармянский, классическая орфография, древнеармянские устойчивые словоформы склонения, глагольная система

O. Babayan

GRABAR AND WE

Grabar is the basis of the Armenian language and it helps to correctly understand many of the phenomena of the modern Armenian language, the origin and development of words and word forms, teaches the classical spelling that is preserved in Western Armenian. Our political independence has also changed the functioning of the Armenian language, and today great importance is given to the knowledge of both grabar and Eastern and Western Armenian languages. The article explains a number of set expressions of grabar, which are used in modern Armenian.

Keywords: grabar, modern Armenian, modern Armenian language, Eastern Armenian, Western Armenian, classical spelling, ancient Armenian set expressions of declension, verb system

Հին շրջանն ընդգրկում է 5-11-րդ դարերը: Նրա լեզուն հին հայերենն է, որի խոսակցական հիմքը Հայաստանի կենտրոնական մասի, Այրարատի, Տուրուբերանի, Տարոնի հաղորդակցման լեզուն է: Հին գրական հայերենը հայությանը հասկանալի է եղել շուրջ յոթ հարյուր տարի, բայց իբրև գրական լեզու՝ երկար դարեր գործածվում էր և գրականության մեջ իր տեղը զիջել է նոր լեզվին հիմնականում XIX դարում: Իբրև պաշտամունքային լեզու՝ գրաբարը այժմ էլ գործածվում է Հայոց եկեղեցում: Դարերի ընթացքում հին հայերենի խոսակցական տարբերակը հեռացել է գրականից, դարձել գրեթե անհասկանալի: Ժողովուրդն այն կոչում էր «գրոց» լեզու, այստեղից էլ «գրաբար» անվանումը: Հայոց լեզվի հին և նոր փուլերի լեզուն «գրաբար» և «աշխարհաբար» են անվանվել 19-րդ դարի կեսերին՝ գրապայքարի շրջանում: Հայ ժողովուրդն իր լեզուն միշտ անվանել է հայերեն, և կարելի է ասել նաև *հին հայերեն* և *նոր հայերեն*:

Գրաբարով ստեղծվել է հարուստ ու բազմաբնույթ ինքնուրույն և թարգմանական գրականություն: Առաջին թարգմանված երկը *Աստվածաշունչն* է՝ հին և նոր կտակարաններով: Այդ մասին Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Կորյուն վարդապետը «Վարք Մաշտոցի» երկում գրում է. «Եւ ապա հանդերձ օգնականաւք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոսատացոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն եւ յեկեղեցոյն մեծարեալ լինէր:

Եւ անդէն ի նմին քաղաքի ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտաւքն իւրովք, որոց առաջնոյն *Յովհան* անուն կոչէին *յեկեղեաց* գաւառէն եւ երկրորդին *Յովսէփ* անուն ի *Պաղանական* տանէն: Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբան իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զդարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ եւ ուղղել զիրաւունս: Զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս եւ զհանճար: Որոց իբրեւ լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի. Իսկ որ հանճարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստացի, ի միտ առցէ զառակս եւ զբանս խորինս, զճառս իմաստնոց եւ զառակս նոցա»¹:

¹ Տե՛ս Աբրահամյան Ա., *Գրաբարի ձեռնարկ*, Եր., 1976, էջ 289:

Գրաբարի՝ գիտական սկզբունքներով կազմված առաջին բացատրական բառարանը Մխիթար Սեբաստացու բառարանն է, որը բանասիրության մեջ կոչվում է նաև Հին հայկազյան բառարան՝ «Բառգիրք հայկազեան լեզուի»։ Նրա առաջին հատորը լույս է տեսել 1749-ին, երկրորդը՝ 1769-ին Վենետիկում։ Նոր հայկազյան բառարանը՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», բաղկացած է երկու հատորից, հեղինակներն են Գաբրիել Ավետիքյանը, Խաչատուր Մյուրմեյանը և Մկրտիչ Ավգեյանը։ Լույս է տեսել Վենետիկում 1836-37 թթ.։ Երևանի պետական համալսարանը բառարանը վերահրատարակել է 1979, 1981 թթ.։ Այդ բառարանի համառոտությամբ ու բաց թողնված բառերի հավելումով Մկրտիչ Ավգեյանը կազմել է «Առձեռն բառարան հայկազեան լեզուի»։ Տպագրվել է Վենետիկում 1846 և 1865 թթ.։

V դարի հայ գրական լեզուն մշակված ու կանոնիկ է և «հետագա սերունդներին զարմացնում է իր կանոնավորությամբ, բառապաշարի ճոխությամբ, դարձվածքների բազմազանությամբ, շարահյուսական ձևերի գործածության անկաշկանդ ազատությամբ»¹։ Գրաբարն այսօր խոսակցական լեզու չէ։ Բայց, ինչպես մեր մանկությունը, միշտ մեզ հետ է, ներկա է մեր ամեն մի նախադասության, արտահայտության մեջ։ Ճիշտ են նկատել, որ մենք բարևից մինչև ցտեսություն խոսում ենք գրաբար, բայց չենք գիտակցում։ Հայոց հին գրական լեզուն՝ գրաբարը, հայերենի հիմքն է և օգնում է մեզ՝ ճիշտ հասկանալու ժամանակակից հայերենի շատ երևույթների, բառերի և բառաձևերի ծագումն ու զարգացումը, սովորեցնում ավանդական, դասական ուղղագրությունը, որը պահպանվում է արևմտահայերենում։

Գրաբարյան քարացած շատ բառաձևեր են գործածվում արդի հայերենում։ Փորձենք որոշ չափով խմբավորված ներկայացնել մի մասը։

1 ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Ուղղական հոլով։ Հայտնի է, որ հոգնակի թվում ուղղական հոլովն ունի *ք* հոլովակերտը։ Ներդրական (ներքին) հոլովումների դեպքում բառի վերջին բաղաձայնից առաջ կարող է հանդես գալ *ու, ի, է, ա* ձայնավորներից մեկը՝ *հայրենի-հայրենիք, արքունի-արքունիք, բարի-բարիք, տեղի-տեղիք (տեղի տալ և տեղիք տալ), գիր-գիրք, մասն-մասունք, հարսն-հարսունք, սկիզբն-սկզբունք, մանուկ-մանկունք, աղջիկ-աղջկունք, շուրթն-շրթունք, դիցազն-դիցազունք, ծաղիկ-ծաղկունք, բարձր-բարձունք, անձն-անձինք, դաշն-դաշինք, եզր-եզերք (տի+եզերք), տարր-տարերք, սերմն-սերմանք, կողմն-կողմանք*։

Նույն սկզբունքով է կազմվում *-ումն* ածանցով վերջավորվող բառերի հոգնակի ուղղականը՝ *բաժանումն - բաժանմունք, ուսումն-ուսմունք, ցուցումն-ցուցմունք, հարցումն-հարցմունք, հուզումն-հուզմունք, վարումն-վարմունք*։ Գործածական են

-իք մասնիկ ունեցող մի շարք անեզական հասարակ և հատուկ անուններ՝ *ընթրիք, կարիք, ժանիք, կեղծիք, օձիք, արգասիք, անդրավարտիք, երախտիք, հարսանիք, կարծիք, չարիք, Տնորիք, Աղձնիք, Միւնիք* և այլն։ *-անք* ածանցով՝ *աղաչանք, բաղձանք, զարդարանք, զարմանք, զբօսանք, լլկանք, կալանք, հալածանք, հանգամանք, հոսանք, մեծարանք, յանցանք, յարգանք, պատրանք, պարսաւանք, պերճանք, սահանք, մեղադրանք, փշրանք, արտադրանք, փականք,*

¹ Տե՛ս Առաքելյան Վ., *Անհարկներ հայոց գրական լեզվի պատմության*, Եր., 1981, էջ 59։

կապանք, աշխատանք և այլն: **-ք**-ով՝ ասք, արեւելք, արեւմուտք, խօսք, ցնորք, հմայք, աղօթք, անէծք, առանցք, կուրծք, ինչք, դժոխք, կուռք, պահք, բարք, վարք, պարտք, խելք, կամք, կառք, փառք, գնացք և այլն:

Կին և տիկին բառերից բացի՝ գրաբարում մի քանի բառեր ևս հոգնակի ուղղական հոլովում ստանում են **-այք**, նաև **-եայք**՝ ծովեզերեայք կամ ծովեզերայք (=ծովափնյա, ծովափի առարկաներ, ծովափեր), հայաստանեայք (=հայաստանցիներ), ասորեստանեայք (=ասորեստանցիներ), թեք հոլովներում՝ հայաստանեայց, հայաստանեաց, ասորեստանեայց¹ (Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի):

2. Անեզական հատուկ և հասարակ անունների և այլ բառերի սեռական, տրական հոլովաձևեր՝ Հայք-Հայոց, Վայք-Վայոց, Տայք-Տայոց, Վիրք-Վրաց, Սիրնիք-Սիրնեաց, Պարսք-Պարսից, Կասպք-Կասպից, Աղուանք-Աղուանից, Յոյնք-Յունաց, կամք-կամաց, կեանք-կենաց, խելք-խելաց (ի), միտք-մտաց (+ա+ծին), դէմք-դիմաց, գործք-գործոց (արտաքին), Արշակունիք-Արշակունեաց, Արծրունի-Արծրունեաց, Բագրատունիք-Բագրատունեաց, մեռեալք-մեռելոց, Առաքեալք-Առաքելոց (վանք), Մուշ-Մշոյ, մամուլ-մամլոյ, պատիւ-պատուոյ, քոյր-քեռ (+այր=քրոջ ամուսին), գիւղ-գեղջ (+ուկ), արւ-աւուր (օրավուր), աւուրք-աւուրց (հին+ավուրց), յաւէտ-յաւիտեան, մասն-մասին, տիւ-տուրնջեան (լուսատու), դուրք (գործածական էր միայն հոգնակի կամ թերևս երկակի թվով՝ դուրք (դուրս, դրաց, դրօք), հետո հայերենում ևս ստեղծվեց եզակի ձևը՝ դուռն, որից հոգնակին՝ դուռնք: Բմաստային տարբերություն կա՝ դրսի և ներսի դռները² - դրաց (+ի), դիք-դից (+արան), յարգանք-յարգանաց (հաւաստիք), հարսանիք-հարսանեաց (հանդէս):

Նախդիրների հետ՝ յաւուր պատշաճի (ի նախդիրը ձայնավորից առաջ փոխվել է ՚ի, որը հ է գրվում, եզակի թվի տրական հոլովի հետ արտահայտում է եզակի ներգոյականի իմաստ) -հավուր պատշաճի, ինքնըստինքյան (ինքն+ըստ+ինքեան), ըստ արժանւոյն (արժանի բառի տրական հոլովն է), ըստ որում (որ հարաբերական դերանվան տրական հոլովն է=որի), ի միջի այլոց (ի+մէջ-միջի+այլք-այլոց), հանձին (ի>յ+անձն գոյականի եզակի թվի տրական հոլովաձև, արտահայտում է եզակի ներգոյականի իմաստ):

3. Հայցականի հոլովաձևեր. ա. դուրք-դուրս, չորք-չորս, աւետիք-աւետիս, բ. նախդիրների հետ՝ առ+աջ, առ+անց, առ+ընթեր, ընդ+դեմ, հոտնկայս (ի>յ+ոտն+կայս), կայ՝ «կայան, կեցած տեղը, տեղ, վիճակ», ոտնկայ. նաւակայք, յոտնկելեաց «ոտքի վրա ուղիղ կանգնած», «կանգնիլ, կալ», բայական ձևով ավելի շատ է գործածվում³, հանուն (յ+անուն), հօգուտ (յ+օգուտ), հուրախություն (ի>յ+ուրախութիւն), ի փառս (փառք), ի դեմս (դէմք), ի թիվս (թիւս), ի տրիտուր (=փոխարինություն, վարձատրություն, փոխհատուցում)⁴, ի հեճուկս (հեճուկ՝ թշնամանք, հեզնական, սիրտ ցավեցնելու գործ, հեճուկս առնել=թշնամություն անել)⁵, ի դէպ (դէպ եղել), դէպի (դէպ+ի), բացի (բաց+ի, ի բաց կաց յինէն, բաց+ատ), համենայն դէպս (յամենայն դէպս - հ<յ<ի նախդիր և դէպք գոյականի հոգնակի թվի

¹ Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ.աշխ., էջ 56-57:

² Տե՛ս Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան*, հ. I, 1971, էջ 685:

³ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. II, 1973, էջ 504-505:

⁴ Տե՛ս Աղայան Էդ., *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. II, Եր., 1976, էջ 1461:

⁵ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. III, Եր., 1977, էջ 78:

հայցական հոլով, արտահայտել է հոգնակի թվի ներգոյականի իմաստ՝ բոլոր դեպքերում), հընթացս (յընթացս-հ<յ>ի նախդիր և ընթացք գոյականի հոգնակի թվի հայցական հոլով, արտահայտել է ներգոյական հոլովի իմաստ՝ ընթացքում), հանձինս (յանձինս-ի>յ+անձն գոյականի հոգնակի թվի հայցական հոլովաձևը՝ անձինք-անձինս): Ի նախդիրով որոշ կապերի իմաստը երբեմն արտահայտվում է համապատասխան բառի տրական հոլովով՝ *ի հաշիվ-հաշվին, ի պատիվ-պատվին, հոգուտ-օգտին*¹:

4. Բացառականի հոլովաձևեր՝ *ի հարկե (ի հարկե), ի վերջո (վերջո), օրստօրե (օրե):*

5. Գործիականի հոլովաձևեր

ա. Եզակի թիվ՝ անձամբ, մասամբ, դիտմամբ, պատահմամբ, նկատմամբ, վերաբերմամբ, արամբ (+ի), մեղմիվ (մեղմիւ), ճշտիվ (ճշտիւ), առթիվ (առթիւ), շնորհիվ (շնորհիւ), հազիւ (հազ «դժուարություն», միայն հազիւ գործիականաձև մակբայի մեջ է գործածվում: Հազիվ բառից են ծագում հազիւախօս «ծանրախօս», հազուադէպ, հազուագիւտ (նոր գրականում)², սակավ (սակաւ, սակ՝ «պայման, սահմանված չափ, կուպար, կարգ, դաշն, օրէնք», նոր բառեր են սակարկել, սակագին, սակարկություն, սակարան, սակացոյց)³, բնավ (բնաւ), իրավ (իրաւ), հարկավ (հարկաւ), հավաստյալ (հավաստեալ), փութով, շուտով:

բ. Հոգնակի թիվ՝ *իրոր (իրաւք), կարծոք (կարծեալք), բարյոք (բարեալք):*

գ. Գրաբարյան գործիական հոլովի վերջավորությունների հետ երբեմն հանդես են գալիս -ի, -ին ածանցները՝ *յուրովի (յւրով+ի), կամովին (կամով+ին), գլխովին (գլխով+ին), տակավին (տակաւ+ին):* Այդպիսի բառերի -ովի, -ովին, -ավին մասնիկներն այժմ գիտակցվում են իբրև բաղադրյալ ածանց⁴:

Գործիականի հոլովաձևեր կան մի շարք բառերում՝ *որովհետև (որ դերանվան գործիական հոլով և հետևիչ բայի ներկայի հիմք, կա նաև հետևակ բառում: Հետ բառի նախնական նշանակությունն է «ոտք», հետի «ոտքով», հետիոտ, ոտնահետ)*⁵, *հիրավի (իր բառի գործիական հոլովն է իրաւ, հոգնակին՝ իրաւք (իրօք): Իրաւ գործիականը իբրև գոյական է դիտվել «իրաւունք, դատաստան, արդարություն» նշանակությամբ, համարվել է ուղղական, որից կազմվել են մյուս հոլովները, յիրաւի ներգոյականի իմաստ է յ+իրաւ+ի «իրօք, ճշմարիտ է որ»*⁶, *այսուամենայնիվ, այդուամենայնիվ, այնուամենայնիվ (այս, այդ, այն ցուցական և ամենայն որոշյալ դերանունների գործիական հոլովաձևեր), այսուհանդերձ, այդուհանդերձ:*

¹Աբրահամյան Ս., *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Եր., 1965, էջ 303:

² Տե՛ս՝ Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. III, էջ 5:

³ Տե՛ս՝ Աճառյան Հր., նշվ.աշխ., Եր., հ. IV, 1982, էջ 157:

⁴ Տե՛ս՝ Աբրահամյան Ս., *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, Եր., 1965, էջ 303:

⁵ Տե՛ս՝ Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. III, Եր., 1977, էջ 82-83:

⁶ Տե՛ս՝ Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. II, Եր., 1973, էջ 250:

II ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. *Ղերբայներից*

ա. *Անորոշ ղերբայ*՝ գրաբարից ավանդված մի շարք պատճառական բայեր կան, որոնցում բայաձևանքը քարացել է: Դրանք արդեն չեն գիտակցվում իբրև պատճառական բայեր¹:

զեկուցել - զգալ բայից է, որը կազմված է զ նախդրից և զալ բայից, հին կատարյալն է զեկի, որից և զեկուցանել՝ «լուր տալ, իմացնել, պատմել», իրազեկ «տեղյակ, լուրը իմացած», ինչպես նաև իրազգաց հոմանիշը², որից զեկույց, զեկուցում (զեկույց+ում), *կառուցել* - կառչել բայից, անցյալ կատարյալի հիմքը՝ կառի+ոյց+ան+ել, որից՝ կառույց (ոյ>ու), կառուց+ում,

ծանուցել - ճանաչել բայից, անցյալ կատարյալի հիմքը՝ ծան (ծան+ոթ)+ոյց+ան+ել, որից՝ ծանուցում (ծանույց+ում),

հատուցել - հատանել բայից, անցյալ կատարյալի հիմքը՝ հատ+ոյց+ան+ել, որից (ան+) հատույց (ոյ>ու), հատուց+ում,

հարուցել - յարնչել (= վերաբերել, հարմարվել) բայից, անցյալ կատարյալի հիմքը՝ յարի+ոյց+ան+ել, որից՝ յարույց (ոյ>ու)+ում (հարուցում, խնդրահարույց),

մատուցել - մատչել բայից-մատի+ոյց+ան+ել, որից մատույց (ոյ>ու), մատուցում,

վերցնել - վերանալ բայից-վերաց+ոյց+ան+ել,

փակցնել - փակնուլ բայից՝ փակուցանել՝ «կպցնել, փակցնել»³,

հրամցնել - հրամայել բայը «յետնաբար գրուած է նաև հրամել (իբր գրաբարյան ձև ... միջին հայերէն՝ համել): Դա գործածվում է ոչ թե բուն «հրամայել» նշանակությամբ, այլ իբր քաղաքավարական ձև՝ զանազան իմաստներով՝ «ներս եկէք, վե՛ր եկէք, նստեցե՛ք, առե՛ք, կերե՛ք, ասացե՛ք»։ Այսպես ունինք Պլ. հրամմեցէք, հրամմե, Ննիս. հրամմեցէք, համմեցէք, համե... Ղրբ. հմեցե՛ք... Սրանից են հրամցնել «հրաւիրել», հրամեցէք՝ «հրաւեր», հրամեցէք աւոր «հրաւիրեալ»⁴,

կասեցնել - կասիլ կամ կասել (յետ կանգնիլ, դադարիլ, լքանիլ), կասեց+ոյց+ան+ել⁵:

բ. *Ի մասնիկով ապառնի ղերբայ*՝ սիրելի, աստելի, խոցելի, ողորմելի, եղկելի, բուժելի, նկատելի, տեսանելի, ուսանելի, ընդունելի, մերժելի, ունելի և այլն:

գ. *Անցյալ ղերբայ*՝ ուսյալ, մնացյալ, բանտարկյալ, անիծյալ, հիշյալ, միացյալ, ննջեցյալ, կորուսյալ, հանգուցյալ, յարուցյալ, անցյալ, կոչեցյալ, առաքյալ, մեռյալ, սառուցյալ, որոշյալ, տվյալ (տուեալ) և այլն:

դ. *Ենթակայական ղերբայ*՝ ծնող, գրող, ընտրող, ծառայող, ուսանող,

-իչ մասիկով՝ մատնիչ, կառավարիչ, ներկայացուցիչ, փրկիչ, սրբիչ, գրիչ, բրիչ,բացիչ, պատմիչ, նկարիչ, գործիչ, ուսուցիչ, զավթիչ, կախարդիչ, հրապուրիչ, քայքայիչ, եզրափակիչ, կիզիչ, գրավիչ, ավերիչ, արտահայտիչ, թովիչ, հմայիչ և այլն:

2. *Պատճառական բայերի անցյալ կատարյալի հիմքից կազմված բառեր*

ուսուցանել - ուսանել բայից, ուս+ուցանել, որի անցյալ կատարյալի հիմքն է՝ ուսույց՝ ուսուց (ոյ>ու)+ում=ուսուցում, ինքն+ուսույց,

¹ Տե՛ս Աբրահամյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ., *Ժամանակակից հայոց լեզու*, հ. II, 1974, էջ 202:

² Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. II, , էջ 86:

³ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. IV, էջ 471:

⁴ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. III, էջ 130:

⁵ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. II, էջ 531:

ջեռուցանել - ջեռնուլ բայից՝ ջեր//ջեռ+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է ջեռոյց (ոյ>ու)+ում=ջեռուցում,

սնուցանել - սնանել (իմ) բայից՝ սն (սուն)+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է սնոյց (ոյ>ու)+ում=սնուցում,

կորուսանել - կորնչել (իմ) բայից՝ կորի+ուցանել, ց-ն տարրալուծվել, վերածվել է ս-ի, որն էլ կարող է ձայնեղանալ, վերածվել գ-ի, (խել+ա+)(կորույս, կորուսյալ,

ելուզանել - ելանել բայից՝ ել+ուցանել>ելուզանել, որից՝ ելուզ+ակ,

փլուզանել - փլչել բայից-փլի+ուցանել>փլուզանել, որից՝ փլուզում,

այտուցանել - այտնուլ բայից՝ այտի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է այտոյց, որից՝ այտուց (ոյ>ու)+ում, այտուց+իկ,

հանգուցանել - հանգչել բայից՝ հանգի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է հանգոյց որից՝ հանգուցեալ (ոյ>ու),

մածուցանել - մածնուլ բայից, մածի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է մածոյց, որից՝ մածուց (ոյ>ու)+իկ,

զարթուցանել - զարթնուլ բայից՝ զարթի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է զարթոյց, որից՝ զարթոյց (ոյ>ու)+իչ,

սառուցանել - սառչել բայից, սառի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է սառոյց, որից՝ սառուց (ոյ>ու)+եալ,

թռուցանել - թռչել բայից, թռի+ուցանել, անցյալ կատարյալի հիմքն է թռոյց, որից՝ թռուց (ոյ>ու)+իկ:

Այլ բայերի անցյալ կատարյալի հիմքից՝ բանալ-բաց (բաց+ատ), թանալ - թաց (թաց+ութոյն), խնուլ - խից (խց+ան), լնուլ - լից (լց+ովի), ընթեռնուլ - ընթերց (ընթերց+ել, ընթերց+ան+ութոյն, ներկայի հիմքից էլ՝ ընթեռնելի), լուցանել - լոյց (ճրագ+ա+լոյց, լուց+կի), շիջանել (իմ) - շեջ (հր+շեջ,ան+ շեջ), լալ - լաց (լացուկոծ), նստել (իմ) -նիստ (նստ+ա+տեղ), կալ (=մնալ, կանգնել)-կաց (նիստ+ու+կաց), բաննալ - բարձ (համ+բարձ+ում), դառնալ - դարձ (անց+ու+դարձ), ըմպել - արբ (ջր+արբ+ի), ունել (իմ)=բոնել, ունենալ, համարել - կալ (հեր+ա+կալ, ժուժկալ, զահակալ, կալ+ուած, կալ+ան+ավոր), նան՝ ունել+ի):

Դիմավոր բայերի քարացած ձևեր

Կեցցես - կեալ (=ապրել) բայից, անցյալ կատարյալի հիմքը՝ կեաց+ցես, ստորադասական եղանակի II ապառնի ժամանակաձև, II դեմք, եզակի թիվ, ներգործաձև խոնարհում (=ապրես, կապրես, պիտի ապրես, ապրելու ես),

կեցցե - նույնի III դեմք, եզակի թիվ (ապրի, կապրի, պիտի ապրի, ապրելու է),

կեցցեն - նույնի III դեմք, հոգնակի թիվ (ապրեն, կապրեն, պիտի ապրեն, ապրելու են),

հասցե - հասանել բայի ստորադասական եղանակ II ապառնի, III դեմք, եզակի թիվ, ներգործաձև խոնարհում (հասնի, կհասնի, պիտի հասնի, հասնելու է),

իցե - եմ պակասավոր բայի ապառնի ժամանակի III դեմք, եզակի թիվ (ինչ+ն+)(իցե (իցե), երբևիցե,

դիզուր - դնել նույնարմատ անկանոն բայի ստորադասական եղանակի II ապառնի, հոգնակի թիվ, I դեմք, ներգործաձև խոնարհում (=դնենք, կդնենք, պիտի դնենք, դնելու ենք),

զուցե - գոլ (=գոյություն ունենալ, լինել) պակասավոր բայի ստորադասական եղանակ, I ապառնի, III դեմք, եզակի թիվ, ներգործաձև խոնարհում,

արասցե - առնել (=անել, կատարել, ստեղծել) նույնարմատ անկանոն բայի ստորադասական եղանակ, II ապառնի, եզակի թիվ, III դեմք, ներգործածն խոնարհում (Աստուած մի արասցե=Աստված չանի),

եղիցի - լինել տարարմատ անկանոն բայի ստորադասական եղանակ, II ապառնի, եզակի թիվ, III դեմք, գուգահեռաբար գործածվում է նաև լիցի ձևը,

եղել - նույն բայի սահմանական եղանակ, անցյալ կատարյալ III դեմք, եզակի թիվ (=եղավ),

երևի - երևիլ բայի սահմանական եղանակ, ներկա ժամանակ, III դեմք, կրավորածն խոնարհում, եզակի թիվ,

գոյ - գոլ պակասավոր բայի սահմանական եղանակ, ներկա ժամանակ, III դեմք, եզակի թիվ,

բայ - բալ (=խօսել, ասել) առանձին անգործածական բայի սահմանական եղանակ, ներկա ժամանակ, եզակի թիվ, III դեմք, I և II դեմքերը՝ բամբասանք բառում (II դեմքը՝ բաս, եղանակավորման իմաստ է արտահայտում՝ Բա՛ս, սրան Թիֆլիս կասեն: Հ.Թ., Գիքորը),

համարյա - համարել բայի բուն հրամայական, ներգործածն խոնարհում, եզակի թիվ,

գրեթե (գրեա՛+թե) - առաջին բաղադրիչը գրել բայի բուն հրամայականն է, ներգործածն խոնարհում, եզակի թիվ,

երթ - երթալ տարարմատ անկանոն բայի բուն հրամայական, եզակի թիվ, ներգործածն խոնարհում,

լեռ - ուտել տարարմատ անկանոն բայի բուն հրամայական, կրավորածն խոնարհում, եզակի թիվ,

գոնե - գոլ պակասավոր բայի հրամայականն է՝ գոնեա (բարբառներում՝ գոնեա, գոնե)¹,

արի,արիք - յառնել (=առողջանալ, վեր կենալ) նույնարմատ անկանոն բայի բուն հրամայական, եզակի և հոգնակի թիվ (=վեր կաց և վեր կացեք՝ արի՛ք դիւցազունք),

լուր - լսել նույնարմատ անկանոն բայի բուն հրամայական, կրավորածն խոնարհում, եզակի թիվ:

Հայտնի է, որ հայերենը երկու ուղղագրություն ունի՝ բուն մեսրոպյան, դասական կամ հին (գրաբարյան) և նոր կամ արևելահայ: Մեր պատմության ներկա շրջանում վերանայվել են անցյալի սխալները, հայ ժողովրդի երկու հատվածների միջև սերտացել են հոգևոր, մշակութային, գիտական փոխհարաբերությունները: Այսօր ուղղակի անհրաժեշտություն է ինչպես գրաբարի, այնպես էլ հայոց լեզվի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի, դասական ուղղագրության իմացությունը:

Պետք է հիշենք, որ մեր քաղաքական անկախությունը նոր հարաբերությունների հիմք է դարձել նաև հայոց լեզվի գործառության բնագավառներում, իսկ «մեր լեզուն մենք ենք, որ կանք»:

¹ Տե՛ս Աճառյան Հր., նշվ.աշխ., հ. I, էջ 579:

Գրականություն

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976:
2. Աբրահամյան Ս., Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Եր., 1965:
3. Աբրահամյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, հ. II, 1974:
4. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. II, Եր., 1976:
5. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. I, 1971:
6. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. II, 1973:
7. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. III, Եր., 1977:
8. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., 1982:
9. Առաքելյան Վ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., 1981:

Հոդվածը տպագրության է ներառվում խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը:

ՀՏԴ 809. 198.1

Հայոց լեզու

Շողեր ՄԻՆԱՍՅԱՆ

ԱրՊՀ, Բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն

Հասմիկ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱրՊՀ, Բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն

E-mail: Shoger. minasjan@mail. ru, Hasmik. ghazaryan @mail.ru

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՆՕՐԻՆԱԶՓ
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅԵՐԵՆԻ
ԱՆՈՒՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Սույն աշխատանքը ներկայացնում է ժամանակակից հայերենի անուն խոսքի մասերի համակարգում առկա քերականական անկանոնություններն ու շեղումները: Դրանք վերաբերում են գոյականի ու դերանվան հոգնակիի կազմությանն ու հոլովմանը, նրանց հոդագործածությանը, ածականի ու թվականի փոխանվանական գործածությանը և մի շարք այլ իրողությունների: Հիմնականում նշվում են նաև քննվող իրողությունների գոյության պատճառները:

Բանալի բառեր՝ անկանոնություն, բացառություն, շեղում, գոյական, ածական, թվական, դերանուն, հոլովում, հոգնակի թիվ, փոխանուն:

Մ. Մինասյան Ա. Գազարյան

**НЕЗАКОНОМЕРНЫЕ ГРАММАТИЧЕСКИЕ ЯВЛЕНИЯ В
СИСТЕМЕ ИМЕННЫХ ЧАСТЕЙ РЕЧИ В СОВРЕМЕННОМ
АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

В данной работе представлены незакономерные явления и отклонения в грамматической системе именных частей речи современного армянского языка. В частности рассматриваются образование множественного числа и склонение существительных и местоимений, их субстантивация и употребление с артиклями, также иные их проявления. В основном анализируются причины возникновения исследуемых явлений.

Ключевые слова: незакономерные явления, исключение, отклонение, существительное, прилагательное, местоимение, склонение, множественное число, субстантивированные части речи.

Sh. Minasjan H.Ghazaryan**GRAMMATICAL IRREGULARITIES IN THE SYSTEM OF
NOMINAL PARTS OF SPEECH IN MODERN ARMENIAN**

The given article presents grammatical irregularities and deviations in the system of nominal parts of speech in Modern Armenian. These concern the formation of plural of noun and pronoun, their declension and combination with articles and some other phenomena. The study focuses on the causes of the analyzed events.

Keywords: *irregularity, exception, deviation, noun, adjective, numeral, pronoun, declension, plural, substantivized parts of speech*

Լեզվական միասնական համակարգի առանձնահատկություններից մեկն այն է, որ պատմական զարգացման տվյալ փուլում լեզուն ունենում է իր ենթահամակարգերին բնորոշ որոշակի հատկանիշներ: Լեզուն պատմական փոփոխություններով փորձում է հասնել ձևերի, իմաստների, կադապարների միասնության ու ընդհանրության, ուստի պատմական զարգացման յուրաքանչյուր փուլում նա ունենում է իր համակարգին բնորոշ հատկանիշների ամբողջություն: Այսպես, եթե գրաբարի հոլովման ու խոնարհման համակարգերին բնորոշ է թերականությունը, որը հիմնականում բնութագրվում է բազմիմաստ վերջավորությունների առկայությամբ, ապա ժամանակակից հայերենի համակարգին ավելի բնորոշ են մենիմաստ քերականական վերջավորությունները և քերականական ձևերի վերլուծական կազմությունը: Ու քանի որ լեզվի մեջ քերականական ձևերի կազմության եղանակներն ու դրանց ծառայող միջոցներն ունեն համակարգային բնույթ, ուստի հնարավոր է դառնում բնութագրել լեզվի զարգացման յուրաքանչյուր փուլ որպես որակապես յուրահատուկ համակարգ: Մյուս կողմից, սակայն, որքան էլ լեզուն ձգտում է իր քերականական կառուցվածքի (և ոչ միայն) միասնականության ու ընդհանրականության, այնուամենայնիվ լեզվի զարգացման յուրաքանչյուր փուլում պահպանվում են, շարունակվում են գործել, սաղմնավորվում են այնպիսի իրողություններ, որոնք չեն համապատասխանում լեզվի տվյալ փուլի համար կենսունակ, առավել ընդհանուր ու միասնական բնույթ ունեցող ձևերին: Լեզվական նման իրողությունների պատճառները տարբեր են լինում՝ լեզվի նախորդ շրջաններից պատմականորեն փոխանցումն ու պահպանումը, բարբառներից ու այլ լեզուներից՝ երկարատև շփման ու ազդեցությունների հետևանքով մուտք գործելը, լեզվի տվյալ փուլում առաջացող, բայց դեռևս կանոնական մակարդակի չհասած և համընդհանուր չդարձած իրողությունների առկայությունը, քերականական համաբանությունը և այլն:

Լեզվական կանոնիկ, բայց ոչ կենսունակ ու ոչ ընդհանրական իրողությունները վերաբերում են լեզվի բոլոր մակարդակներին՝ հնչյունական, բառային, քերականական:

Սույն հոդվածը ներկայացնում է ժամանակակից հայերենի անուն խոսքի մասերի համակարգում առկա լեզվական այն իրողությունները, որոնք, լինելով հակահամակարգային, ընդունելի են լեզվական նորմի կողմից: Մեր աշխատանքը մի քայլ է ժամանակակից գրական հայերենի լեզվական նման իրողությունները

ամբողջական տեսքով ներկայացնելու, ինչպես նաև մասնագիտական գրականության մեջ չներկայացված որոշ երևույթներ վերլուծելու ճանապարհին:

Քննությունը սկսենք գոյականի հոգնակիի կազմությունից:

Ժամանակակից գրական հայերենում գոյականի հոգնակին օրինաչափորեն կազմվում է **եր, ներ** մասնիկներով, հոգնակիի կազմության մեջ որոշ դեր ունեն նաև **իկ, այք, ք** մասնիկները: Միավանկ բառերը ստանում են **եր**, բազմավանկ բառերը՝ **ներ** հոգնակերսները:

Որոշ միավանկ բառերի՝ հին հայերենում ունեցած վերջնահանգ **ն**-ն, որը եզակիում ընկել է, հոգնակիի կազմության ժամանակ վերականգնվում է, ինչպես՝ **թռռ-թռռներ, մուկ- մկներ**, ընդ որում սա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ այդ միավանկ բառերը հանդես են գալիս որպես բաղադրյալ բառի վերջին բաղադրիչ, ինչպես՝ **սողաթռռ- սողաթռռներ, դաշտամուկ- դաշտամկներ**: Անկախ պատճառից՝ արդյունքում ստացվում է մի շարք միավանկ բառերի հոգնակիի՝ **ներ** մասնիկով կազմություն: Սակայն այս իրողությունը ևս ունենում է շեղումներ. մի քանի միավանկ բառերի գրաբարյան բաղաձայնահաջորդ **ն**-ն հոգնակիի կազմության ժամանակ չի վերականգնվում, որի հետևանքով միավանկ բառը օրինաչափորեն ստանում է **-եր** մասնիկը: Այդ բառերն են՝ **մաս(մասն)- մասեր, կողմ(կողմն)- կողմեր, սերմ(սերմն)- սերմեր, ող(ողն)- ողեր, ռունգ(ունգն)- ռունգեր, անձ(անձն)- անձեր, որդ(որդն)- որդեր, ուլ(ուլն)- ուլեր, բուրգ(բուրգն)- բուրգեր, բուռ(բուռն)- բուռեր/բռեր**:

Միավանկ բառերից **ռուս** բառը ևս ստանում է **ներ**, որը բացատրվում է բառի բարբառային արտասանությամբ՝ **(ը)ռուս** կամ **(ու)ռուս**, որով բառը դառնում է երկվանկ և ստանում **ներ**. վերջինս պահպանվում է նաև գրական հայերենում **ռուս** արտասանության դեպքում:¹

Բազմավանկ բառերից **ստեղն, եղեգն, բնեկն** պարզ, նաև **ազն, ակն, եղն, ռոն** երկվանկ վերջնաբաղադրիչով բարդ բառերը **եր** մասնիկ են ստանում՝ **ստեղն-ստեղներ, եղեգն- եղեգներ, բնեկն- բնեկներ, արքայազն- արքայազներ, որմզդեղն- որմզդեղներ, շողակն- շողակներ, հետիոտն- հետիոտներ** և այլն:² Կարծում ենք՝ այս բառերի՝ հոգնակիում **ներ** ստանալուն խանգարում է բառավերջում բաղաձայնների և հատկապես **ն**-ի առկայությունը. բաղաձայնների կուտակումը կառաջացնի անբարեհնչություն:

Իկ մասնիկով հոգնակի է կազմում միայն **մարդ** բառը, նաև այն բաղադրյալ բառերը, որոնց վերջին բաղադրիչը **մարդ** բառն է՝ **նախամարդ- նախամարդիկ, տղամարդ- տղամարդիկ**:

Կին բառի հոգնակին գրաբարաձև է՝ **կանայք**: Խոսքին հոետորականություն հաղորդելու նպատակով որպես կոչական գործածվում են նաև **տիկնայք** և **պարոնայք** ձևերը, սակայն նրանց համար կանոնական է **ներ**-ով հոգնակիակազմությունը:

Ըստ Ջահուկյանի՝ պատմական առումով ժամանակագրական տարբեր մակարդակներից են գալիս **կին** և **մարդ** բառերի հոգնակիի կազմության եղանակները: **Կին** բառի հոգնակիի կազմության եղանակը շատ հին է, այն առանձնահատուկ է եղել նույնիսկ համահնդեվրոպական շրջանում: **Մարդ** բառի

¹ Տե՛ս Աբրահամյան Ս.Գ. և այլք, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 2, Ե., 1974, էջ 49:

² Տե՛ս Ավետիսյան Յու., Ջաքարյան Հ., *Հայոց լեզու. Ձևաբանություն*, Ե., 2008, էջ 17:

հոգնակիի կազմության եղանակը սահմանափակ և առանձնահատուկ բնույթի էր նաև հին հայերենի շրջանում: ¹

Ինչ վերաբերում է **իկ** մասնիկի ծագմանը, ապա, ըստ Զահուկյանի, այն առաջացել է **իկ** ածանցից. <<Եթե տվյալ ածանցը, բացի հավաքական իմաստ արտահայտելուց, ունի նաև այլ կարգի իմաստներ, և հավաքական իմաստ արտահայտելը նրա համար գլխավորը չէ(հմմտ.- ություն-ը ուսանողություն, ուսուցչություն և այլ բառերի մեջ), ապա մենք գործ ունենք իսկական հավաքական բառերի հետ. այլապես տվյալ ածանցը յուրահատուկ միջին դիրք է գրավում հավաքական ածանցի ու հոգնանիշ վերջավորության միջև: Այս դեպքում հոդ կա անցման համար: Հայտնի է, օրինակ, որ արդի գրական հայերենի և բարբառների հոգնանիշ վերջավորությունները ծագում են նախկին հավաքական ածանցներից: Կարելի է ասել նույնիսկ, որ դրանցից **եր-ը** և **ներ-ն** են միայն վերածվել իսկական հոգնակերտ վերջավորությունների, իսկ **իկ-ը** և **այք-ը** դեռ լիովին չեն խզել կապերը ածանցներից և պահպանում են հավաքականության որոշ երանգ>>: ²

Ժամանակակից գրական հայերենի անվանական, մասնավորապես հոռվական համակարգի մասնիկները գլխավորապես մենիմաստ են, յուրաքանչյուր վերջավորություն մեկ իմաստի կրիչ է. **ընկերներիցս** բառաձևում **ներ-ը** արտահայտում է թվի, **ից-ը**՝ հոլովի, **ս-ն**՝ առկայացման քերականական իմաստ: Այս ընդհանրությունից շեղվում են **անք, ենք, ոնք, ունք** մասնիկներով գոյականները, որոնցում ուղիղ ձևում հանդես եկող **ք** մասնիկը, ինչպես նաև սեռական տրականի **ց-ն** արտահայտում են և՛ հոգնակի թվի, և՛ հոլովի իմաստ: Նշանակում է՝ այս դեպքում ունենք մասնիկների բազմիմաստություն:

Ժամանակակից գրական հայերենի տրական հոլովը ունի 8 հոլովիչ, որոնցով և անվանվում են ժամանակակից հայերենի 8 հոլովումները: Անկախ այս կամ այն հոլովման պատկանող բառերի քանակից՝ բոլոր այս ութ հոլովումներն էլ համարվում են կանոնական և օրինաչափ: Օրինաչափությունից շեղվում է **աղջիկ, սեր** և **մահ** բառերի հոլովումը. **աղջիկ-ը** հոլովվում է արտաքին թեքման **ա** հոլովումով, **սեր-ը**՝ արտաքին թեքման **ո** հոլովումով, իսկ **մահ-ը**՝ **վան**: Ընդ որում **սեր** բառի հոլովման անկանոնությունը չի սահմանափակվում միայն տրականում **ո** արտաքին հոլովիչ ստանալով. տրականի հոդավոր տարբերակը ունենում է **սիրուն** ձևը, որը առաջացել է հետևյալ հնչյունափոխությամբ՝ գրբ. սեր-սիրոյ-սիրոյն, աշխ.սիրո- սիրոյն-սիրուն:³ **Սեր** բառի բացառականում **ց-ից** առաջ ևս հանդես է գալիս **ու** մասնիկը՝ **սիր-ու-ց**, մինչդեռ բացառականում **ուց** վերջավորություն ունենում են միայն **ու** հոլովման պատկանող բառերը: **Սիրուց** բառաձևի **ու-ն**, ամենայն հավանականությամբ, գալիս է տրականից, քանի որ, ինչպես հայտնի է, բառերի մի մասի բացառականը կազմվում է տրականի հիմքից: Տրականում հոդի առկայությամբ **ո-ի ու-ով** փոխարինումը տեղի է ունենում ոչ միայն **սեր**, այլև **աստված** բառում՝ **աստծո-ն** > **աստծուն**, ընդ որում խոսքը ոչ միայն **ն**, այլև **ս,դ** հոդերին է վերաբերում՝ **սիրուս, աստծուդ**:⁴

¹ Տե՛ս Զահուկյան Գ., Բ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 184:

² Նույնը, էջ 184-186:

³ Ասատրյան Մ. Ե., *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1989, էջ 75:

⁴ Զահուկյան Գ., Բ., նշվ. աշխ., էջ 210:

Այլաձև հոլովման շարքը դասվող մյուս բոլոր բառերը (**հույս, լույս, սուգ, աստված, հավատ, մամուլ, խնդիր, պատիվ, հուր(ո արտաքին հոլովիչ), կայսր, դուստր(ե ներքին հոլովիչ), հանգիստ, կորուստ, ծնունդ, գալուստ** (յան արտաքին հոլովիչ) ունեն նաև կանոնավոր ի հոլովում, իսկ **աստված** բառը՝ կանոնավոր ու հոլովում:

Քննվող բառերի այլաձևությունը պատմական հիմք ունի, որոշ կապացություններում պահպանվում է գրաբարյան հոլովաձևը՝ **սգո թափոր, հավատո հանգանակ, մամլո ասուլիս, խնդրո առարկա, կորստյան ցավ** և այլն:

Այլաձև է համարվում նաև **մարդիկ** և **կանայք** բառերի հոլովումը՝ մարդկանց, կանանց:

Սովորաբար գոյականի եզակի և հոգնակի հոլովաձևերի միջև տարբերությունը լինում է քերականական թվի հարցում, իսկ բուն հոլովական տեսակետից դրանք համապատասխանում են իրար: Սակայն ժամանակակից հայերենում որոշ բառերի եզակի և հոգնակի ձևերի միջև լինում է անհամապատասխանություն: Այսպես՝ **լեռ, տուն** բառերը և սրանցով վերջացող բաղադրյալ բառերը, **-ում ածանցով** վերջացող բառերի զգալի մասը, **առաջ** բառը, եզակի հարացույցում չունենալով ներգոյական հոլով, հոգնակիում ունեն, օրինակ՝ **լեռում** հոլովաձև չկա, բայց կա **լեռներում**:

Բաղաձայնահաջորդ **ն**-ով վերջացող միավանկ բառերը (նաև որոշ բազմավանկ բառեր՝ **ամառն, ձմեռն, շարժումն**) ժամանակակից հայերենում ենթարկվում են **ան** արտաքին հոլովման, որը առաջացել է **ա** ներքին հոլովիչի և բառավերջի **ն**-ի կցումով: Այս միավանկ բառերի՝ հոգնակիի կազմության ժամանակ ևս **ն**-ն վերականգնվում է(կան բացառություններ, որոնց մասին խոսվել է), ինչպես՝ **բեռ- բեռան- բեռներ, գառ- գառան- գառներ**: Այս բառերի շարքից դուրս են մնում **հարս, մատ, ակ, կուռ** (վերջինս բնորոշ է խոսակցական լեզվին) բառերը, որոնք հոգնակիում ստանում են **ներ**, բայց հոլովվում են **ի** հոլովմամբ, ինչպես՝ **հարս- հարսներ- հարսի, մատ- մատներ- մատի, ակ- ակներ- ակի**:

Թեք հոլովաձևերի հոլովական մասնիկները կարող են ավելանալ ինչպես բառի անհնչյունափոխ, այնպես էլ հնչյունափոխված հիմքերին:

Չանդրադառնալով օրինաչափորեն կատարվող հնչյունափոխություններին (**ի>ը, ի՛, ու>վ, ու՛, ե>ի** և այլն)՝ ներկայացնենք եզակի օրինակներում կատարվող դեպքերը.

-**անուն** բառի հոլովման ժամանակ տեղի է ունենում ոչ թե ու>ա, այլ Օ>ա հերթագայություն,

-**կաշի** բառի հիմքը բնորոշվում է **ի>վ** հնչյունափոխությամբ,¹

-**աստված** բառի հիմքը բնորոշվում է **վա>ը** հերթագայությամբ,²

-**կանայք** բառի հոլովման ժամանակ կատարվում է **յ-ք>ն-ց** հերթագայություն:³

Հետաքրքիր իրողություն է, որ գրաբարյան բաղաձայնահաջորդ **ն**-ն, որը վերականգնվում է բառակազմության, հոգնակիի կազմության և պատմական դիտարկմամբ նաև տրական հոլովում, միայն **դուռ** բառի դեպքում առկա է նաև

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 186:

² Տե՛ս նույն տեղը, էջ 187:

³ Տե՛ս նույն տեղը:

բացառական և գործիական հոլովածներում: Հմմտ.՝ **դուռ- դռնից-դռնով, բայց՝ ձուկ- ձկից- ձկով, բեռ- բեռից- բեռով:**

Նույն բառի հոլովական այս կամ այն իմաստը տարբեր ձևերով արտահայտելու երևույթը առաջացնում է հոլովական զուգաձևություններ, որոնք շատ են հատկապես տրական հոլովում: Ինչպես նշում է Մ.Ասատրյանը, զուգաձևությունների առկայության հիմնական պատճառը ժամանակակից հայերենի ընդհանրական **ի** հոլովման գերիշխող դիրքն է:¹ Հետևաբար տրական հոլովում զուգաձևություն ունեցող բոլոր բառերի հոլովման տիպերից մեկը **ի** հոլովումն է: Բացառություն են կազմում միայն **տաքի** և **աստված** բառերը, որոնք տրականում ունեն համապատասխանաբար **ու//վա** և **ու//ո** հոլովիչները, ինչպես՝ **տաքու// տաքվա, աստծու// աստծո:**

Գոյականի կարևոր քերականական կարգերից է նաև առկայացումը, որը իրականանում է հոդերի միջոցով: Հոդերի արտահայտած իմաստներն ու գործառության դեպքերը հիմնականում օրինաչափ են ու ընդհանրական: Ընդհանուր օրինաչափությունից կան եզակի շեղումներ:

Ժամանակակից հայերենում հատուկ անունները ստանում են որոշիչ հոդ՝ անկախ հատուկ անվան փոխառյալ լինել- չլինելուց, նաև անկախ այն հանգամանքից, թե այդ հատուկ անունը եզակի է գործածված, թե առանձնահատուկ դեպքերում դարձել է հոգնակի: Այս օրինաչափությունից շեղվում են **անք, ենք, ոնք, ունք** մասնիկներով հոգնակիները, որոնք անհոդ են թե՛ ուղիղ, թե՛ թեք հոլովածներում, ինչպես՝ **Գրիգորենք- Գրիգորենց, Վեդունք- Վեդունց, Վարդանանք-Վարդանանց:** Հոդ չեն ստանում նաև այս մասնիկներով կազմված հասարակ անունները (**պապոնք, հերանք**), **մարդիկ, կանայք(տիկնայք, պարոնայք)** բառերը: **Աստված** բառը եզակի ուղիղ ձևում միշտ անհոդ է, իսկ տրականում և հոգնակի ձևերում կարող է լինել հոդով՝ **աստծուն, աստվածները, աստվածներին:** Պետք է նկատի ունենալ, որ **աստված** բառը, հատուկ անուն որոշիչ ունենալու դեպքում եզակի ուղիղ ձևում հանդես է գալիս հոդով, օրինակ՝ **Տիր աստվածը, Վահագն աստվածը** և այլն:

Ժամանակակից հայերենում բառահարաբերական ձևային բառին կցվում են որոշակի հաջորդականությամբ: Այսպես՝ անվանական համակարգում այդ հաջորդականությունը ենթադրում է հոգնակերտ վերջավորություն, հոլովական վերջավորություն, հոդ: Սակայն փոխանուն տրականի հոլովման ժամանակ հոլովական վերջավորությունները հանդիպում են որոշիչ հոդից հետո, օրինակ՝ **Հակոբին-ը, Հակոբին-ի-ն, Հակոբին-ից, Հակոբին-ով, Հակոբին-ում** և այլն:²

Ածական խոսքի մասը չունի գոյականին հատուկ քերականական հատկանիշներն ու դրանց դրսևորման բազմազանությունը: Ուստի և ածական խոսքի մասի համակարգում քիչ են գործող օրինաչափությունից շեղումներն ու բացառությունները:

Հայտնի է, որ ածականի գերադրական աստիճանի կազմությանը մասնակցում են **ամենա-** և **-ագույն** ածանցները, որոնց համատեղ գործածությունը նույն բառի մեջ համարվում է սխալ: Այս երևույթը թույլատրելի է միայն մարզական մի երկու տերմինի մեջ, որոնք պատճենված են ռուսերենից

¹ Տե՛ս Մասատրյան Մ.Ե., նշվ. աշխ., էջ 85:

² Ջահուկյան Գ.,Բ., նշվ. աշխ., էջ 212:

(**наилегчайший-ամենաթեթևագույն, наилучший-ամենալավագույն**) և կազմվել են չափի հատկանիշի բազմաստիճանություն արտահայտելու պահանջով:¹

Ածականը ունի փոխանվանաբար գործածվելու հատկություն, որի հետևանքով նա ստանում է հոդ, հոլովվում **ի** հոլովմամբ եզակի և հոգնակի թվերով և նախադասության մեջ կատարում գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններ: Ընդ որում փոխանուն բառի **ի** հոլովմամբ հոլովվելը վերաբերում է ոչ միայն ածականին, այլև բոլոր փոխանուններին: Այս օրինաչափությունից շեղվում է միայն **բարի** բառը, որը հոլովվում է **ու** հոլովմամբ՝ **բարու- բարուց** և այլն: Կարծում ենք՝ պատճառը համաբանությունն է, քանի որ **ի**-ով վերջացող բառերը հիմնականում ենթակվում են **ու** հոլովման: **Սառը(ն), դառը(ն), խառը(ն)** ածականները թե՛ որպես բուն ածական, թե՛ որպես փոխանուն ածական միջտ հանդես են գալիս հոդով: Օրինակ՝ **Քաղցր և դառը** սուրճերից նախընտրում եմ **դառը** (այսինքն՝ դառը սուրճը):

Փոխանվանաբար գործածվող ածականը նախադասության մեջ կարող է ենթակայի պաշտոն կատարել: Դրվելով ուղղական հոլովով՝ փոխանուն ածականը որպես օրինաչափություն պետք է ունենա հոդ, ինչպես՝ **Մեծը** ներս մտավ: **Կուշտը** սովածին մանր է բրդում: Սակայն նկատելի է մի հետաքրքիր իրողություն. եթե փոխանուն ածականը ունենում է **մի** անորոշ դերանվամբ արտահայտված որոշիչ լրացում, ապա ածականը հոդ չի ստանում: Օրինակ՝ **Մի կարճահասակ** մյուսին չպիտի նախանձի: **Մի տձև** մյուս տձևից ոչնչով չի տարբերվում: Հասկանալի է, որ երևույթի պատճառը **մի** դերանվան արտահայտած անորոշության մեջ է, քանի որ **մի** դերանուն որոշչի որոշյալը միշտ անորոշ է: Բայց մյուս կողմից էլ փոխանուն ենթական որպես օրինաչափություն պետք է հոդ ունենա: Ավելացնենք նաև, որ քննվող իրողությունը վերաբերում է նաև հարակատար և ենթակայական դերբայներին: Օրինակ՝ **Մի հարբած** օրորվելով անցավ ճանապարհը: **Մի երգող** լռեց, մյուսները հետևեցին նրան: Հայտնի իրողություն է, որ ածականը, հարակատար և ենթակայական դերբայները, հաճախակի գոյականաբար գործածվելով, կարող են վերածվել գոյականի, ինչպես՝ **աղքատ, հարուստ, մուր, ցուրտ, հավելված, կոտորած, ծնող, ուսանող** և այլն: Սակայն վերը բերված նախադասությունների ընդգծված օրինակներից երևում է, որ դրանք չեն կարող ընկալվել որպես գոյականացված ածական կամ դերբայ:

Թվական խոսքի մասի համակարգում առկա շեղումները ես քիչ են: **Ինը(ն)** և **տասը(ն)** թվականները, ինչպես նաև այն բաղադրյալ թվականները, որոնցում որպես վերջին բաղադրիչ հանդես է գալիս **ինը(ն)** արմատը, փախանվանական գործածության ժամանակ ուղղական հոլովում որոշիչ հոդ չեն ստանում:² Միայն նախադասության մեջ է հնարավոր դառնում որոշել նման թվականի թվականական կամ փոխանվանական կիրառությունը: Օրինակ՝ Ունի **քսանինը** գիրք, որոնցից **տասնինը** իրենը չեն: Ընդգծված բառերից առաջինը ունի թվականական, երկրորդը՝ փոխանվանական կիրառություն:

Երկու թվականը գոյականաբար գործածվելիս հոդից առաջ հանդես է գալիս գրաբարի հոգնակի հայցականի **ս-ն**՝ **երկուսը**:

¹ Աբրահամյան Ս., Գ., *Ժամանակակից գրական հայերեն*, Ե., 1981, էջ 167:

² Տե՛ս Պետրոսյան Զ., *Գոյականի առումները հայերենում*, Ե., 1960, էջ 86:

Քանակական թվականներից –**բորդ** և –**երորդ** ածանցներով կազմվում են դասական թվականներ: Դասական թվական չի կազմվում միայն **մեկ** թվականից: Վերջինիս համար գործածվում է **առաջին** բառը, որը կազմվում է **աջ** արմատից և **առ** ու **ին** ածանցներից: **Առաջին** բառը յուրահատուկ է նաև նրանով, որ ունի ածականի իմաստ, որի հետևանքով ածանցմամբ գերադրական աստիճան է կազմում, ինչպես՝ **հիմնարկի ամենառաջին մասնագետը, իմ ամենաառաջին անելիքը** և այլն: Բանն այն է, որ այս բառը նախապես ունեցել է ածականի իմաստ, ինչը վկայում են նրա՝ ՆՇԲ-ում բերված իմաստները՝ **նախկին, սկզբնական, իշխանական, գլխավոր, լավագույն, ազնվագույն** և այլն: Չնայած պետք է նշել, որ գրաբարի քերականության գրքերում իսկ **առաջին** բառը ներկայանում է որպես դասական թվական: Արդի հայերենի բացատրական բառարաններում ևս նշվում է **առաջին** բառի ածականական (հիմնական, գլխավոր, անհրաժեշտ) և նույնիսկ գոյականական (ջրիկ կերակրատեսակ իմաստով) իմաստները, բայց արդեն որպես թվականական իմաստից ածանցված:

Բաշխական թվականների համար սովորական չէ գոյականաբար գործածվելը, հատկապես երբ այն ունի կրկնավոր կազմություն: **Մեկ-մեկ** կրկնավորը ունի ոչ միայն բաշխական թվականի, այլև ավելի հաճախ մակբայի իմաստ: Օրինակ՝ **մեկ- մեկ հիշել, մեկ- մեկ հանդիպել, մեկ- մեկ այցելել**:

Մեկ թվականից իմաստային զարգացմամբ առաջացել է համանուն կապ՝ **տնով մեկ, աշխարհով մեկ**, իսկ նրա որոշյալի ձևի իմաստային զարգացումով՝ **մեկը** անորոշ դերանունը: Ի տարբերություն ածականի ու թվականի՝ դերանունը հարուստ է քերականական հատկանիշներով, որոնք դրսևորվում են առավել յուրահատուկ ու բազմազան ձևերով, քան որևէ այլ խոսքի մասի համակարգում: Դա բխում է դերանվան՝ որպես յուրահատուկ խոսքի մասի էությունից: Բանն այն է, որ դերանունները խոսքի մեջ կարող են փոխարինել գոյական, ածական, թվական, մակբայ խոսքի մասերին և ըստ այդմ էլ ունենում են համապատասխան խոսքի մասի քերականական հատկանիշներ: Բայց նույնիսկ այս դեպքում չկա միօրինակություն. կան առարկա ցույց տվող դերանուններ, որոնք չեն հոլովվում (ինքս, ինքդ, այս, այդ), կան գործողության հատկանիշ ցույց տվող բառեր, որոնք կարող են հոլովվել (այստեղ, այնտեղ): Դերանունը առանձնահատուկ է նաև հոլովի ու թվի քերականական կարգերի դրսևորման ինքնատիպությամբ ու անմիօրինակությամբ: Արդի հայերենի տասնմեկ դերանուն՝ **ես, դու, նա, մենք, դուք, ինքը** (անձնական), **սա, դա, նա** (ցուցական), **ով** (հարցական կամ հարաբերական), **իրար** (փոխադարձ), հոլովվում են անվանական-դերանվանական խառը հոլովմամբ, քանի որ հարացույցի անդամների մի մասը ձևավորվում է ինքնատիպ՝ սուպլետիվ ձևով, իսկ մյուս մասը (բացառական, գործիական, ներգոյական) անվանատիպ կազմություն ունի: Մնացած դերանունները հոլովվում են գոյականի նման և կարող են ունենալ հոլովական լրիվ կամ թերի հարացույցներ:

Թվի քերականական կարգի դրսևորման յուրահատկությունը երևում է ոչ միայն հոգնակիի կազմության, այլև նրա արտահայտած իմաստի մեջ: Առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների հոգնակիները ցույց են տալիս որևէ ընդհանրությամբ միավորվող մարդկանց խումբ, որի մեջ մտնում է նաև խոսողը (մենք) կամ խոսակիցը (դուք): Ի տարբերություն գոյականի՝ դերանվան հոգնակիի կազմության մեջ բավականին ակտիվ է **ք** մասնիկը: Դերանվան հոգնակին կարող է կազմվել եզակի ուղղականից (**դու+ք, ինչ+եր**), եզակի

տրականից (**սրան+ք, իրեն+ք**) կամ բոլորովին այլ արմատից (**ես- մենք**): Ով դերանվան հոգնակիի կազմությանը մասնակցում են երկու հոգնակերտներ՝ **ք, եր**:

Դիմային հարաբերությամբ անձ ցույց տվող դերանուններից միայն **ինքը** դերանունը կարող է հանդես գալ իրի փոխարեն: Օրինակ՝ Ժամանակը ամեն ինչ **իր** տեղն է դնում: Հասկանալի է, որ այս դեպքում փոխաբերական գործածությունները նկատի չենք ունենում: **Ոմն** դերանունը գրաբարում անձ էր ցույց տալիս անորոշ նշանակությամբ, հոլովվում էր, ուներ գոյականական և ածականական իմաստ ու կիրառություն: Ժամանակակից հայերենում այն ունի միայն ածականի իմաստ ու կիրառություն, նշանակում է <<**ինչ-որ**>>, չի հոլովվում և դրվում է միայն անձ ցույց տվող բառերի վրա՝ **ոմն ուսանող, ոմն երգիչ**: **Ոմն** դերանվան հոգնակին՝ **ոմանք**, ունի միայն գոյականական նշանակություն, կիրառություն, հոլովվելու հատկանիշ: Ստացվում է, որ նույն բառի եզակին ունի ածականի իմաստ, կիրառություն, իսկ հոգնակին՝ գոյականի: **Այլ** դերանունը ունի առարկայի հատկանիշի իմաստ՝ այլ կարծիք, այլ հարց: Առարկայի իմաստ արտահայտելու համար ստանում է միայն **ն** հոդ՝ ձեռք բերելով փոխանվանական գործածություն: Մակայն ի տարբերություն փոխանվանաբար գործածվող մյուս բառերի՝ **այլն** ձևը, ինչպես նաև հոգնակի ուղղականի **այլք** ձևը կիրառվում են միայն հաջորդաբար թվարկվող բոլոր առարկաները չնշելու, թվարկումը սահմանափակելու նպատակով: **Այլն** ձևի յուրահատկությունը նաև այն է, որ թեք հոլովներում հոլովական վերջավորությունը դրվում է **ն** հոդից հետո՝ **այլնի, այլնից, այլնով** և այլն: **Այլք** ձևը ունի միայն առարկայական նշանակություն, թեք հոլովներից ունի միայն տրականի **այլոք** գրաբարյան ձևը: Ուրեմն այս դեպքում ևս ունենք **ոմն** բառի նույն յուրահատկությունը. եզակին ունի հատկանիշի, իսկ հոգնակին՝ առարկայի իմաստ: Թե՛ **ոմն**, թե՛ **այլ** դերանունների նման շեղումը ունի ընդհանուր պատճառ. գրաբարում այս դերանունների եզակիները ունեցել են նաև առարկայի իմաստ, որը ժամանակակից հայերենում չի պահպանվել, մինչդեռ հոգնակիները շարունակում են պահպանել այդ իմաստը: **Ոմանք** և **այլք** բառաձևերը հոդ չեն ստանում, որի պատճառը գրաբարյան **ք**-ի առկայությունն է:

Անձնական դերանունների յուրաքանչյուր դեմքի համար ժամանակակից հայերենը ունի գույզ դերանուններ՝ **ես- ինքս, դու- ինքդ, նա- ինքը, մենք- ինքներս, դուք- ինքներդ, նրանք-իրենք**: Մակայն եթե առաջին և երկրորդ դեմքերի գուգահեռ ձևերի միջև իմաստային էական տարբերություն չկա, ապա **ինքն** դերանունը ոչ միշտ է արտահայտում **նա** դերանվան իմաստը և հետևաբար ոչ միշտ է հնարավոր փոխարինել **նա** դերանունով: Եթե գործողության առարկան և գործողություն կատարողը համընկնում են, գործածվում է **ինքը** դերանունը, հակառակ դեպքում՝ **նա** դերանունը:

Առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանուններին խնդրառությունը փոխվում է՝ կախված **շնորհիվ** կապի շարադասությունից, ինչպես՝ **իմ(մեր) շնորհիվ- շնորհիվ ինձ(մեզ), քո(ձեր) շնորհիվ- շնորհիվ քեզ(ձեզ)**:

Հարցական և հարաբերական դերանունների առանձին, թե դերանվան մեկ տեսակ համարելու հարցը լեզվաբանների կողմից տարբեր կերպ է ընկալվում ու ներկայացվում, ընդ որում յուրաքանչյուրը փորձում է իր կարծիքը հիմնավորել համոզիչ փաստերով: Այդ դերանունները մեկ տեսակի մեջ միավորող, նաև հակառակը պնդող լեզվաբանները ուշադրություն չեն դարձրել մի կարևոր հանգամանքի. դրանք բառային կազմով նույնը չեն. **ինչու, քանի, որերորդ, քանիերորդ** դերանունները չեն կարող հանդես գալ նախադասություններ

կապակցողի դերում, ուրեմն և հարաբերական համարվել չեն կարող: Մի հետաքրքիր դիտարկում ևս, որը հաստատում է այդ դերանունների՝ առանձին տեսակ լինելը և անմիջական առնչություն ունի մեր քննության նպատակի հետ: **Որ** հարցական դերանունը առանց հոդի միայն հատկանիշի իմաստ ունի, հոգնակի **որոնք** ձևը հոդ չի ստանում և բացառապես առարկայի իմաստ ունի: Մինչդեռ **որ** հարաբերական դերանունը հոդով և առանց հոդի միայն առարկայի իմաստ է արտահայտում, հոգնակին՝ ևս:

Այսպիսով՝ անուն խոսքի մասերի համակարգում առկա անկանոնություններն ու շեղումները մասնավորապես և լեզվական յուրաքանչյուր իրողություն ընդհանրապես ունենում է իր ծագման, գոյության ու պահպանման հիմունքը, իսկ այդ ամենը լեզվի՝ որպես կենդանի երևույթի փոփոխականության, զարգացման ու կատարելագործման գործընթացի արտացոլումն է:

Գրականություն

1. Աբրահամյան Ս. Գ. և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974:
2. Աբրահամյան Ս., Գ., Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981:
3. Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967:
4. Աղայան Է. Բ., Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Ե., 2014:
5. Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
7. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989:
8. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հայոց լեզու. Ձևաբանություն, Ե., 2008:
9. Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
10. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (հեղ.՝ Գ. Ավետիսյան, Խ. Սյուրմեյան, Մ. Ավգերյան), Ե., 1979:
11. Պետրոսյան Հ. Զ., Գոյականի առումները հայերենում, Ե., 1960:
12. Զահուկյան Գ., Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. Ա. Յու. Սարգսյանը:

ՀՏԴ 809. 198.1

Հայոց լեզու

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ

ԱրՊՀ, ք. գ. թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն,

E-mail: silvaminasyan50@mail.ru

XX ԴԱՐԻ ՄԵԾ ԼԵԶՎԱԲԱՆԸ (Աշոտ Աբրահամյան-100)

Անվանի գիտնական Աշոտ Արսենի Աբրահամյանը XX դարի արևելահայ լեզվաբանության հանրահռչակ ներկայացուցիչներից է՝ բայի մանրամասնված, համակողմանի գիտականորեն հետազոտած դեմքերից: Այդ խոսքի մասի անդեմ ու դիմավոր ձևերի՝ ծագումնաբանական, պատմական քննարկումների, բառական-քերականական կազմության, սեռի քերականական կարգի համակողմանի ու նորարարական դիտարկման ներկայացրած հեղինակ էր: Բայ խոսքի մասն այդ ժամանակահատվածում ուսումնասիրության էր ենթարկվել շատ լեզվաբանների կողմից՝ տարբեր տեսանկյուններով, իսկ Ա. Ա. Աբրահամյանը նոր ձևով էր քննարկել հատկապես բայասեռի քերականական կարգի հարցը՝ սեռադաս (անցողական ու անանցողական), սեռ, սեռային առում (պատճառական, միջին-անդրադարձ), կրկնասեռություն՝ հազեցած գիտական նորակազմ բառերով:

Բանալի բառեր՝ Բայ, դերբայ/ընդունելություն՝ անորոշ (աներևույթ), անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժխտման (ըդական), դիմավոր կամ եղանակային ձևեր, սեռադաս՝ անցողական, անանցողական, սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոք, կրկնասեռ, սեռային առում՝ միջին-անդրադարձ, պատճառական:

С.Минасян

ЗНАМЕНИТЫЙ УЧЕНЫЙ 20-ОГО ВЕКА

/ Ашот Абрамян -100/

Известный ученый Абрамян Ашот Арсенович - один из ярких представителей восточно-армянской лингвистики двадцатого века, подробно и научно изучивший глагол, этимологию грамматической категории вида этой части речи, исторических диспутов, словесно грамматического состава, новаторского и подробного исследования грамматической категории языка. В этот период времени многие языковеды изучали глагол как часть речи, а А.А.Абрамян новаторски подошел к изучению именно вопроса грамматической категории залога: переходные и непереходные, залог и его значение (побудительное,

средневозвратное) и повтор залога, насыщенное новыми словами – терминами.

Ключевые слова: *глагол, причастие, неопределенный, несовершенный, причастие будущего времени, деепричастие прошедшего времени, отрицательные (изъявительные), личные формы или формы наклонения, переходный, непереходный, действительный залог, страдательный залог, значение залога: средневозвратное и побудительное.*

S.Minasyan

THE XX CENTURY'S FAMOUS LINGUISTIC SCIENTIST

/ Ashot Abrahamyan -100 /

Famous scientist Ashot A.Abrahamyan - one of the brightest representatives of the Eastern Armenian linguistics of the twentieth century, studied verb in detail and scientifically, etymology of grammatical category of this part of speech, historical disputes, verbal grammatical structure, innovative and detailed study of the grammatical categories of language. During this time, many linguists have studied the verb as a part of speech, and A.A.Abramyan innovatively approached the study was the question of the grammatical categories of collateral: transitive and intransitive, collateral and its value (causative, medium-term) and repeat of the voice, full of new words -terms.

Keywords: *verb, participle / indefinite, imperfect, participle of the future tense, gerundive of past tense, negative (indicative), personal forms or forms of inclination, transitive, intransitive, active voice, passive voice, value of voice: middle-term and causative.*

Աշոտ Աբրահամյանը (1918-1985) ծնվել է Սևանի հյուսիս-արևմտյան լեռնահովտային մոտակա Գեղամավան գյուղում՝ շինականի ընտանիքում: Փոքրուց ծանոթ էր տնտեսական աշխատանքներին և հորթ ու գառ պահելու աշխատանքներին: Հրազդանի դպրարագեղ ավիին գառներն ու հորթերը պահելիս, հիացել էր բնության սքանչելի հրաշալիքներով՝ ջանասիրաբար օգնելով իրենց տնտեսությանը: Տարրական կրթությունը ստացել է ծննդավայրում, միջին դասարաններն ավարտել է շրջանային դպրոցում, միջնակարգը՝ Երևանում: 1937 թ. ուսուցչական աշխատանքի էր անցել Հրազդանի (Ախտա) շրջանային գյուղերում՝ դասավանդելով հայոց լեզու և գրականություն: Եղել է նաև ուսմասվարի, տնօրենի պաշտոններում: Երիտասարդ հասակում սքանչացել է սրտի թագուհու հմայքներով (1940 թ. երկու տասնյակից ավելի բանաստեղծություններ են պահպանվում՝ զուգակցված հայրենի սքանչելի բնաշխարհին ու հայրենիքին): Մեծ լեզվաբան Աշոտ Աբրահամյանը բուհն ավարտել է հեռակա՝ աչքի ընկնելով իր արտակարգ մտածողությամբ ու քննադատական մտքով: 1944-47 թթ. նույն ձևով շարունակել է ասպիրանտուրան, իսկ 1948 թ. պաշտպանել թեկնածուականը: 1949 թ. ստացել դոցենտի կոչում: 1943/44 ուսումնական տարուց մինչև կյանքի վերջը դասախոսական աշխատանքի էր անցել Խ. Աբովյանի անվան ինստիտուտում՝ դասավանդելով գրաբար, ժամանակակից հայոց լեզու ու լեզվաբանություն և ուներ իր ընտանիքը (չորս դստեր հայր էր): 1950/59 թթ. աշխատել է նաև գիտությունների ակադեմիայում ու հայոց լեզվի սեկտորի վարիչ էր. այնուհետև՝ բուհական, իր հիմնական

աշխատանքին զուգահեռ, նաև այստեղի գիտական խորհրդում: Խ. Աբովյանի անվան ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչ էր 1960 թ.: 1963 թ. անվանի գիտնականը պաշտպանել է դոկտորական դիսերտացիա Բայագիտությունից, 1964 թ. ստացել պրոֆեսորի պաշտոն, հետո նաև ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ էր, գիտության վաստակավոր գործիչ¹ (1965 թ.): Նա հիմնականում զբաղվել է հայոց լեզվի պատմական քերականության, գրաբարի և ժամանակակից հայերենի բայագիտական հարցերով ու որպես խորահմուտ մասնագետ՝ հայտնի լեզվաբանների ուշադրության կենտրոնում էր: Նաև լեզվի ավանդման գիտամեթոդական խնդիրներով էր հետամուտ եղել: Մեծանուն Ա. Ա. Աբրահամյանը «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը»² գրքում հայ քերականագիտության պատմության մեջ (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, բարբառներ) բազմակողմանի համառոտ ու լուրջ տվել է դերբայների մասին եղած գիտական տարբեր ըմբռնումների, վերլուծությունների համառոտ պատմությունն ու իր քննարկումները: Գիրքը բաղկացած է երեք մասից: Այս կապակցությամբ անվանի լեզվաբան Էդ. Աղայանը քննարկել է այդ երեք մասերը ու տվել իր բարյացակամ վերաբերմունքը «Հայ լեզվաբանության պատմություն»³ աշխատության II հատորում, հատկապես դերբայներն այլ խոսքի մաս չհամարելու կապակցությամբ: Ահա մեծանուն գիտնական Ա. Ա. Աբրահամյանի կատարած ընդհանրացումը. «Դերբայը ուրույն քերականական հասկացություն է, բայց ոչ ուրույն խոսքի մաս, իսկ սրանից բնավ էլ չպետք է եզրակացնել, թե այն խոսքի մասերից դուրս է առհասարակ: Որպես խոսքի մաս դերբայը նույն բայն է: ...Բայը խոսքի մեջ դրսևորվում է երկու ձևով՝ դիմավոր և դերբայական: Ուրեմն՝ դերբայը բայի՝ խոսքի մեջ դրսևորման մի ձևն»⁴ է:

Մեծանուն գիտնականն այս աշխատության առաջին մասում քննարկել է դերբայները, որպես բայ խոսքի մասի բաղադրիչ, V դարից առ իր ապրած ժամանակահատվածը: II մասում վեր է լուծել հնագույն ձևերը, հետագա զարգացումները, հատկապես –ում, –իս, –ած (–ուած) դրսևորումները մատենագիտությունում և դրանց զարգացումն ու արդի վիճակը, բարբառներում եղած իրողությունները: Էդ. Աղայանի անվանած *մակբայական դերբայ*ն անկատարի II-ական ձև է կոչել (Էդ. Աղայանի՝ Մեղրու բարբառի քննարկումները հատվածում՝ անորոշ դերբայի –ի փոխարկումը –ս-ի⁵ և այլը. այդ դերբայն ուներ անկատարի II-ական ձև անվանումը, իսկ հիմա՝ համակատար, *զուգընթացական*⁶): III գլխում դերբայների ձևաբանական դերի մանրագննիսն ուսումնասիրությունն է

¹ Էդ. Աղայան, *Հայ լեզվաբանության պատմություն*, հ. II, էջ 376-379, Ե., ԵՊՀ հրտկչ., 1962 թ., 388 էջ, Հ. Զ. Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, էջ 11, Ե., Հայաստան հրտկչ., 1987 թ., 686 էջ, Ա. Ա. Աբրահամյան, *Հայագիտական հետազոտություններ, մտորումներ, խոհեր*, Ե. Գիտ., Արտագրքս հրտկչ., 2001 թ., 184 էջ:

² Ա. Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., 1953 թ., 440 էջ:

³ Էդ. Աղայան, *Հայ լեզվաբանության պատմություն*, հ. II, էջ 376-379, Ե., ԵՊՀ հրտկչ., 1962 թ., 388 էջ:

⁴ Ա. Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, էջ 41, Ե., 1959 թ.:

⁵ Ն. տ., էջ 106, 107:

⁶ Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. II (ձևաբ.), էջ 316, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., 1974 թ., 588 էջ:

փաստական հարուստ նյութերի հիման վրա: Բնական է, գրքի սկզբում ստալինյան, մառական մոտեցումներ են շոշափված, ինչպես նաև կիրառված են արդի հայեցակետով մի շարք անհարկի օտարաբանություններ: Ժամանակին ռուսերենից կատարված փոխառություններ էին ցանկացել համարել: Օրինակ, *տրադիցիա* բառը կիրառված է այսպես. «*Գաբրիել Ավետիքյանը հիմնական հարցերում չխախտելով տրադիցիան*» (սրա մոտ էլ դերբայն աներևույթ եղանակ է, մյուս դերբայները՝ ընդունելություն, վերջինս էլ առանձին խոսքի մաս է), *առարկում է այն քերականներին որոնք* ընդունելություն *տեքմինը չեն բացատրում բայի և անվան հատկությունների ընդունումով*» (էջ 27): Դեռևս Ստ. Մալխասյանցն¹ իր «*Հայերեն բացատրական բառարան*»-ում նշել էր հայկականը՝ *Աւանդություն*, որն ավելի հարմար ձևով կարելի էր նշել՝ *սովորությունը* նն: Եվ այդպես այլ բառեր՝ *դիֆերենցիայի* փորձ է կատարվում (էջ 17), իբրև *իլյուստրացիա* (էջ 16), կատեգորիա (էջ 25), կոնցեպցիա (էջ 32) և այլն: Որպես լեզվաբան՝ արժեք , որ ուշադրություն դարձներ:

Ա. Ա. Աբրահամյանի հաջորդ հանրահայտ աշխատանքը բուհական դասագրքի արժեք ունի: Դա «*Գրաբարի ձեռնարկ*»-ն² է, որտեղ շատ հաջող համակարգված ներկայացված էր *ձևաբանություն* բաժինը (գրքին կցված են գործնականների համար հաջող ընտրված բնագրեր, ծանոթագրություններ ու բառարան): Այդ դասագրքի բոլոր հրատարակություններն ուսանողների համար առաջնակարգ դասագրքեր էին:

Հայերենին անվանի նվիրյալի գիտական աշխատությունների փառքը «*Բայը ժամանակակից հայերենում*» աշխատությունն³ է (դրանով հեղինակին շնորհվել էր բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան): Այս աշխատությունը XX դարի բայագիտական⁴ նվաճումների գիտական խոր ու համակողմանի առաջընթացն էր: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բ. Հ. Վերդյանը⁵ նշել է. «Այս աշխատությունն աչքի է ընկնում հայ դասական լեզվաբանության և արդի լեզվաբանական մտքի նվաճումների ստեղծագործական համադրությամբ ու գիտական նորություններով: Բավական է միայն վերցնել հայերենի բայի ծագման ու կազմավորման և բայական սեռին հատկացված բաժինները, որպեսզի անմիջապես զգացվեն գիտական խիզախումը, հեղինակի պրպտող միտքն ու գիտական հայտնագործությունների անակնկալ հաճույքը: Ոչ

¹. Ստ. Մալխասյանց, էջ 443, ֆրանսերենից ռուսերեն, *Հայերեն բացատրական բառարան*, հ. IV, Ե., ՀՍՍՌ պետական հրտկչ., 1945 թ., 618 էջ:

². Ա. Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ* (I հրտկ-ը՝ 1952 թ., այնուհետև վերահրտրկ-ը), IV հրատկյթ., Ե., Լույս հրտկչ., 1976 թ., 588 էջ:

³. Ա. Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, գիրք I, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրտկչ., 1962 թ., 730 էջ:

⁴. Կային նոր հրատարակված հետևյալ աշխատությունները՝ Հ. Խ. Բարսեղյան, *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Ե., 1953 թ., Մ. Ե. Ասատրյան, *Բայի սեռերը ժամանակակից հայերենում*, Ե., 1959 թ., Պ. Մ. Պողոսյան, *Բայի եղանակային ձևերի ոճական կիրառություններն արդի հայերենում*, Ե., 1959 թ., Ա. Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայականություն*, Ե., 1959 թ., Թ. Գ. Ջուհարյան., *Բայի ուսուցման հիմնական հարցերը*, Ե., 1956 թ.:

⁵. Բ. Հ. Վերդյան, *Համակ նվիրում*, էջ 19 (Ա. Ա. Աբրահամյան, *Հայագիտական հետազոտություններ, մտորումներ, խոհեր*, Գիտ. Ե., Արտագերս հրտկչ., 2001 թ., 184 էջ):

միայն հայ, այլև ընդհանուր լեզվաբանության համար մեծ արժեք են ներկայացնում հայերենում բայական կրկնասեռության, նրա դրսևորումների ու պատճառների քննությունը»:

Մեծանուն լեզվաբան Ա. Ա. Աբրահամյանն այս աշխատությունում մանրամասնված ուշադրություն է դարձրել բայերի համադրական և վելուծական (հարադրական) կազմության երկու հիմնական տիպերին (բառակազմական ու քերականական հարադրությունների տարբերակումներին և այլն): Համադրական բայերում քննարկվել են այլ խոսքի մասերից համապատասխան ձևությոներով նոր խոսքի մաս կերտելու իրողությունները: Կատարված են նաև անվանակազմ բայերի իմաստային խմբավորումներ: Կրկնավոր բայերը քննարկված են վաղնջահայերենի շրջանից առ իր ապրած ժամանակահատվածը՝ ներառյալ բնաձայնականները: Փոխառյալ բայերի վերակազմական ձևերն են մանրամասնված ուշադրության արժանացել: Դրանք կատարված են հին, նոր, նորագույն փաստերով, համապատասխան մասնիկների առանձնացմամբ: Ածանցական բայատիպարների բաժնում ցույց են տրված սկզբնատիպ բայերի ածանցավոր և ածանցագուրկների փոխհարաբերությունը: Նույնիսկ ուշադրություն էր դարձրել կրավորական ձևով ներգործական բայերի պատահական կիրառություններին: Օրինակ՝ Խնկո-Ապրո հանրահայտ «Խոզն ու ագռավը» չափածո առակի հանգի գոհ բայական ներգործական սեռի բառաձևում անհարկի –վ-ին՝ Խոզն ագահ ու անհագ այնքան կաղին *զխտվեց*¹,// Որ ցած ընկավ ու փռվեց (*զխտել* խոսակցական բայը ներգործական սեռի է): Այստեղ շեշտված է այդ բայի գեղագիտական սխալը, որը մեծ ճանաչում ունենալու պատճառով հասարակության շրջանակներում այդպիսի կառուցվածքով ճանաչում գտավ (արհամարհական, անարգական ոճի խոսակցական այս բայը Հր. Աճառյանի «Գաւառական բառարան»-ում² տեղ ունի բարբառային արտահայտություն ձևով՝ Մշո բարբառ (ներգործաձև)՝ *զխտել*, Վանի բարբառ (կրավորաձև և -կ ածանցով)՝ *զխկուիլ*, նաև *զխտել*// -վել ձևով: Որպես արևելահայերեն խոսակցական բառ՝ այն Հ. Խ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան»-ում³ է հիշված, բայց –վ-ի անհարկի լինելը նշված չէ:

Լծորդությունները, իբրև բայերի կառուցվածքային քերականական ամենաընդհանուր խմբավորումներ, Ա. Ա. Աբրահամյանի կողմից ցույց են տրվել փոփոխությունների (*լծորդափոխական երևույթ*⁴) ու համահարթումների իրողություններում: Դրանք կրկնալծորդությունների և այլ բաժիններում են քննարկվել:

Բայափոխներն ուսումնասիրվել են բայերի քերականական ձևակազմության մեջ, հատկապես հիմքի ցոյական տեսակի լայն տարածման, դրա հանդեպ անցյալական տեսակի սահմանափակման, բայերի ածանցական տիպարների պատմական փոփոխությունների ու ածանցական արդի ձևակազմության

¹ Ա. Ա. Աբրահամյան, էջ 657, *Բայը ժամանակակից հայերենում*, գիրք I, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրտկչ., 1962 թ., 730 էջ:

² Հր. Աճառյան, *Գաւառական բառարան*, էջ 321, Թիֆլիս, 1913 թ., 1142 էջ :

³ Հ. Խ. Բարսեղյան, *Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան*, էջ 316, Ե., Լույս հրտկչ., 1973 թ., 978 էջ:

⁴ *Լծորդափոխական երևույթ*, էջ 315, Ա. Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, գիրք I, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրտկչ., 1962 թ., 730 էջ:

հետևանքով հիմքերի մեջ առաջացող փոփոխությունների և հարակից այլ երևույթների մասին եղած օրինակներում:

Մեռի կարգը լուսաբանելիս (երեք սեռը՝ ներգործական, չեզոք (սրանք սկզբնասեռ կամ հիմնասեռ) և կրավորական) *անցողականության* (ուղիղ խնդիր ընդունելը) և *անանցողականության* հարցերով են լուսաբանվել: Դրանք համարվել են *սեռադասեր*¹, իսկ իսկ պատճառականը և միջին-անդրադարձը՝ *սեռային առումներ*² են:

Ա. Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» աշխատությունը պարունակում է նաև առ այսօր բառարաններ չմտած լեզվաբանական նորակազմ գիտաբառեր³ բայագիտությունից, ինչպես՝ լծորդափոխական (315), հիմնասեռ, սկզբնաձևային, սկզբնասեռ (էջ 512), սեռադաս (էջ 9, 517) և այլն:

Մեծ ճանաչում ստացած լավագույն լեզվաբան Ա. Ա. Աբրահամյանը հեղինակ է նաև բազմաթիվ արժեքավոր գիտական հոդվածների, որտեղ քննարկվել են պատմական հնչյունափոխության, բայական կրկնասեռության, ժամանակակից հայերենի կրկնավոր բայերի, փոխառությունների հետ կապված բայակազմական մի շարք իրողություններ և այլ հարցեր: Նա գրաբարից ժամանակակից հայերենով թարգմանել էր նաև Եզնիկ Կողբացու մեծարժեք «*Եղծ աղանդոց*»-ը՝ համապատասխան հմուտ ծանոթագրություններով և գիտական առաջաբանով: Հաջորդ թարգմանած գործը Ստեփանոս Օրբելյանի (անհայտ-1305) «*Մյունիքի պատմությունն*» է՝ էլի համապատասխան առաջաբանով (լատիներեն, ֆրանսերեն, ռուսերեն, վրացերեն թարգմանություններին էլ էր անդրադարձել): Երախտաշատ հեղինակ Ա. Ա. Աբրահամյանը գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ էր, ղեկավարել և օժանդակել էր բազմաթիվ սկսնակ ու որոշ ծառայություն ունեցած լեզվաբանների գիտական աշխատությունների իրացմանն ու հեղինակների համապատասխան գիտական աստիճանին հասնելուն: Նա գիտական բնագավառի վաստակավոր գործիչ էր և ուներ արտակարգ հիշողություն (անգամ հիշում էր, թե որ ատենախոս (դիսերտանտ) երբ և ինչ թեմա էր ստացել ու ինչ գործ է կատարել այդ կապակցությամբ կամ չի կատարել երեք տարվա ընթացքում: Զլացողներին կամ ինչ- որ այլ պատճառներով չկատարողներին զրկել է այդ թեմայից, եթե նորից էին դիմել, տվել էր մեկ ուրիշը: Մենք (Ս.Ս.) դա զգացել ենք մեր մաշկի վրա: Այդպիսի անաչառ վերաբերմունք երեք տարին մոռացողների նկատմամբ սխալ չէր: Օրինակ՝ ես հիվանդանոցներում շատ էի եղել ու երեք տարում աշխատանքի ու ընտանեկան պարտակա-

¹. Ն. տ., էջ 517:

². Ն. տ., էջ 516:

³. Համեմատված են հետևյալ բառարանների հետ՝ Հ. Խ. Բարսեղյան, *Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տեղմիներանական բառարան*, էջ 316, Ե., Լույս հրտկչ., 1973 թ., 978 էջ, *Ժամանակակից հայերենի բացատրական բառարան*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., հ. II, 1972 թ., 716 էջ, հ. III, 1974 թ., 576 էջ, հ. IV, 1980 թ., 828 էջ, Հ. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, *Լեզվաբանական բառարան*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., 1975 թ., 318 էջ, Աղայան Էդ., *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., Հայաստան հրտկչ., 1976 թ., 1616 էջ, Խլղաթյան Ֆ. Հ., *Բառարան-տեղեկատու* (սոր բառեր և իմաստներ), Ե., Հայաստան հրտկչ., 1982 թ., 168 էջ, Հ. Զ. Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, Ե., Հայաստան հրտկչ., 1987 թ., 686 էջ, Սեդա Էլոյան, *Արդի հայերենի նորաբանությունների բառարան*, Ե., Նաիրի հրտկչ., 2002 թ., 492 էջ:

նությունների հետ չէի հասցրել ու չէի էլ հասկացել տրված ժամկետը (հատուկ փաստաթղթեր չէի տրվել): Աղեկտուր արցունքներս իբր չնկատելով՝ մեղմ ու հոգատարությամբ ասել էր. «Մտ. Ջորջանի նորավեպերի վրա կատարած աշխատանքդ ժամանակին չես բերել, հիմա էլ Հովհ. Շիրազի պոեմների վրա աշխատիր» (այդ ժամանակ գրական թերթում ընթերցել էի մեծանուն բանաստեղծի «Խաղաղություն ամենեցուն» պոեմից հատված և հիացական նամակ էի գրել հեղինակին՝ բառաստեղծական անկրկնելի տաղանդի վերաբերյալ, հատկապես հատուկ անունից բայ ստեղծելը՝ մասիսվել և այլն. սա նշեցի, լուսահոգի Ա. Աբրահամյանն իսկույն հանգիստ ասաց. «Քո թեման պատրաստ է, միայն արագ աշխատի՛ր, կանացի գործերից մի քիչ հեռու մնա՛» և տխրամած աչքերով նայեց անորոշության): Ցավոք, անգույթ մահը չթողեց, որ նա տեսներ շիրազապաշտի գիտական հաջողությունը, որն ադրբեջանահպատակ Արցախում մեծ հանդգնություն էր (միշտ ՊԱԿ-ի (ԿԿԵ) հսկողության տակ էի): Մեծ գիտնականին բացարձակ ճերմակահեր էի տեսել: Ասում էին, որ թույլ սովորող մի ուսանողուհու դիտողություն էր արել երկրորդ անգամ վերաքննությունից անբավարար ստանալու համար (նա զգուշացրել էր, որ III-ի անհաջողությունը դուրս մնալու վտանգ է ստեղծելու): Ուսանողուհին լուռ դուրս էր եկել ու գնացել Հրազդանի կամուրջից իրեն նետել և հոգին ավանդել, երբ այդ լուրը փոխանցել են Ա. Ա. Աբրահամյանին, գիշերը մազերը լրիվ ճերմակել են քնած ժամանակ, երևի մտքում եղած ահավոր ապրումների պատճառով, թեկուզ ինքն անմեղ էր (անզիջում էր մայրենիի նկատմամբ անտարբեր սովորողների նկատմամբ, միայն *վերինի*, հատկապես ՊԱԿ-ի նկատմամբ էր խեղճանում, որովհետև դրա դառը պատմությունը հոյակապ էր հիշում...):

Մեծանուն հեղինակի ծննդյան հարյուրամյակն է: Հայ լեզվաբանության պատմությունում միշտ արժանահիշատակ կհիշվի մեծավաստակ գիտնականը, մայրենիի անաչառ ու բարեխիղճ նվիրյալը, մեծ ուսուցիչ Ա.Ա.Աբրահամյանը:

Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.թ. Հ.Մ.Ղազարյանը:

ՀՏԴ 82.09

Գրականագիտություն

Էդուարդ ՄԿՐՏՅԱՆ

Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համլսարան, բ. գ. դ.,
պրոֆեսոր, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս

ԶՈՒԽՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆԻ «ԱԶԳԱՅԻՆ ՈԳՈՒ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Զուխրա Երվանդյանի սույն մենագրությունը նոր խոսք է ժամանակակից հայ գրականագիտության ասպարեզում: Հեղինակը կարողացել է մեծավ հաջողությամբ լուծել իր առաջադիր խնդիրը՝ Վարդան Հակոբյանի բազմաժանր և բազմաթեմատիկ ստեղծագործություններից առանձնակի քննության նյութ դարձնելով ազգային ոգին առավել ցայտուն արտացոլող երկերը:

Բանալի բառեր՝ մարտնչող, բնաշխարհիկ, գոյամարտ, բարձրարժեք, խտամտքեր, ընդգրկուն, հմայք, փորձառու, նվիրական, գաղտնագիր:

Յ. Մկրտչյան

МОНОГРАФИЯ ЗУХРЫ ЕРВАНДЯН. “ОТОБРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ДУХА В ПРОИЗВЕДЕНИЯХ ВАРДАНА АКОПЯНА”

Данная монография кандидата филологических наук, доцента Зухры Ервандян является новым словом в области современного армянского литературоведения. Автор с большим успехом смогла решить поставленную перед собой задачу, из многожанровых и многотомных произведений Вардана Акопяна сделав материалом отдельного исследования те произведения, которые наиболее выразительно отображают национальный дух.

Зухра Ервандян делает глубокие анализы зрелого и опытного литературоведа, профессионально обосновывая свое своеобразное слово о работах автора. Она исключительным образом (языковым ощущением) и деликатностью, проявлением серьезных знаний и осведомленности в области некоторых отраслей искусства, армянской и общей литературы освещает отдельные эстетические линии Акопяна, делает ценные языковые стилистические наблюдения, непрерывно представляя дух и

Ключевые слова: боевой, коренной житель, война, ценной,

охватывающий, привлекательность, опытный, заветный, тайнаписный, афоризмы.своеобразность его поэтического слова.

E. Mkrtchyan

**“DEPICTION OF NATIONAL SPIRIT IN THE WORKS OF
VARDAN HAKOBYAN” ZOUKHRA YERVANDYAN’S
MONOGRAPHY.**

This monograph of docent Dr. Zoukhra Yervandyan is a new word in modern Armenian literature study/philology. The author with a great success could achieve a goal put in front of her, from multigenre and multitopic works of Vardan Hakobyan distinctly researching those ones, which more vividly depict national spirit.

Zoukhra Yervandyan made deep analyses of mature and experienced philologist, professionally substantiating her peculiar word about the author's works. With exceptional linguistic sense and delicacy, showing serious knowledge and awareness in some spheres of art, Armenian and general literature she is covering the certain aesthetic lines of Vardan Hakobyan, making valuable linguistic stylistic observations and continuously presenting spirit and peculiarity of his poetic word.

Key words fighter, domestic/national, struggle for existence, valuable, deep thoughts, encompassing, charm, experienced, cherished, cryptography.

Զուխրա Երվանդյանը հասուն և փորձառու գրականագետի խորագնին վերլուծություններ է կատարում՝ մասնագիտորեն հիմնավորելով հեղինակի մնայուն գործերի մասին իր ինքնատիպ ասելիքը: Նա բացառիկ լեզվագագադողությամբ և նրբիմացությամբ, հայ և ընդհանուր գրականության, արվեստի որոշ ճյուղերի լրջագույն իմացության ու քաջատեղյակության դրսևորմամբ լուսաբանում է Հակոբյանի գեղագիտության առանձնագծերը, կատարում լեզվառճական արժեքավոր դիտարկումներ՝ անխաթար ներկայացնելով նրա պոետական խոսքի ինքնակերպությունն ու ոգին:

Վարդան Հակոբյանի մասին խոսելը, ինչպես ասում են, որքան հեշտ, նույնքան էլ դժվար և պատասխանատու գործ է: Հեշտ է այն առումով, որ նրա ստեղծագործությունները քննել, բնութագրել, նշել և արժևորել են բազմաթիվ գրականագետներ և գրողներ, ուսուցիչներ, արվեստի մարդիկ, մանավանդ, որ նրա գրքերը լայն տարածում ունեն ամենուրեք և հետաքրքրություն են ներկայացնում ընթերցողների համար: Դժվարությունը նրա մեջ է, որ լրջագույն պատասխանատվություն պետք է դրսևորել գրողի ստեղծագործությունների հանդեպ և, խուսափելով կրկնաբանություններից՝ նորովի, պատշաճ վերլուծություններով անդրադառնալ հեղինակին տրված գնահատականներին ու մեկնաբանություններին:

Այս այս ոչ դյուրին աշխատանքը նվիրումով է ստանձնել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Զուխրա Երվանդյանը, ով, ի դեպ, հինգ մենագրության, վեց գիտամեթոդական և ուսումնամեթոդական ձեռնարկների, շուրջ քառասուն գիտական հոդվածների հեղինակ է: Շեշտենք, որ նա կարողացել է մեծավ հաջողությամբ լուծել իր առաջադիր խնդիրը՝ Վարդան Հակոբյանի բազմաժանր և բազմաթեմատիկ ստեղծագործություններից առանձնակի քննության նյութ դարձնելով ազգային ոգին առավել ցայտուն արտացոլող երկերը,

իսկ դրանք բանաստեղծություններ են, պոեմներ՝ ժանրային այլևայլ տարբերակներով (քնարական, քնարաէպիկական, ավանդապատում, պատմական և այլն, գործեր, որոնց կառույցները նմանը չունեն ոչ միայն հայոց, այլև համաշխարհային գրականության մեջ), ինչպես նաև վիպասանություն:

Զուխրա Երվանդյանը հետազոտական աշխատանքի ընթացքում դիմել է աղբյուրագիտական բազմաթիվ նյութերի՝ ձեռքի տակ ունենալով Վարդան Հակոբյանի ստեղծագործությունների գրականագիտական ուսումնասիրությունների, ինչպես ասում են, հսկայական պաշար, հիշատակության արժանի են Մերգեյ Սարիսյանի «Բանաստեղծի հայտնությունը» (1998 թ.), «Հայտնության խորհուրդը կամ բանաստեղծության փիլիսոփայությունը» (2016 թ.), Սոկրատ Խանյանի «Ցավի և սիրո պոեզիան» (1991թ.), «Վարդան Հակոբյանի ստեղծագործությունը» (գրական դիմանկար), «Մարտնչող գրականություն» (2012), Տաթև Սողոմոնյանի «Տաճարի ճանապարհին կամ մենարանի ուխտավորը» (2007), «Վարդան Հակոբյանի գեղագիտական համակարգը» (2011) գրքերը² և այլ շատ գործեր, որոնք հեղինակի կողմից ուշադրության և գնահատության են արժանացել:

Վարդան Հակոբյան բանաստեղծին արմատապես ճանաչելու և նրա ստեղծագործությունները գիտական խորը վերլուծությունների ենթարկելու, դրանք գեղագիտորեն արժեւորելու գործում, պիտի ասել, քիչ դերակատարություն չեն ունեցել հատկապես ակադեմիկոս Մերգեյ Սարիսյանի կարծիքներն ու դիտարկումները, այս հանգամանքը ես առանձնացնում եմ, որովհետև հենց Սարիսյանն է, որ «ստեղծել է Վ. Հակոբյանի բանաստեղծության գիտությունը»: Որպես օրինակ՝ հիշենք մեծ գիտնականի գնահատումներից թերեւս մեկը. «Վարդան Հակոբյանի բանաստեղծությունը մշտապես խոսում է բանականության հանձարը... Էական է բնաշխարհիկ գենետիկան: Վարդան Հակոբյանի պոեզիան արցախյան ոգու տիեզերական արձագանքն է»³ (ընդգծ. Է. Մ.): Եվ ահա, արժանի հետևորդ Զ. Երվանդյանը Վ. Հակոբյանի գեղագիտական աշխարհն ամբողջացնող գաղափարական-բովանդակային գլխավոր հասկացություններն ընդգծում է այսպես՝ «Հայրենիք (հայրենի Արցախ, Հայաստան) – հայրենյաց ճակատագիր – գոյամարտ – բնաշխարհ – ես-ի որոնումների ու հաստատումների տարակերպ երկունքներ»⁴:

Ուշի-ուշով, մեր ստացած տպավորությամբ ու մեծ բավականությամբ, նկատում ենք, որ Զուխրա Երվանդյանը, Վարդան Հակոբյանի բազմախոհ ու խորքային ստեղծագործություններից մասնավորելով ազգային ոգով առավել շաղախվածները, հասուն գրականագիտական և գրաքննադատական տարերքով, վարքով ու բանիմացությամբ, գիտական անբասիր եռանդով կատարել է մեծ և արգասավոր հետազոտական աշխատանք՝ ընթերցողին ներկայացնելով բարձրարժեք մենագրությունը՝ «Ազգային ոգու արտացոլումը Վարդան Հակոբյանի ստեղծագործություններում», որն իր կառույցով, նյութի ընդգրկումով ու բովանդակային իմաստով դոկտորական ատենախոսություն է հիշեցնում:

Գրքի ձեւավորումը ուշագրավ ու բովանդակալից է:

- Աշխատությունը կուռ կառուցվածք ունի. նրա բաղադրամասերն են.
- Երկու խոսք՝ խմբագրի կողմից, ապա՝ հեղինակային առաջաբան (5-10):
- Գիրքը բաղկացած է չորս գլուխներից (11-223), ըստ որում՝ երրորդ գլուխը, որ վերաբերում է Վարդան Հակոբյանի «Զատիկը ջրավազանի հատակին» ծավալուն վեպի վերլուծությանը, ունի երկու բաժին (99-168):

- Ամփոփումը (224-234) «ներկայացված» է հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակներով:
- Խոսք ավարտից հետո (235-236) բաժինը, ըստ էության եզրակացությունն է:
- Շրջանակից դուրս: Խտամտքեր (237-246): Այս բաժնում գետեղված են Վարդան Հակոբյանի ստեղծագործություններից քաղված շուրջ 140 իմաստախոսություններ:
- Օգտագործված գրականություն (247-250):

Հեղինակի կողմից կատարված գեղագիտական ուսունասիրությունները, հետազոտական վիթխարի աշխատանքը, վերլուծություններն ու բնութագրությունները, հիմք են տալիս քննության առարկա գրքի մասին առավել ընդգրկուն խոսք ասելու, սակայն բավարարվենք մի քանի դիտարկումներով:

1. Զուխրա Երվանդյանը գրական-գեղարվեստական ստեղծագործություններ վերլուծելու յուրահատուկ եղանակ ունի: Նախ՝ նա դրսևորում է գրականագիտության, հայ և ընդհանուր գրականության, արվեստի որոշ ճյուղերի լրջագույն իմացություն, քաջատեղյակություն, ապա՝ երեւոյթները մեկնաբանելիս, նա դիմում է վերլուծական, համեմատական ու համադրական եւ այլ մեթոդների, կատարած հետեւությունները հաստատում հայ և համաշխարհային իրականության մեջ ճանաչված հեղինակներից բերվող մեջբերումներով: Այլ կերպ ասած, իր անձից զատ, սա այլոց նկատմամբ կիրառվող «հարգանացս հավաստին» է: Օրինակ՝ գրողի «էության տարածքները» քննելիս Զ. Երվանդյանը նշում է՝ ինչքան էլ որ ամեն տողի հետ, ամեն տողի մեջ ինքնաբացահայտման նորանոր խորքեր հայտնաբերվեն, միևնույն է, պոետի էության ընդգրկումի չափը անորոշելի ու անիմանալի կմնա. *«Եվ հասնել չկա՝ // որքան էլ գնաս»* («Վոտորակներ», «Ես արդեն հասել եմ մի տարածք, որն ինձանից դեռ շատ հեռու է» («Լուսնային իմ սայթը»)). Եվ հեղինակն այս առիթով վկայաբերում է Վիլյամ Մարոյանի խոսքը՝ գրողի էությունն ավելի տարածք ունի, քան կյանքը (42):

Օգտվելով Վահրամ Փափազյանի հետևյալ խտամտքից՝ *Լեզուն մարդու իմացության անսահման երգեհոնն է իր բյուրապատում ստեղնաշարով*, հեղինակն ընդգծում է՝ *Վարդան Հակոբյանի իր ստեղծած գեղագիտական համակարգով հավաստում է, որ ինքը կարողանում է հմտորեն օգտվել մեր հոգևոր ժառանգությունից և լեզվի «բյուրապատում ստեղնաշարը» իրեն ենթարկել* (166-167): Ավելին: Հակոբյանի բանաստեղծություններից բառերի ու կապակցություններից ծաղկաքաղ անելով՝ հեղինակը համոզիչ ձևով ցույց է տալիս, որ դրանք ասելիքն ավելի ներագոյու դարձնող ընտրյալ միավորներ են: Եվ, իրավ, բանաստեղծության լեզուն դառնում է Նիկողայոս Մառի այն ասույթի խորիմաստության հաստատումը, թե *հայերենը աղոթքի լեզու է, աստվածային ձոյու ու աննման լեզու* (183):

Եղեռնի ցավը *հայկական հասցե ու անուն ունի*, այն մեր մեջ *անվերջ աճոում է ու երբեք անցյալ չի դառնում*. ըստ Հակոբյանի՝ *Ամեն ցավի ցավ մի ասեք, ամեն ցավ տիրոջ // անունով կոչեք...* («Խոսի քնքշանքը»)). սա համահունչ է գերմանացի նշանավոր փիլիսոփա և գրող Գեորգ Քրիստոֆ Լիխտենբերգի մտքին. *Մահը մշտական մեծություն է, իսկ ցավը՝ փոփոխական, որ ընդունակ է անվերջ աճել* (138):

Այսպիսի գուգադրումները շատ ու շատ են՝ մի քանի տասնյակներով, դրանք կարելի է հաշվել տողատակերի կիրառություններով, որոնք եւ, բնականաբար, ենթադրում են անվանի մտածողների ու գեղագետների կողմից կատարված ամենատարբեր դիտարկումների առկայություն, կարծիքների համադրումներ,

վերլուծություններ ու մեկնաբանություններ: Հեղինակային հղումներում ընթերցողը հանդիպում է այնպիսի անունների, ինչպիսիք են՝ Էռնստ Կասսիրերը (13), Վ. Փափազյանը (14), Գր. Գուրգադյանը (24), Պոլ Վալերին (25), Զ. Ավետիսյանը (27), Հ. Սահյանը (30), Գ. Գ. Մարկես (33), Բրունո Շուլց (36), Մարիո Վարգաս Լյոսա (44), Ռ. Զ. Քոլլինգվուդը (49), Գ. Վ. Լայբնիցը (49), Վ. Գ. Բեկինսկին (54), Հր. Թամրազյանը (56) Լ. Մկրտչյանը (60), Ալֆոնս դը Լամարթինը (63), Հր. Մաթևոսյանը (68), Ս. Մարինյանը (73), Ա. Բակունցը (77), Ալ. Թոփչյանը (98), Վ. Սարոյանը (107), Շիլլերը (109), Բլեզ Պասկալը (114), Ալբեր Քամյուն (116) և այլք: Այս անդրադարձներն ընդգծում են երկու կարեւոր հանգամանք, նախ՝ գրքի հեղինակի քաջատեղյակության, որակն ու աստիճանը, ապա՝ Վ. Հակոբյանի ստեղծագործությունների հմայքը, խորությունն ու վեհությունը:

2. Զուխրա Երվանդյանը հասուն և փորձառու գրականագետի խորագին վերլուծություններ է կատարում՝ մասնագիտորեն հիմնավորելով հեղինակի մնայուն գործերի մասին իր ինքնատիպ ասելիքը: Նա բացառիկ լեզվագագացողությամբ և նրբիմացությամբ լուսաբանում, վերհանում և ներքին բավականությամբ ցուցադրում է բանաստեղծի և վիպասանի բազմաշերտ ապրումների, զգացողությունների և գաղափարների գեղարվեստական ուրույն փայլատակումները:

Վարդան Հակոբյանն իր մարդ-կառույցով՝ բնույթով և էությամբ, խտացված մտքերի և գաղափարների գաղտնագիր ամբողջություն է, ինչպես Սերգեյ Մարինյանն է նշել, «բարդ երեւոյթ է», որը բացահայտելու համար մասնագիտական լուրջ պատրաստություն և նվիրական ջանքեր են պահանջվում: Համոզված ասենք, որ գրքի հեղինակն այդ ամենն ունի, որոնք հնարավորություն են ընձեռել նյութը համակողմանի եւ ընդգրկուն վերլուծություններով հրամցնելու ընթերցողին:

Զ. Երվանդյանին հաջողվել է թափանցել Վարդան Հակոբյան բանաստեղծի տառապանքով, տխրությամբ և ողբերգությամբ, խնդրությամբ և երջանկությամբ, ըմբոստությամբ և կայծակնարությամբ, կորուստներով ու կարոտով, հաղթանակով ու փառքով տոգորված աշխարհը, նրա պոետական կերպարի խորքերը եւ, հիմնավոր վերլուծություններ կատարելով, ընթերցողին անխաթար ներկայացնել պոետի խոսքն ու ոգին: Մեր մոտավոր հաշվումներով՝ գրքի առաջին ու երկրորդ գլուխներում միայն բանաստեղծությունների 100 և ավելի վերլուծություններ և անդրադարձումներ կան: Դրանք մանրամասն դիտարկումներ ու բնութագրումներ են: Օրինակ՝ էջ 15-ում շուրջ 10 դիտարկում կա՝ պոետական ինքնահայեցումներ, ինքնագնահատումներ, տրամադրության անկումներ, խռովքներ, դժգոհություններ ու ցասումներ, չստացվածի թախիծ, ներքին վեճ ու պայքար, հիասթափության պահեր, ինքնադատումներ՝ հիասթափության պահեր (...Հիասթափության պահերս աճող սնկեր են) կամ ներքին վեճ ու պայքար (...Իմ բարդ իմ կռիվանյութից է):

Իսկ չորրորդ գլուխը՝ երկու բաժիններով (69 էջ), ամբողջությամբ նվիրված է «Զատիկը ջրավազանի հատակին» վեպի քննությանը, որն իր բնույթով, բնականաբար, տարբերվում է բանաստեղծությունների քննում-վերլուծումներից: Զ. Երվանդյանն այնքան ծավալուն, խորն ու մանրակրկիտ դիտարկումներ է անում, որ ընթերցողը հստակորեն պատկերացնում-տեսնում է վիպական գործողությունների, եղելությունների և հերոսների ապրած պատմական ժամանակներն ու միջավայրը՝ տիպական հանգամանքները, վեպի սյուժեն:

Վեպի գաղափարական ատաղձի հիմքում 20-րդ դարի առաջին և վերջին տասնամյակների հայակործան ու հայասպան իրադարձություններն են: Գլխավոր

հերոսը՝ բժիշկ Արտեմ Գասպարյանն է՝ Ուշխուդանց Արտեմը, 1915 թ. ծնունդ էր. նույն տարում թուրք ենիչեերիները Հարարում 5, փախուստի ժամանակ, սպանել էին նրա մորը. «Առավոտյան մի պառավ նրան գտնում է արյան մեջ կորած: Կրծքի կաթի հետ մոր արյունն էր խառնվել», - գրում է վիպասանը (էջ 12):

Զուխրա Երվանդյանը կատարում է ճշմարիտ և հավաստի դիտարկումներ, որոնք խոսում են վեպի գեղագիտական ու գաղափարական առանձնահատկությունների մասին: Մեջբերենք հեղինակի դիտարկումներից մի քանիսը. *Գեղարվեստական անունադրության գյուտերից կարելի է համարել հայրենի եզերքի գլխավոր քաղաքի Տրակերտ անվանումը՝ Տիրոջ կերտած* (131) [Ստեփանակերտն է], *Վեպի առանձնահատկություններից մեկն էլ արծարծվող նյութի նյութականության և ոգեղենության սահմանի անզատելիությունն է* (ն.տ.), *Գրողի կերտած տիպականի և անհատականի փայլուն համադրություններ են* (130), *Հուզախառն վավեր փաստերով ներկայացված տարեգրություն հիշեցնող այս վեպը* (132) (... գրված է արցախյան պատերազմի տաք հետքերով), *Խորապես ազգային գաղափարական բովանդակություն ունեցող այս վեպում գլխավոր պատումային գիծը ձգվում է անցյալ դարասկզբի ցեղասպանությունից մինչև դարավերջի ոչ պակաս արյունալի իրադարձությունները* (122):

«Իմ խնդիրն այս վեպում, - գրել է Վարդան Հակոբյանը, - մի քիչ այլ է: Երկու միլիոնի մեջ մտնո՞ւմ են, արդյոք, այն բյուրավոր նահատակվածների անունները, որոնք յաթաղանվել են Հարարում, Շուշիում, Բազավանում (Բազու), Շամախիում, Շամխորում, Գանձայում... հայկական բոլոր այն շեն ու վարքար բնակավայրերում, որոնք սպանդից անմիջապես հետո բռնի կերպով խորթմայրության են տրվել ազերական խորհրդակայսրությանը» (120. մեջբերումը վեպի էջ 3-ից):

Սերգեյ Սարինյանը նկատում է, որ *Վարդան Հակոբյանը... սիրագործված իր վեպով հայտնաբերել է տաղանդավոր արձակագիր Վարդան Հակոբյանին, և հայտնաբերումն այդ ավետարար է* (140):

Հեղինակի՝ Վարդան Հակոբյանի «Զատիկը ջրավազանի հատակին» վեպին վերաբերող գիտական բացառիկ ուսումնասիրությունն ու արժևորումներն ընձեռնվող հնարավորության շրջանակում, ցավոք, ամբողջությամբ ներկայացնել չենք կարող: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում շեշտել, որ դրանք արված են գրականագիտական հարուստ լեզվով:

3. Արցախյան թեմաներով գրված գեղարվեստական երկերում Արցախի բարբառային ձևերի գործածությունը մեծ առավելություն է, քանի որ դրանով մի կողմից՝ հայրենի եզերքի բնաշխարհն է շնչավորվում, և բարբառախոս արցախցին անմիջապես պատկերանում է քո առջև, մյուս կողմից՝ գրական-գեղարվեստական երկերին առաջադրվող հատուկ խնդիր է լուծվում. տիպականացվում է գործող հերոսների լեզուն, և ամբողջանում է «տիպական կերպարը տիպական հանգամանքներում» կերտելու սկզբունքի իրագործումը:

Վարդան Հակոբյանը գերազանց է տիրապետում մայրենի բարբառին, նա իր խոսվածքներին ու ստեղծագործությունները մեծապես համեմում է դրանց յուրատիպ կիրառումներով: Իսկ Զուխրա Երվանդյանը, որ նույնպես քաջատեղյակ է Արցախի բարբառին, բավականության զգացումով և բծախնդիր ընտրությամբ քննության առարկա ստեղծագործություններից վկայաբերում է բառեր, արտահայտություններ, կառույցներ և կատարում լեզվառճական արժեքավոր դիտարկումներ: Նա գրում է. *Վարդան Հակոբյանը, ում «մեջ խոսում է հայկական հավիտենական Արցախը» 6 չի կարողանում զսպել իր անսահման սերն ու հիացումը հայրենի եզերքի նկատմամբ. Այդպիսի օդ աշխարհի ոչ մի անկյունում*

չկա, ապա մարդկանց Պարի լուս-ն ու Ոնց ես, ոնց չես-ները (162), Երևի լեռան թոռ կամ ծոռ եմ ես... // Քիրսը՝ իմ հասցեն, անունս ասես // Տանդրան զանգի կոճակ է վրան. // Երևի լեռան թոռ կամ ծոռ եմ ես, // իմ մեջ անմեռ է ոգին վեհության (97): «Որպես Արցախ աշխարհի զավակ-բանաստեղծ,- մեկնաբանում է հեղինակը,- Հակոբյանը նվիրյալի մեծ ակնածանքով, կասեի՝ մեծ հպարտությամբ է օգտվում նաև մայրենի բարբառի հարուստ բառազանձից» (193):

Բարբառային խոսքի գործածության մի քանի օրինակ նշենք:

Հարարցի Մարգարը խոսում է գրականախառը. *Մատաղ ինիմ ծեզ, էս արուն-կրակի մաշին էլ ինի, ծեզ հրրթնընքավ ընք փրսրկլական...* [146]:

- Սիմոն պապը՝ անխառն բարբառով. *Չէ՛, մեր Մարգարը ճոկ մարդ ա, ըսածան ընգնող չի, վեր ասալ ա, պիտի անե...* Արա՛ մին տուշ (ն. տ.):

Ուրիշ հերոսների խոսքերից՝ *Վերը ասիմ, վերը թողիմ* [130], *Կտրվին էն օրերը, էլ տի փիս օրեր չտեսնանք* [154], *Քեֆներդ ա լյավ, թե հալներդ* [182], *Հը, քե մատաղ, Ղարաբաղում հինչ կա-հինչ չկա...* *Լոխ լյավա*՝ [266]:

Բացի բարբառով կազմված ամբողջական խոսքերից, վեպում գործածվում են նաև բառեր, բառաձևեր և բառակապակցություններ, որոնք գեղարվեստական պատկերներում եզերքային բնավորության տիպիկ գուներանգներ են ստեղծում: Դրանցից են՝ *պինջրիփսոկ, ժենգյալ, մրխաշար, ծհան, պողեր, խլեղ, հարահաս, խոխեք, մաշված-չոփ դարձած այսներ, քեթկալներ, շինացեք, ճղպորե, ճնգճնգացնել, օխնը, օխնահաց, աշկար, քաշի սաղունձ, փրթոշ, «փափախ» անուն, փոտ անուն, քոլ, սատոր, շրդըթաթախ, հավայի-հավայի խոսել, ճապկե, ծկլթալ* և այլն:

Ի դեպ, բարբառային ձևերի գործածության առումով նշենք, որ ճիշտ կլիներ՝ պահպանվեին ձայնավորների և բաղաձայնների քմայնացման բարբառագրային տարբերակները:

4. Ամբողջական խորաշերտերով ներկայացնելով հակոբյանական գեղագիտության գլխավոր առանձնահատկությունները՝ Զուխրա Երվանդյանը «Զատիկը ջրավազանի հատակին» վեպի լեզվաոճական առանձնահատկությունները՝ և «Վարդան Հակոբյանի պոետիկան» բաժիններում լեզվական ու գրականագիտական վերլուծություններ է կատարում: Նա ընդգծում է, որ գեղարվեստական արտահայտամիջոցները «այնքան յուրօրինակ են ու պատկերաստեղծ, այնքան տեղին ու խոսքին ներծույլ, որ հերիքում են վեպն իր ամբողջության մեջ գեղարվեստական կատարելության հասցնելուն» (155): Նրա աչքից չեն վրիպում մակդիրները, անձնավորումը, փոխաբերությունը, չափազանցությունը, ճարտասանական հարցը, բառախաղը, աստիճանավորումը («Որքան հնարավոր է՝ շատ վերցնել կյանքից, հափռել, թալանել...»), պարադոքսը, կրկնությունը, նմանաձայնական բառերը, իմաստախոսությունն ու խտամիտքը, ասացվածքը (156-168):

«Վարդան Հակոբյանի պոետիկան» բաժինը հետևյալ խոսքերով է սկսվում. «Ոճական և ձևաբանական բազմաբնույթ անդրադարձումների ենք հանդիպում Վարդան Հակոբյանի բանաստեղծական ժողովածուներում» (169), և տողատակում նշվում են հինգ ժողովածուներ: Այստեղ 50-ից ավելի բանաստեղծությունների և խոսքերի անդրադարձներ են կատարվում՝ մտքերի խտացումներով և գրականագիտական արժեքավոր բնութագրումներով: Վերևում նշվածներից բացի, այստեղ շոյալ անդրադարձումներ կան նաև այլ արտահայտչամիջոցների. *ինչպես՝ հակադրություն, համեմատություն, կցուրդ (Հետո եկել է Առանը հեռվից, // Առանը հեռվից եկել, կանչել է...), խաչաձևում, հանգույց, նույնասկիզբ, նույնավերջ, գուգադրություն, նվագաբերում, բառախաղ, հարանունություն, դարձվածք,*

ճարտասանական բացականչություն, զեղչում, փոխանունություն, հումոր, առձայնություն, բաղաձայնություն (201-223): Հետաքրքրական մեկնաբանություններ են արվում բառագործածությունների, կրկնությունների, վերնագրերի վերաբերյալ:

Ամփոփում-ը հակիրճ է և իմաստալից:

5. Գիրքն ունի նաև «Շրջանակից դուրս» բաժին, որտեղ ներկայացված են շուրջ 140 խտամտքեր՝ իմաստախոսություններ՝ բանաստեղծի պատկերավոր և բանաձևաբնույթ մտածողության յուրահատուկ կողմերն ու փիլիսոփայությունը հաստատող:

Плишон в этой связи привлек внимание правительства и депутатов к положению в оттоманской империи. По его мнению, «империя, видимо, распадается вопреки усилиям Европы», так как распадется она под давлением неизбежных причин, присущих принципу самой исламской конституции и под влиянием всеобщей коррупции, которая истощила все источники жизни страны. Империя может продолжить свое существование только при условии, если турки завоюют новые области и будут угнетать христиан, так как они никогда не имели других средств существования. Эксплуатация райя¹ была единственной общественной экономикой их правления. Следовательно, полагал Плишон, невозможно, чтобы Европа долгое время поддерживала правление, основывающееся на подобных принципах. Кризис в Азии мог быть отсрочен, но все предвещало, что он переместится в Европу, которая должна быть готова к этому. По мнению оратора, турки могут уйти из Европы, не подвергая опасности мир, если мудрость правительств подготовит право «передачи наследства их действительным наследникам».

Касаясь восточного вопроса и проектов его разрешения, Плишон считал, что раздел великими державами Османской империи являлся фактически невозможным, так как стал бы аморальным актом. Восток должен принадлежать восточным народам. На европейские владения Турции у Плишона был другой взгляд. Прежде всего он был убежден, что естественными наследниками владений являлись христиане, которые жили там до завоевания османитами. Поэтому именно они станут единственными собственниками в тот день, когда господство Турции будет уничтожено. Право христиан является неоспоримым, и Плишон считал, что Европа должна его уважать. Оратор задался вопросом, что станет в этом случае с турками. И нашел простой ответ. Поскольку принципы исламской конституции не позволяли сосуществовать

1 Так турки называют иноверцев.

христианской и мусульманской конфессиям в условиях гражданского и политического равноправия, такое сосуществование было возможно лишь при христианском правительстве. Существовал двойной подход: либо турки смиряются жить в условиях равноправия с христианами, и тогда им ничего не мешает остаться в стране, либо они не смиряются с этим, и тогда произойдет то же самое, что и в Греции, т.е. они должны будут уйти. По мнению Плишона, турки не обустроены в Европе, они находятся там временно, к тому же понимают, что «последний час их политического господства пробил». Плишон предложил дипломатическим путем способствовать политике, которую он обрисовал. По мнению оратора, это есть «мирное и моральное решение восточного вопроса». Причем такая политика не инспирирована личными для Франции мотивами. Она подразумевает более возвышенную цель — «освободить благородные расы от отупляющего ига, возродить прекрасные области цивилизации, чтобы там господствовали принципы справедливости и христианского милосердия среди народов, которые полностью этого лишены». Моральные интересы должны быть поставлены выше соперничества. Плишон обратился к английскому народу с призывом повлиять на правительство, чтобы оно отказалось от антихристианской политики вообще и агрессивной политики в отношении Франции, в частности. Он подчеркнул: «Я не мог бы одобрить политику нашего правительства, которая несет ущерб завоеванному положению Англии, но в то же время я призываю ее не покушаться на то, что приобретено Францией, т.е. соблюдать взаимные интересы». Плишон считал, что Франция обладала на Востоке «огромной властью. Ее имя там символизировало защитницу интересов угнетенных народов. Он выразил пожелание от имени Франции, чтобы эти народы не переставали надеяться на нее. В итоге, возвращаясь к начальной части своего выступления, Плишон подчеркнул, что Франция не желает именно теперь покидать Сирию и отказываться от миссии защиты, налагаемой на нее политическими традициями, потому что это означало бы отказаться от собственной чести.

Французское правительство четко выразило свою позицию в депеше от 3 мая 1861 г. Билло не вступил в полемику с депутатом Плишоном относительно политических оценок. Это, понятно, потому что он повторил бы мысли, изложенные им в Сенате по данному вопросу. Но все-таки на один нюанс следует обратить внимание. Билло признал, что данная проблема вызвала живой интерес как в Сенате и в Законодательном корпусе, так и во всей стране, и правительство намеревалось выполнить свой долг, т. е. адекватно среагировать на ситуацию¹.

Параллельно с обсуждением сирийской проблемы в Законодательном корпусе завершала свою работу в Константинополе международная комиссия по выработке окончательного административного устройства Ливана. «Moniteur» информировала о подробностях этого обсуждения. 9 июня пришло сообщение из Константинополя о результате заседаний, прошедших 7 июня. Тогда было решено, что правитель Ливана будет назначен на три года и не может быть смещен по истечении этого срока без согласия представителей европейских держав. Назначение нового правителя должно было согласовываться между Портой и правительствами Европы. Кроме того, условились о том, что единый правитель должен принадлежать к религии большинства и может быть избран среди христиан султана². Но основной документ был принят 9 июня. Представители держав на конференции подписали с министром иностранных дел султана учредительный акт новой администрации Ливана, а также протокол, где были определены дипломатические условия этого соглашения. Система разделения на два каймакта, введенная административным устройством 1845 г., заменялась единым правителем, который получал ранг мяшира или маршала. Он не подчинялся ни бейрутскому, ни дамасскому паше, поскольку по рангу был равен им. Резиденцией правителя был избран г. Дер-аль-Камар, где в 1845 г. размещался турецкий гарнизон.

¹ Moniteur. 9 juin 1861. La session du Corps législatif. 8 juin 1861. Выступление Билло.

² Moniteur. 11 juin 1861. Бюллетень от 10 июня 1861.

Порядок в Горном Ливане должен будет поддерживаться посредством милиции, набранной из местных жителей. Отмечалось также, что через три месяца после подписания учредительного акта представители держав и министр иностранных дел султана вновь соберутся на конференцию, чтобы оценить результаты этого устройства и принять другие решения, если того потребуют обстоятельства. Кроме того, в Ливане будет учреждено два меджлиса (или совета), юридический и административный, в которых будут представлены все народы, живущие в Горном Ливане, без различия религии. Аналогичные гарантии им предоставлены в округах. Однако за правителем остается свобода действий¹.

Наконец, из Константинополя было получено известие, которое поставило окончательную точку в этом деле. Сообщалось, что султан одобрил новую организацию Ливана и назначил Дауда-эфенди, армянина, католика по происхождению, правителем Горного Ливана. Газета сообщила, что этот выбор был принят с удовлетворением послом императора, так же, как и другими членами конференции. Султан наделил нового правителя чрезвычайными полномочиями².

Рассмотрим, как французское правительство оценивало эти соглашения. Тувенель сообщил о них Монтебло. В частности, отмечалось, что, кооперируя усилия для умиротворения Ливана, Франция руководствовалась принципами гуманизма. Французское правительство старалось, насколько это от него зависело, предупредить повторение событий, которые так взволновали Европу. Они были результатом религиозной или расовой ненависти, и надо было учредить власть, подобную устройству 1845 г., чтобы она соответствовала нравам и традициям страны. Поэтому Франция выступила против любого разделения администрации на множество каймакств. Державы согласились с этим мнением, хотя в начале приняли проект, который мог бы усложнить затруднение режима и привел бы к беспорядкам. Европейские кабинеты приняли возражения французского правительства и согласились учредить в Ливане единую христианскую власть во главе с христианским правителем. Этот принцип действовал в Ливане в 1840 г. и стал залогом административной независимости. Франция решила возобновить эту традицию, и всякое новое устройство должно было быть подчинено этому условию. Допуская по новому проекту единственность христианской власти, державы выразили намерение запретить Порте доверять эту власть жителю Горного Ливана. Тувенель подчеркнул, что правительство Наполеона III ни при каких обстоятельствах не могло допустить подобного. Предложение прусского представителя в Константинополе открыло путь к соглашению. Французское правительство приняло его по следующим причинам. Ливан находился в состоянии волнения. Были свежи в памяти недавние события, которые разделили народы Ливана. Не желая брать на себя больше ответственности, чем другие державы, особенно в части злоупотребления властью со стороны христианского правителя, избранного в Горном Ливане, французское правительство приняло его идею единого правителя. Но по мнению Тувенеля, такой период должен был быть переходным и не следовало жертвовать привилегиями, которые имел Ливан в течение долгих лет и которые были залогом порядка и хорошей администрации. В то же время необходимо было убедиться, что выбор султана пал на функционера, исповедовавшего религию большинства и внушавшего доверие. Принимая во внимание намерения Порты, французское правительство решило присоединиться к этой комбинации, избегая при этом насколько возможно отсрочки реорганизации Горного Ливана.

Поскольку отныне правитель не зависит ни от паши Бейрута, ни от паши Дамаска, Ливан перестает быть аренной подстрекательства со стороны деятелей, усилия

¹ Moniteur. 12 juin 1861. Бюллетень от 11 июня 1861 г.

² В промежутке между 19 и 24 июня газета опубликовала три сообщения (19, 22 и 24 июня), касающихся практически одной темы — назначения Дауда-эфенди правителем Ливана. См.: Moniteur. 19, 22, 24 juin 1861. Бюллетени.

которых были в основном направлены на уничтожение привилегий этой страны. Горный Ливан будет управляться самостоятельно при христианской администрации посредством муниципальных учреждений, которые обеспечат жителям различных общин и верований те же гарантии и равное участие в решении общих проблем. Фактически может случиться одно из двух: либо администрация иностранного правителя обеспечит мир и процветание Ливану, и в этом случае, не имея другой цели, французское правительство ничуть не будет сожалеть, дав на это свое согласие, либо будет доказана целесообразность принятия принципа исключительно местной администрации, и тогда правительство позволит себе потребовать для жителей Ливана привилегию выдвинуть им самим кандидата по выбору Порты. Удовлетворение у Франции вызывал и тот факт, что привилегии Ливана имели характер европейской гарантии¹. Эта длинная депеша с подробной оценкой французского правительства приведена не случайно. Дело в том, что в последующем итоги экспедиции трактовались в исторической литературе неоднозначно и нам следует определить собственную позицию, учитывая фактор обсуждения этой проблемы в Законодательном корпусе и Сенате. Без этого оценки будут страдать односторонностью. Мнения историков разделились: часть из них склонялась к тезису о том, что сирийская экспедиция потерпела провал, потому что не добилась поставленных целей, а другая — что результаты экспедиции оказались незначительными. В советской и российской историографии доминировало мнение о провале экспедиции, что нашло отражение в монографии М.Т.Панченковой, посвященной этой проблеме².

Выделим приоритеты в поставленных целях, ставшие причиной французской экспедиции под эгидой европейского мандата. Мы уже отмечали, что была выдвинута триединая задача: наказать виновных, возместить ущерб и организовать новое административное устройство. На наш взгляд, французская дипломатия приоритетным считала административное устройство, потому что именно через него она пыталась укрепить свое влияние на Ближнем Востоке. Кроме того, именно устройство 1842 и 1845 гг. стало основной причиной беспорядков 1860 г. Кстати, в выступлениях сенаторов и депутатов это мнение прозвучало довольно отчетливо. С этой точки зрения тезис о провале экспедиции звучал сомнительно. Более того, он был выдвинут скорее всего из идеологических соображений, поскольку «агрессивность французской буржуазии» не могла в принципе подразумевать положительных результатов экспедиции. С другой стороны, неприятие режима Второй империи возводилось в определенный абсолютизм. Этим грешили историки республиканского направления. Откуда же³ появился тезис о провале? Очевидно, отчасти это было связано с выступлениями сенаторов и депутатов, которые полагали, что цели экспедиции не были достигнуты. Однако они же, учитывая объяснения комиссаров правительства, приняли в Законодательном корпусе редакцию адреса, отвергнув поправку группы депутатов и сенаторов, и проголосовали за переход к повестке дня. Следовательно, было бы правильным принять конечный результат обсуждений, а не их промежуточную часть.

Мы полагаем, что автор книги была все-таки знакома как с выступлениями сенаторов и депутатов, так и с итогами этих обсуждений. С другой стороны, в политике тенденцию нужно учитывать, но не возводить ее в абсолютизм. В дипломатии же в конечном итоге важен результат, правда, нужно учитывать дипломатическую борьбу для того, чтобы определить позиции государств. Так вот, учитывая эти обстоятельства, следует выделить следующие моменты. Во-первых, и Англия и Франция выступали в основном за территориальную целостность Османской империи. Действительно в

¹ Тувенель — Монтебло. 1 июля 1861 г. АВПРИ, ф. Канцелярия, д. 61, л. 149—151.

² Панченкова М.Т. *Политика Франции на ближнем Востоке и Сирийская экспедиция 1860-1861*. М., 1967.

английских и французских руководящих кругах не существовало замыслов о создании независимых государств и подчинении их своему влиянию. Кроме того они должны были учитывать и позицию турецкого правительства, которое категорически возражало против этого. Во-вторых, решение проблемы устройства Горного Ливана, что стало предметом острой, порой драматической борьбы между дипломатическими агентами. По существу французский проект одержал здесь верх, несмотря на то, что французский представитель остался один на своей позиции. Даже Россия перешла на сторону англичан, поддерживая проект по созданию трех каймакств: маронитской, друзской и православной. Французская кандидатура местного правителя из семейства Шихабов не прошла. Но Франция не много потеряла, согласившись на кандидатуру Дауда-паши, армянина католического вероисповедания. Более того, прошел французский проект по вопросу о назначениях и смещениях. Поэтому и с дипломатической точки зрения тезис о провале экспедиции не состоятелен.

Окончательное административное устройство Ливана совпало с завершением сессий Законодательного корпуса (27 июня) и Сената (29 июня).

Подведем некоторые итоги обсуждения сирийской проблемы во французском парламенте. Выделим здесь два основных момента: взаимоотношения исполнительной и законодательной ветвей власти и позиции политических партий в парламенте. Нами проанализированы все выступления депутатов и сенаторов во время сессий летом 1860г., т.е. с начала этих событий, и отклик на них в парламенте в 1861г., когда, в соответствии с сентябрьской конвенцией, французский экспедиционный корпус был направлен в Сирию. На сессии, открывшейся 4 февраля — впервые после ноябрьских декретов 1860 г. - специальный пункт повестки дня был посвящен сирийской экспедиции. На всем протяжении сессии вплоть до ее закрытия обсуждение этой проблемы шло параллельно с работой международной комиссии по выработке административного устройства Горного Ливана, заседавшей сначала в Дамаске, а затем в Константинополе.

Таким образом, ближневосточная политика Франции на этом отрезке времени увенчалась успехом и роль депутатов французского парламента достаточно велика.

**Статья рекомендована к печати членом редакционной коллегии,
д.и.н., профессором В.Р.Балаяном.**

ՀՏԴ 941(479.25)

Հայոց պատմություն

Արարատ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱրՊՀ, պ.գ.թ., պրոֆեսոր, պատմության ամբիոն

E-mail: araratvardanyan54@mail.ru

**«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ԹԲՀ) ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ¹**

«Թուֆենկյան» հիմնադրամը հիմնվել է 1988 թվականին Նյու-Յորքում՝ ամերիկահայ գործարար ու բարերար Զեյնս Թուֆենկյանի կողմից: Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել հայրենիքում՝ 1999թ. Երևանում հիմնադրվեց «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակ:

Արցախին օգնելու նպատակով 2003թ. բացվում է «Թուֆենկյան» հիմնադրամի Ստեփանակերտի գրասենյակը, որի միջոցով իրականացվում են ազատագրված տարածքների վերաբնակեցման, սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթամշակութային և այլ ծրագրեր:

Բանալի բառեր՝ «Թուֆենկյան» հիմնադրամ, բարեգործություն, Արցախի Հանրապետություն, ազատագրված տարածքներ, սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթական, մշակութային ծրագրերի իրականացում:

А. Варданян

**СОДЕЙСТВИЕ БЛАГОТВОРИТЕЛЬНОГО ФОНДА
“ТУФЕНКЯН” РАЗВИТИЮ ОСВОБОЖДЕННЫХ ЗЕМЕЛЬ
РЕСПУБЛИКИ АРЦАХ**

Фонд “Туфенкян” был основан в 1988 году в Нью-Йорке, американским армянином бизнесменом и бенефициаром Джеймсом Туфенкяном. С целью осуществления благотворительных программ на родине в 1999 году в Ереване был основан офис фонда “Туфенкян”.

В 2003 г. для оказания помощи Арцаху открывается офис фонда “Туфенкян” в Степанакерте, при поддержке которого на освобожденных территориях осуществляются социально-экономические, здравоохранительные, культурно- образовательные и программы переселения.

Ключевые слова: Фонд Туфенкяна, благотворительность, Республика Арцах, освобожденные территории, социально-экономические, медицинские, образовательные, культурные программы.

¹ Հոդվածը տպագրվում է ԼՂՀ Կառավարության կողմից հաստատված Արցախի Գիտական կենտրոնում իրականացվող [scs 16.10-005](#) գիտական թեմայի շրջանակներում:

A. Vardanyan

**THE TUFENKIAN CHARITABLE FOUNDATION ASSISTANCE
TO THE DEVELOPMENT OF THE LIBERATED LANDS OF THE
REPUBLIC OF ARTSAKH**

The Tufenkian Foundation was founded in 1988 in New York by James Tufenkian, an American Armenian businessman and beneficiary. In order to implement charitable programs in the homeland, the Tufenkian Foundation office was founded in Yerevan in 1999.

In 2003, in order to assist Artsakh the Tufenkian Foundation opened an office which supported the implementation of the socio-economic, health, cultural, educational and resettlement programs at the liberated territories.

Key words: Tufenkian Foundation, charity, the Republic of Artsakh, liberated lands, implementation of socio-economic, health, educational, cultural programs.

Հայկական երկու հանրապետությունների անկախացումից հետո տասնյակ սփյուռքահայ բարեգործական, մշակութային, հայրենակցական, եկեղեցական կազմակերպություններ և հիմնադրամներ, համագործակցելով ՀՀ և ԼՂՀ Կառավարությունների հետ, մեծապես օգնեցին հայաստանաբնակ հայրենակիցներին և արցախահայությանը՝ նպաստելով հայրենիքի սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և այլ բնագավառների զարգացմանը: Այդ գործում մեծ ավանդ ունի «Թուֆենկյան» հիմնադրամը:

«Թուֆենկյան» հիմնադրամը (անգլերեն՝ Tufenkian Foundation) հիմնվել է 1988թվականին Նյու-Յորքում ամերիկյան գործարար և բարերար Ջեյմս Թուֆենկյանի կողմից: Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել հայրենիքում՝ 1999թ. Երևանում հիմնադրվեց «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակ:

Հիմնադրամի գլխավոր նպատակն է շենացնել և հզորացնել հայրենիքը, հիմնական խնդիրներն են՝ աջակցել խոցելի և մեկուսացված ընտանիքներին, նպաստել քաղաքացիական հասարակության վերականգնմանը և մշակութային ու հոգևոր վերածննդին, իրականացնել բնապահպանական ծրագրեր, օժանդակել Լեռնային Ղարաբաղի սահմանամերձ շրջանների զարգացմանը:^[1] Հիմնադրամը ՀՀ-ում իրականացրել է մի քանի տասնյակ բարեգործական ծրագրեր:

Արցախին օգնելու նպատակով 2003թ. բացվում է «Թուֆենկյան» հիմնադրամի Ստեփանակերտի գրասենյակը, որի միջոցով իրականացվում են վերաբնակեցման, սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթամշակութային և այլ բարեգործական ծրագրեր:

Վերաբնակեցման ծրագիրը ԼՂՀ-ում սկսել է կենսագործվել 1993թվականից, որը սկզբում կարգավորվում էր Հայաստանի Հանրապետության, իսկ հետագայում՝ ԼՂՀ կառավարության համապատասխան որոշումներով:^[2] Վերաբնակեցումը համազգային ռազմավարական կարևորագույն խնդիր է: Մեծ ուշադրություն դարձնելով դրան՝ «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից մեծածավալ աշխատանքներ են կատարված Արցախի ազատագրված, սահմանամերձ

¹ «Հայկական Սփյուռք». տարեգիրք 2009, Երևան, 2010, էջ 134:

² ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց.1, կ-13, պ.մ. 65, թ.11:

շրջանների վերաբնակեցման ուղղությամբ, ստեղծվում են աշխատատեղեր՝ հայության արմատներն իր հողում ամրապնդելու համար: Հիմնադրամի տնօրեն Ջեյմս Թուֆենկյանի կարծիքով՝ «...վերաբնակեցման խնդիրն այսօր ոչ միայն ԼՂՀ իշխանությունների, այլ սփյուռքի բարեգործական կազմակերպությունների, Արցախի ճակատագրով մտահոգ համայն հայության մտահոգություններից մեկը պետք է դառնա: Չնայած մեր կառույցը նպաստում է նաև երկրում կրթամշակութային մի շարք ծրագրերի իրականացմանը, աջակցում է տաղանդավոր երեխաների զարգացմանը՝ ցուցաբերելով բարոյական և նյութական օժանդակություն, սակայն մեր առաջնահերթ խնդիրը մնում է վերաբնակեցման ռազմավարությունը»:^[1]

Այդ ուղղությամբ կատարած առաջին խոշոր քայլերից մեկը Հադրութի շրջանի նորակառույց Առաջամուղ գյուղի հովանավորչական ծրագիրն է, որը համահունչ է ԼՂՀ իշխանությունների վարած քաղաքականությունը: Առաջամուղը հիմնադրվել է 2005թ. «Թուֆենկյան» հիմնադրամի հանգանակած միջոցներով: Գյուղում կառուցված տասնութ տուն բնակեցված է: Բնակիչների մի մասը փախստականներ են Ադրբեջանից, մի մասն այնտեղ է տեղափոխվել Հայաստանից, մյուս մասն էլ՝ Ղարաբաղի տարբեր բնակավայրերից, որոնց տները պատերազմի տարիներին ավերվել են: Նորակառույց տները հարմարավետ են: Յուրաքանչյուր առանձնատուն ունի երեք ննջասենյակ, ընդարձակ հյուրասենյակ, ինչպես նաև խոհանոց, բաղնիք և սանհանգույց: Լուծված է շուրջօրյա ջրամատակարարման հարցը: Բոլոր բնակիչներն էլ ունեն իրենց տնամերձ հողամասն ու այգին, օժանդակ տնտեսությունը, ապահովված են անասուններով, թռչուններով:^[2] Գյուղն ապահովված է էլեկտրականությամբ: Կառուցվել է գյուղապետարանի շենք և բուժկետ: 2017-ին հիմնադրամը շահագործման է հանձնել վեց նոր բնակելի տուն:

Առաջամուղ գյուղը 2008 թվականին կազմավորվել է որպես առանձին համայնք՝ իր մեջ ներառելով Առաջամուղ և Արաքսավան բնակավայրերը: Արաքսավան գյուղը հիմնադրվել է 2014 թվականին: Առաջամուղ համայնքի կազմում ընդգրկվելը լայն հեռանկարներ է բացել նրա զարգացման համար: Հովիտը ձգվում է մոտ 110կմ՝ ներառելով Քաշաթաղի և Հադրութի հարավային թևերը: Արաքսավան բնակավայրի ռազմավարական նշանակության ծրագրերն Արցախի իշխանությունների կողմից սկսել են իրականություն դառնալ 2012 թվականից: Բնակավայր եկած մարդկանց բնակեցնելու նպատակով կառուցվել է 35 ժամանակավոր կացարան: Կառուցվել են 30կմ երկարությամբ, 10կմ բարձր լարման հզորության էլեկտրական գծեր, վերանորոգվել են 40կմ-ի հասնող ջրանցքներ, մեկտրատիվ աշխատանքներ իրականացնելու ճանապարհով մաքրվել են 1000 հեկտարից ավելի վարելահողեր, ինչը հնարավորություն է տալիս մենատնտեսներին զբաղվելու ինչպես բանջարաբուստանային, այնպես էլ հացահատիկային մշակաբույսերի աճեցմամբ:^[3] Մենատնտեսների

¹ «Հայաստանի Հանրապետություն», 5 սեպտեմբերի, 2007, Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010, էջ 95:

² «Հայաստանի Հանրապետություն», 5 սեպտեմբերի, 2007:

³ «Ազատ Արցախ», 11 հունիսի 2016:

հնարավորություն է տրվել նաև զբաղվելու այգեգործությամբ և անասնապահությամբ:

Արցախի Հանրապետության իշխանությունների, «Թուֆենկյան» հիմնադրամի այս ծրագիրն ունի ռազմավարական կարևոր նշանակություն, որի նպատակն է ամրապնդել հանրապետության հարավային սահմանը և զարկ տալ գյուղատնտեսությանը: Սակայն նման ծրագրերը անհնարին է իրականացնել միայն Արցախի պետական բյուջեի միջոցներով: Անհրաժեշտ է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Սփյուռքի մեր հայրենակիցների աջակցությունը:

Վերաբնակեցման ծրագրի շրջանակներում 2008 թվականից ԹԲՀ-ի կողմից իրագործվում է Քաշաթաղի շրջանի վերաբնակիչների տների վերանորոգման համար շինանյութի տրամադրման և դրանց նպատակային օգտագործման վերահսկման ծրագիրը: 2008-2013թվականներին Քաշաթաղի շրջանի 7 համայնքների 47 ընտանիքների տրամադրվել է համապատասխան շինանյութեր:^[1] Հերիկ և Հակ համայնքներում հիմնադրամի կողմից տուն է տրամադրվել երկու վերաբնակիչ ընտանիքների:^[2] Երկու տուն տրվել է «Արցախի վերավոր զինծառայողներին բնակարանային հարմարավետ պայմաններով ապահովելու» ծրագրի շրջանակներում: Հիմնանորոգվել է Աղավնատուն համայնքում ապրող բազմազավակ ընտանիքին հատկացրած տունը:^[3] Առանց զարգացած ենթակառուցվածքների ու վերաբնակիչների համար տարրական կենսապայմանների ստեղծման հնարավոր չէ պահել գյուղը: Բնակիչների կենսապայմանները բավարարելու համար ԹԲՀ համագործակցելով ԼՂՀ կառավարության հետ, մի շարք գյուղերում կառուցել է խմելու ջրագծեր՝ գյուղացիներին ապահովելով մշտական ջրով: Հիմնադրամի ֆինանսավորմամբ վերանորոգվել է Քաշաթաղի շրջանի Քարեգահ և Այգեհովիտ գյուղերի գյուղամիջյան ճանապարհը:^[4]

Սիրիայում ընթացող պատերազմի հետևանքով մեծ կորուստներ կրեցին մեր հայրենակիցները, որոնցից շատերը ստիպված էին հեռանալ երկրից՝ ապաստան փնտրելով մայր հայրենիքում: Սիրիահայ մի քանի ընտանիք հաստատվեց Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքում: 2011թ. հիմնադրամը ԼՂՀ Կառավարության հետ համատեղ վերանորոգեց Կովսականի բազմաբնակարան մի շենք և 7բնակարան տրամադրեց Սիրիայից տեղափոխված մեր հայրենակիցներին:^[5] ԹԲՀ-ը սիրիահայերի համար շահագործման է հանձնել մի քանի տներ Գետամեջ և Վան գյուղերում, վերանորոգել է Իշխանաձոր գյուղում հաստատված սիրիահայ և լիբանանահայ ընտանիքների բնակարանները: Բերձորում, Իշխանաձորում և Կովսականում հաստատված հողագործ սիրիահայերին Արցախի Կառավարության կողմից տրամադրվում են վարկեր:

¹ Վարդանյան Ա., «**Թուֆենկյան**» բարեգործական հիմնադրամի (ԹԲՀ) գործունեությունը Արցախում, «**Պատմություն և մշակույթ**» հայագիտական հանդես Բ., (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2013, էջ 78:

² «**Ազատ Արցախ**», 4 հոկտեմբերի 2018:

³ «**Մերան**» ԼՂՀ Քաշաթաղի շրջանային թերթ, թիվ 20 (141), հոկտեմբեր, 2015:

⁴ ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց.1, կ-11, պ.մ. 50, թ.12, 51:

⁵ Վարդանյան Ա., նշված հոդվածը, էջ 78:

Հիմնադրամն աշխատանքներ է տանում վերաբնակեցված գյուղերի ամրապնդման և զարգացման ուղղությամբ: Նրա կողմից իրականացվում է խաղողի այգիների վերականգնման ծրագիր Հարավային Քաջաթաղի Այգեհովիտ և Ուֆեկան գյուղերում: Այգիները վերականգնելուց և ծախսերը փակելուց հետո, ըստ կազմած պայմանագրի, դրանք վերադարձվելու են համայնքի անդամներին: Այգիներում աշխատող գյուղացիները ստանում են աշխատավարձ: Հիմնադրամի միջոցներով Այգեհովիտ գյուղում կառուցվել է պրադաց, որը սպասարկում է շրջակա մոտ 20 գյուղերի բնակիչների:^[1] Հարավային Քաջաթաղում շարունակվում են 2005 ու 2007թթ. սկիզբ առած «Ալրադաց» և «Տեխնիկական բազա» գյուղատնտեսական ծրագրերը, որոնք խթան են հանդիսացել հացահատիկային արտադրության բնագավառի զարգացման համար:^[2]

Հաղորդի շրջանի Առաջամուղ գյուղի վերաբնակիչներին աշխատատեղերով ապահովելու նպատակով ԹԲՀ 2005թ. ստեղծել է 5հա. նոան այգի: 2018թ. այգիներից ստացվել է 18 տոննա նուռ:^[3] Քաջաթաղի շրջանի Երիցվանք գյուղի վերաբնակիչների համար 2013թ. հիմնվել է 7հա. նոան այգի, կառուցվել է երկու ջերմոցային տնտեսություն՝ յուրաքանչյուրը 240քառ.մ. մակերեսով:^[4] Նույն շրջանի Վան գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն է: Մեծ մասը զբաղվում է ձմերուկի մշակությամբ: ԹԲՀ-ի միջոցներով համայնքում 2018թ. գարնանը հիմնվել է 5հա. արքայանարնջի այգի, տնկվել շուրջ 2500 տնկի:^[5] Շրջանի Մոշաթաղ և հարևան Ծիծեռնակավանք գյուղական համայնքի Տանձուտ գյուղերում չորս բազմազավակ ընտանիքի հատկացվել է ընդհանուր 18 մեղվաբնտանիք:^[6] Հիմնադրամը վերաբնակիչներին տրամադրում է նաև ցածր տոկոսադրությամբ վարկեր: Վարկերի համար տրամադրված գումարները ետ ստանալով՝ օգտագործվում են հետագա ծրագրերի ընդլայնման համար:

Քաջաթաղի շրջանում հիմնադրամն իրականացնում է առողջապահական ծրագրեր: 2005թ. Իշխանաձոր գյուղում կառուցել է բժշկական համալիր, որը կարող է սպասարկել 2000 բնակչի^[7] և շարունակում է իր գործունեությունը հիմնադրամի և Արցախի առողջապահության նախարարության աջակցությամբ: Բուժհամալիրը կահավորված է, ունի իր բաժանմունքները՝ ատամնաբուժական, մանկաբարձական, բուժքույրական անձնակազմով, «շտապ օգնություն» մեքենայով: Հիմնադրամի նախաձեռնությամբ բուժհամալիրի աշխատակիցները դասընթացների են մասնակցել Ստեփանակերտի ծննդատանը և ախտորոշիչ կենտրոնում:^[8] 2009թ. Քաջաթաղի հյուսիսային և հարավային բուժկետերին, հիվանդանոցներին, առողջապահության նախարարությունը ԹԲՀ-ի կողմից տրամադրվել են «Վարդանանց ասպետներ» և IMEC կազմակերպություններից ստացված բժշկական պարագաներ, սարքավորումներ, կահույք: Նույն թվականին հիմնադրամի հովանավորությամբ բուժկետ բացվեց Հյուսիսային Քաջաթաղի

¹ «Ազատ Արցախ», 5 հուլիսի, 2005:

² «Հայկական Միություն». տարեգիրք 2009, էջ 135:

³ Նույն տրամադրել է Ստեփանակերտի «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակը:

⁴ «Մերան», թիվ 14 (135), հուլիս, 2015:

⁵ «Ազատ Արցախ», 6 հոկտեմբերի 2018:

⁶ «Ազատ Արցախ», 8 օգոստոսի 2018:

⁷ ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց.1, կ-11, պ.մ. 50, թ. 37, 71:

⁸ Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 96:

Մշենի գյուղում:^[1] Հիմնադրամի կողմից կառուցվել է Աղավնատուն համայնքի, հիմնանորոգվել և կահավորվել է Մոշաթաղի բուժկետերը:

2015 թվականին հիմնադրամի մասկացությամբ Քաշաթաղի շրջանում իրականացված բարեգործություններից է Աղավնատուն համայնքի Խաչգետիկ գյուղում կառուցված բուժկետը: Այս կարևոր կառույցն իրականություն դարձավ «Թուֆենկյան» հիմնադրամի, Երևանում գործող «One Armenia» կազմակերպության և Լոնդոնում գործող «Հայկական կենտրոն տրեստ» (Armenian centre trust) կառույցի միջոցով:^[2]

ԼՂՀ առողջապահության նախարարության հետ համագործակցելով՝ ԹԲՀ-ն կազմակերպել է շարժական կլինիկայի ուղևորություններ Քաշաթաղի հարավային բոլոր գյուղերը, անցկացրել հետազոտություններ: Անվճար տրվել է դեղորայք: Ծրագիրը շարունակվել է ավելի ընդլայնված՝ ընդգրկելով ամբողջ Քաշաթաղը: Առողջապահության նախարարությունը տրամադրել է **դիագնոստիկայի** բեռնատար:^[3] Կազմակերպվել են նաև «Birthlink» մանկաբարձների որակավորման դասընթացներ Քաշաթաղի շրջանի բոլոր համայնքների բուժքույրերի համար:

ԹԲՀ-ն կազմակերպել է շարժական կլինիկայի ուղևորություններ նաև Շահումյանի շրջանում: 2010թ. սեպտեմբերին Քարվաճառ են այցելել տարբեր բժշկական մասնագետներից կազմված խմբեր, որոնք իրենց հետ բերել էին համապատասխան բժշկական սարքավորումներ: Տեղի բնակչությունն ունի նմանատիպ միջոցառումների կարիք և նրանք գոհ են, որ կարողանում են հետազոտում շրջանում և ստիպված չեն լինում բժշկական հետազոտման և ախտորոշում ստանալու համար մեկնել Ստեփանակերտ, Մարտակերտ կամ ՀՀ Վարդենիս քաղաք: Այս ծրագրերը որոշակիորեն թեթևացնում են բնակիչների այդ հոգսերը:^[4]

«Թուֆենկյան» հիմնադրամի Արցախի գրասենյակի միջոցով իրագործվում են նաև կրթամշակութային ծրագրեր: Հաղորդի շրջանի Առաջամուղ գյուղում 2007թ. ամռանը շահագործման հանձնվեց 80 տեղանոց նորակառույց դպրոցը, որի շինարարության և կահավորման ծախսերը հոգացել են «Թուֆենկյան» և Հայ կրթական հիմնադրամները:^[5] 2017-ին հիմնադրամի կողմից ընդլայնվել է գյուղի դպրոցի շենքը՝ ավելացել են չորս նոր դասասենյակներ: Հիմնադրամի ֆինանսավորմամբ նորոգվել է Քաշաթաղի շրջանի Աղավնատուն համայնքի դպրոցի շենքը, վերանորոգվել Հոչանց և Գետափ գյուղի դպրոցները: Հակ գյուղի դպրոցը վերանորոգվել է ԱՄՆ-ում գործող «Հայրենասեր» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ:

ԹԲՀ-ի կողմից Քաշաթաղի շրջանի բոլոր գյուղերում երկու փուլով անց են կացվել համակարգչային դասընթացներ ուսուցիչների, աշակերտների և գյուղի երիտասարդության համար:

¹ «Հայկական Միություն». տարեգիրք 2009, էջ 135:

² «Մերան», թիվ 20 (141), հոկտեմբեր 2015:

³ «Հայկական Միություն». տարեգիրք 2010, Երևան, 2011, էջ 124:

⁴ «Նոր Շահումյան», ԼՂՀ Շահումյանի շրջվարչակազմի պաշտոնաթերթ, թիվ 17 (88) 1-15 սեպտեմբեր, 2010:

⁵ «Լուսարար» ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնաթերթ, 16 օգոստոսի, 2007:

Շահումյանի շրջանի համայնքներում համակարգչային գրագիտությունը զարգացնելու նպատակով «Թուֆենկյան» հիմնադրամը, նվիրելով վեց նոութբուք և իննը համակարգչային բլոկ, երկու տարի շարունակ ֆինանսավորել է դասընթացները:^[1]

Հաշվի առնելով երեխաների նախադպրոցական կրթության կարևորությունը ԹԲՀ-ն մեծ ուշադրություն է դարձնում մանկապարտեզների շինարարությանը: 2014-ի սեպտեմբերին ավարտին հասցվեց Քաշաթաղի շրջանի հյուսիսային թևի ամենամեծ համայնքներից մեկի՝ Մոշաթաղի 25 երեխաների համար նախատեսված մանկապարտեզի կապիտալ վերանորոգումը:^[2] Մանկապարտեզների և դպրոցների կառուցումը, վերանորոգումը նպաստում է երեխաների կրթությանն ու հայեցի դաստիարակությանը, տեղերում բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը:

Հիմնադրամը մեծ ուշադրություն է դարձնում Քաշաթաղի շրջանի հայկական հուշարձանների պահպանմանը: Նրա ֆինանսական աջակցությամբ 2009թ. վերանորոգվել է 17-րդ դարի Սբ.Մինաս եկեղեցին Հակ գյուղում, 2010-ին՝ 17-րդ դարի Միրիկ գյուղի եկեղեցու տանիքը:^[3]

Բարձր գնահատելով «Թուֆենկյան» հիմնադրամի բազմաբնույթ գործունեությունը Քաշաթաղի շրջանում, ինչպես նաև զանազան կազմակերպությունների և հիմնադրամների ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը՝ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը նշել է. «Հավատացած եմ, որ համատեղ ուժերով մենք կշենացնենք Արցախի այս գոտրիկ հատվածը, որն ունի համահայկական նշանակություն: Առանց Քաշաթաղի շրջանի՝ հնարավոր չէ Լեռնային Ղարաբաղի որպես անկախ պետության լիարժեք զարգացումը և անվտանգ գոյատևումը: Սա պետք է հիշենք բոլորս և սրանով առաջնորդվենք մեր բոլոր ձեռնարկումներում»:^[4]

Այսօր էլ «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը շարունակում է հայրենանվեր գործունեությունը՝ նպաստելով Արցախի Հանրապետության ազատագրված տարածքների զարգացմանը սոցիալ-տնտեսական, կրթական, մշակութային և այլ բնագավառներում:

Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր Վ.Ռ.Բալայանը:

¹ «Նոր Շահումյան», թիվ 6 (149), 16-31 մարտի 2013:

² «Մերան», թիվ 8 (105), ապրիլ 2014:

³ «Հայկական Սփյուռք». տարեգիրք 2010, էջ 125:

⁴ «Ազատ Արցախ», 29 մարտի 2008:

ՀՏԴ-479.243

Հայոց պատմություն

Տարոն ՀԱԼՈՐՅԱՆ

ԱրՊՀ, պ.գ.թ, ավագ դասախոս, պատմության ամբիոն

Արցախի պետական համալսարան

E-mail: taronh@rambler.ru

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐՅԱՆՈՒՄ (1993 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին)

Խաղաղարար բանակցային գործընթացում ծագած նոր տարածայնությունները պատճառ հաղիսացան, որ նորից լարվեն փոխհարաբերությունները ԼՂՀ օրենսդիր մարմնի եւ ՀՀ ղեկավարության միջեւ:

Օգտագործելով հարմար պահը եւ լծակները՝ ՀՀ նախագահը սաստկացրեց ճնշումը ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա եւ կարողացավ իշխանափոխություն կատարել ԼՂՀ-ում՝ բերելով իր համար բարենպաստ ուժեր: Իսկ բանակցային գործընթացի անհաջողությունը պայմանավորված էր նրանով, որ հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերից եւ միջազգային մակարդակով ընդունված փաստաթղթերից ոչ մեկը չէր արտացոլում դարաբաղյան հակամարտության էությունը:

Բանալի բառեր՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդ, արտաքին գործերի նախարարություն, բանակցային գործընթաց, ԼՂՀ պաշտպանության բանակ, ագրեսիա, արտակարգ հանձնարարությունների գծով դեսպան, մամլո քարտուղար, ԼՂՀ Գերագույն խորհուրդ:

Т.Акопян

ВОЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРЦАХЕ

(июнь-сентябрь 1993г.)

Новые разногласия в миротворческом переговорном процессе стали причиной обострения отношений между законодательным органом НКР и руководством РА.

Пользуясь удобным случаем и рычагами, президент РА ужесточил давление на законодательный орган НКР и смог сменить власть в НКР на более благоприятную для себя. Неудача в переговорном процессе была обусловлена тем, что ни один из шагов, направленных на урегулирование конфликта, и ни один из международных документов не отражали суть карабахского конфликта.

Ключевые слова: Совет безопасности ООН, Министерство иностранных дел, переговорный процесс, Армия Обороны НКР, агрессия, чрезвычайный и уполномоченный посол, пресс-секретарь, Верховный совет НКР.

T.Hakobyan

MILITARY-POLITICAL SITUATION IN ARTSAKH*(june - september 1993)*

The new discords in the mediation peacemaking process caused the escalation of the relations between the legislative body of the NKR and RA authorities.

Taking the opportunity, the President of the RA toughened the pressure on the legislative body of the NKR and managed to replace the authorities in the NKR with the ones more advantageous for them. The failure of the negotiation process was conditioned by the fact that neither the steps taken for the conflict settlement nor any international document reflected the real point of the Karabakh conflict.

Key-words: UN Security Council, Foreign Ministry, negotiation process, the NKR Defense Army, aggression, Ambassador Extraordinary and Plenipotentiary, press-secretary, NKR Supreme Council.

1993թ. հունիսի 3-ին, առանց Հայաստանի Հանրապետության (ՀՀ), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) և Ադրբեյջանի Հանրապետության ներկայացուցիչների մասնակցության հռոմում կայացած ԵԱՀԽ խորհրդաժողովը հանդես եկավ մի նոր, այսպես կոչված «9+1» նախաձեռնությամբ: Հայաստանին, ԼՂՀ-ին, Ադրբեյջանին ներկայացվեց երկու փաստաթուղթ. մեկը Մինսկի խմբին երկրների հանձնարարությամբ ԼՂ հարցով Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մ.Ռաֆայելիի «Նամակն» էր, մյուսը՝ այդ «Նամակին կից» գրությունը, որն այլ կերպ կոչվում էր «Անվտանգության խորհրդի 822 բանաձևի իրագործման անհապաղ միջոցառումների ժամանակացույց»:

Նման պայմաններում «ներքին» և «արտաքին» ճնշումներ գործադրվեցին ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա՝ ստիպելով ստորագրել նշված փաստաթուղթը:

Հունիսի 9-ի կեսգիշերին կարճատև աշխատանքային այցով Երևան ժամանեց Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) մի շարք կարևորագույն զերատնչությունների բարձրաստիճան անձանցից բաղկացած պատվիրակությունը: ՌԴ արտաքին գործերի (ԱԳ) նախարար Ա.Լոգվինովի և ՌԴ անվտանգության նախարար Վ. Բարաննիկովի գլխավորած պատվիրակության կազմում ընդգրկված էին նաև ՌԴ պաշտպանության առաջին փոխնախարար Բ.Գրոմովը, ԱԳ փոխնախարար Բ.Պաստուխովը, ԼՂ հիմնախնդրի կարգավորման Ռուսաստանի ներկայացուցիչ Վ.Կազիմիրովը և Ռուսաստանի սահմանապահ զորքերի հրամանատար Վ.Շլյախտինը:

Կառավարության ընդունելությունների տանը տեղի է ունեցավ ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի, ՀՀ ԱԳ նախարար Վ.Փափագյանի, ԱԳ փոխնախարար Ժ.Լիպարիտյանի և արտակարգ հանձնարարությունների գծով դեսպան Դ.Շահնազարյանի 15 րոպեանոց հանդիպումը Ա.Լոգվինովի, Վ.Բարաննիկովի, և Վ.Կազիմիրովի հետ: Դրան անմիջապես հաջորդեց վերջիններիս՝ շուրջ 1 ժամ 40 րոպե տևած հանդիպումը ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդի (ԳԽ) նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի ու ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) նախագահ Ռ.Քոչարյանի հետ¹: Հանդիպման նպատակն էր ԼՂՀ իշխանություններին համոզել դրական պատասխան տալ Ռաֆայելիին²:

Հանդիպումը հետաքրքիր է նաև նրանով, որ Ռուսաստանի բարձրաստիճան ներկայացուցիչները այդպիսի տևական գրույցի էին նստել մի պետության ներկայացուցիչների հետ, որը իրենց իսկ կողմից ճանաչված չէր: Ի՞նչն էր շահագրգռում

¹ «Երկիր», 11.06.1993:

² Ступишин В., Моя миссия в Армению. Москва, 2001, стр. 218 (այնուհետև՝ Ստուպիշին Վ.):

Ռուսաստանին գնալ այդ քայլին: Գուցե Ադրբեջանի ներքին կացությունն ու այստեղ կատարվող իշխանափոխությունը, որը ձեռնառու չէր Ռուսաստանին: Եւ ժուսական դիվանագիտությունը, գտնվելով անորոշության մեջ, ճիգեր էր գործադրում փրկել Ա.Էլչիբեյի հեղինակությունը:

Եթե փորձենք Արցախի «դրական» պատասխանից հետո մոդելավորել իրադրությունը, ապա այն կարող է զարգանալ հետեւյալ կերպ. Քելբաջարի դատարկումով Ադրբեջանի ներկայիս կառավարությունը լուծում էր երկու հարց՝ խուսափում է ռազմական եւ բարոյական պարտությունից եւ լրացուցիչ կոփան է ստանում հեղինակությունը բարձրագնելու եւ իշխանությունը պահելու համար:

Իսկ վերջին բանակցային գործընթացների դրական հատկանիշներից մեկն էլ այն է, որ Ստեփանակերտն իրականում ընդունվում էր որպես հակամարտող կողմ, նրա մերժումները եւ ձգձգումները չէին անտեսվում եւ միջազգային հասարակությունն արդեն վարժվել էր Արցախից պատասխան ակնկալել:

Իրերի տարբերությունից ելնելով՝ Արցախի իշխանություններին մնում է ձգձգել բանակցությունների գործընթացը, որպեսզի Ադրբեջանում տիրող ներքաղաքական ճգնաժամը ավելի խորանա եւ Քելբաջարի հարցը, զոհն առժամանակ, ծածկվի նոր իրադարձություններով ու կորցնի իր սրությունը: Այս տարբերակի համար բավարար հիմքեր կան՝ ելնելով նրանից, որ որպես պատճառ կարելի է առաջ քաշել նաեւ Ադրբեջանի ներքին իրադրության անկայունությունը, որը կարող էր հանգեցնել քաղաքացիական պատերազմի ու կասկածի տակ դնել Ադրբեջանի բանակի կառավարելիությունն ու ադրբեջանական կառավարության տված նրաշխիքների հուսալիությունը, հատկապես, որ խռովության մեջ գտվող շրջանների մեծ մասը Քելբաջարի շրջանին սահմանակից էին:

Նման պայմաններում «ներքին» եւ «արտաքին» ճնշումներ գործադրվեցին ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա՝ ստիպելով ստորագրել նշված փաստաթուղթը:

Հունիսի 11-ին ԼՂՀ Գլխ. նախագահության պաշտոնակատար Գ.Պետրոսյանը նամակ հղեց Մ.Ռաֆայելիին, ուր ասվում էր. «Հարգարժան պարոն Ռաֆայելիի, Ձեր նամակի «ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի N 822/93 բանաձեռի իրականացման ժամանակացույցի» քննարկումը ԼՂՀ Գլխ. նախագահության ընդլայնված նիստում լուրջ տարաձայնություններ առաջացրեց ԼՂՀ ղեկավարության եւ ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարական կազմի միջեւ, ինչը, փաստորեն, վերաճեց ներքաղաքական ճգնաժամի: Իրավիճակը կարող է դառնալ անվերահսկելի:

Մենք անում ենք հնարավոր ամեն ինչ՝ առճակատումը կանխելու եւ բացատրելու քննարկման ներկայացված փաստաթղթերի դրական կողմերը: Առարկությունները հիմնված են ԼՂՀ ժողովրդի հերթական անգամ խաբված լինելու մտավախության վրա:

Անհրաժեշտ են ժամանակ եւ ջանքեր համոզելու մարդկանց, որոնց հոգեբանությունը ձեւավորվել է Ադրբեջանի ագրեսիայի պայմաններում, որ նպատակահարմար եւ խելամիտ են կրակի դադարեցմանն ուղղված առաջարկները: Քանի որ վերջնական որոշում ընդունված չէ, անհրաժեշտություն է առաջացրել Ձեր ներկայացրած փաստաթղթերը լրացուցիչ քննարկելու:

Մենք ապավինում ենք Ձեր եւ ինչյակի անդամ երկրների ներկայացուցիչների կողմից ԼՂՀ ներքաղաքական իրավիճակի ողջ բարդության ընկալմանը եւ դրա կայունության համար Ձեր շահագրգռվածությանը:

Գտնում եմ, որ մոտ օրերս հնարավոր է ԼՂՀ վերջնական դիրքորոշման որոշակիացում¹:

Երեւի Ստեփանակերտն իր պատասխանը պայմանավորում էր Ադրբեջանի պատասխանով՝ օգտվելով «Ժամանակացույցի» ստորագրման ժամկետի ընձեռնած ժամանակային խուսափումների հնարավորությունից: Ադրբեջանի մերժողական պատասխանի դեպքում հնարավոր էր նախաձեռնությանը դրական պատասխան տալ՝ հաշվի առնելով դրա վտանգավորությունը:

¹ «Երկիր», 12.06.1993թ.:

Սակայն Երևանում այս պատասխանը բացահայտ դժգոհություն առաջացրեց, բայց ՀՀ ԱԳ առաջին տեղակալ Ժ.Լիպարիտյանը պայմանավորվածություն ձեռք բերեց Իտալիայի Մինսկի խմբի նախագահ Մարիո դե Սիկայի, իսկ հետո Մ.Ռաֆայելիի հետ դարաբաղյան պատասխանի հետաձգման վերաբերյալ¹:

Նման պայմաններում արտաքին ճնշումների ազդեցության տակ ՀՀ իշխանությունները փորձում էին ամեն գնով ստանալ Ղարաբաղի դրական պատասխանը, եւ ահա Երևանը հանդես եկավ հանկարծակի պահանջով, ըստ որի ԼՂՀ ղեկավարները, Գլխ. նախագահության բոլոր անդամների հետ, պետք է ժամանեին Գորիս՝ հանդիպելու Հայաստանի ղեկավարության հետ: Գորիս ժամանեցին ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը, ՀՀ Գլխ. նախագահ Բ.Արարքյանը, ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով անձնական ներկայացուցիչ Դավիթ Ծահնապարյանը, ԼՂՀ Գլխ. եւ ՊՊԿ անդամներ: Հանդիպումը կայացավ 1993թ. հունիսի 12-ին: Հանդիպման հիմնական նպատակն էր ամեն գնով սիրաշահել ԼՂՀ Գլխ. նախագահության անդամներին, որպեսզի նրանք ստորագրեն նշված փաստաթուղթը²:

Սակայն ՀՀ նախագահի հույսերը չիրականացան՝ Գորիսում ԼՂՀ ղեկավարներից նա դրական պատասխան չստացավ: Հանդիպման ժամանակ ԼՂՀ Գլխ. նախագահի պաշտոնակատարը բանավոր համաձայնություն տվեց ստորագրել փաստաթուղթը, բայց վերջում կտրուկ հրաժարվեց է եւ ուղեւորվեց Ստեփանակերտ:

Հունիսի 12-ի երեկոյան ԱԳ փոխնախարար Ժ.Լիպարիտյանը տեղեկացրեց ՌԴ ղեկավար Վ.Ստուպիշինին, որ դարաբաղյան երկու ղեկավարներն էլ համաձայնվել են ստորագրել «Ժամանակացույցը», բայց որոշել են այդ անել Ստեփանակերտում³:

Մինչդեռ Ադրբեյջանում արդեն սկսվել էին լայնածավալ ներքին խռովություններ՝ գնդապետ Ս.Հուսեյնովի գլխավորությամբ: Ապստամբական շարժման արդյունքում Ադրբեյջանում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, հունիսի 15-ին խորհրդարանի նախագահ ընտրվեց Հ.Ալիևը, իսկ հունիսի 30-ին վարչապետությունն ստանձնեց 34-ամյա խռովարար գնդապետ Հուսեյնովը⁴:

Հունիսի 12-ին օգտվելով Ադրբեյջանում ստեղծված կացությունից՝ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈԻ) ստորաբաժանումները միաժամանակ մարտական գործողություն սկսեցին Ասկերանի եւ Մարտունու շրջանների ուղղություններում եւ հասան նկատելի հաջողությունների⁵:

Անհրաժեշտ է նշել, որ Գորիսում ունեցած անհաջող հանդիպումից հետո մարտի 14-ին ՀՀ նախագահը հանդես եկավ ԼՂՀ իշխանություններին քննադատող հետևյալ հայտարարությամբ. «ՀՀ-ն իր խորին մտահոգությունն է հայտնում վճռական պահերին որոշում կայացնելու, պատասխանատվություն ստանձնելու հարցում ԼՂ իշխանությունների դրսևորված անկարողության, ինչպես նաև զինադադար հաստատելու բացառիկ պատենությունը չիրագործելու համար:

ՀՀ-ն վստահ է, սակայն, որ ԼՂ իշխանությունները կկարողանան բարձր կանգնել երկրորդական ու նախաձեռնության հետ չառնչվող նկատառումներից՝ դրսևորելով իրենց իբրեւ իսկական ղեկավարներ, եւ, քանի դեռ ուշ չէ, անհրաժեշտ որոշում կայացնել ի շահ ԼՂ ժողովրդի անվտանգության ու խաղաղության՝ գիտակցելով սեփական ժողովրդի ճակատագրի նկատմամբ ու պատմության առջեւ իրենց պատասխանատվությունը»⁶:

Այնուհետև նույն օրը՝ կեսօրից հետո, ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը հանկարծակի ուղղաթիռով ժամանեց Ստեփանակերտ: Դա նրա առաջին

¹ Ստուպիշին Վ., նշվ. աշխ., էջ 219:

² Հակոբյան Ս., *ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.)*. Եր. 2011, էջ 177:

³ Ստուպիշին Վ., նշվ. աշխ., էջ 219:

⁴ Арутюнян В., События в Нагорном Карабахе, хроника часть V, январь 1993г.-июль 1995, Ереван, 1997, стр. 102 (այսուհետև՝ Վ.Հարությունյան)

⁵ Բալայան Վ., *Արցախի պատմություն, հնադարից մինչև մեր օրերը*, Եր., 2002, էջ 402-403:

⁶ «Երկիր», 15.06.1993.:

պաշտոնական այցն էր ԼՂՀ: Նախագահը պահանջեց շտապ հրավիրել Գլխավոր նախագահության նիստ¹: Նա իր հետ բերել էր մի կարևոր գաղտնի քաղաքական փաստաթղթի նախագիծ, որը կոչվում էր «Պայմանագիր ՀՀ և ԼՂՀ միջև»²: Այն պետք է ստորագրեին ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը, ԼՂՀ Գլխավոր նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը և ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը: Վերջինս կողմնակից էր փաստաթղթի ստորագրմանը, իսկ ինչ վերաբերում էր բանակի հրամանատարությանը, ապա այն հայտարարել էր, որ կընդունի իշխանության ցանկացած որոշում³:

Հունիսի 14-ի երեկոյան տեղի ունեցավ ԼՂՀ Գլխավոր նախագահության և ՊՊԿ անդամների համատեղ նիստ: Նախկին ԼՂՀ Գլխավոր նախագահության և ՊՊԿ անդամների համատեղ նիստի արդյունքում ԼՂՀ Գլխավոր նախագահության որոշ անդամների տեղեկությունների համաձայն՝ ՀՀ նախագահը փորձել է համոզել ԼՂՀ Գլխավոր նախագահության անդամներին, որ Քելբաջարից հայկական ուժերի դուրս բերումը Ռուսաստանի դիվանագիտական ճնշման հետևանք է և այն չիրականացնելու դեպքում Հայաստանը կկորցնի Ռուսաստանին որպես դաշնակից, ինչը կարող է ճակատագրական լինել և Դարաբաղի, և Հայաստանի համար: ԼՂՀ ղեկավարության վրա ազդելու համար օգտագործվել են նաև այնպիսի փաստարկներ, որոնք դուրս են դիվանագիտության և բանավեճերի ընդունված սահմաններից⁴: Տարօրինակ էր ՀՀ իշխանությունների պահվածքը, որոնք փաստորեն փորձում էին Քելբաջարի հանձնման պատասխանատվությունը ամբողջովին գցել Դարաբաղի իշխանությունների վրա: Ինչպես վկայում է ԼՂՀ նախկին Գլխավոր նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը, Հայաստանը հետ էր քաշվում Քելբաջարից և հանձնելու դերը դնում Դարաբաղի վրա⁵:

Այդ տեսակետից ներկայացումն ունեցավ հետևյալ վախճանը. չդիմանալով Լ.Տեր-Պետրոսյանի ճնշումներին՝ ԼՂՀ Գլխավոր նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը հրաժարվեց ստորագրել և հրաժարական տվեց: Նախագահությունը ընդունեց նրա հրաժարականը, և «ԼՂՀ Գլխավոր նախագահ» օրենքի համաձայն՝ Գլխավոր նախագահի պարտականությունները մինչև Գլխավոր նախագահի նախաժեռման և առաջին տեղակալի պաշտոնակատար կարեն Բաբուրյանի վրա⁶, իսկ վերջինս ստորագրեց «Անհապաղ միջոցառումների իրականացման ժամանակացույցը»:

Ստեփանակերտ կատարած ուղևորության արդյունքներից գոհացած՝ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Երևան վերադառնալուց հետո անմիջապես շնորհավորական հեռագիր ուղարկեց ԼՂՀ Գլխավոր նախագահի նոր պաշտոնակատար Կ. Բաբուրյանին, որում ասված էր. «...ԼՂՀ Գլխավոր նախագահի պաշտոնում Ձեր առաջին գործողությունները ցույց են տալիս Ձեր քաղաքական հասունությունը, ինչպես և Արցախի ժողովրդի ճակատագրական պահին պատասխանատվությունը իր վրա վերցնելու անձնական համարձակությունը...»⁷:

Հարկ է նկատել, որ ՀՀ նախագահը նման հեռագիր երբեք չի հղել ԼՂՀ Գլխավոր նախագահ Ա. Մկրտչյանին կամ նրանից հետո այդ պաշտոնն ստանձնած Գ. Պետրոսյանին:

Այդ հեռագրին հաջորդեց ԼՂՀ Գլխավոր նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանի պաշտոնական այցով Հայաստան ժամանելու հրավերը: Երկօրյա այցի ընթացքում Կ. Բաբուրյանը հանդիպումներ ունեցավ ՀՀ փոխնախագահի, Գլխավոր նախագահի, վարչապետի, արտգործնախարարի և տեղակալի, ինչպես նաև Հայաստանում

¹ Արթուրյան Հ., *Ճակատագրին ընդառաջ*, Երևան, 2001, էջ 203:

² ԼՂՀ առաջին գումարման Գլխավոր նախագահի պաշտոնական գիտությունների թեկնածու հանգուցյալ Վ. Հակոբյանի անձնական արխիվ:

³ «Երկիր», 15.06.1993.:

⁴ Նույն տեղում:

⁵ ԼՂՀ նախկին առաջին գումարման Գլխավոր նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հետ հեղինակի գրույցի գրառում, 17.06.2006:

⁶ «Արցախ», 17.06.1993:

⁷ «Հայաստանի Հանրապետություն», 18.06.1993:

հավատարմագրված դիվանագիտական կորպուսի հետ, իսկ հունիսի 23-ին տեղի ունեցավ ԼՂՀ Գլխավոր նախագահի նոր պաշտոնակատարի և ՀՀ նախագահի հանդիպումը¹։ Հայաստանում Կ. Բաբուրյանն արժանացավ ջերմ ընդունելության, և այդպիսով, հիմք դրվեց ՀՀ և ԼՂՀ իշխանությունների միջև որակական նոր հարաբերությունների²։

Ադրբեջանում շարունակվող և հարաճուն կերպով ահագնացող ներքին անկայունության հետ կապված՝ 1993թ. հունիսի 17-ին և 18-ին ԼՂՀ Գլխավոր նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանը նամակներ հղեց Մ. Ռաֆայելիին։

Արդյունքում վերամիավորման իրավաքաղաքական իրողությունը որևէ կերպ չարտացոլվեց 1991թ. սեպտեմբերի 21-ի հռչակագրում գուտ աշխարհագրության առումով, և թեև 1989թ. դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը ֆորմալ առումով հիշատակվում է Անկախության մասին 1991թ. սեպտեմբերի 21-ի հռչակագրի նախաբանում⁴, այն իրավաքաղաքական մեկնություն չի ստանում բուն Հռչակագրի տեքստում:

Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև ընթացող պետաիրավական սահմանազատման գործընթացի վրա Բ. Ելցինի և Ն. Նազարբաևի հակամարտության գոտի կատարած այցը որևէ դրական ազդեցություն չունեցավ: 1991թ-ի սեպտեմբերի 20–23-ը Բաքու, Կիրովաբադ, Ստեփանակերտ և Երևան կատարված այցելությունները, ընդգծելով ՌԴ և Ղազախստանի ինքնորոշվածությունն ու նախաձեռնողականությունը ԽՍ-ում առկա «բարդ» հակամարտությունների վրա ազդեցության հարցում, որոշակի քաղաքական պարտավորություններ դրեցին հակամարտության կողմերի վրա՝ փաստորեն բացառելով ՀՀ-ի կողմից ԼՂՀ՝ իբրև միութենական հանրապետություն ճանաչելու հնարավորությունը: Նման առաջարկով ղարաբաղյան կողմը, ի դեմս ԼՂ ժողպատգամավորների խորհրդի Գործադիր կոմիտեի նախագահի, 1991թ. սեպտեմբերի 22-ին դիմել է ՌՄՖՍՀ և Ղազախստանի նախագահներին, առաջարկելով, առանց կանխորոշելու ԼՂՀ կարգավիճակը, ճանաչել նրա ստեղծման

¹ *Տե՛ս*. Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР, 1990. № 15, ст.253 <http://constitutions.ru/?p=2973> (12.04.13)

² *Տե՛ս*: Сурен Золян, *Нагорный Карабах: Проблема и конфликт, 5.1. Политическая ситуация в регионе осенью 1991г.*, <http://karabah.h18.ru/history/karabah/36-5.html>

³ Հետազոտող Ս. Զոլյան, օրինակ, Հայաստանի ղեկավարության որդեգրած դիրքորոշումը 1991թ. ամառ-աշուն շրջանում ընդհանուր առմամբ գնահատում է «պարտվողական»/Տե՛ս. Сурен Золян, *Нагорный Карабах: Проблема и конфликт, 5.1. Политическая ситуация в регионе осенью 1991г.*, <http://karabah.h18.ru/history/karabah/36-5.html>

⁴ *Տե՛ս* Նռչակագիր Հայաստանի անկախության մասին, 23.08.1990թ., <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2602&lang=arm>

իրողությունը, ինչպես նաև իրականացնել մի շարք այլ հրատապ քայլեր. ԼՂՀ-ից դուրս հանել բոլոր (բացի ԽՍՀՄ ՆԳՆ զորքերից) ստորաբաժանումները, հակամարտության գոտում ձերբակալվածների գործերի քննությունը վերապահել ՌԴ և Ղազախստանի իրավապահ մարմիններին, հայատարարել ԼՂՀ-ն ազատ տնտեսական գոտի, ապահովել ԼՂՀ տնտեսական ինքնաբավությունը, ապաշրջափակել հաղորդակցության ուղիները, ստեղծել ՌԴ և Ղազախստանի ներկայացուցիչներից բաղկացած վերահսկող-դիտարկող հանձնաժողով¹:

Առաքելության արդյունքներն ամփոփվել են այսպես կոչված Ժելեզնովոդսկյան (քաղաք ՌԴ Ստավրոպոլի երկրամասում) հուշագրում (պաշտոնական անվանումը՝ «Համատեղ կոմյունիկել՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ. Ն. Ելցինի և Ղազախստանի նախագահ Ն. Ա. Նազարբաևի համատեղ առաքելության արդյունքների մասին»): Այն բաղկացած էր 9 կետից, որից ամենակարևորը, թերևս, առաջինն էր, համաձայն որի՝ «Կողմերը համարում են, որ մինչև 1992թ. հունվարի 1-ը կարգավորման անհրաժեշտ և պարտադիր պայմաններ են հանդիսանում կրակի դադարեցումը, ԼՂԻՄ-ին վերաբերող Ադրբեջանի և Հայաստանի բոլոր հակասահմանադրական իրավական ակտերի անվավեր ճանաչումը, իշխանության օրինական մարմինների լիազորության ճանաչումը, հակամարտության գոտուց բոլոր (ԽՍՀՄ ՆԳՆ զորքերից բացի) ստորաբաժանումների դուրսբերումը»։ Նախատեսվում էր նաև տեղահանված բնակչության փոխարին վերադարձ՝ նախնառաջ բռնատեղահանված գյուղեր, պատանդների անհապաղ ազատում, երկշաքաթյա ժամկետներում երկաթուղու, օդային հաղորդակցության, կապի և հաղորդուղիների, իսկ այնուհետև և ավտոճանապարհների փոխշահավետ գործարկում²:

Թեև փաստաթուղթը ուրվագծում էր դարաբաղյան կարգավորման համար անհրաժեշտ առաջնահերթություններն ու խնդիրները, այն հիմնված չէր փորձագիտական մշակումների վրա և չէր սահմանում խնդիրների լուծման մեխանիզմներ: Այն հանդիսացավ հակամարտության կողմերի՝ ԼՂ-Ադրբեջան և Հայաստան-Ադրբեջան ձևաչափով հարաբերությունների հաստատման և սեփական մոտեցումները հնչեցնելու միջոց³:

Միջնորդների այցի ընթացքում կողմերի արձանագրած պայմանավորվածություններն ու ստանձնած որոշ պարտականությունները գործնականում այդպես էլ մնացին անկատար: Շարունակելով ԼՂՀ դեմ ուժի գործադրումը՝ Ադրբեջանը քայլեր ձեռնարկեց ԽՍՀՄ-ի և ԼՂ-ի հետ իր ֆորմալ իրավական հարաբերությունների հիմքերի վերանայման ուղղությամբ:

1991թ. հոկտեմբերի 18-ին Միլլի մեջլիսի (նորանկախ Ադրբեջանի խորհրդարանը) կողմից ընդունված երկրի անկախության մասին սահմանադրական ակտը⁴ փոփոխում և լրացնում էր Ադրբեջանի Սահմանադրությունը: ԱդրԽՍՀ ստեղծումը որակվում էր իբրև երկրի՝ Խորհրդային Ռուսաստանի կողմից զինված

¹ *Տե՛ս* Ս. Զոլյան (նույն տեղում՝ էջ 122–123)

² Համաձայնության ամբողջական տեքստը տե՛ս <http://www.vn.kazimirov.ru/doc1.htm>

³ *Տե՛ս* Гурушкин Павел Юрьевич. *Карабахский конфликт. Первые попытки переговоров: Ошибки и достижения посредников*, Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена, Выпуск № 108/ 2009

⁴ *Տե՛ս* Конституционный акт о государственной независимости Азербайджанской Республики. Баку, 18 октября 1991 г., газ. «Бакинский рабочий», (Баку), 07.11.91.

<http://azerbaijan.az/portal/History/HistDocs/Documents/ru/09.pdf>

ոսնձգության, բռնազավթման և բռնակցման արդյունք, իսկ ԽՍՀՄ հիմնադրման մասին 1922թ. պայմանագիրը՝ զավթողական և Ադրբեջանի մասով ստորագրման պահից՝ անվավեր: Փաստաթուղթն արձանագրում էր, որ «Ադրբեջանական Հանրապետությունը հանդիսանում է 1918թ. մայիսի 28-ից մինչև 1920թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը»՝ դրանով իսկ հրաժարվելով ԱդրԽՍՀ իրավական ժառանգությունից¹:

1991թ. նոյեմբերի 26-ին Միլլի մեջլիսն ընդունեց «Ադրբեջանական Հանրապետության Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի լուծարման մասին» օրենքը²: Ուժը կորցրած ճանաչվեցին 1923թ. հուլիսի 7-ի ադրբեջանական կենտրոնական գործադիր կոմիտեի հրամանագիրը «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծման մասին» և Ադրբեջանի ԽՍՀ 1981թ. հունիսի 16-ի «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին» օրենքը³:

Հրաժարվելով խորհրդային իրավաքաղաքական ժառանգությունից՝ Ադրբեջանը, փաստորեն, հրաժարվեց Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ Լեռնային Ղարաբաղը ներառելու բոլոր իրավաքաղաքական հիմքերից:

Մոսկվայի արձագանքը ձևակերպվեց ԽՍՀՄ ԳԽ 1991թ. նոյեմբերի 27-ի որոշմամբ, որն առաջարկում էր ԱդրՀ և ՀՀ խորհրդարաններին «չեղյալ հայտարարել բոլոր իրավական ակտերը, որոնք փոփոխում են ԽՍՀՄ Սահմանադրության մեջ ամրագրված ԼՂԻՄ կարգավիճակը»⁴: Նոյեմբերի 28-ին ընդունված ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեի համապատասխան որոշումը⁵ Խորհրդային Միության Սահմանադրությանը հակասող էին որակվում ՀԽՍՀ ԳԽ-ի 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշումները, ՀԽՍՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 1990թ. փետրվարի 23-ի որոշումը,

¹ *Տե՛ս* Քոթանջյան Հայկ, **Ղարաբաղյան լուծման առանձնահատկությունները /քաղաքագիտական փորձաքննություն/**: Ղարաբաղ. Հակամարտություն-համաձայնություն. ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում: Ե., 1997 թ., էջ 5-11:

Տե՛ս Մանապյան Ալեքսանդր, **Ղարաբաղյան հակամարտություն. իրավաքաղաքական փաստերի և փաստարկների նվազագույն փաթեթ**: Ե., 2008, էջ 3.

² *Տե՛ս* «Закон Азербайджанской Республики Об упразднении Нагорно-Карабахской автономной области Азербайджанской Республики», г. Баку, 26 ноября 1991 г., № 279-XII// «Ведомости Верховного Совета Азербайджанской Республики», 1991 г., № 24, статья 448.

³ Օրենքը վերաձևում էր ԼՂՀ վարչատարածքային սահմաններն ու վերանվանում մայրաքաղաքն ու շրջկենտրոնները: Նախկին ԼՂԻՄ շրջանների տարածքները տարլուծումը սահմանակից ադրբեջանական շրջանների կազմի մեջ փոխում էր «նորաստեղծ» վարչական միավորներում հայերի և ադրբեջանցիների քանակի համամասնությունը հոգուտ ադրբեջանցիների: Հիշյալ քաղաքականության առաջին նախադեպն էր օկուպացված Շահումյանի շրջանի Կասում-Իսմայիլի շրջանի հետ միավորումը (*Տե՛ս*. Обращение президиума Верховного Совета Азербайджана к населению Шаумянского района. Газ. «Бакинский рабочий», (Баку), 15 января 1991 г.):

⁴ *Տե՛ս* Постановление Государственного Совета СССР «О мерах по стабилизации обстановки в НКАО и приграничных районах Азербайджанской Республики и Республики Армения», 27 ноября 1991 г., Сб. «Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах», Ереван, 1995 г., с. 81.

⁵ *Տե՛ս*. «Постановлением Комитета Конституционного надзора СССР об Актах Верховного Совета СССР и его президиума и Верховных Советов Азербайджанской ССР (Азербайджанской Республики) и Армянской ССР (Республики Армения) о Нагорно-Карабахской Автономной Области», Митюков М. «Предтеча конституционного правосудия: взгляды, проекты и институциональные предпосылки». М., 2006, 179 стр., էջ. 146–149:

ինչպես նաև ԱդրՀ 1991թ. նոյեմբերի 26-ի որոշումների դրույթները՝ ֆորմալ իրավական առումով ԼՂ հիմնախնդիրը վերադարձնելով «ելման դիրքի» կարգավիճակին:

Ընդհանուր անորոշության պայմաններում և ԽՍՀՄ ապագայի վերաբերյալ հանրապետությունների միջև շարունակվող բանակցությունների ֆոնի վրա ԼՂՀ-ն պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեր իր քաղաքական կարգավիճակը հստակեցնելու նպատակով: 1991թ. նոյեմբերի 27-ին ԼՂԻՄ ժողպատգամավորների Մարզային խորհուրդի նստաշրջանը ընդունեց «Հանրաքվեի ու ԼՂՀ ժողովրդական պատգամավորների ընտրությունների մասին ժամանակավոր կանոնակարգ», հաստատեց հանրաքվեի հարցը՝ «Համաձայն եք, որ հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, որն ինքնուրույն կորոշի այլ պետությունների և հանրությունների հետ իր համագործակցության եղանակները»:

ԼՂՀ տարածքում, ներառյալ ադրբեջանաբնակ վայրերում ձևավորվեց 81 ընտրատարածք, քվեարկողների ցուցակի մեջ ընդգրկվեցին 132.328 ընտրող: Հանրաքվեի քվեաթերթիկները տպագրվել են հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով¹:

Հանրաքվեն տեղի ունեցավ 1991թ. դեկտեմբեր 10-ին, իսկ դեկտեմբերի 8-ին ՌՍՖՍՀ, Ուկրաինայի և Բելառուսի ղեկավարները ստորագրել էին «Բելովեժյան համաձայնագիրը», որով Խորհրդային Միությունը՝ որպես միջազգային սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն, դադարել էր գոյություն ունենալուց: Թեև Բաքվի դրդմամբ ԼՂՀ-ում ապրող ադրբեջանցիները չմասնակցեցին հանրաքվեին, դա չազդեց հանրաքվեի օրինականության վրա, որն ամրագրվել էր քվեարկությունների արդյունքների վերաբերյալ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության հանրաքվեի արդյունքների մասին արձանագրության» մեջ²: Հանրաքվեի մասնակիցների 99,89% (108.615 հոգի) քվեարկել է ԼՂՀ անկախության օգտին, «ոչ» է ասել 24 քաղաքացի (մասնակիցների 0,02 %):

ԼՂՀ պետականության ստեղծման և կառավարման, այդ թվում արտաքին քաղաքական գործառնության հաստատությունացման ճանապարհին կատարած հաջորդ քայլը 1991թ. դեկտեմբերի 28-ին կայացած խորհրդարանական ընտրություններն էին: Այս դեպքում ևս ԼՂՀ իշխանությունները քայլեր են ձեռնարկել ադրբեջանցի բնակիչներին երկրի հասարակական-քաղաքական կյանքին ներգրավելու ուղղությամբ³:

¹ Անկախության ճանաչմանն ու միջազգային ասպարեզում դրական վարկանիշի ամրապնդմանը ձգտող ԼՂՀ-ն հատուկ ուշադրություն էր դարձնում ԼՂՀ ամենամեծ էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերին: Ազգությամբ ադրբեջանցի բնակիչների մասնակցությունը հանրաքվեին ապահովելու համար ԼՂՀ իշխանությունները դիմել են լրացուցիչ կազմակերպչական քայլերի, այդ թվում ԼՂ տարածքում տեղակայված Խորհրդային բանակի ստորաբաժանումների ջանքերով քվեաթերթիկները հասցվել են ԼՂ ադրբեջանաբնակ բնակավայրեր:

² Տե՛ս «Արձանագրություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության հանրաքվեի արդյունքների մասին», 10-րդ դեկտեմբերի 1991թ., <http://www.nkr.am/hy/referendum/42/>

³ 81 ընտրատարածքներից 6 ադրբեջանաբնակներում (NN 33, 52, 60, 71, 72, 73) ընտրությունները չեն կայացել, արդյունքում ընտրվել է 75 պատգամավոր: (Տե՛ս ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿՀՀ) պաշտոնական կայքէջը. http://cec.am/?p_ID=44:

1992թ. հունվարի 6-ին ԼՂՀ նորընտիր խորհրդարանը՝ առաջին գումարման Գերագույն խորհուրդը, ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» հռչակագիրը¹, որը սահմանում էր ԼՂՀ արտաքին քաղաքականության ուղենիշները:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվեց անկախ, ժողովրդավարական պետություն, որն ինքնուրույն կերպով է որոշում այլ պետությունների հետ իր համագործակցության ձևերը: Միաժամանակ ԼՂՀ-ն նախատեսում էր այլ պետությունների հետ իր հարաբերությունները կառուցել ինքնիշխանության, հավասարության սկզբունքների պահպանման, ուժի կիրառումից կամ ուժի սպառնալիքից փոխադարձ հրաժարման, վեճերի խաղաղ կարգավորման, ներքին գործերին չմիջամտելու, մարդու իրավունքները և հիմնական ազատությունները հարգելու, ժողովուրդների իրավահավասարության և իր ճակատագրի տնօրինման իրավունքի, պետությունների միջև համագործակցության, միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչում գտած սկզբունքներից և նորմերից, ԽՍՀՄ կնքած միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների բարեխիղճ կատարման հիման վրա²:

Ադրբեջանական Հանրապետությունը չճանաչեց հանրաքվեի արդյունքները, ու վերջինիս անցկացման օրը Միլլի մեջլիսն ընդունեց «Ղարաբաղի լեռնային մասում օրինականության և հասարակական կարգի հաստատման մասին» որոշում՝ հանրաքվեն որակելով սադրանք³: Հետագայում ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի և դրանից բխող անկախ պետականության առկայության մերժումը դարձավ այդ նույն պետության թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության հիմքը:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության գործընթացը անցել է երեք փուլերով՝ անկախության հռչակագրի հրապարակում, այդ հարցով համաժողովրդական հանրաքվեի անցկացում և պետական անկախության մասին հռչակագրի հաստատում՝ ընտրված խորհրդարանի կողմից: Անկախության գործընթացն անցել է ԽՍՀՄ տրոհմանը և Հայաստանի ու Ադրբեջանի անկախացմանը զուգահեռ՝ որպես հիմք ունենալով նույն իրավական ակտերը, որով կարգավորվում էին ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու հետ կապված հարցերը: Չնայած ԽՍՀՄ կենտրոնական և Ադրբեջանական իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության կայացման դեմ ուղղված քայլերին՝ այնուամենայնիվ նորանկախ հանրապետությունը կարողացել է ամբողջացնել պետականաշինության այս կարևոր փուլը՝ իրավական ու ինստիտուցիոնալ հիմքեր ստեղծելով ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու համար:

¹ Տե՛ս Աբրահամյան Հրանտ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն 1991թ. օգոստոս-1992թ. հունվար. Փաստաթղթեր, Երևան 2011, 178-191

² Տե՛ս. նույն տեղում:

³ Տե՛ս: В НКАО прошел референдум о независимости. Ежегод. «Коммерсантъ», № 48 (92), 16.12.91:

Գրականություն

Գրքեր և հոդվածներ

1. Աբրահամյան Հրանտ, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն 1991թ. օգոստոս-1992թ. հունվար. Փաստաթղթեր», Երևան 2011, 178-191:
2. Մանասյան Ալեքսանդր, Ղարաբաղյան հակամարտություն. իրավաքաղաքական փաստերի և փաստարկների նվազագույն փաթեթ: Ե., 2008, էջ 3:
3. Քոթանջյան Հայկ, Ղարաբաղյան լուծման առանձնահատկությունները /քաղաքագիտական փորձաքննություն/: Ղարաբաղ. Հակամարտություն-համաձայնություն. ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում: Ե., 1997 թ., էջ 5-11:
4. Гурушкин Павел Юрьевич. Карабахский конфликт. Первые попытки переговоров: Ошибки и достижения посредников, Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена, Выпуск № 108/ 2009
5. В НКАО прошел референдум о независимости. Еженед. «Коммерсантъ», № 48 (92), 16.12.91:
6. Золян Сурен, Нагорный Карабах: Проблема и конфликт, 5.1. Политическая ситуация в регионе осенью 1991г., <http://karabah.h18.ru/history/karabah/36-5.html>

Փաստաթղթեր

1. «Արձանագրություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության հանրաքվեի արդյունքների մասին», 10-ը դեկտեմբերի 1991թ., <http://www.nkr.am/hy/referendum/42/>
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին Հռչակագիր, 2-ը սեպտեմբերի 1991թ. <http://www.president.nkr.am/am/nkr/nkr1>
3. «Համատեղ կոմյունիկե՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ. Ն. Եյցինի և Ղազախստանի նախագահ Ն. Ա. Նազարբաևի համատեղ առաքելության արդյունքների մասին», <http://www.vn.kazimirov.ru/doc1.htm>
4. Հռչակագիր Հայաստանի անկախության մասին, 23.08.1990թ., <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2602&lang=arm>
5. Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР, 1990. № 15, т.253 <http://constitutions.ru/?p=2973> (12.04.13)
6. «Декларация Верховного Совета Азербайджанской Республики о восстановлении государственной независимости Азербайджанской Республики, принятая на внеочередной сессии Верховного Совета», газ. «Бакинский рабочий», (Баку), 03.09.91.
7. «Закон Азербайджанской Республики Об упразднении Нагорно-Карабахской автономной области Азербайджанской Республики», г. Баку, 26 ноября 1991 г., № 279-XII// «Ведомости Верховного Совета Азербайджанской Республики», 1991 г., № 24, статья 448.

8. Конституционный акт о государственной независимости Азербайджанской Республики. Баку, 18 октября 1991 г., газ. «Бакинский рабочий», (Баку), 07.11.91.
<http://azerbaijan.az/portal/History/HistDocs/Documents/ru/09.pdf>
9. Обращение президиума Верховного Совета Азербайджана к населению Шаумянского района. Газ. «Бакинский рабочий», (Баку), 15 января 1991 г.)
10. Постановление Государственного Совета СССР «О мерах по стабилизации обстановки в НКАО и приграничных районах Азербайджанской Республики и Республики Армения», 27 ноября 1991 г., Сб. «Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах», Ереван, 1995 г., с. 81.
11. «Постановлением Комитета Конституционного надзора СССР об Актах Верховного Совета СССР и его президиума и Верховных Советов Азербайджанской ССР (Азербайджанской Республики) и Армянской ССР (Республики Армения) о Нагорно-Карабахской Автономной Области», Митюков М. «Предтеча конституционного правосудия: взгляды, проекты и институциональные предпосылки». М., 2006, 179 стр., էջ. 146–149:

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.դ. Ա.Փ.Ենգոյանը:

ՀՏԴ 327.5(479.243.)Քաղաքագիտություն

Հրայր ՓԱՇԱՅԱՆ

ԱրՊՀ, ք.գ.թ., դոցենտ, փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոն

E-mail: hrayr.pashayan@mail.ru

Լիանա ԲԱԼԱՅԱՆ

Ստեփանակերտի համար 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի

E-mail: balayan-lili@mail.ru

ՓԱԹԵԹԱՅԻՆ ԵՎ ՓՈԻԼԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ. ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ*

Հոդվածում ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ ներկայումս ստեղծված փակուղային իրավիճակի համատեքստում վերլուծված են հիմնախնդրի համընդգրկուն կարգավորման նպատակով ներկայացված փաթեթային և փուլային անվանումները ստացած փաստաթղթերը: Հակամարտության լուծմանն ուղղված քայլերի վերլուծությունը ցույց է տալիս, որ կարգավորման այս կամ այն տարբերակի ձևավորումը անմիջականորեն կապված է խնդրի իրավաքաղաքական փաստարկումների գիտակցումից, ձևակերպումներից ու դրա ներկայացումից:

Բանալի բառեր՝ Ղարաբաղյան հակամարտություն, փաթեթային տարբերակ, փուլային տարբերակ, կարգավորման գործընթաց, իրավաքաղաքական փաստարկներ, հակամարտության կերպար:

Г.Пашаян, Л. Балаян

ПАКЕТНЫЕ И ПОЭТАПНЫЕ ВАРИАНТЫ: ИХ РОЛЬ В ВОСПРИЯТИИ ОБРАЗА КАРАБАХСКОГО ПРОТИВОСТОЯНИЯ

В статье обсуждены документы, представленные с целью всеобъемлющего урегулирования и получившие название "накетный и поэтапный", в контексте ныне созданной тупиковой ситуации по вопросу урегулирования азербайджано-карабахского противостояния. Анализ шагов направленных на решение противостояния показывает, что формулирование того или иного варианта урегулирования непосредственно связано с осознанием политико-правовых аргументов, формулирования и его представления.

Ключевые слова: Карабахское противостояние, накетный вариант, поэтапный вариант, процесс урегулирования, политико-правовые аргументы, образ противостояния

H. Pashayan, L. Balayan

**PACKAGE AND STAGE OPTIONS: THEIR ROLE IN
PERCEPTION OF THE IMAGE OF KARABAKH
CONFRONTATION**

The article discusses the documents submitted for the purpose of a general settlement and received the name of “package and step-by-step” in the context of the current deadlock on the settlement of the Azerbaijani-Karabakh confrontation.

An analysis of the steps aimed at resolving confrontation shows that the formulation of a variant of the settlement is directly related to the understanding of political and legal arguments, formulation and presentation.

Key words: Karabakh confrontation, package version, stage-by-stage version, settlement process, political and legal arguments, image of confrontation.

Ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության կարգավորման շուրջ ստեղծված ներկայիս փակուղային իրավիճակը հասկանալու, պատճառներն ու նախադրյալները վեր հանելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն հիմնախնդրի համընդգրկուն կարգավորմանն ուղղված փաստաթղթերի վերլուծությունը: Խոսքը մասնավորապես վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների՝ հակամարտող կողմերին ներկայացված և հանրությանը հայտնի փաթեթային և փուլային (ընդհանուր պնդություն տարբերակը վերլուծության առանձին թեմա է) տարբերակներին: Թվում է, թե ավելի քան երկու տասնամյակ առաջ ներկայացված ու մերժված առաջարկները որևէ կապ չունեն ներկայիս իրողությունների հետ: Սակայն պարզվում է, որ կարգավորման «սխալ հիմքերը» դրվել են հենց այդ տարիներին, մասնավորապես՝ 1996-1998 թ-ին: Այդ ընթացքում տեղի ունեցան այնպիսի գործընթացներ, որոնք հանրային ընկալումներում ամբողջությամբ խեղաթյուրեցին հիմնախնդրի իրական կերպարը: Դրա արդյունքում արդեն 1996-ին Լիսաբոնյան գազաթնաժողովում հնչեցվեց ԵԱՀԿ գործող նախագահի հակահայկական հայտարարությունը՝ որին աջակցել էին կառույցի բոլոր անդամ պետությունները¹: Այնուհետև 1997-1998 թթ. ներկայացված հակամարտության կարգավորման տարբերակներն են, որոնցում ճանաչվում էր Ադրբեջանի՝ արդեն իսկ գոյություն չունեցող և մասնավորապես Բաքվի իշխանությունների կողմից ռուսական ռազմակալման (окупация) արդյունք հռչակված ու անօրինական համարվող նախկին ԱդրխՍՀ տարածքային ամբողջականությունը: Հանուն ճշմարտության պետք է ասել, որ դրան հնարավոր եղավ հասնել ոչ միայն Ադրբեջանի նախկին քաղաքականության կամ արտաքին ուժերի դավադրության, այլև հայկական «կողմի դիվանագիտական գործունեության» արդյունքում: Դրա բուն էությունն արտահայտվել է ՀՀ առաջին նախագահի՝ զարաբադյան շարժման նախկին առաջնորդի հայ ժողովրդին ուղղված առաջին և վերջին հրապարակային ուղերձում: Լևոն Տեր-Պետրոսյանը դիմում էր ժողովրդին՝ համոզելու Ղարաբադյան հիմնահարցում որդեգրած պարտվողական դիրքորոշման ճշմարտացիությունը²:

Ինչպես նշվեց, 1997թ. միջնորդների կողմից ներկայացվեց հիմնախնդրի համապարփակ կարգավորման «փաթեթային», իսկ այնուհետև «փուլային» անվանումներ ստացած տարբերակները: Ինչպիսի փաստարկներ են առկա նշված

* Հետագոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության N SCS 17/003 գիտական թեմայի շրջանակներում:

¹ Փաշայան Հ. Բալայան Լ., «Լիսաբոնյան Գազաթնաժողովը Ղարաբադյան կարգավորման գործընթացում. պատճառներ, հետևանքներ, դասեր» վերտառությամբ հոդվածը ներկայացվել է Արցախյան շարժման 30-ամյակին նվիրված գիտաժողովում և գտնվում է տպագրման փուլում:

² Տեր-Պետրոսյան Լևոն, «Պատերազմ թե՛ խաղաղություն. լրջանալու պահը», Հայաստանի Հանրապետություն, 1 նոյեմբերի, 1997 թ.:

փաստաթղթերում, և որոնք են նման բովանդակությամբ կարգավորման տարբերակների առաջացման պատճառները: Չէ որ դրանք հենց այնպես «դատարկ տեղը» չեն առաջացել: Իհարկե, հարցին մակերեսային մոտեցում ցուցաբերելու պարագայում կարելի է ընդհանրապես չքննարկել դրանց բովանդակությունը՝ բացարձակ անընդունելիության, մերժված լինելու համատեքստում կամ պարզապես փորձել մոռացության մատնել դրանց գոյությունն առհասարակ: Սակայն հանդիսանալով հակամարտության տարեգրության անբաժանելի մասնիկը՝ դրանք հանդիսանում են նաև հիմնախնդրի, այսպես կոչված, համապարփակ լուծմանն ուղղված և հանրությանը հայտնի այն եզակի առաջարկները, որոնցում մանրամասն ներկայացված էին կարգավորման գրեթե բոլոր տարրերը՝ սկզբից մինչև վերջ:

Փաստաթղթերի բովանդակային վերլուծությունն անհրաժեշտ է նաև դրանցում առկա շեշտադրումները պարզաբանելու և կողմերի մերժման պատճառները հասկանալու համար, որոնք կարևորվում են նաև հետագա առաջարկների մշակման ու ներկայացման տեսանկյունից: Միաժամանակ, ինչպես արդեն նշվեց, վերոնշյալը կարևոր է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ ներկայումս ստեղծված փակուղային իրավիճակը հասկանալու տեսանկյունից: Վերջապես պետք է ասել, որ նշված տարբերակները, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ասելով, օրակարգից դուրս չեն եկել, ինչի մասին է վկայում, օրինակ, 2018 թվականի սկզբներին ՌԴ ԱԳ նախարար Ս. Լավրովի ամենամյա մամուլի ասուլիսին հնչեցրած հայտարարությունը¹: Բոլոր դեպքերում, ինչպես պատմական փորձն է վկայում, էթնոքաղաքական հակամարտությունների խաղաղ լուծման երկու ճանապարհ գոյություն ունի. նախապես համաձայնեցնել հակամարտող կողմերի բոլոր գործողությունները (փաթեթային տարբերակ) կամ քայլ առ քայլ հասնել խնդրի լուծմանը (փուլային տարբերակ): Հետևաբար, եթե նույնիսկ տասնամյակներ անցնեն, միևնույն է հակամարտության խաղաղ կարգավորման համար այլ տարբերակներ դեռևս գոյություն չունեն:

1997թ. մայիսի 31-ին տարածաշրջան կատարած այցի ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Լիսաբոնյան գազաթնաժողովից գրեթե կես տարի անց՝ ՀՀ-ի և ԱՀ-ի իշխանություններին ներկայացրին «փաթեթային տարբերակ» անվանումը ստացած «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագրի» նախագիծը: Այն բաղկացած էր «Նախաբանից», «Զինված հակամարտության դադարեցում» անվանակոչված թիվ 1 համաձայնագրից, Հավելված 1-ից (գործերի դուրսբերման իրականացում և տեղահանված անձանց վերադարձ. աշխարհագրական չափորոշիչներ, ժամանակացույցեր և անվտանգության դիտարկումներ), հավելված 2-ից (անվտանգության միջանկյալ միջոցառումներ. հանձնաժողովների մանդատները, հսկողության և անվտանգության ռեժիմի չափորոշիչները), «Կարգավիճակ» վերնագրված թիվ 2 համաձայնագրից և «Հակամարտող կողմերի վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ» բաժնից²: Եվ այսպես.

1. Մինսկի խմբի համանախագահներին ուղղված պաշտոնական Երևանի նամակում՝ ողջունելով «համանախագահող երկրների համատեղ ջանքերը ԼՂ հակամարտության շուրջ ընթացող բանակցություններին նոր լիցք հաղորդելու ուղղությամբ», նշվում էր, որ «ներկա նախագիծը լի է բովանդակային ու սկզբունքային թերություններով», և ներկայացվել է մեծաթիվ լուրջ նկատառումներ, առարկություններ և առաջարկություններ³: Պաշտոնական դիրքորոշման մեջ նաև շեշտվել էր, որ բոլոր

¹ Лавров о Карабахском конфликте: нужен поэтапный подход.

<https://ru.armeniasputnik.am/columnists/20180116/10174439/lavrov-o-karabahskom-konflikte-nuzhen-poehtapnyj-podhod.html>

² *Տե՛ս* <http://www.hzh.am/LGH-Himnaharc/Patetain.html>:

³ «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ», խորհրդարանական լսումներ, 29-30 մարտի, 2005թ., Եր., 2006, էջ 466-469:

վիճարկելի ու անընդունելի կետերի վերջնական համաձայնեցումը պետք է լինի բանակցային գործընթացի արդյունքում¹:

2. Անդրադառնալով փաստաթղթի վերլուծությանը՝ անհրաժեշտ է նշել, որ այն կազմվել էր ոչ թե կողմերի պայմանավորվածությունների, այլև միջնորդների կողմից հակամարտությունը լուծելու սեփական տեսակետի արդյունքում², ինչը նրան կտրել էր օբյեկտիվ իրականությունից: Դա է պատճառներից մեկը, որ ամբողջականության մեջ փաստաթուղթը ոչ միայն անիրատեսական էր, այլև հակասական, ինչը ըստ էության, կապված է նաև այն կազմողների և հակամարտող կողմերի անհամաչափ արժեքային ընկալումների ու մտածելակերպի տարբերության հետ: Թերևս դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ մի կողմից առաջարկվում էր խնդիրը լուծել անկենսունակությունը բազմիցս ապացուցած հինին վերադառնալով՝ Լեռնային Ղարաբաղը նորից Ադրբեյջանին ենթարկելու ճանապարհով (խորհրդային տարբերակ), մյուս կողմից՝ արևմտյան արժեքականակարգին համապատասխանող մոտեցումների շրջանակներում, ինչպիսիք են բարեկեցությունը, տնտեսական զարգացման հնարավորությունները և այլ կարևոր, բայց անփոփոխելի ապահովմանն ուղղակիորեն չառնչվող չափանիշներ, որոնք մի շարք հակամարտությունների պարագայում կարող են առաջնային նշանակություն ունենալ (օրինակ Զվեբեկ, Ալանդյան կղզիներ և այլն), քանի որ նրանք անփոփոխության ապահովման խնդիր չեն ունեցել: Մինչդեռ Ղարաբաղյան հակամարտության պարագայում, ինչպես նրա շարժընթացն է վկայում, ոչ միայն այդ կարիքի բավարարման և ապահովման երեշխիքներն են խիստ կարևոր³, այլև առանց երաշխավորված անփոփոխության, անհնարին է իրագործել մյուս բոլոր ոլորտներում նախատեսվող զարգացման հնարավորությունները:

3. «Համաձայնագրի» նախաբանում հակամարտության կարգավորման անհրաժեշտությունը ներկայացված է «խաղաղության և համագործակցության առավելության... ժողովրդների բարգավաճման և բարեկեցության» և նմանատիպ՝ գերազանցապես տնտեսական զարգացման հեռանկարների մասին հիմնավորումներով, որը զարմանալիորեն շատ քիչ է տարբերվում 1921 թվականի հուլիսի 5-ի ՌԿ/Ե/Կ ԿԿ կոմբյուրոյի պլենումի՝ «Ելնելով մուսուլմանների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և Վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապերից...»⁴ և 1988թ. մարտի 24-ի ԽՍՀՄ Կենտկոմի ու ԽՍՀՄ Նախարարների խորհրդի ընդունած «Ադրբեյջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995 թթ. արագացնելու միջոցառումների մասին»⁵ որոշումների բովանդակությունից: Վերոնշյալը թույլ է տալիս կարծելու, թե ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների, այդ թվում՝ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ներկայացուցիչների մոտ տարբեր պատճառներով գերակայել է այն մտածելակերպը⁶, որի հիմնավորմամբ խորհրդային տարիներին Լեռնային Ղարաբաղը

¹ Հաշվի առնելով, որ փաստաթղթի հրապարակումից հետո պաշտոնական Երևանի Մինսկի խմբի համանախագահներին ներկայացված դիրքորոշման մեջ արձանագրված են մի շարք առարկություններ, իսկ այնուհետև փորձագիտական շրջանակներում իրականացվել են համապատասխան վերլուծություններ, մեր վերլուծությունն առավելապես կունենա խորքային բնույթ՝ փաստաթղթի պատճառահետևանքային կապերի բացահայտման ուղղվածությամբ:

² Ըստ Օսկանյանի Վ. «Առաջարկները համանախագահներն էին գրել, այնտեղ որոշ դրույթներ կային այն փաստաթղթից, որի շուրջ մենք բանակցում էինք: Առաջինը, որը փայլթթային էր, որտեղ կային նաև կարգավիճակի մասին դրույթներ, բոլորովին նորություն էր, որովհետև մենք և դարաբաղյան կողմն ադրբեյջանցիների հետ կարգավիճակ չենք բանակցել, երբեք»: *ՏԻՍ Հակոբյան Թ.*, *Կանաչ ու սև*: Արցախյան օրագիր: Երրորդ հրատ, Եր., 2011, էջ 277-278:

³ Մաֆարյան Ս., նշվ. աշխ., էջ 93:

⁴ Գազ. "Коммунист", М., 29 марта 1988г.

⁵ "Вестник архивов Армении", 1989г., № 2, д. 14, с. 77-78.

⁶ Ումանք հավելված են այդպիսի մոտեցումը կապել Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ-ի կողմից Ադրբեյջանական նավթից ակնկալվող տնտեսական շահերի հետ: Չսնմացնելով նավթի դերը որոշումների կայացման գործընթացում, այդուհանդերձ կարծում ենք, որ նման մոտեցումները կրելով տնտեսական դետերմինիզմի ազդեցությունը, միակողմանի բնույթ են կրում և չեն կարող բացահայտել խնդրի առարկայի ողջ բովանդակությունը:

քոնակցվել է Ադրբեջանին: Այսինքն՝ ի սկզբանե փորձ է արվել անվտանգության և ինքնության ապահովման հետ կապված հարցերը, որոնք Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում առաջնային տեղ են զբաղեցրել, և հիմնախնդիրն առաջացել է գերազանցապես այդ սպառնալիքին դիմակայելու հետևանքով, քողարկել տնտեսական զարգացման, բարեկեցության և այլ հիմնավորումների քողի ներքո:

4. Այն, որ Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղին թեկուզև ամենալայն ինքնավարության տրամադրումը անվտանգության և խնդրի լուծման իրական երաշխիքներ չեն պարունակում, հայտնի փաստ է: Դրա մասին է վկայում ոչ հեռավոր անցյալի Խորհրդային Միության՝ ազգերի ու ժողովուրդների եղբայրական պետության մեջ ԼՂԻՄ-ի պատմական փորձը: Եթե ԽՍՀՄ ամբողջատիրական համակարգը չի կարողացել իր ներսում ապահովել արցախահայության և ընդհանրապես ադրբեջանահայության անվտանգությունը Բաքվի իշխանություններից, ապա դժվար է հավատալ, թե ՄԱԿ-ը, որը սույն համաձայնագրի երաշխավորը պետք է դառնար (Համաձայնագիր թիվ 1, կետ 13), կամ որևէ միջազգային կառույց ու երկիր արդի քառսային աշխարհում կկարողանան այդ խնդիրն արդյունավետորեն իրագործել, մանավանդ, որ ՄԱԿ-ի խաղաղարար գործունեության անարդյունավետությունը բազմիցս է ապացուցվել¹:

5. Հարկ է ընդգծել, որ ցուցաբերվող մոտեցումներն ամբողջական ու համապարփակ չեն՝ չնայած տարբերակների տրված անվանմանը: Ընդ որում ոչ միայն այն իմաստով, որ անվտանգության երաշխիքները բավարար չափով ապահովված չեն, այլև գուտ կառուցվածքային-ինստիտուցիոնալ մոտեցումը խնդիրն բավականին խոցելի է: Մասնավորապես կամային գործոնը (լուծման կախվածությունը կամքից, մյուս կողմին հարգելու, անցյալի խոցելի մոռանալու կամքը) կամ պարզապես ենթադրվում է կամ ակնկալվում է, թե կողմերին կթելադրվի կարգավորման ընթացքին հետևողների կողմից՝ «դրսից (ՄԱԿ, ԵԱՀԿ), կամ էլ ձեռք կբերվի հնթաց»²: Մինչդեռ Ղարաբաղյան հակամարտության տարեգրությունը ցույց է տալիս, որ այստեղ անհրաժեշտ են կարգավորման մեխանիզմների առավելագույնս հստակեցում, որոնք կբացառեն կամային որոշումների ընդունումն ու ձեռք բերված պայմանավորվածությունների խախտումը:

6. Թիվ 1 համաձայնագրի 5-րդ կետով նախատեսվում է «իրականացնել տեղահանված անձանց վերադարձը նախկին մշտական բնակության վայրեր՝ **Բաժանարար գոտում (ընդգծումն իմն է,- Հ. Փ.)**»: Եվ քանի որ «*Ուժերի դուրսբերման արդյունքում ազատված տարածքներն են վերաժվում Բաժանարար գոտու*» (թիվ 1 համաձայնագրի երրորդ կետ), ստացվում է, որ այդպես էլ խոսք չկա նախկին ԱդրևՍՀ վարչական սահմաններում հայտնված Դաշտային Արցախի և ընդհանրապես ադրբեջանահայության՝ իրենց բնակության վայրեր վերադարձի ու նրանց անվտանգության ապահովման մասին:

Վերոնշյալն ամրագրված է նաև «Հակամարտ կողմերի վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ» բաժնի 3-րդ մասում: Դրանով նախատեսվում է «*Իրականացնել երկխոսություն ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն կոմիսարի և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի օժանդակությամբ՝ մարդասիրական պահանջարկների գնահատման նպատակով (ինչպես ադրբեջանական տեղահանված անձանց համար, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի ներսում)*»:

Այսինքն՝ և միջնորդները, և մենք երկար տարիներ խոսել ենք ադրբեջանցի փախստականների վերաբերյալ, այն դեպքում, երբ ադրբեջանցի փախստական չկա: Խնդրի նման հարցադրումները տանում են դեպի հիմնախնդրի կերպարը, որի սխալ

¹ Տե՛ս Փաշայան Հ., *Միջազգային խաղաղապահներ: Նրանք ի վիճակի են ապահովելու մեր խաղաղությունը*, ՊԲ «Մարտիկ» պաշտոնաթերթ, թիվ 49 (759), էջ 6, 8-15 դեկտեմբեր, 2007թ.

² Սաֆարյան Ս., նշվ.աշխ., էջ 95:

ընկալմանը մենք ինքներս մասնակցել ենք էն գլխից, հենց մեր բացթողումներն այստեղ են¹:

Բավականին ուշագրավ ու վտանգավոր է նաև Թիվ 2 համաձայնագրի 10-րդ կետը, քանի որ, ըստ էության այն մի կողմից՝ երկրամասը հայաթափելու հնարավորություն էր ստեղծում, մյուս կողմից՝ դրանով արցախահայերը դիտվում էին որպես եկվորներ, հետևաբար պայմաններ էին ստեղծվում հայրենիք վերադառնալու համար: Դրանում մասնավորապես արձանագրված է՝ **«Լեռնային Ղարաբաղի քաղաքացիները...կարող են ցանկացած ժամանակ արտագաղթել Հայաստան և կարող են ստանալ հայաստանյան քաղաքացիություն՝ Հայաստանի հանրապետություն մշտական արտագաղթի դեպքում (տես Իսրայելի «Վերադարձի մասին» օրենքը)»:**

Նույն տարում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն առաջարկել են «Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության դադարեցման մասին Համաձայնագրի» նոր նախագիծ, որը հենվում էր «փուլային» եղանակով հակամարտող կողմերի միջև համաձայնության հասնելու սկզբունքի վրա: Ըստ այդ առաջարկության՝ նույնպես առաջնային էր համարվում զինված հակամարտության հետևանքների վերացման հիմնախնդիրը, այսինքն՝ զինված ուժերի դուրս բերման², բուֆերային գոտու ստեղծման և միջազգային խաղաղարար ուժերի տեղաբաշխման, փախստականների³ և տեղահանված անձանց վերադարձի խնդիրները և միայն դրանից հետո՝ համաձայնագրի 11-րդ կետով ենթադրվում էր, որ *երեք կողմերը, վերջ դնելով հակամարտության ժառանգական կողմին, կհամաձայնեն Մինսկի համաժողովի համանախագահների օժանդակությամբ բարեխղճորեն շարունակել բանակցությունները համընդգրկուն կարգավորմանը հասնելու նպատակով՝ ներառյալ ԼՂ կարգավիճակի, ինչպես նաև Լաչինի, Շուշիի և Շահումյանի հիմնահարցերի լուծումը*⁴: Այսինքն՝ փուլային լուծման պարագայում «փաթեթայինում» եղած անորոշություններին գումարվում էին նորերը՝ ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հետագա կարգավիճակով պայմանավորված, որը *թողնվում էր հակամարտող կողմերի ցուցաբերվելիք բարեխղճությանը*, այլև ընդհանրապես Ադրբեյջանի՝ նպաստավոր իրավիճակում հայտնվելու պարագայում հետագա բանակցությունները շարունակելու ցանկության բացակայության հետ կապված:

Նախորդից տարբերվող և ներկայիս ձևակերպված բանակցությունների իրական ձևաչափի վերականգնման ու պաշտոնական Բաքվի՝ Արցախին բանակցություններից հեռու պահելու տեսանկյունից, փաստաթուղթը կարևոր փաստարկ է պարունակում 1994թ. Բուդապեշտի գազաթնաժողովի որոշումների կատարմանն ուղղված հղումների (նախաբան, 4-րդ կետի առաջին պարբերություն) և հակամարտության երեք կողմ ունենալու հանգամանքի արձանագրման տեսանկյունից (11-րդ կետի առաջին պարբերություն):

Հակամարտության կարգավորման փուլային մոտեցումը որպես հիմք ընդունվեց ՀՀ-ի և ԱՀ-ի կողմից, սակայն մերժվեց Լեռնային Ղարաբաղի կողմից, քանի որ

¹ Մանասյան Ա., *ԼՂ Հակամարտության կերպարը պետք է փոխել*, ԼՂՀ ՊՆ «Մարտիկ» պաշտոնաթերթ, թիվ 27, թիվ 28, 2010թ.

² Հարկ է նշել, որ հայկական դիվանագիտության բացթողումներից մեկն էլ կապված է հակամարտության կերպարը ձևավորող սկզբունքներից մեկի սխալ ընկալման հետ, որով միջազգային հանրությունը, այդ թվում՝ նաև ԵԱՀԿ ՄՍ երկրները խոսելով գրավյալ տարածքներից զինված ուժերի դուրս բերման մասին, նկատի են ունենում հայերի կողմից «գրավված» տարածքները: Մինչդեռ, կոնկրետ այս պարագայում պետք է ասվեր, որ գրավված տարածքներ ունի նաև ադրբեյջանական կողմը: Իսկ ընդհանրապես՝ հիմնախնդրի միջազգային իրավական նորմերի տեսանկյունից, միայն ադրբեյջանական կողմն ունի գրվավյալ տարածքներ:

³ Ինչպես նախորդիվ, այստեղ ևս հարցի մասին խոսելիս, միջազգային հանրությունը նկատի է ունենում այսպես կոչված ադրբեյջանցի փախստականներին և ներքին տեղահանվածներին: Այն դեպքում, երբ ադրբեյջանահայությունն է դարձել դարաբաղյան հակամարտության անմիջական զոհը:

⁴ *«Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ»*, Խորհրդարանական լսումներ, 29-30 մարտի, 2005թ., Եր., 2006, էջ 470-478:

բացակայում էին այն նրաշխիքները, որ ԼՂՀ կողմից վերահսկվող տարածքների վերադարձից հետո ադրբեջանական իշխանությունների մոտ չէր անհետանա ցանկությունը բանակցությունների հետագա շարունակման համար: Միաժամանակ, 1997թ. աշնանից «փաթեթային» ու «փուլային» տարբերակների շուրջ ՀՀ-ում սկիզբ առած քննարկումների արդյունքում զարգացումները հանգեցրին Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականին: Հայաստանում կատարված իշխանափոխությունը՝ հակամարտության կարգավորման վերոնշյալ տարբերակների մերժումով, ըստ էության տեղի ունեցավ բանակցային գործընթացում ՀՀ-ի օգտին դրական տեղաշարժով: ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանը, խոսելով այս թեմայով, շեշտել է, որ եթե գիշերը ժամը երեքին Ի. Ալիևին քնից արթնացնենք և նրա առաջ դնենք 1997թ. փուլային տարբերակը, նա առանց մտածելու կստորագրեր: «Իսկապես այնպես չէ, որ բանակցությունների արդյունքում քրտինք թափելով ինչ-որ փաստաթուղթ էինք ձեռք բերել, հետո մենք մերժեցինք և այսօր այդ բոլորը վերականգնել հնարավոր չէ: Դա փուլային տարբերակ էր: Այսինքն՝ տվեք տարածքները, հետո նայենք ինչ կլինի կարգավիճակը»⁸:

Մեկ ուրիշ անգամ անդրադառնալով նախորդ շրջանում առաջարկված տարբերակներին՝ Վ. Օսկանյանը հետևյալն է նշել. «Ես տեսնում եմ լուրջ հնարավորություն, որ մենք կկարողանանք ամրագրել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը և հասնել դրա միջազգային ճանաչմանը: Այսօր Պրահայի գործընթացն է գնում, ես գիտեմ, թե սեղանի վրա ինչ կա, հնարավորություն եմ տեսնում ստանալ ավելին, քան ստանալու էինք 1997թ. »⁹:

Ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման միջնորդների առաջադրած վերոնշյալ տարբերակներից կարելի է մի շարք հետևություններ անել.

ա) Քաղաքական տեսանկյունից՝ հակամարտության կարգավորման նպատակով կողմերին ներկայացված համապարփակ կարգավորման փաթեթային և փուլային տարբերակները դարձան հրադադարին հաջորդած տարիների բանակցությունների ու դիվանագիտական պայքարի արդյունքներն ամփոփող այն հանգրվանը, որի կերպարով խնդիրը ներկայացավ միջազգային հանրությանը: Հակամարտության հանգուցալուծման այսպիսի տարբերակների գոյությունը պաշտոնական Բաքվի ընկալումներում փաստորեն նախադեպ ու նշաձող դարձավ, որի իրականացմանն ուղղվեց նրանց հետագա ողջ տեսական ու գործնական քաղաքականությունը: Դարաբաղյան հակամարտության ռազմական դիմակայությունում հաղթանակած հայկական կողմը, չունենալով անհրաժեշտ պատրաստվածություն, հետպատերազմյան առաջին տարիներին պարտվեց հակառակորդի հետ մեկնարկած քաղաքական ու դիվանագիտական առճակատմանը՝ սպառնալիքի տակ դնելով ռազմական դիմակայության ընթացքում ձեռք բերած հաջողությունները: 1994թ. հրադադարի հաստատմանը հաջորդած տարիները վկայում են, որ պատերազմն այդպես էլ չի ավարտվել, և քաղաքական ու դիվանագիտական պատրաստվածությունը շարունակում են հանդես գալ որպես հակամարտության կարգավորման այս կամ այն տարբերակների գոյավորման նախապայման, քանի որ, ինչպես ասում են, գորահրամանատարները հաղթում են ճակատամարտերը, իսկ պատերազմները՝ դիվանագետները:

բ) Իրավական առումով փաթեթային և փուլային տարբերակները հանդիսանում են հակամարտող կողմերին ներկայացված համապարփակ կարգավորման այն փաստաթղթերը, որոնցում հիմնախնդրի լուծումը ներկայացված է Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: 1998-ից հետո հակամարտող կողմերին այլևս կարգավորման նոր տարբերակներ չեն ներկայացվել: Իսկ Մադրիդյան, Կազանյան և այլ անվանումներ ստացած փաստաթղթերը ներառում էին ոչ թե կարգավորման տարբերակները, այլ սկզբունքները, չնայած պաշտոնապես առ այսօր այն հանրությանը չի ներկայացվել: Վերջին հանգամանքը մի կողմից պաշտոնական Բաքվին թույլ է տալիս հակամարտության չկարգավորվածության մեջ մեղադրել հայկական կողմերին (եթե ընդունած լինեին ապա հակամարտությունը

վաղուց լուծված կլինեն), մյուս կողմից՝ որն ավելի վտանգավոր է, հիմք է տալիս անհրաժեշտության դեպքում սեփական ճշմարտացիությունը իրավականորեն հիմնավորելու համար հղում կատարել նշված տարբերակներին:

զ) Պատմական առումով փաթեթային և փուլային տարբերակները հայկական կողմերի համար պարունակում էին միանգամայնորեն անընդունելի դրույթներ: Միայն այն ձևակերպումը, որով առաջարկվում էր խնդիրը կարգավորել նախկին ԼՂԻՄ սահմաններում՝ թեկուզև ամենալայն կարգավիճակով, անընդունելի էր դարձնում նրա իրականացումը: Գործնականում դա նշանակում էր 1991 թվականին պատմության գիրկն անցած Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնում, որի իրավահաջորդությունից մերօրյա Ադրբեջանի Հանրապետությունը սահմանադրորեն հրաժարվել է¹: Գաղտնիք չէ, որ հակամարտության մերօրյա փուլի ծագումը կապված է ԱդրևՍՀ կենտրոնական իշխանությունների հակահայկական քաղաքականության իրականացման և այդ իրավիճակից դուրս գալու արցախահայության՝ անվտանգային ելքերի փնտրտուրի հետ: Դրան էր միտված 1988թ. փետրվարի 20-ին մայր Հայաստանին միանալու, 1989թ. Մարզի կառավարումը Մոսկվայի անմիջական ենթակայությանը հանձնելու և վերջապես 1991-ին անկախ պետականություն ստեղծելուն ուղղված որոշումները: Այսինքն՝ ԱդրևՍՀ կազմում ԼՂԻՄ ներառումն է պայմաններ ստեղծել Արցախում և նրանից դուրս թողնված հայկական ու հայաբնակ մյուս վայրերում շարունակել հայերի բնաջնջման թուրքական քաղաքականությունը, որն այսօր էլ շարունակում է մնալ թուրք-ադրբեջանական քաղաքական օրակարգում:

դ) Թե՛ փուլային, թե՛ փաթեթային տարբերակներում հակամարտության կարգավորման նպատակով, որպես առաջնային օրակարգ ներկայացված է հիմնախնդրի բուն էության հետ ոչ մի առնչություն չունեցող հակամարտության հետևանքների վերացումը: Ընդ որում այստեղ ևս իրականությունը ներկայացված է կամայական մեկնաբանությամբ: Բանն այն է, որ 1988թ. փետրվարի 20-ի արցախահայության մայր Հայաստանին միանալու որոշումն ընդունելու պահին ադրբեջանցի փախստականներ չեն եղել: Հիմնախնդրի հակամարտության² վերաճելու պահին առաջին փախստականները Սուրգայիթի, Բաքվի, Գետաշենի և ԱդրևՍՀ վարչական ենթակայության տակ հայտնված, իրենց պատմական հայրենիքում ապրող հայերն էին: Այնուհետև օրինականորեն անկախություն հռչակած Արցախի Հանրապետության դեմ բացահայտ ռազմական գործողություններ սանձազերծվեց, որի առաջին փուլում ադրբեջանական կողմին հաջողվեց գրավել նորանկախ հանրապետության տարածքի գրեթե կեսը: Դրանց հետևանքները և հայերի դեմ իրագործված թուրքական դաժանությունները հանրահայտ փաստեր են³:

ե) Իհարկե ակնհայտ է, որ ոչ միայն փուլային, այլև փաթեթային կարգավորումը չի կարող մեկ ակնթարթում կայանալ, այն պետք է իրացվի որոշակի ժամանակահատվածում՝ նախանշված հաջորդական քայլերի միջոցով: Դրանց տարբերությունն այն է, որ փաթեթային կարգավորման դեպքում կողմերը պայմանավորվում են իրենց առաջինից մինչև վերջին քայլերի ու դրանց իրականացման ժամանակացույցի մասին: Այսինքն՝ կողմերին սկզբից էլ պարզ է լինում, թե ինչպիսի պատկեր են ունենալու ցանկացած պահի, այդ թվում՝ հատկապես գործընթացի վերջում: Սակայն ցանկացած հիմնախնդրի կարգավորման

¹ Տե՛ս Փաշայան Հ., *Քաղաքական փաստաթղթերը Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում*, Ստեփանակերտ, 2016, էջ 85-107:

² Այս մասին տե՛ս Փաշայան Հ., Բալայան Լ., *Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խոչընդոտները*,

³ «Օղակ» ռազմագործողության մասին տե՛ս Кривоу́сков В., *Мятежный Карабах*. Из дневника офицера МВД СССР. Издание второе, дополненное. М., Голос-Пресс, 2007. Դրանք դրսևորվեցին ոչ միայն 1991-1994թթ. պատերազմական օրերին, ինչպես Մարադայի ցեղասպանությունը՝ տե՛ս <http://maragha.nk.am>, այլև 2016թ. քառօրյա առճակատման ընթացքում, տե՛ս Հասարակայան Ս., *Ադրիլյան քառօրյա առճակատում (Արցախ 02-05.04.2016թ.)*, Եր. 2017թ.:

գործընթացում էականը ոչ այնքան խնդիրները փուլ առ փուլ կամ փաթեթով լուծելն է, որքան նրա կարգավորման փիլիսոփայությունը: Դրա ընթացքում պետք է հաշվի առնվի նրա ծագման և զարգացման շարժընթացը և ըստ այդ հերթականության լուծվեն նաև ծագած խնդիրները, այլապես ներկայացված տարբերակները գրկված են իրականանալու հնարավորությունից: Այլ հարց է, որ արդեն ներկայացված տարբերակների պատմական փորձը հաշվի առնելով՝ հայերիս մոտ փուլային կարգավորումը ասոցացվում է 1997-ին միջնորդների ներկայացրած տարբերակի հետ, որում խախտված էր վերոբերյալ հանգամանքը: Նույնը վերաբերում է նաև Մադրիդյան կոչված սկզբունքներին: Ուրեմն, հակամարտության կարգավորման համար իրատեսական կլինի այն տարբերակը, որը կներառի հակամարտության կարգավորման պատճառահետևանքային կապը՝ համապատասխան հերթականությամբ ու խնդիրների լուծումով, հաշվի առնելով թե հիմնախնդիրը զարգացման ինչ հերթականություն է ունեցել (կարգավիճակի հարց, հաղորդակցության խնդիրներ, փախստականների հարց և տարածքների հարց):

Այսպիսով՝ միջնորդների կողմից տարածքային ամբողջականության պահպանման դրույթի շրջանակներում Լեռնային Ղարաբաղը նախկին ԼՂԻՄ սահմաններով նորից Ադրբեյջանի կազմ մտցնելուն ուղղված սկզբունքի ամրագրումը 1997թ. ներկայացված փաթեթային, իսկ այնուհետև առավելապես հակամարտության հետևանքների վերացմանն ուղղված փուլային տարբերակներն ի սկզբանե խոչընդոտ դարձան հակամարտության կարգավորման հետագա կառուցողական քայլերի համար:

Մյուս կողմից՝ փուլային կամ փաթեթային անվանումները չպետք է քողարկեն հակամարտության կարգավորման պատճառահետևանքային կապերն ու հիմնական խնդիրը՝ Արցախի Հանրապետության կարգավիճակի և նրա ժողովրդի անվտանգության երաշխիքների ամրագրումը, մանավանդ, որ ներկա իրողությունները արդյունք են Ադրբեյջանի կողմից Արցախի դեմ ուղղված ուղակի ռազմական ագրեսիայի:

Վերջապես, Հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս կամ այն տարբերակի ձևավորումը (այնուհետև նաև դրա իրացումը) անմիջականորեն կապված է խնդրի **իրավաքաղաքական փաստարկումների ձևակերպումներից, դրանց գիտակցումից ու ներկայացումից:** Ամերիկյան քաղաքագետ Արթուր Բենտլիի խոսքերով՝ քաղաքականությունը նպատակներին և շահերին հասնելու համար կազմակերպված և փոխադարձ պայքարի պրոցես է (հակամարտությունների կարգավորման գործընթացում այդ պայքարն ավելի սուր և բացահայտ բնույթ է կրում, -Հ, Փ.), իսկ քաղաքական որոշումների ընդունումը համապատասխան խմբերի միջև գոյություն ունեցող ուժերի արտահայտությունն է¹: **Այս ամենից և հակամարտության կերպարի հանրային /միջազգային/ ընկալումներից կարելի է եզրակացնել, թե խնդրի լուծման ինչպիսի հանգրվանի է հնարավոր հասնել կարգավորման բանակցային գործընթացում:**

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.դ. Ա.Փ.Ենգոյանը:

¹ Мухаев Р., *Политология*: учебник. М., 2009, ст. 327.

ՀՏԴ 34 /091:749.243/

Իրավագիտություն

Գայանե ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Մխիթար Գոշը հայ իրավական մտքի պատմության զարգացման կարևոր գործիչներից է: Նա ծնվել է Գանձակում 12-րդ դարի, 20-30-ական թթ: Մխիթար Գոշը գրել է առաջին հայկական կոդիֆիկացված օրենսդրությունը: Նա պայքարել է ժամանակաշրջանի արատավոր երևույթների դեմ և իր կողմից մշակված կանոնների միջոցով փորձել է պաշտպանել հայ հասարակությունը: Նշված կանոնները ներառում են քաղաքացիական, քրեա-իրավական, ընտանեկան նորմեր: Կանոնների մեծ մասը վերաբերվում էին արդարությանը, կուսության պահպանմանը, ընտանիք կազմելուն, դատարանակազմությանը, պետականության կերտմանը:

Բանալի բառեր՝ Կանոնական օրենսդրություն, իրավունքի զարգացում, հայ իրավունք, հայ հասարակություն, ժամանակաշրջան, դատաստանագիրք:

Г. Нерсисян

ГОСУДАРСТВЕННО ПРАВОВЫЕ ВЗГЛЯДЫ МХИТАРА ГОША

Мхитар Гош- один из известных деятелей в истории развития армянской правовой мысли. Он родился в Гандзаке в 20-30-х годах 12-го века. Гош написал первое кодифицированное армянское законодательство. Он своими канонами боролся против дурных привычек своей эпохи, против осквернения прав, и старался своими законами защитить армянское общество. Каноны содержат гражданские, уголовно-правовые, семейные нормы. В канонах большое значение отводится справедливости, сохранению девственности, состоянию семьи, судоустройству, созданию государственности.

Ключевые слова: Законодательство, судебник, развитие права, армянское право, армянское общество, эпоха, судоустройство.

G. Nersisyan

THE POST-LEGAL HUMANITARIAN VIEWS OF MKHITAR GOSH

Mkhitar Gosh is one of the important figures in the history of the development of legal thought. He was born in Gandzak in 1130. He wrote the first armenian coded legislation. With these rules he struggled against the bad habits, corrupt morals of his century tried to defend the

armenian society with the help of his rules. The rules include civil, criminal, family law norms. In these rules great importance is given to preservation of virainity, family establishment, judical system and creation of state.

Key words: *canonical legislation, development of the law, the Armenian right, the Armenian society, period, the codes of law.*

«Ես չեկա օրենքը կամ մարգարեներին ջնջելու, այլ նրանց լրացնելու», -ասում է Հիսուսը: Ըստ Քրիստոսի այս պատգամ-խոսքի անվանի գիտնական, առակագիր, գրող, օրենսդիր՝ Մխիթար Գոշը կազմել է «Դատաստանագիրքը»: Մխիթար Գոշի Դատաստանագիրքը հայ միջնադարյան իրավունքի գլուխգործոցն է, հայ մատենագրության եզակի հուշարձան: Այն հարուստ նյութ է պարունակում գիտության բազմաթիվ բնագավառների համար: Մ.Գոշը ծնվել է ԺԲ դարի 20-30-ական թվականներին Գանձակ քաղաքում: Մահացել է 1213թ-ին՝ ապրելով 80-90 տարի: Չափահաս դառնալով՝ Մխիթարը ձեռնադրվում է կուսակրոն քահանա: Երկար տարիներ աշակերտելով Հովհաննես Տավուշեցի վարդապետին՝ Մխիթարը դառնում է վարդապետ: Գիտելիքները առավել հարստացնելու համար նա մեկնում է Կիլիկիա, Սև լեռան հոջակավոր վանքերը, խորանում է աստվածաբանության և գիտության այլ բնագավառներում: Մխիթարը, երկրորդ անգամ ստանալով վարդապետի կոչում, վերադառնում է հայրենիք: [1]

Մխիթար Գոշը, ուսում ստանալուց հետո վերադառնալով հայրենիք, որոշ ժամանակ ապրել է Գանձակ քաղաքում, ապա 1184թ-ին մահմեդականներից հալածված և Գանձակում նստող Ադվանից Ստեփանոս կաթողիկոսի խարդավանքներից զզված տեղափոխվելով ապաստանել էր Խաչենում՝ Հաթերքի (ներկայիս ԱՀ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղ) Վախթանգ իշխանի մոտ, որտեղ էլ Վախթանգի ապարանքում նույն թվականին սկսել է գրել ու ավարտել իր հիմնական աշխատությունը՝ «Դատաստանագիրքը»:

Վախթանգն ու նրա եղբայրները, մի քանի տարի անց /1191թ./, Մխիթար Գոշի համար կառուցում են Նոր Գետիկ վանքը, որն իր մահից հետո կոչվեց Գոշավանք: Գոշը միշտ երախտապարտ էր Վախթանգին, նրա եղբայրներին ու նրա կնոջը՝ Արզու-Խաթունին: Հայտնի է, որ «Դատաստանագրքի» մի օրինակը նվիրված է Վախթանգին ու Արզու-Խաթունին՝ հեղինակի երախտալից ընծայագրով:[2]

Հետագայում Մ.Գոշը իր գործունեությունը ծավալում է Գոշավանքում, որը դառնում է միջնադարյան Հայաստանի հոգևոր, կրթական և մշակութային խոշոր կենտրոններից մեկը: Գոշավանքում ուսուցանվել են հայոց և օտար լեզուներ /հունարեն, լատիներեն/ քերականություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, երաժշտություն, գրչության արվեստ, նկարչություն: Այստեղ պահվել և ստեղծվել են բազմաթիվ ձեռագրեր:[3]

Մեզ են հասել Մխիթար Գոշից մատենագրության տարբեր ճյուղերին պատկանող մոտ մեկ տասնյակի հասնող աշխատություններ: Դրանցից հանրահայտը «Դատաստանագիրք»-ն է: Այն բաղկացած է նախադրությունից /նախաբանից/ և երկու մասից՝ եկեղեցական կանոններից և աշխարհական-քաղաքացիական օրենքներից: Գրված է գրաբարով, առանձնահատուկ է իր հակիրճությամբ՝ ընդհամենը 251 հոդված:

Նա իր մտավոր գործունեությամբ ջանում էր ծառայել ազգային պետականության ամրապնդմանը:

«Դատաստանագիրքը» միջնադարյան մատենագրության այն կոթողներից է, որի հետ դժվար է համեմատել ուրիշ որևէ մատյան: Գոշը օրենսգիրք կազմելը համարել է ազգային արժանապատվության հարց: Հայ օրենսգիրքը պետք է լռեցներ նրանց, ովքեր մեղադրում էին հայերին օրենքներ չունենալու մեջ: Այն ստեղծվեց հարազատ ժողովրդի քաղաքական, տնտեսական, մշակութային և հոգևոր վիճակը կարգավորելու համար, որպեսզի օրենքների միջոցով պաշտպանի հայ մարդկանց բոլոր իրավունքները:

Մխիթար Գոշը կանգնած էր իր դարի մտածողության ամենաառաջադիմական ու ամենաբարձր աստիճանին, նա գտնում էր, որ մարդն ազատ ու լիիրավ է ծնվել և հետագայում միայն մարդկային հարաբերություններն են, որ ստեղծել են անհավասարություն, իրավունքների սահմանափակումներ:[4]

Գոշը յուրաքանչյուր գլխում առանձին հանցանքի համար նախ՝ բերում է օրենքի խիստ պատժի դրույթը, ապա՝ Ավետարանի ողորմածության խոսքը, որով մահապատիժը մեղմվում է խրատով՝ մարմնական մասնակի պատժով, դրամական տուգանքով և ապաշխարությամբ:

Դատաստանագրքի բազմաթիվ իրավական նորմեր կարգավորում են հոգևորականների, թագավորի, իշխանաց իշխանի և իշխանների միջև ծագած հարաբերությունները:

Ըստ Մ.Գոշի՝ պետության և եկեղեցու համախմբումը կնպաստի պետության կայունացմանը, ներքին միասնականությանը: Նա առաջնային նշանակություն է տալիս եկեղեցուն, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններին:

Գոշը կողմնակից է պետական կառավարման միապետական ձևին: Երկրի կառավարման դեկը, ըստ նրա, պետք է գտնվի թագավորի ձեռքին: Գահը պետք է անցնի ուղղակի, վայրընթաց գծով արյունակից ժառանգներին՝ որդուն, թոռանը և այլն: Եթե չլինեին որդիներ, ապա նոր միայն գահը կարող է անցնել թագավորի աղջիկներին:[5] Նրան պետք է պատկանի նաև արտաքին քաղաքականությունը: Երկրի սուվերենության հարցը նա կապում է թագավորի անձնավորության հետ: Թագավորը նա է, ով «իր» ամբողջ ժողովրդի «ազգի» վրա տիրապետություն ունի և ուրիշ ժողովուրդներից հարկ է վերցնում կամ ուրիշ պետությունների ինքը հարկ չի տալիս:[6]

Գոշը ընդհանրապես դեմ է մահապատժին: Նրա կարծիքով «մեր» թագավորները վերացրել են պատժի այդ տեսակը, քանի որ «այն հակասում է մեր օրենքների մարդասիրությանը»:[7]

Ծանրագույն հանցագործությունների համար Գոշը որպես պատիժ սահմանել է մարմնական պատիժներ՝ անդամահատություն, ծեծ, որը փոխարինելու էր մահապատժին և դրանով իսկ փրկելու մահապարտի կյանքը: Նա ավելացնում է, որ նշված մարմնական պատիժները պետք է կիրառել միայն չզոջացող հանցագործի նկատմամբ: Այդ մարմնական պատիժները ավելի մեղմ էին, քան այն պատիժները, որ այդ ժամանակ կիրառվում էին Արևմտյան Եվրոպայում, ինչպես օրինակ՝ մարդկանց կենդանի-կենդանի խարույկի վրա այրելը կամ եռացրած յուղի կամ ձյութի մեջ գցելը:[8]

Պետական իրավական նորմերով կարգավորվում էին նաև հարկային հարաբերությունները: Նա սահմանում է երեք տեսակի հիմնական հարկեր՝ գլխահարկ /հարկ գլխոյ/, հողային հարկ և եկամտահարկ: Գլխահարկի մասին պետք է նշել, որ Գոշը ընդհանրապես դրան դեմ է, քանի որ նրա կարծիքով, այդ

հարկը ունի մարդու արժանապատվությունը վիրավորող բնույթ: Այդ պատճառով էլ նա արգելում է քրիստոնյա տերերին քրիստոնյայից գլխահարկ վերցնել: Նա արգելում է անձնատուր եղած այլազգիների վրա գլխահարկ դնել:[9]

Պետական հանցագործություններից է դրամանենգությունը, այսինքն՝ շահադիտական նպատակներով նոր դրամներ կամ փողանիշեր պատրաստելը. դրանց իրացնելը համարվել է ծանրագույն պետական հանցագործություն: Արարքը ուղղվում է պետության տնտեսական կյանքի հիմքերի դեմ, ուրեմն անուղղելի վնաս հասցնելով պետությանը, վտանգի տակ է դրվում երկրի ներքին և արտաքին առևտուրը, խախտվում է երկրի դրամական շրջանառության գործը:[10] Գոչը պատժելի է համարում դրամանենգությունը դրա համար նախատեսում է մարմնական պատիժներ՝ այլ իշխաններ պարտավոր չեն դահեկան կամ դրամ հատել և եթե նրանցից մեկը հատի այդ թագավորի կամքով լինի:

Բազմաթիվ ձեռագիր օրինակներից դիտվում է, որ դատաստանագիրքը XII դարի վերջերից կիրառվելիս է եղել Հայաստանի ազգային դատարանական հիմնարկներում իբրև գործնական իրավաբանական ձեռնարկ, թեև այն ժամանակ հայերն արդեն զրկված էին քաղաքական ինքնուրույնությունից: Դատաստանագիրքը, պարունակելով քաղաքացիական օրենքներին կից նաև եկեղեցական կանոններ, գրավել էր գլխավորապես հոգևոր վարչական մարմինների ուշադրությունը: Նա դարձել էր ամենատարածված ու ամենագլխավոր օրենսգիրքը հայ հոգևոր հաստատություններում դատավարական գործերի համար, մանավանդ ընտանեկան ու ժառանգական իրավունքների բնագավառում:[11]

Ինչ վերաբերվում է, թե որ տարիքից մարդ կարող է հանցագործության սուբեկտ լինել, ըստ Գոչի՝ 12 տարեկանից բարձր անձը պետք է լրիվ պատասխան տա իր կատարած հակաօրինական արարքի համար, 10-12 տարեկան անչափահասը՝ կիսով չափ:[12]

Դատաստանագրքում որոշ հոդվածներ վերաբերում էին կանանց իրավունքներին և սեռական անձեռնմխելիությանը: Գոչը գտնում է, որ ամուսնությունը պետք է լինի ամուսնացող զույգերի կամավոր համաձայնությամբ: Արգելվում է պսակել առանց միմյանց տեսնելու, որովհետև անհայտ է կամենում են նրանք առհասարակ ամուսնանալ կամ հավանում են իրար, ուստի հրամայում է չտեսածին չառնել (մաս 2-րդ, գլուխ ԱՍ):[13]

Ամուսնական տարիքը բարձրացնում է՝ տղաների համար սահմանելով 18, աղջիկների համար՝ 15 տարեկանը, որովհետև դա է համարում որդեծնության համար հասուն տարիք, ըստ բնության օրենքների՝ տղաների կարողունակությունը պետք է ճանաչվի, իսկ եթե կինը անչափահաս լինի, տղամարդը չափահաս, ամուսնության ժամանակ անչափահաս աղջկա մոտ պատռվածք կառաջանա և նա կարող է մահանալ:[14] Իսկ արյունակցության աստիճանը, որի դեպքում թույլատրվում է ընտանիք կազմել, սահմանում է հարազատության չորրորդ և հինգերորդ աստիճանը: Օրենքի կողմից նման ամուսնությունները հանցավոր և մերժելի է համարում: Մեղքն այն է, որ արյունը խառնվում է արյան հետ՝ ազգականի միջև ամուսնության միջոցով: Մերձավորությունը վերացնելով՝ կատարյալ արդարադատություն կհաստատվի համայնքում:[15] Պահանջում է, որ ամուսինը պարտավոր է հարգել կնոջ պատիվն ու ինքնասիրությունը, մարդկային լինել նրա նկատմամբ: Գույքային հարաբերությունների բնագավառում Մ.Գոչը, ըստ էության, սահմանում է

աննախադեպ մի դրույթ՝ ամուսինների գույքային իրավահավասարություն: Ամուսնալուծվելիս ամուսինը տան իրերը պետք է բաժանի ու կեսը տրամադրի կնոջը:[16]

Երկրի գերագույն իշխանը՝ թագավորը՝ որպես պետության գլուխ, զվիավորելու է նաև դատական գործը: Թագավորը կամ իշխանը դատելու են ատենակալների հետ միասին, սակայն կանխամտածված սպանության վերաբերյալ գործերը քննելու է թագավորը՝ օրինակ մահապատիժ կամ դրան հավասարագոր պատիժ նախատեսող գործերը: Թագավորը կարող էր հաստատել կամ մերժել իշխանների կողմից կայացված մահվան դատավճիռները:[17]

«Դատաստանագրքում» կան հոդվածներ, որոնք վերաբերվում են լրտեսություն և դավաճանություն պետական հանցագործություններին: Այդ արարքները ուղղված են տվյալ պետության գոյության հիմքերի դեմ կամ որոնցով ամենատարբեր ձևերով խախտվում են այդ պետության արտաքին անվտանգությունը կամ նրա ներքին ապահովությունը: Դա պետության դեմ ուղղված դիտավորյալ կատարվող հանցավոր ոտնձգություն է, որով հետապնդվում է՝ այդ պետության մեջ պետական իշխանությունը տապալելու կամ թուլացնելու նպատակով: Այս պետական հանցագործություններ կատարած անձինք պետք է ենթարկվեն մահվան:[18] Այս կապակցությամբ Գոշի «Դատաստանագիրքը» նախատեսում է՝ նրանք, ովքեր քաղաքի կամ բերդի իրավիճակը հայտնի դարձնեն թշնամուն, պետք է մատնվեն մահվան, սակայն չսպանեն նրան հանուն քրիստոսի մարդասիրության: (ԳԼՈՒԹ Բ)[19]

Մ.Գոշը «Դատաստանագրքում» փորձում էր օրենսդրության միջոցով լուծել հասարակության մեջ ծագած խնդիրները, ինչպես նաև նույն նպատակն էր հետապնդում առակներով՝ խրատ-ուսուցման ճանապարհով: Դրանցում արծածվում էին հասարակական և կենցաղային, ժողովրդի և առանձին անհատների փոխհարաբերությունների վերաբերյալ հարցեր: Այստեղ նույնպես դատապարտվում էր չարը և արտահայտվում կենտրոնացված ուժեղ հայկական պետության գաղափարը:[20]

Գոշի «Դատաստանագիրքը» հիմք է ծառայել նոր օրենքներ կազմելուն, օրինակ՝ Լեհաստանում, Ղրիմում, Նոր Նախիջևանում, Աստրախանում, Վրաստանում՝ որպես վրաց Վախթանգ 6-րդի ժողովածուի բաղկացուցիչ մաս, մտավ նաև ռուսական կայսրության 1835թ. «Հավաք օրինացի» մեջ (X հատ., I մաս)[21] Իսկ Հայաստանում հայ իրավական նշանավոր հուշարձաններից Սմբատ Սպարապետի /Գունդեստարբի/ «Դատաստանագիրքն» է, որի հիմնական գրավոր աղբյուրը Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն» է: Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը՝ /1265թ./ գործել է Կիլիկյան հայկական թագավորությունում մինչև 1375թ. այսինքն՝ մինչև թագավորության կործանումը:[22]

Գոշը համոզված էր, որ չնայած «Դատաստանագիրքը» հավանության էր արժանացել ժամանակի վարդապետների և ղեկավարների կողմից, սակայն այն անընդհատ ու անվերջ պետք է նորոգվի, կատարելագործվի՝ կյանքի, հասարակական-քաղաքական մթնոլորտի փոփոխությունների հետևությամբ, օրենսդրական դաշտի մշակման և կատարելագործման հետ միասին: Այսինքն՝ դատաստանագիրքի կլինի հավերժ գրվող, մշակվող, կատարելագործվող, մարդկային փորձի ու մտքի զարգացման ընթացքի դրոշմն իր վրա կրող մի երևույթ:

Գոշի իրական նպատակը հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունն արթնացնելու ձգտումն էր: Գոշը մեծ նշանակություն է տալիս աշխարհիկ /քաղաքացիական/ և հոգևոր /եկեղեցական/ իշխանությունների փոխհարաբերությանը, քանզի միջնադարում ուժեղ պետականության, անկախության և ժողովրդի միասնության երաշխիքներից մեկն էլ հոգևոր իշխանությունն էր: Եկեղեցու դերն ու նշանակությունը հայ իրականության մեջ առավել ցայտուն դրսևորվեց կորցրած պետականության պայմաններում:

Հայ եկեղեցին իր ծագման ժամանակից եղել և մնում է խիստ կենտրոնացված կազմակերպություն: Նշված հանգամանքները հնարավորություն էին տալիս եկեղեցուն իրականացնել ազգապահպան գործունեություն և աշխարհիկ իշխանության հետ միասին պահպանել ու ամրապնդել հայ ժողովրդի քաղաքական ինքնավարությունը: Եկեղեցին 5-րդ դարից իր ձևերում էր կենտրոնացրել նաև արդարադատության ֆունկցիան: Այս ամենը գիտակցելով՝ Գոշը դեմ է աշխարհիկ իշխանությունների միջամտությանը եկեղեցու գործերին, սակայն եկեղեցին իրավունք ուներ, նույնիսկ պետականության պայմաններում մասնակցել աշխարհիկ-քաղաքական հարցերի քննարկմանը:[23]

Հայ իրավագիտության մեծանուն գործչի՝ Մխիթար Գոշի «Հայոց դատաստանագիրքը», իրավական կանոն փաստաթուղթ լինելուց բացի, ունի նաև դատախարակչական մեծ նշանակություն, նպատակ է ունի կանոնավորել հասարակության ներքին կյանքը, միջնադարյան ըմբռնողությամբ դասերի և դասակարգերի հարաբերությունները, իրականացնել եկեղեցու շուրջ նրանց ավելի սերտ համախմբումը և ժողովրդի կենցաղի ու բարքերի մաքրության ապահովումը: Հզոր պետություն ստեղծելու նախադրյալները նա տեսնում էր արդարության և աստվածավախության մեջ: Նրա իրավական, բարոյական ու պետաիրավական հայացքները չեն կորցրել իրենց արդիականությունը խիստ անհրաժեշտ է, որ դրանք ընդօրինակվեն նաև մեր օրերում:

Ծանոթագրություններ

1. Դատաստանագիրք, Եր., 2001, էջ 6:
2. Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975, էջ 146:
3. Նալբալյան Հ., Հայոց Ուտիք-Գարդման աշխարհը, Եր., էջ 227:
4. Ուլուբաբյան Բ., Հայոց Արևելքից կողմանց եկեղեցին և մշակույթը, Եր., 1998, էջ 307:
5. Դատաստանագիրք, Եր., 2001, էջ 36:
6. Սուքիասյան Ա., Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը» Եր., 1965, էջ 105:
7. Նույն տեղում, էջ 158:
8. Նույն տեղում, էջ 162-164:
9. Նույն տեղում, էջ 111:
10. Թովմասյան Ա., Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Եր., 1977, էջ 48:
11. Նույն տեղում, էջ 88:
12. Սուքիասյան Ա., նշված աշխատության, էջ 154:

13. Ավագյան Ռ.Հ., Հայ իրավական մտքի գանձարան, գիրք 1, Եր., 2001, էջ 478:
14. Նույն տեղում, էջ 258:
15. Նույն տեղում, էջ 490:
16. Նույն տեղում, էջ 455:
17. Սուքիասյան Ա., նշված աշխատության, էջ 198-199:
18. Թովմասյան Ա., նշված աշխատության , էջ 24-31:
19. Դատաստանագիրք, Եր., 2001, էջ 38:
20. Ավագյան Ռ., նշված աշխատության, էջ 346:
21. Սուքիասյան Ա., նշված աշխատության, էջ 75:
22. Երիցյան Ա., Մարդու իրավունքներ, Եր., 2011, էջ 85:
23. Սաֆարյան Գ., Խաչատրյան Հ., Հայ իրավունքի հուշարձաններ V-XVIII, Եր., 1994, էջ 16:

Հոդվածը տպագրության է նրաշխարհել խմբագրական կոլեգիայի անդամ, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ս.Ղազինանը:

ՀՏԴ 336.2(479.243)

Տնտեսագիտություն

Լիլիկ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԱրՊՀ տ.գ.թ., տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի ավագ դասախոս

Անյուտա ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱրՊՀ, տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի ավագ դասախոս

E-mail: beglaryan.lilik@mail.ru

ՀԱՐԿԱԳԱՆՁՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ԱՀ-ՈՒՄ

Հարկային հավաքագրման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով հարկային հսկողության գործընթացում այսօր ԱՀ-ում ներմուծվել է նոր, ժամանակակից գործիքակազմ, որը ենթադրում է նաև հարկային պարտավորությունների գանձման և հարկերի վճարումից խուսափելու դեպքերի բացահայտման մեխանիզմների սահմանում: Առաջին հերթին դա ուղղված է ընթացիկ հարկային և պարտադիր վճարների մասով պարտավորությունների աճի սահմանափակմանը, հարկերի և պարտադիր վճարների առկա ապառքների կրճատման միջոցառումներին, հարկերի վճարումից խուսափելու դիսկերի բացահայտման նոր մոտեցումների սահմանմանը:

Բանալի բառեր` հարկերի հավաքագրում, հարկային համակարգ, հարկային դիսկ, հարկային եկամուտներ, հարկային գործիքներ, հարկային մեխանիզմ:

Л.Бегларян, А.Гаспарян СОВРЕМЕННЫЙ ИНСТРУМЕНТАРИЙ НАЛОГОВЫХ СБОРОВ В АР

С целью повышения результативности налоговых сборов в процессе налогового контроля на сегодняшний день в РА введен новый, современный инструментарий, который предполагает определение механизмов взыскания налогов и выявления случаев уклонения от налогов. В первую очередь он направлен на ограничение роста обязательств по части текущих налоговых и обязательных платежей, на принятие мер по сокращению существующих недоимок обязательных платежей и на определение новых подходов по выявлению рисков уклонения от налогов.

Ключевые слова: сбор налогов, налоговая система, налоговый риск, налоговые доходы, налоговые инструменты, налоговый механизм.

L. Beglaryan, A. Gasparyan**MODERN TOOLSET OF TAX COLLECTION IN AR**

For increasing the level of tax revenues in the process of tax control in the Republic of Artsakh nowadays a new toolset is put into force, which defines the mechanism of tax collection and revelation of cases of deviation of tax duties. First of all it is used for limitation of the growth of obligations on tax and compulsory payments, for taking measures in shortening the existing arrears in obligatory payments and for new approaches in revelation of risks of deviation of taxes.

Keywords: collection of taxes, tax system, tax risk, tax income, tax toolware, tax mechanism.

Տնտեսավարող սուբյեկտները առավել հաճախ են օգտագործում հարկային վճարումների նվազեցման տարաբնույթ սխեմաներ, իսկ պետությունը առավել ակտիվ ձևով է իրականացնում հարկային ոլորտում բարեփոխումներ ոչ միշտ ստանալով ֆիսկալ և կարգավորող անհրաժեշտ արդյունք: Հարկերից խուսափելու ձգտումը պետության ցանկացած ֆիսկալ միջոցառման հակազդեցության դրսևորումներից է, այդ պատճառով հարկազանձման գործընթացում նոր գործիքակազմի կիրառումը դառնում է անհրաժեշտություն: Ներկայումս այս ուղղությամբ միջոցառումները իրագործվում են մակրոմակարդակով և ուղղակի ազդեցություն են ունենում տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության վրա: Սակայն դա դեռևս չի նշանակում, որ միկրոմակարդակով այդ սուբյեկտներն ի գործու չեն կառավարելի դարձնել պետության նկատմամբ իրենց հարկային պարտավորությունները: Տնտեսավարող սուբյեկտների կողմից վարվող հարկային քաղաքականության ներազդեցությունը հարկային բեռի վրա, մեր կարծիքով, հնարավոր է իրականացնել այդ սուբյեկտներում հարկային պարտավորությունների կառավարմանն ուղղակի մեխանիզմների միջոցով՝ բացահայտելով պահուստները կամ հարկային խախտումները:

Պետական բյուջեի եկամուտների հավաքագրման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով հարկային հսկողության գործընթացում այսօր ԱՀ-ում ներմուծվել է նոր, ժամանակակից գործիքակազմ, որը ենթադրում է նաև հարկային պարտավորությունների գանձման և հարկերի վճարումից խուսափելու դեպքերի բացահայտման մեխանիզմների սահմանում: Առաջին հերթին դա ուղղված է ընթացիկ հարկային և պարտադիր վճարների մասով պարտավորությունների աճի սահմանափակմանը, հարկերի և պարտադիր վճարների առկա ապառքների կրճատման միջոցառումներին, հարկերի վճարումից խուսափելու ռիսկերի բացահայտման նոր մոտեցումների սահմանմանը: Հարկազանձման գործընթացում կարևորելով ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարը՝ հարկային մարմինը որդեգրել է նաև ստվերային տնտեսության կրճատման համար համապատասխան կարողությունների ձևավորման անհրաժեշտությունը, շեշտը դնելով հարկերի վճարումից խուսափելու դեպքերի բացահայտման վրա՝ մասնավորապես, առաջնային համարելով հարկային օրենսդրությունը կանխամտածված խախտողների նկատմամբ խիստ հսկողության իրականացումը:

2014 թվականից իրականացվում են հարկերի գանձման համակարգված միջոցառումներ՝ ըստ հարկային պարտավորությունների դասակարգման¹: Դրանք են՝

- ոչ ռիսկային, որոնց վճարումն ուշացվել է օրենսդրությամբ սահմանված վճարման ժամկետը լրանալու պահից մինչև 40-րդ օրը ներառյալ.
- ռիսկային, որոնց վճարումն ուշացվել է օրենսդրությամբ սահմանված վճարման ժամկետին հաջորդող 41-րդ օրվանից մինչև 70-րդ օրը ներառյալ.
- միջին ռիսկային, որոնց վճարումն ուշացվել է վճարման ժամկետին հաջորդող 71-րդ օրվանից մինչև 100-րդ օրը ներառյալ.
- բարձր ռիսկային, որոնց վճարումն ուշացվել է վճարման ժամկետին հաջորդող 101-րդ օրվանից մինչև 183-րդ օրը ներառյալ.
- անհուսալի, որոնք ամբողջությամբ անկատարելի հավանականությամբ օժտված պարտավորություններն են:

Արդյունքում հարկային մարմինը գրավոր ծանուցման, պարտավորագրի կազմման, ըստ անհրաժեշտության արգելանքի կիրառման, եկամուտ առաջացնող օբյեկտները վերացնելու և թաքցնելու հետևանքով պարտավորության գանձումն անհնարին դարձնելու փաստերի դեպքում արգելանքի կիրառման, պարտավորության գումարի բռնագանձման, պարտավորության գումարը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցելու դեպքում սնանկացման հայցով դատարան դիմելու միջոցով պարտավորությունների մարման ուղղությամբ իրականացնում է հարկազանձման իր գործառնությունը՝ յուրաքանչյուր քայլի դեպքում հաշվի առնելով պարտավորությունների առաջացման հատկանիշները: Ապառքների կառավարման համակարգի ներդրման արդյունքում հարկային և այլ պարտադիր վճարների գծով ապառքների գումարը 2017 թվականին 2015 թվականի համեմատությամբ նվազել է ավելի քան 9 տոկոսով՝ կազմելով 3836.0 մլն ՀՀ դրամ:

Հարկազանձման գործընթացի արդյունավետ գործիք է նաև «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԱՀ օրենքի ընդունումը: Տնտեսավարող սուբյեկտներին երկարատև ժամկետում կուտակված հարկային պարտավորություններից մասնակիորեն ազատումը կընդլայնի վերջիններիս ֆինանսական հնարավորությունները ներդրումներ իրականացնելու համար, և կվերականգնվի նրանց վճարունակությունը, ինչպես նաև հետագա հարկային վճարումների մասով կլինեն կայուն: 2017թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ հարկային մարմինների հետ պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցեր կնքած 775 հարկ վճարողներ, ժամանակացույցով նախատեսված ժամկետից շուտ ամբողջությամբ մարելով 114.5 մլն դրամ պարտավորությունները, օգտվել են 319.1 մլն դրամ գումարի չափով արտոնությունից: Այդ թվում՝ հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում արտոնություններ են ստացել 124 հարկ վճարողներ, որոնք, մարելով 49.1 մլն դրամ պարտավորությունները, օգտվել են 247.2 մլն դրամ գումարի չափով տույժերի և տուգանքների վճարումից: Ընդհանուր առմամբ, գործընթացի մեկնարկից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ը ժամանակացույցեր կնքած 2228 հարկ վճարողներ կատարել են 970.4 մլն դրամի չափով վճարումներ²:

¹ «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների մարմանն ուղղվող միջոցառումների համակարգման վերաբերյալ կանոնակարգը հաստատելու մասին» հրաման

² <http://tax.nk.am/>

Հաջորդ կարևոր գործիքակազմը հարկերի ինքնուրույն հաշվարկման և վճարման մշակույթի ձևավորման և ամրապնդման համակարգի՝ օրինապահ հարկ վճարողի չափանիշների հաստատումն ու ներդրումն է: 2017թվականի տվյալներով երկրում առաջին անգամ ընտրվել են 57 օրինապահ հարկ վճարողներ: Կարծում ենք, տնտեսավարող սուբյեկտները կձգտեն ընտրվել այդ ցուցակում, որտեղ ընդգրկման չափանիշներից է նաև հարկային մարմնի կողմից հաշվառվող՝ ԱՀ պետական բյուջեի հանդեպ պարտավորությունների բացակայությունը:

Մշակվել է հարկային ստուգումների պլանավորման հայեցակարգ, որը ռիսկային չափորոշիչներով ստուգումների իրականացման համար հարկ վճարողների ընտրության գործընթաց է: Ստուգման ենթակա հարկ վճարողների հիմնավոր ընտրությունը իրականացվում է հարկային մարմնի կողմից ներքին և արտաքին աղբյուրներից ստացվող ամբողջ տեղեկատվության բազմակողմանի վերլուծությամբ: Ներքին աղբյուրներից ստացվող տեղեկատվություն է համարվում հարկային ծառայության գործառնությունների շրջանակում հարկային մարմինների կողմից հարկատուների մասին ինքնուրույն ստացված տեղեկատվությունը: Արտաքին աղբյուրներից ստացվող տեղեկատվություն է համարվում մասնավորապես երրորդ անձանցից օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմինների կողմից հարկ վճարողների վերաբերյալ ստացված տեղեկությունները, ինչպես նաև այլ տեղեկատվությունը, այդ թվում՝ հանրամատչելի:

Արդյունքում այսօր ընդհանուր մասսայական ստուգումներից անցում է կատարվում ռիսկային չափանիշների հիման վրա թիրախային ստուգումների համակարգին և, ժամանակին հայտնաբերելով հարկային իրավախախտումները, կիրառվում են հարկերից խուսափելու պլանավորված սխեմաներ: Միաժամանակ հարկ վճարողը կարող է օգտվել ռիսկերի ինքնուրույն գնահատման իր իրավունքից և գնահատել հարկերի հաշվարկման ժամանակ թույլ տրված սխալների ինքնուրույն բացահայտման և ճշտման առավելությունները: Ընդհանրապես, 2015 թվականին 2013 թվականի համեմատ ռիսկային չափանիշներով ստուգումների թիվը նվազել է 19 տոկոսով, իսկ 2016 թվականի՝ 2014 թվականի համեմատ ստուգումների քանակի 6.5 տոկոսով աճը պայմանավորված է հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի հայեցակարգի շրջանակներում իրականացված հսկողական աշխատանքների ուժեղացմամբ: Ընդհանուր առմամբ, 2017 թվականին, 2007 թվականի համեմատ, ստուգումների քանակը կրճատվել է շուրջ 2 անգամ՝ 281 ստուգում 547 ստուգման դիմաց: Ընդ որում, 2017 թվականին ստուգված հարկ վճարողների մասնաբաժինը գործող հարկ վճարողների մոտ կազմում է մոտ 5 տոկոս՝ 2007 թվականի 17 տոկոսի դիմաց¹:

2016 թվականի ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 32384.6 մլն դրամ՝ պլանավորված 31500.0 մլն դրամի դիմաց ցուցանիշը գերազանցելով 2.8 տոկոսով կամ 884.6 մլն դրամով²:

2017 թվականի ընթացքում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 39730.3 մլն դրամ և 37450.0 մլն դրամ, 6.1% և 2280.3 մլն դրամ: Դիտարկվող ժամանակահատվածում այդ ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ գերազանցել է 22.8 տոկոսով կամ 7377.0 մլն դրամով: Ստուգումների արդյունքում հայտնաբերված գումարները, տույժերն ու տուգանքները կազմում են հարկային մուտքերի շուրջ 1.0-3.0%-ը տոկոսը: 2014 թվականին ստուգումներից բյուջե

¹Մշակվել են <http://tax.nk.am/> կայք-էջի տվյալների հիման վրա

² <http://tax.nk.am/>


մուտքագրված գումարները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 414.1 մլն. դրամով: Կատարված ստուգումների արդյունքներով (այդ թվում՝ նախորդ տարում կատարված ստուգումներից) բյուջե է մուտքագրվել ավելի քան 1 մլրդ 114 մլն դրամ: 2015 թվականին այդ ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 8.4 տոկոսով կամ 86.3 մլն դրամով. ընդամենը բյուջե է մուտքագրվել 1528.4 մլն դրամ: 2016 թվականին բյուջե է մուտքագրվել 505.7 մլն դրամ, որը կազմում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 33.0 %-ը: 2017թ.-ին բյուջե է մուտքագրվել 474.1 մլն դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 31.6 մլն դրամով կամ 6.2 % -ով:

Հարկ վճարողների սպասարկման մակարդակի բարձրացման ուղղությամբ կատարված բարեփոխումների արդյունքում (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի գործարկումը, ինչը հնարավորություն է տալիս հարկ վճարողներին ցանկացած կետից և ցանկացած պահի առանց հարկային մարմին այցելությունների ուղարկել հաշվետվություններ՝ այդպիսով տնտեսելով նաև ժամանակային և ֆինանսական ռեսուրսները), 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվետվությունների ամբողջական փաթեթը էլեկտրոնային եղանակով ներկայացնողների թիվը կազմում է շուրջ 2200 հարկ վճարող կամ հաշվետվություն ներկայացնող հարկ վճարողների մոտ 50 տոկոսը¹: Ընդ որում, բոլոր հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացման ենթահամակարգից օգտվողների մեջ ավելի քան 68 տոկոսը կամ 1 500 հարկ վճարողներ կամավոր հիմունքներով են միացել էլեկտրոնային համակարգին:

Կատարված հարկային բարեփոխումների, հետևողական վարչարարության, հսկողական մեխանիզմների արդյունավետության բարձրացման և տնտեսական աճի շնորհիվ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերը, 2010 թվականի համեմատ, 2017 թվականին աճել են շուրջ 85 տոկոսով (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1.

Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով կատարողականը 2010-2017թվականներին²



¹ Հարկային բարեփոխումների հայեցակարգ, 2018թ.

² <http://tax.nk.am/>

Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով կատարողականները՝ ՀՆԱ-ի հարկվող ճյուղերի նկատմամբ 2010-2017 թվականներին տատանվել են 29,3-33,7 տոկոսի սահմաններում:

Կատարված միջոցառումների արդյունավետությունը կարող են գնահատել նաև ներքոնշյալ տվյալները.

Աղյուսակ 1.

Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՆԱ-ի հարկվող ճյուղերի նկատմամբ 2010-2017 թվականներին¹

Տարեթիվը	Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՆԱ-ի հարկ վողճյուղերի նկատմամբ (%)
2010	29,7
2011	29,6
2012	30,9
2013	29,3
2014	29,3
2015	33,7
2016	29,8
2017	30,3

Չնայած իրականացված հարկային բարեփոխումներին՝ օրենսդրական և վարչարարական դաշտում դեռևս առկա են որոշակի խնդիրներ: Մասնավորապես.

1. հարկային պարտավորությունների կուտակումը: Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ կազմակերպությունները փոքր սեփական կապիտալի առկայությամբ կուտակում են այդ կապիտալը մի քանի անգամ գերազանցող պարտավորություններ, ինչը հետագայում դժվարացնում է դրանց գանձումը, քանի որ հիմնադիրներից համապատասխան հարկեր գանձելու կամ նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու մեխանիզմները սահմանափակ են.

2. հարկային համակարգում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակների ընդլայնման անհրաժեշտությունը: Ներկայումս հարկային հաշիվների դուրս գրումը, դրամարկղային և առևտրի հարկ վճարողների կողմից եկամուտների և ծախսերի վերաբերյալ գրքերի վարումն իրականացվում է թղթային տարբերակով: Ավտոմատացված կերպով չի իրականացվում նաև հարկային մարմնի կողմից հարկ վճարողների անձնական հաշվի քարտերի վարումը, հարկ վճարողների պարտավորությունների վերաբերյալ ծանուցագրերի պատրաստումն ու տրամադրումը, ստուգման հանձնարարագրերի և ակտերի կազմումը, ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականությունը, վարչական իրավախախտումների կազմումը և մի շարք այլ գործառնություններ, ինչը բավականին ժամանակատար է և հանդիսանում է հարկային պարտավորությունների կառավարման խոչընդոտ:

¹Հարկային բարեփոխումների հայեցակարգ, 2018թ.

Հարկային բարեփոխումների հայեցակարգում շեշտը դրվում է ոչ միայն նոր պարտավորությունների կուտակումներ թույլ չտալուն, այլ նաև առկա պարտավորությունների նվազեցման օրենսդրական մեխանիզմների հետևողական կիրառությանը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է՝

1) կուտակված պարտավորությունների դասակարգում ըստ ռիսկայնության՝ բարձր ռիսկային դասակարգված հարկային պարտավորությունների մասով կիրառելով արգելադրման համակարգը, իսկ սնանկության հատկանիշների դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկության հայցերի ներկայացման գործընթացը: Այս ուղղությամբ կոնկրետ քայլեր արդեն ձեռնարկվել են, և 2018 թվականին օրենսդրությամբ հստակեցվել է պարտավորություններ կուտակած հարկ վճարողների դրամարկղի վրա արգելանք կիրառելու գործընթացը:

2) անհուսալի ճանաչված պարտավորությունների կատարման նպատակով անհրաժեշտ գույք կամ եկամուտներ հայտնաբերելու ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում: Այս առումով կարևորվում է նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության հետ համագործակցության խորացումը¹:

Այս միջոցառումները հնարավորություն կտան կարգավորել հարկային պարտավորությունների կատարման ընթացքը, կրճատել ստվերային շրջանառությունները, սահմանափակել հարկերը թաքցնելու հնարավորությունները, տնտեսության մեջ ապահովել հավասար մրցակցային պայմաններ, նպաստել գործարար ու ներդրումային միջավայրի բարելավմանը:

Գրականություն

1. Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման ծառայությունների այցելությունների կազմակերպման կանոնակարգ
2. Հարկային բարեփոխումների հայեցակարգ, 2018թ.
3. <http://tax.nk.am/>
4. <http://www.arlexis.am/>, ԼՂՀ իրավական տեղեկատվական համակարգ

Հոդվածը տպագրության է ներառվում խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., դոցենտ Շ.Շ.Ասրյանը:

¹Հարկային բարեփոխումների հայեցակարգ, 2018թ.

ՀՏԴ 330.3Տնտեսագիտություն

Անյուտա ԳԱՄՊԱԲՅԱՆ

ԱրՊՀ, տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի ավագ դասախոս

Արտակ ՄԻՐԶՈՅԱՆ

Արցախի ներդրումային հիմնադրամի գլխավոր տնօրեն

Միկեր ՄԽԻԹԱԲՅԱՆ

Արցախի ներդրումային հիմնադրամի գլխավոր տնօրենի տեղակալ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ****ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ****ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Տնտեսական աճի և արտահանման բարձր տեմպերի ապահովումը կարևոր հիմնախնդիր է զարգացող ցանկացած երկրի համար: Այդ տեսանկյունից առավել կարևորվում է ներդրումային արդյունավետ քաղաքականության իրականացումը և դրան առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որը դիտարկվում է սույն հոդվածում:

Հոդվածում ներկայացվում են ԱՀ տնտեսական զարգացման առանցքային և առաջնահերթ խնդիրներից մեկի՝ ներդրումների խթանման և աջակցման պայմանները: Հիմնավորվում է, որ ներդրումային քաղաքականության նպատակների իրացումը պահանջում է ոլորտի հիմնարար խնդիրների լուծում, առանց որի հնարավոր չէ ապահովել ներդրումների ծավալների աճը և երկրի տնտեսական զարգացումը:

Հիմք ընդունելով ներդրումների ներգրավման համար անհետաձգելի և մարտավարական խնդիրների շարքում առկա բացթողումների վերլուծությունը՝ առաջարկվում է որդեգրել տնտեսական իրական հաստատուն աճի ապահովման քաղաքականություն:

Բանալի բառեր՝ ներդրումներ, արդյունավետություն, տնտեսական զարգացում, ներդրումային քաղաքականություն, կայուն զարգացում, մարտահրավեր, տնտեսական բարեփոխումներ, ներդրումների մասնաբաժին:

А.Гаспарян, А.Мирзоян, М.Мхитарян

ПРОБЛЕМЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИНВЕСТИЦИОННОЙ ПОЛИТИКИ В АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКЕ

Обеспечение высоких темпов экономического роста и экспорта является важной задачей для любой развивающейся страны. С этой точки зрения наиболее важным является осуществление эффективной инвестиционной политики и изучение связанных с ней вопросов, которые рассматриваются в этой статье.

В статье представлен один из ключевых и приоритетных вопросов экономического развития Республики Арцах - условий для продвижения и поддержки инвестиций. Утверждается, что реализация целей инвестиционной политики требует решения фундаментальных вопросов отрасли, без которых невозможно обеспечить рост инвестиций и экономическое развитие страны.

Основываясь на анализе существующих недостатков в срочных и тактических вопросах привлечения инвестиций, предлагается принять политику обеспечения устойчивого экономического роста.

***Ключевые слова:** инвестиции, эффективность, экономическое развитие, инвестиционная политика, устойчивое развитие, вызовы, экономические реформы, доля инвестиций.*

A.Gasparyan, A.Mirzoyan, M.Mkhitaryan

PROBLEMS OF IMPROVING THE INVESTMENT POLICY IN ARTSAKH REPUBLIC

Ensuring high rates of economic growth and exports is an important task for any developing country. From this point of view, the most important is the implementation of an effective investment policy and the study of related issues. These issues are considered in the article.

The article presents one of the key and priority issues of the economic development of the Artsakh Republic - conditions for promoting and supporting investments. It is stated that the implementation of investment policy objectives requires the solution of fundamental issues of the industry, without which it is impossible to ensure the growth of investment and the economic development of the country.

Based on the analysis of existing shortcomings in urgent and tactical issues of attracting investment, it is proposed to adopt a policy of ensuring sustainable economic growth.

***Keywords:** investments, efficiency, economic development, investment policy, sustainable development, challenges, economic reforms, the proportion of investments.*

Արդի պայմաններում ներդրումային քաղաքականությունը Արցախի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության կարևորագույն տարրերից և ուղղություններից է: Այն նպատակաուղղված է երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավմանը և, վերջինիս հիման վրա, տնտեսական զարգացման ապահովմանը: Ներդրումային նպատակաուղղված քաղաքականության մշակմամբ և նրա արդյունավետ իրականացմամբ է մեծ չափով պայմանավորված երկրի արդյունաբերական և գիտատեխնիկական զարգացման հետագա ընթացքը:

Արցախի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը ձևավորվել և իրականացվում է ազատական սկզբունքների հիման վրա, որը ամրագրվել է օրենսդրության մեջ, մասնավորապես՝ Օտարերկրյա ներդրումների մասին ԱՀ օրենքում, 2008թ.-ին հաստատված ԱՀ ներդրումային քաղաքականությանն


Հայեցակարգում, ԱՀ Կառավարության գործունեության ծրագրում և տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի ներդրումներին վերաբերող այլ դրույթներում:

ԱՀ ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

- ներդրումները կարգավորող օրենսդրության կայունության ապահովումը,
- օտարերկրյա և տեղական ներդրողների համար տնտեսավարման հավասար, ոչ խտրական պայմանների ապահովումը,
- ներդրողների համար արտոնյալ պայմանների սահմանումը,
- ներդրումային ոլորտում տնտեսավարման ազատական սկզբունքների կիրառումը,
- ներդրումների և ներդրողների շահերի պաշտպանության ապահովումը,
- ներդրումները կարգավորող միջազգային իրավական նորմերի և միջազգային ընդունված պրակտիկայի ընդունումը և կիրառումը:

Արցախի Հանրապետության ներդրումային քաղաքականության հիմնական նպատակն է տնտեսական ակտիվության բարձրացման միջոցով տնտեսական կայուն աճի և բնակչության կենսամակարդակի բարձրացման և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը:

Տնտեսական աճը ցանկացած երկրի զարգացման կարևոր գործոն է, սակայն այն ինքնանապատակ չէ: Կարելի է նյութական բարիքների արտադրության աճ գրանցել, սակայն, ի հաշիվ որակի վատթարացման, ռեսուրսների անսահմանափակ օգտագործման և այլն: Տնտեսական աճն իմաստ ունի միայն այն դեպքում, երբ ապահովում է առավելագույն զբաղվածություն, կենցաղային պայմանների եւ պահանջմունքների առավել լիարժեք բավարարում, ապագայի նկատմամբ վստահության բարձրացում, ինչպես նաև սոցիալական կայունություն: Այնուհանդերձ, ինչպես վկայում է արևմտյան երկրների փորձը, տնտեսության կայուն աճ ապահովելու համար ներդրումները պետք է կազմեն ՀՆԱ-ի 20-25%-ը:



Գծապատկեր 1

Կատարելով վերլուծություն, կազմելով վերջի տարիների ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ կտեսնենք, որ ՀՆԱ կազմում ներդրումների մասնաբաժինը տատանվում է 20-35% սահմաններում, որը փաստում է այն մասին, որ ներկա որդեգրած ներդրումային քաղաքականությունը ապահովում է և կարող է ապահովել տնտեսության կայուն աճ:

Տնտեսական աճի համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով ԱՀ-ում սկսվել է տնտեսության հիմնական ճյուղերի վերակառուցում, ինչպես նաև ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ հիմնական կապիտալի նորացման նպատակով: Արդեն շուրջ 10 տարի է, ինչ հանրապետության կառավարության

ընդունած նորմատիվային ակտերի հիման վրա խրախուսվում է տեղական հումքի վրա աշխատող գյուղատնտեսական շահութաբեր արտադրությունների արտոնյալ վարկավորումը: Հարկազանման ոլորտում արմատական բնույթի փոփոխությունները հանգեցրին հարկային քաղաքականության առավել ճկուն համակարգի, որն էլ իր հերթին նպաստավոր պայմաններ ստեղծեց ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների համար: Այսպես, մասնավոր օտարերկրյա ներդրողների կողմից ԱՀ-ում մասնավորեցված ձեռնարկությունների և կազմակերպությունների տնտեսավարման պրակտիկան վկայում է, որ ժամանակակից պայմաններում օտարերկրյա կապիտալն ի վիճակի է հանգեցնել գիտատեխնիկական առաջընթացի վերջին նվաճումների և կառավարչական առաջավոր փորձի ներդրմանն ու լայն տարածմանը հանրապետությունում: Օտարերկրյա ուղղակի և անուղղակի մի շարք ներդրումների շնորհիվ վերականգնվել և բացվել են ու այսօր հաջողությամբ գործում են մի շարք ձեռնարկություններ:

Առանձնապես պետք է նշել այն հանգամանքը, որ պետական կառավարման բոլոր մակարդակներում իրականացվում է գործարարությանն ու ձեռներեցությանն աջակցման և օժանդակման քաղաքականություն:

Ներկայումս շարունակվում է ներդրումների ակտիվ գործընթացը, հատկապես գյուղատնտեսության և գյուղատնտեսական մթերքի մշակման, այգեգործության, մասնավորապես՝ խաղողագործության, զինեգործության, անասնաբուծության, մսի, կաթնամթերքի արտադրության, տեղական պտուղ-բանջարեղենի հումքային պաշարների վերամշակման, արևածաղկի ու եգիպտացորենի յուղի, մակարոնեղենի և հրուշակեղենի արտադրության, ոսկերչության, շինարարական նյութերի, մասնավորապես՝ տեղական քարերի արդյունահանման ու վերամշակման, էլեկտրաէներգիայի արտադրության և այլ բնագավառներում: Արտահանման խթանումը ներկայումս պետության կարևորագույն հիմնախնդիրն է:

1998-ից ի վեր տնտեսական ան է արձանագրվել ԱՀ տնտեսության տարբեր ոլորտներում: Վերջին 5 տարիների ընթացքում արձանագրվել է միջինում 9 տոկոս տնտեսական աճ:

Ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա կարելի է կատարել մի շարք հետևություններ Արցախի Հանրապետությունում իրականացվող տնտեսական բարեփոխումների արդյունքում ներդրումային միջավայրի՝ գործարարության զարգացման, փոքր և միջին ձեռներեցության բարելավման, հարկային քաղաքականության դերի ու նշանակության, հարկային ռազմավարության արդի գերակայությունների և խնդիրների վերաբերյալ.

- ԱՀ պետական կառավարման բոլոր մակարդակներում իրականացվում է գործարարությանն ու ձեռներեցությանն աջակցման և օժանդակման քաղաքականություն: Ներկայումս շարունակվում է ներդրումների ակտիվ գործընթացը, հատկապես՝ խաղողագործության և տեղական զինեգործության, անասնաբուծության, մսի, մեղվաբուծության, կաթնամթերքի արտադրության, գյուղատնտեսական մթերքի վերամշակման, լեռնահանքարդյունահանման, կապի, էներգետիկայի և այլ բնագավառներում:

- Տնտեսական աճի համար անհրաժեշտ պայմանների ապահովման նպատակով ԱՀ-ում սկսվել է տնտեսության հիմնական ճյուղերի վերակառուցում, ինչպես նաև ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ հիմնական կապիտալի նորացման նպատակով: Գյուղատնտեսության բնագավառում հաջողությամբ անցկացված բարեփոխումները դարձան ԱՀ տնտեսության այլ ճյուղերում նմանատիպ բարեփոխումների իրականացման գրավական:

- ԱՀ տնտեսական համակարգի կայունացման, նորացման և զարգացման գործոններն անմիջականորեն կապված են փոքր բիզնեսի բնագավառում ռազմավարական կառավարչական կարևորագույն որոշումների հետ: Հանրապետության տնտեսական զարգացման աղբյուրներից մեկը պետք է դառնա փոքր գործարարության գործոնը: Լավ զարգացած և փոքր ձեռնարկատիրության վրա հիմնված շուկայական ենթակառուցվածքը թույլ կտա հավասարակշռել հակասությունները պետական կառավարման և շուկայի ինքնազարգացման միջև՝ ճկունության ու բազմազանության աճի հաշվին ապահովելով առավել հարմարվող, կայուն, կանխորոշելի և կառավարելի

շուկայական միջավայր: Հենց այս գործոններով են պայմանավորված փոքր գործարարության ոլորտի պետական կարգավորման ձգտումը և այդ ոլորտի հովանավորությունը:

- Ուեստրսների օգտագործման սահմանափակության և առաջնային պահանջմունքների ոչ լրիվ բավարարման պայմաններում անցումային շրջանում գտնվող պետության բարեփոխումների իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է օտարերկրյա ներդրումներից, արտաքին տնտեսական կապերի զարգացման մակարդակից: Ուստի՝ կարծում ենք, որ ԱՀ հարկային համակարգը պետք է կարգավորի ներպետական տնտեսական այն պայմանները, որոնք օժանդակում են օտարերկրյա կապիտալի հոսքին՝ արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ արտադրական ձեռնարկությունների համար տարբեր հարկատեսակների գծով արտոնությունների սահմանման (կախված ամբողջ կապիտալի նկատմամբ օտարերկրյա կապիտալի կշռից) և այլ գործիքների միջոցով: Միաժամանակ հարկ է նշել, որ անցումային ժամանակաշրջան ապրող ԱՀ հարկային համակարգը նպատակահարմար չէ ծանրաբեռնել արտոնությունների բազմաթիվ տեսակներով, որը կարող է ոչ այնքան նպաստավոր, որքան խառնաշփոթ հարուցող գործոն դառնալ: Ուստի՝ ԱՀ առաջնային քայլերից մեկը պետք է լինի օտարերկրյա կապիտալի գործունեության օրենսդրաիրավական կատարյալ բազայի ստեղծումը: Օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը ԱՀ-ում մեծապես պայմանավորված է տարածաշրջանում և երկրի ներսում խաղաղության ու կայունության ապահովման հեռանկարով: Սակայն այս հարցում պակաս կարևոր նշանակություն չունի նաև երկրի օրենսդրական դաշտի, ներդրումային համապատասխան ենթակառույցների դերը: Ներդրումային ենթակառույցների ձևավորման և գործունեության ներկա վիճակը դեռևս չի կարելի բավարար համարել: ԱՀ գործարարության զարգացման ոլորտում առ այսօր առկա են մի շարք բացահայտ թերություններ: Արտադրական միջոցների վերականգնման, արտադրության և ծառայությունների վերազինման, գործարարության ոլորտի ըստ ամենայնի խթանման և նոր ձեռնարկություններ ստեղծելու խնդիրն առավել ևս բարդանում է ինչպես հանրապետությունում, այնպես էլ տարածաշրջանում տիրող բարոյահոգեբանական, հատկապես՝ քաղաքական մթնոլորտով, պատերազմական ձգձգվող իրավիճակով, որն ինչ-որ տեղ արտահայտվում է ձեռնարկատիրական նոր նախաձեռնումների նկատմամբ հասարակական ոգևորության ու եռանդի թերզարգացմամբ և նույնիսկ բացակայությամբ: Սույն հիմնախնդիրը, անբարենպաստ այլ գործոնների ազդեցությունից բացի, խորանում է նաև օրենսդրական դաշտի անկատարության, եղած օրենքներում և դրանց կիռարման մեխանիզմներում հանդիպող թերությունների պատճառով: Ներդրումների նկատմամբ վարվող քաղաքականության օրենսդրորեն ամրագրման, ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների խթանման նպատակով պետք է իրականացվեն կազմակերպական բնույթի մի շարք միջոցառումներ, որոնցից են.

- Երկրի տնտեսության տարածքային անհավասարակշիռ զարգացումից խուսափելու համար հարկավոր է իրականացնել համալիր միջոցառումներ՝ երկրի շրջաններում ներդրումների խրախուսման նպատակով:

- Հաշվի առնելով օտարերկրյա ուղղակի ներդրումների ժամանակակից միտումները՝ գիտատար ճյուղերում ներդրումների կշռի առաջընթաց մեծացումը, անհրաժեշտ է էապես փոփոխել երկրի մրցակցային առավելությունների կառուցվածքը, որում աստիճանաբար պետք է նվազեն բնական ռեսուրսների, էժան աշխատուժի առկայության դերը, միաժամանակ որոշիչ դառնան ստեղծված ակտիվները, ինչպես նաև բարձրորակ մասնագետները, ենթակառույցների զարգացվածությունը,

- Անհրաժեշտ է ակտիվացնել և ավելի ուղղորդված դարձնել Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի հետ համագործակցությունը՝ ձևավորելով վստահելի ու փոխշահավետ միջավայր:


- Պետք է ամրագրել պետության վերաբերմունքը ներդրումների համար գերակա համարվող ոլորտների զարգացմանը և այնտեղ կատարված ներդրումներին:

- Պետք է ընդլայնել արտասահմանյան երկրների միջև գործարար և ֆինանսական տեղեկատվության մատչելիությունն ու փոխանակումը:

• Ներդրումային քաղաքականության նպատակների իրականացումը ենթադրում է ոլորտի հիմնարար խնդիրների լուծում, առանց որի հնարավոր չէ իրականացնել ներդրումային արդյունավետ քաղաքականություն, ապահովել ներդրումների ծավալների աճ և երկրի տնտեսության կայուն զարգացում:

Իրական ակտիվներում իրականացված ընդհանուր ներդրումները, այդ թվում օտարերկրյա 2013-2017թթ. ընթացքում տատանվել է 70-55 մլրդ դրամի սահմաններում: Ընդ որում 2014թ. 2013 թվականի նկատմամբ կտրուկ աճ է արձանագրվել ինչպես օտարերկրյա, այնպես էլ ընդհանուր ներդրումների գծով, ինչը մեծ մասամբ պայմանավորված էր արդյունաբերության ոլորտում ներդրումների ծավալի ավելացման հետ, սակայն 2016թ. ներդրումների ծավալների անկում է արձանագրվել, ինչը կարելի է ասել հիմնականում պայմանավորված է ապրիլյան պատերազմով:

Վերջին հինգ տարիներին իրական ակտիվներում իրականացված ամենամեծ ներդրումների ծավալը արձանագրվել է 2014թ.: Կառուցվածքն ըստ ճյուղերի ուներ հետևյալ տեսքը, որում մեծ տեսակարար կշիռ ունեն արդյունաբերությունը և շինարարությունը:




Գծապատկեր 2

ԱՀ-ում 1995 թվականից իրականացվում են տնտեսական բարեփոխումներ, որոնք սկզբնական շրջանում ուղղորդվում էին խորհրդարանի հաստատած հիմնադրույթներով: Բնականաբար կարևորում էին պետական ֆինանսների և մասնավորապես հարկային քաղաքականության ոլորտները, քանի որ հույժ անհրաժեշտություն էր առաջացել հստակեցնելու այն ուղղությունները, որոնցով պետք էր ընթանար հարկադրման ողջ գործընթացը, հատկապես ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության, պետական բյուջեում սեփական եկամուտների ավելացման, հարկային բեռի բաշխվածության, նոր հարկատեսակների ներդրման, հարկային բազայի ընդլայնման, հարկերի հավաքագրման մեխանիզմների և հարկային վարչարարության կատարելագործման ու օրենսդրական կարգավորման հիմնախնդիրների նախաձեռնման առումով: Կարելի է ասել, որ արդեն այդ տարիներին սահմանվել էր գոյություն ունեցող հարկային համակարգի հետագա զարգացման նպատակ:

Նշենք, որ մինչ այդ, դեռևս 1992թ. անկախության հռչակումից հետո ԱՀ-ում, չնայած ընթացող պատերազմական ակտիվ գործողություններին, ձևավորվել էր ինքնուրույն հարկման պրակտիկա, այսինքն՝ օրենսդրորեն սահմանվել և գործում էին շահութահարկը, ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, եկամտահարկը և մի շարք վճարներ ու տուրքեր: Դրա հիմք էր ծառայում ԱՀ գերագույն խորհրդի 1992թ. հունվարի 6-ի որոշումը, որի համաձայն՝ ԱՀ տարածքում գործողության մեջ դրվեցին այլ

պետությունների գործող օրենսդրական ակտերը: Այդ իրավական հիմքի վրա ԱՀ-ում սկսեցին գործել ՀՀ-ում մտցված վերոհիշյալ հարկատեսակները, և հստակեցվեցին հարկային համակարգի կառուցվածքի, հարկման օբյեկտների ու վճառողների շրջանակները, հարկերի ու տուրքերի վճարման նկատմամբ հսկողության, վերահսկողության իրականացման հարցերը: Չէին կիրառվում գույքահարկը և հողի հարկը, որոնք գործողության մեջ դրվեցին միայն 1995թ. ԱՀ Կառավարության ընդունած օրենքի ուժ ունեցող համապատասխան որոշումներով, քանի որ ԱՀ Գերագույն խորհուրդը տնտեսական բարեփոխումների գործընթացն ապահովելու համար Կառավարությանը իրավունք էր վերապահել մինչև խորհրդարանի կողմից համապատասխան օրենքների ընդունումը առանձին հարցեր ժամանակավորապես կարգավորել Կառավարության որոշումներով:

Ներկայումս ԱՀ հարկային օրենսդրությամբ սահմանվում են հետևյալ հարկատեսակները և պարտադիր վճարները.



Առանձին դեպքերում սահմանվում են ավելացված արժեքի հարկին և շահութահարկին կամ ավելացված արժեքի հարկին ու եկամտահարկին փոխարինող՝

- հաստատագրված վճարներ
- և առևտրի հարկ:

Օտարերկրյա ներդրումներով ընկերությունները տեղական ընկերությունների նման ենթարկվում են նույն հարկային ռեժիմին:

ԱՀ սահմանը չի հանդիսանում մաքսային սահման, մաքսային գործարքները ձևակերպվում են ՀՀ մաքսային սահմանում և կարգավորվում են ՀՀ մաքսային օրենսդրությամբ:

ԱՀ-ում տնտեսական բարեփոխումների համալիր ծրագրերում առաջնային ուղղություններից մեկը մնում է օտարերկրյա ներդրումների ներգրավումը: Աշխարհի մյուս երկրների նման Դարաբաղը օտարերկրյա ներդրումները դիտարկում է որպես տեխնիկական և տնտեսական աճի արագացման հիմնական գործոն, արտադրության նորացում ու արդիականացում, համաշխարհային տնտեսությանը ինտեգրման ուժեղացում ապահովող միջոց: Ստեղծված տնտեսական իրավիճակում, երբ ներքին աղբյուրների հաշվին ներդրումներն անբավարար են, իսկ արտասահմանյան

ֆինանսավորման աղբյուրներին դիմելը (միջազգային կազմակերպություններ, զարգացման ֆոնդեր), ԱՀ-ն միջազգայնորեն չճանաչված լինելու պատճառով անհնար, արտասահմանյան մասնավոր կապիտալի ներգրավումը դառնում է ԱՀ-ի տնտեսական զարգացման հիմնական գրավականը:

հնարավորությունների ևս մեկ բաղկացուցիչ¹: Ենթակառուցվածքները կարող են լինել կոշտ և փափուկ /շոշափելի և ոչ շոշափելի/: Կոշտ ենթակառուցվածքների օրինակներ են հանդիսանում ճանապարհները, նավահանգստային հարմարավորությունները, օդանավակայանը, տեղեկումնիկացիոն համակարգերը և այլ հասարակական ծառայություններ: Փափուկ ենթակառուցվածքները բաղկացած են ինստիտուտներից / օրինակ՝ կարգավորող, քաղաքական, պաշտպանական, վերահսկողական և այլն/, օրենքներն ու կարգավորումները, սոցիալական կապիտալը, մշակույթը արժեհամակարգը և այլն: Ենթակառուցվածքների այս երկու տեսակներն էլ կարևոր են տեղական կազմակերպությունների կենսունակության համար: Դրանք ազդում են ընկերությունների գործառնական ծախսերի և ներդրումներից ստացվող կամուտների մարջինալ տոկոսի վրա:

Քանի որ արդյունաբերական կառուցվածքը տնտեսության ազգային հնարավորությունների համար էնդոգեն գործոն է, զարգացող երկրներում այն բարելավելու համար պետք է առաջին հերթին բարելավել ազգային հնարավորությունների կառուցվածքը, մասնավորապես ֆիզիկական և մարդկային կապիտալը²: Օրինակ՝ զարգացող երկրները կարող են բարելավվել՝ մեծացնելով իրենց հարաբերական մասնաբաժինը մարդկային կապիտալում: Սա անելու լավագույն տարբերակը զարգացող երկրներում արդյունաբերության զարգացումն ու նոր տեխնոլոգիաների /որոնք համահունչ կլինեն իրենց համեմատական առավելություններին և տնտեսական զարգացման մակարդակի հետ/ ներգրավումն է: Երբ ֆիրման ընտրում է արդյունաբերության ոլորտը և համապատասխան տեխնոլոգիաները, համաձայն տեղական ազգային հնարավորությունների համեմատական առավելությունների, տնտեսությունը ամենամրցակցայինն է³: Քանի որ արդյունաբերություններն ու կազմակերպությունները աճում են, նրանք զբաղեցնում են ավելի մեծ շուկայի մասնաբաժիններ և ստեղծում են հնարավոր ամենամեծ արդյունքը /ավելցուկը/՝ շահույթի կամ աշխատավարձի տեսքով: Այս վերամիավորված ավելցուկներն էլ բերում են հնարավոր ամենամեծ եկամուտը: Քանի որ կապիտալը դառնում է ավելի առատ և հետևաբար ավելի էժան, սկսվում է ավելի կապիտալախնտենսիվ /կապիտալահենք/ ապրանքների արտադրությունը՝ աշխատահենք ապրանքների արտադրության փոխարեն: Այս գործընթացը ձևավորում է հավերժական արդյունաբերական V-աձև դինամիկան, այսպես կոչված «թռչող սագեր» տնտեսական զարգացման օրինակը⁴: Որպեսզի կազմակերպությունները հետևեն տնտեսության մրցակցային առավելություններին իրենց արդյունաբերության և տեխնոլոգիաների ընտրության հարցում վերոնշյալ ձևով, անհրաժեշտ է գնային համակարգ, ըստ որի գների հարաբերական գործոնը արտահայտում է ազգային հնարավորությունների հարաբերական առատությունը: Միայն մրցակցային շուկան կարող է ունենալ նման գնագոյացման համակարգ: Այդ իսկ պատճառով,

¹ The difference between factors of production and infrastructures is that in a market economy the former are supplied mostly by individual households, whereas the latter are supplied by the community or the state.

² Ju J., J., Lin J.Y., and Wang Y., “**Endowment Structures, Industrial Dynamics, and Economic Growth**,” World Bank Policy Research Working Paper, No. 5055, 2009

³ Porter M.E. made the notion of ‘competitive advantage’ popular in his book **The Competitive Advantage of Nations**. New York, Free Press, 1990.

⁴ Ju J., J., Lin J.Y., and Wang Y., “**Endowment Structures, Industrial Dynamics, and Economic Growth**,” mimeo, 2009

միայն շուկայի ներգրավումը և ռեսուրսների տեղաբաշխման մեխանիզմը կարող են երաշխավորել զարգացող երկրներին, որ գնային ազդակները առկա են և վստահություն հաղորդել կազմակերպություններին ներդրում անել այն արդյունաբերություններում, որոնց զարգացումն օպտիմալ է հենց այդ երկրների համար:

Երբ կապիտալը կուտակվում է, և երբ ազգային հնարավորությունների կառուցվածքը բարելավվում է, ու երկիրը բարձրանում է արդյունաբերական և տեխնոլոգիական սանդուղքով, այլ փոփոխություններ ևս պետք է տեղի ունենան: Առաջին՝ կազմակերպությունների կողմից պահանջվող տեխնոլոգիաները դառնում են ավելի զարգացած և ռիսկային, քանի որ նրանք հասնում են միջազգային զարգացման սահմանին ավելի մոտ: Երկրորդ՝ կապիտալի պահանջները դառնում են ավելի կարևոր այնպես, ինչպես արտադրության մասշտաբները և շուկայի չափերը: Այնուհետ պարզ է դառնում, որ տեխնոլոգիական բարելավման ճկուն և նուրբ գործընթացները պահանջում են նաև բարելավումներ կրթության, ֆինանսական, օրինական կարգավորումների, ինչպես նաև այլ ենթակառուցվածքներում: Մինչդեռ մասնավոր ընկերությունները չեն կարող արդյունավետ ձևով իրականացնել այս բոլոր փոփոխությունները՝ ելնելով պահանջվող մեծ ծախսերից: Այս տեսանկյունից միակ սուբյեկտը, որը կարող է կոորդինացնել ցանկալի ներդրումները կամ փոփոխությունները, պետությունն է: Այն պետք է խաղա հեշտացնող դեր արտաքին շուկայի հետ հարաբերություններում:

Այժմ կառուցողական մոտեցումից անցում կատարենք զարգացման որոշ բանալի դասերի, որոնք հետագայում կլինեն մեր ուղեցույցը կայուն և ներառական աճի համար: Առաջին և ամենակարևոր քաղաքականությունը վերաբերում է շուկայի և պետության պարտականություններին՝ պահպանել կառուցողական փոփոխությունների դինամիկան: Շուկայի դերը պարզ է և հաճախ հեշտ ընկալելի: Կազմակերպությունների համար ապահովել շուկա մուտք գործելու, շահութաբեր արդյունաբերություն ունենալու ազատ /այս հարցում կարևորվում է նաև պետության դերը՝ որպես երկրի ներսում տնտեսվարողների համար ազատ մուտքի, մրցակցության և օրինական ու հավասար պայմաններ ապահովելու երաշխավոր/ և համապատասխան տեխնոլոգիաներ ընտրելու հնարավորություն, շուկան պետք է ցույց տա հարաբերական գները, որոնք արտացոլում են երկրի ազգային հնարավորությունների գործոնների հարաբերական սակավությունը: Սա կարող է տեղի ունենալ միայն մրցակցային շուկայի պայմաններում¹: Այդ իսկ պատճառով, մրցակցային շուկան պետք է լինի ռեսուրսների տեղաբաշխման համար տնտեսության ֆունդամենտալ մեխանիզմը:

Որպես հակադրություն, պետության դերը թվում է ավելի բարդ և հանդիսանում է հակասությունների առարկա: Մինչդեռ, այն ավելի ակնհայտ է դառնում, երբ կենտրոնանում ենք ենթակառուցվածքների զարգացման կայունացման վրա: Գործոնային ազգային հնարավորությունների և արդյունաբերական կառուցվածքի բարելավման հետ մեկտեղ, ենթակառուցվածքները և այլ սոցիալական և տնտեսական ինստիտուտները պետք է

¹ Lin J.Y., *Economic Development and Transition: Thought, Strategy, and Viability*, Cambridge: Cambridge University Press, 2009; and Lin J.Y. and Chang H., 2009. “*DPR Debate: Should Industrial Policy in Developing Countries Conform to Comparative Advantage or Defy It?*”, Development Policy Review, Vol. 27, No. 5, pp. 483-502

ևս համապատասխանեցվեն բարելավումներին՝ տնտեսությունը որևէ X արդյունավետության հասցնելու համար: Ընկերությունները, որոնք ժամանակին կենսունակ էին¹, նախորդ ազգային հնարավորությունների օրոք, կարող են դառնալ ոչ կենսունակ: Որպեսզի վերջիններս նորից կենսունակ դառնան, կազմակերպությունները պետք է բարելավվեն՝ հասնելով բարձր ինտենսիվությամբ կապիտալով արդյունաբերության: Եվ ինչպես նշցինք, այս բարելավման գործընթացը ինովացիոն և անխուսափելի ռիսկային գործունեություն է: Հաջող բարելավման գործընթացը ենթադրում է, որ կազմակերպությունները հաղթահարում են տեղեկատվության սահմանափակության հետ կապված խնդիրները՝ համաձայն որի էլ արդյունաբերությունները կենսունակ են: Այն նաև պահանջում է կոորդինացված ներդրումներ՝ այլ ընկերությունների կողմից ևս: Մյուս կողմից էլ՝ տեղեկատվության սակավությունը կարող է բարձրացնել հաջողելու կամ ձախողելու հավանականությունը սկսնակ կազմակերպությունների համար, քանի որ ոչ ոք չի ուզում առաջին քայլ անողը լինել: Պետության և շուկայի դերերի համապատասխանության այդ լայն կատեգորիզացիայի շրջանակներում, հատուկ քաղաքականություններ պետք է մշակվեն՝ հաշվի առնելով երկրի տնտեսական զարգացման մակարդակը: Զարգացման նախնական փուլում գտնվող երկրների համար ազգային հնարավորություններին հատուկ է կապիտալի համեմատական սակավությունը և ռեսուրսների ու աշխատուժի համեմատական առատությունը: Այն արդյունաբերությունները, որոնք կունենան մրցակցային առավելություններ բաց, մրցակցային շուկաներ՝ միտում ունեն լինելու ինտենսիվ աշխատուժով և ռեսուրսներով ապահովված /հիմնականում գյուղատնտեսության մեջ և նմանատիպ սեկտորներում/ և հիմնականում հիմնվել հասարակ և հասուն տեխնոլոգիաների վրա և արտադրել «հասուն», լավ հայտնի արտադրանք:

Զարգացման մյուս ծայրահեղության դեպքում բարձր եկամուտներով երկրները բնութագրվում են ամբողջապես տարբեր ազգային հնարավորությունների կառուցվածքով: Դրանց համեմատական առատ գործոնը հիմնականում կապիտալն է և ոչ բնական ռեսուրսները կամ աշխատուժը: Այդ իսկ պատճառով այս երկրների մրցակցային առավելություն է հանդիսանում կապիտալ ինտենսիվ արդյունաբերությունը՝ արտադրության լայն մասշտաբով: Քանի որ դրանք գտնվում են գլոբալ տեխնոլոգիական զարգացման սահմանին, դրանց տնտեսությունները հենվում են նոր տեխնոլոգիաների և արտադրանքի հայտնագործման վրա: Դրանց ընկերությունները պետք է ներգրավեն ռիսկային R&D գործողություններ /Եվրոպայում հայտնի ուսումնասիրությունների և տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված ինովատիվ գործողություններ, որոնք իրականացվում են կառավարության կամ կորպորացիաների կողմից՝ նոր ծառայություններ կամ արտադրանք ստեղծելու, կամ առկաները բարելավելու նպատակով/: Այս կոնտեքստում պատշաճ ֆինանսական գործընկերներ են մեծ բանկերը և զարգացած մրցակցային շուկաները, որոնք կարող են մոբիլիզացնել կապիտալի մեծ չափեր և ունակ են դիվերսիֆիկացնել ռիսկերը: Կոշտ ենթակառուցվածքի տեսակները, ինչպիսիք են ճանապարհները ու

¹ A firm is viable if with a normal management it can survive in a competitive market without external subsidies. Lin (2003, 2009) shows that a firm will be viable if it is operated in the optimal industry determined by the economy's endowment structure

օդանավակայանի հարմարությունները և փափուկ ենթակառուցվածքները, ինչպիսիք են կարգավորումը ու օրինական դաշտը, պետք է համապատասխանեցվեն ազգային և միջազգային շուկաների պահանջներին, որտեղ բիզնես գործառնությունները կապված են մեծ հեռավորությունների, մեծ քանակությունների և արժեքների հետ և հիմնված են խստորեն մշակված և կիրառվող պայմանագրերի վրա: Ջարգացած երկրներում, որտեղ արդյունաբերությունն արդեն զրոյալ զարգացման սահմանին է հասել, որն է հաջորդ սահմանը՝ դժվար է ասել: Այդ իսկ պատճառով կառավարության քաղաքականությունը պահպանում է արդյունաբերության բարելավումը կամ ուղղահայաց ինովացիան¹, որը հիմնականում իրականացվում է համալսարաններին հետազոտությունների կատարման աջակցմամբ, որը բնորոշվում է մասնավոր կազմակերպություններում R&D-I կիրառմամբ, կապիտալ ներդրողների համար արտոնյալ հարկերի տրամադրմամբ, պայմանագրերի պաշտպանվածությամբ:

Արդյունաբերական աստիճանով բարձրանալիս զարգացող երկրները պետք է բարելավեն իրենց արտադրության մասշտաբները: Ավելի մեծ կազմակերպությունները տարածվում են և հետզհետե առաջանում է պահանջ ավելի մեծ շուկաների: Այսպիսի դեպքերում ենթակառուցվածքների դեֆիցիտները հաճախ տնտեսական զարգացման արգելք են հանդիսանում: Ենթակառուցվածքներում փոփոխությունները պահանջում են կոլեկտիվ գործողություններ և հաճախ ձախողվում են միահեծանության խնդրի՝ պատճառով²: Այդ իսկ պատճառով պետությունը պետք է խաղա գերակտիվ դեր՝ ժամանակին ներագդելով կոշտ, փափուկ ենթակառուցվածքների բարելավման վրա:

Իրենց զարգացման յուրաքանչյուր մակարդակում զարգացող երկրների ընկերությունները կարող են ձեռք բերել տեխնոլոգիաներ և գործարկել արդյունաբերությանն այն ոլորտներում, որոնք համապատասխանում են իրենց ազգային հնարավորությունների կառուցվածքին և ստիպված չեն «վերահայտնագործել անիվը նորից»: Երբ կապիտալի կուտակումը անհրաժեշտ է դարձնում արդյունաբերական կառուցվածքի բարելավումը, պետությունը կարող է կարևոր դեր խաղալ գործընթացը հեշտացնելու համար՝

- տրամադրելով տեղեկատվություն՝ համեմատական առավելությունների համեմատաբար նոր արդյունաբերությունների մասին,

- ներդրումներ իրականացնելով համապատասխան արդյունաբերությանն ոլորտում և կատարելով անհրաժեշտ բարելավումներ կոշտ և փափուկ ենթակառուցվածքներում,

- կատարելով անհրաժեշտ ոլորտների սուբսիդավորում,

- խթանելով արդյունաբերության նոր ոլորտների զարգացումը՝ ինկուբացիայի կամ օտարերկրյա ներդրումներ ներգրավելու միջոցով,

Կարողությունը՝ օգտագործել արդեն առկա տեխնոլոգիաները /off-the-shelf technology/, ու կիրառել գործող արդյունաբերության մեջ, և պետության կարողությունը հեշտացնել արդյունաբերական բարելավման գործընթացը՝

¹ Acemoglu D., Aghion P., Griffith R., and Zilibotti F., “**Vertical Integration and Technology: Theory and Evidence**,” forthcoming in the Journal of the European Economic Association, 2009

² Lin J.Y., “**An Economic Theory of Institutional Change: Induced and Imposed Change**”, Cato Journal, vol. 9, No. 1, Spring/Summer, 1989, pp. 1-32

հնարավոր դարձրին ապահովել դինամիկ տարեկան 8-10 տոկոս ՀՆԱ-ի աճ Արևելիան Ասիայի «Ասիական վազրեր»-ի համար:

Կառուցվածքային փոփոխության վրա հիմնված տնտեսական զարգացման մոտեցումը կարող է ունենալ նաև այլ տարբեր հետևանքներ դրանց լրացուցիչ ազդեցությունների շնորհիվ: Դրանք սերտ կապված են պետության և շուկայի հարաբերական դերի և իրականացրած մոտեցման ու քաղաքականության հետ: Անդրադառնալով մի քանի իրականացվող քաղաքականությունների լրացուցիչ ազդեցությունների, որոնք հիմնականում չեն համարվում կառուցողականության փոփոխության մասը:

Մակրոտնտեսական կառավարում

Երբ զարգացող երկրի ղեկավարությունը կատարում է հեշտացնող դեր պետության արդյունաբերական զարգացման խթանման համար, այն է՝ հետևողական է իր մրցակցային առավելությունների հարցում, երկրի ֆիսկալ դիրքը և արտադրության հաշիվը սպասվում է, որ ուժեղ կլինի: Դա կարող է լինել տնտեսության արագ զարգացման հնարավորության շնորհիվ, առևտրի զարգացման միջոցով, ոչ կենսունակ ընկերություններին սուբսիդավորման դադարեցումով: Ուժեղ ֆինանսական համակարգը և ընթացիկ հաշիվները փափուկ բարձի դեր կարող են կատարել տնտեսական անկման ժամանակաշրջանում: Ճգնաժամային իրավիճակում պետությունը կարող է դուրս գալ իր նեյտրալ մակրոկարգավորողի դերից և իրականացնել տնտեսության պարբերաշրջանի համապատասխան գործողությունների ամբողջություն: Լավ ֆիսկալ և արտաքին դիրքը թույլ կտան ֆիսկալ ազդակներին ներդրումներ իրականացնել ենթակառուցվածքներում և սոցիալական ծրագրերում, որոնք հիմնականում բարելավման մեծ կարիք ունեն: Այսպիսի ներդրումները կարող են բարձրացնել տնտեսական աճի պոտենցիալը, իջեցնել մասնավոր սեկտորի գործառնական ծախսերը, մեծացնել ներդրումներից եկամուտները, և հավաքագրել անհրաժեշտ հարկեր՝ հետագա ներդրումները ֆինանսավորելու համար¹:

Ֆինանսական կառուցվածքը

Զարգացող երկրները իրենց առատ աշխատուժով և համեմատաբար սակավ կապիտալով մրցակցային առավելություն ունեն ակտիվ աշխատուժ պահանջող արդյունաբերության ոլորտներում, որոնք և հիմնականում գերիշխող են լինում այդպիսի տնտեսությունների մեջ: Այսպիսի սեկտորներում բիզնեսները հիմնականում փոքր են և տիրապետում են փոքր ֆինանսների: Այսպիսի ընկերությունները հիմնականում ընտրում են հասուն արտադրական տեխնոլոգիաներ, որոնք ավելի արդարացված և քիչ ռիսկային են: Ֆինանսական տեղեկատվության ոչ հասանելիությունը դրանց դարձնում է ավելի ոչ թափանցիկ: Այս ֆիրմաների սկանավորումը և կառավարման մշտադիտարկումը, թերևս, հանդիսանում է արտաքին ներդրողների հիմնական մտահոգությունը: Այսպիսի միջավայրում ֆինանսական ծառայություններ մատուցելու, հատկապես

¹ Lin J.Y., “*Beyond Keynesianism*”, Harvard International Review, June 2009. This approach also recognizes that active fiscal policies tend to yield different outcomes depending on the structure and size of the economy, the initial fiscal balance, the exchange rate regime in place, the rational expectations of private agents and their view of intergenerational concerns, interest rate premiums, policy credibility and uncertainty. If the country has a large fiscal deficit, either because the government has deviated from the role of a facilitating state or for other reasons, its ability to apply counter cyclical fiscal policies will be limited. This will particularly be the case in situations of prolonged recessions.

վարկավորելու համար բանկերը՝ հիմնականում տեղական փոքր բանկերը, ավելի ուժեղ են և ավելի հարմարեցված, քան արժեթղթերի շուկան: Երբ երկրի տնտեսությունը զարգանում է և կապիտալն սկսում է կուտակվել, ազգային հնարավորությունների կառուցվածքը ևս սկսում է բարելավվել, արդյունաբերությունը կդառնա ավելի ինտենսիվ կապիտալով և տնտեսությունում կիրառվող տեխնոլոգիաները կմոտենան աշխարհում կիրառվող լավագույն տեխնոլոգիաների մակարդակին: Որպես արդյունք, կենսունակ ընկերությունները միտում կունենան մեծանալ և դառնալ ավելի կապիտալ-ինտենսիվ և ներգրավել աշխարհում առկա լավագույն տեխնոլոգիաները: Մեծ բանկերը և ներդրողները, որոնք պատրաստ են կապիտալատար ներդրումներ կատարել և վերատեղափառել ռիսկերը, ավելի «հարմար» կդառնան այսպիսի կազմակերպությունների համար: Այսպիսով, տարբեր զարգացման մակարդակում գտնվող տարբեր երկրներ պետք է կիրառեն տարբեր, համապատասխան ֆինանսական կառուցվածքներ:

Կապիտալ հոսքեր

Զարգացող և զարգացած երկրների միջև կառուցվածքային փոփոխությունները հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ այսպես կոչված «Լուկասի պարադոքսը»: Դիտարկելով այն կենտրոնական գաղափարը, որ հետպատերազմական զարգացած քաղաքականությունները ձգտում են խթանել աղքատ երկրներին՝ հարուստ երկրներից տրամադրվող կապիտալ ապրանքների, տրանսֆերտների տեսքով, հակասում է այն փաստին, որ աղքատ երկրները շարունակում են ունենալ մեկ աշխատակցին բաժին ընկնող կապիտալի ցածր մակարդակ¹: Այս գլուխկոտրուկի տեսական պատասխանը հիմնականում մեկնաբանվում է ֆունդամենտալ տարբերություններով, որոնք կարող են անդրադառնալ արտադրական գործընթացի վրա /պետության քաղաքականությունը, արտադրության բացակայող գործոններ, տեխնոլոգիական ճեղքեր/ կամ միջազգային կապիտալի շուկայի անկատարությունները /թերությունները/²: Կենտրոնանալով կառուցվածքային փոփոխությունների դինամիկայի վրա՝ կարելի է տալ ավելի բնութագրական բացատրություն այս գլուխկոտրուկին. Տնտեսական գործընթացը, որպես արդյունաբերական բարելավման գործընթաց, պահանջում է շարունակական բարեկարգումներ կոշտ և փափուկ ենթակառուցվածքներում: Երկրները, որտեղ այս երկու ենթակառուցվածքները միաժամանակ չեն թարմացվում, հակված են նվազեցնել կապիտալից ստացվող եկամուտները, որոնք էլ խոչընդոտում են հնարավոր ֆինանսական հոսքերը տվյալ երկիր:

Կառուցվածքների փոփոխության վրա կենտրոնացումը կարևորում է նաև զարգացող երկրներում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման անհրաժեշտությունը: Դրանք, ի համեմատ բանկերի և պորտֆելային ներդրումների, ավելի քիչ են հակված միանգամից վերադարձների և չեն զգնեցնում նույն սուր խնդիրները՝ կապված ֆինանսական ճգնաժամների հետ՝

¹ Lucas R.E., “*Why Doesn’t Capital Flow from Rich to Poor Countries?*”, American Economic Review, vol. 80, no. 2, May 1990, pp. 92-96

² Alfaro L. et al, “*Capital Flows in a Globalized World: The Role of Politics and Institutions*,” in: S. Edwards (ed.), Capital Controls and Capital Flows in Emerging Economies: Policies, Practices, and Consequences, Chicago, The University of Chicago Press, 2007

ինչպես տեղի են ունենում բանկերի և պորտֆելային ներկրողի կողմից դրամական հոսքերի արագ վերադարձման պահանջի ժամանակ: Բացի այդ, ՕՈԻՆ-երը, որպես կանոն, իրենց հետ բերում են նաև նոր տեխնոլոգիաներ, կառավարման նոր փորձ, հասանելիություն նոր շուկաների, սոցիալական նոր ցանց, որոնք հենց հիմնականում պակասում են զարգացող երկրներում և շատ կարևոր են դրանց տնտեսական զարգացման համար: Ի հակադրություն դրա, պորտֆելային ներդրումները հաճախ թիրախավորում են սպեկուլյատիվ գործողություններ /հիմնականում բաժնետոմսերի շուկայում կամ շինարարության ոլորտում/, որը բերում է ֆինանսական փուչիկների ստեղծմանը և տատանումների: Այդ իսկ պատճառով դրանք զարգացող երկրների համար այնքան արդյունավետ չեն, որքան ՕՈԻՆ-երը:

Մարդկային կապիտալ

Տնտեսական աճը բնութագրվում է որպես նոր գիտելիքների և մարդկային կապիտալի միջև սիներգետիկայի արդյունք, այդ իսկ պատճառով գիտության ոլորտում մեծ նվաճումները ուղեկցվում են հաջողակ երկրներում տեխնոլոգիական գիտելիքների բարելավմամբ: Բայց մինչև միկրոտնտեսափրությունները ցույց են տալիս դրական կապ աշխատանքի շուկայում անհատների կրթական մակարդակի և նրանց աշխատանքային վարձատրության միջև, անցումային երկրների ուսումնասիրությունների արդյունքները անհամատեղելի են վերոնշյալ երևույթի հետ¹: Շատ զարգացող երկրներ բավականին մեծ գումարներ են ծախսում սերունդներին կրթելու և պրակտիկա անցկացնելու վրա: Բայց, առանց արդյունավետ արդյունաբերական կառուցվածքի, աշխատուժի կրթված շատ ներկայացուցիչներ հաճախ կա՛մ գործազուրկ են, կա՛մ էլ ստիպված են լինում լքել երկիրը:

Լուկասը ամփոփել է իր 1985 Մարշալյան դասախոսությունները ասելով. «Տնտեսական զարգացման արդյունավետ տեսությունը առաջին հերթին կարիք ունի մեխանիկների, որոնք հետևողական են եկամտի մակարդակների աճի և դիվերսիֆիկացիայի պահպանման հարցում»²:

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., դոցենտ Շ.Շ. Ասրյանը:

¹ Pritchett L., Where Has all the Education Gone?, Policy Research Working Paper no. 1581, Washington, D.C., World Bank, 1996

² Lucas R.E., “On the mechanics of Economic Development,” Journal of Monetary Economics, vol. 22, 1988, p. 41.

ՀՏԴ 479.243

Տնտեսագիտություն

Հակոբ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
տ.գ.թ., դոցենտ, ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական
մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի նախագահ

**ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ,
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հողվածում ներկայացված են մրցակցության վերաբերյալ խնդիրները, մրցակցության միջավայրի ձևավորման անհրաժեշտությունը, մենաշնորհների հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը, ինչպես նաև դրանց լուծման ուղիները ազգային և միջազգային հարթություններում:

Մրցակցության պայմաններում ակնառու է դրսևորվում դրա ներգործությունը գների նվազեցման վրա, և, ընդհակառակը, մրցակցության թուլացումը, մանավանդ մենաշնորհային և գերիշխող դիրքի առկայությունը, հող են ստեղծում գների արհեստական, պարտադիր բարձրացման համար:

Մրցակցությունը տնտեսական գործունեության շարժիչ ուժն է, և նրա միջոցով է երաշխավորվում ազատ տնտեսական գործունեության իրականացումը:

Այսօր համաշխարհային տնտեսության մեջ գոյություն չունի մի այնպիսի նշանակալի գործընթաց, որը կընթանա առանց մրցակցության: Այդ գործընթացներում մրցակցությունն իրականացվում է մրցակցության ազգային պետական և մրցակցության միջազգային ինտեգրացիոն կարգավորման մակարդակներում:

Մրցակցության շնորհիվ են աշխարհում ձևավորվել գերհզոր անդրազգային տնտեսություններ, որոնք այսօր վերածվել են հզոր ուժի, որը կանխորոշում է ժամանակակից ու ապագա տնտեսության կառուցվածքը և հաճախ էլ ուղղորդում համաշխարհային և տարբեր երկրների քաղաքական գործընթացները:

Այնուամենայնիվ, գոյություն ունեն մրցակցության գլոբալ խնդիրներ, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում և դրանց լուծումը կհանգեցնի արդյունավետության և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Բանալի բառեր. տնտեսական մրցակցություն, կատարյալ մրցակցություն, անբարեխիղճ մրցակցություն, հակամրցակցային համաձայնություն, համակենտրոնացում, պետական օժանդակություն, գերիշխող և մենաշնորհ դիրքի չարաշահում, մրցակցային իրավունք, գլոբալ մրցակցություն:

*А. Казрамян***КОНКУРЕНТНАЯ СИТУАЦИЯ, ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ И ПУТИ ИХ РАЗРЕШЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ**

В статье представлены проблемы конкуренции, необходимость формирования конкурентной среды, возможные виды монополии, их допустимые размеры и способы разрешения на национальном и международном уровне.

В условиях конкуренции особенно проявляется его воздействие на уменьшение цен и наоборот ослабление конкуренции, в особенности наличие монопольных и доминантных позиций способствует искусственного, обязательного роста цен.

Конкуренция движущая сила экономики и она гарантирует реализацию свободной экономической деятельности.

На сегодняшний день в мировой экономике не существует такого процесса, которая происходила бы без конкуренции. В этих процессах конкуренция осуществляется на национальном государственном и международном интеграционном уровне регулирования конкуренции.

Благодаря конкуренции в мире сформировались сверхмощные транснациональные компании, которые превратились в мощную силу, определяющую современную и будущую структуру экономики, а иногда направляют мировые политические процессы разных стран.

Тем не менее, существуют глобальные проблемы конкуренции на национальном и международном уровне, решение которых приведет к повышению эффективности уровня благосостояния населения.

Ключевые слова: экономическая конкуренция, совершенная конкуренция, недобросовестная конкуренция, антиконкурентное соглашение, концентрация, государственное содействие, злоупотребление доминантным и монопольным положением, конкурентное право, глобальная конкуренция.

*H.Ghahramanyan***COMPETITIVE SITUATION, MAIN PROBLEMS AND WAYS OF THEIR RESOLUTION IN ARTSAKH REPUBLIC**

The article deals with the problems of competition, the necessity creation of competitive environment, possible types of monopoly, their allowed sizes, as well as ways of solving these problems at the national and international levels.

In condition of competition it influences on price decline which is obvious and on contrary of the weakness of competition, especially the existence monopoly and dominant position create a ground for artificial, obligatory raise of prices.

Competition is the driving force of the economy and it guarantees the implementation of free economic activity.

Nowadays there is no any significant process in the world economy that will proceed without competition.

In these processes competition implemented in national state and international integrational regulation levels of competition.

Due to competition super-powerful supranational economies are formed that predetermining the present and future structure of the economy and very often lead global and political processes of different states.

However there are global problems of competition both on national and international levels and their resolution will lead to an increase in the efficiency and well-being of the population.

Key words: economic competition, perfect competition, unfair competition, anticompetitive agreement, concentration, state promotion, abuse of dominant and monopoly position, competition law, global competition.

Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհների հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով (**ԱՀ Սահմանադրություն, հոդված 59**):

Մրցակցության առանձնահատկությունն այն է, որ շահույթի ստացումը հավանական է, բայց երաշխավորված չէ, իսկ վնասը՝ հնարավոր է, բայց ոչ անխուսափելի (**անանուն հեղինակ**):

Համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում և շուկայական տնտեսավարման պայմաններում, ինչպես ազգային տնտեսությունների մակարդակներում, այնպես էլ համաշխարհային առևտրատնտեսական հարաբերությունների շրջանակում սահմանափակ ռեսուրսների բաշխման և դրանց արդյունավետ օգտագործման հարցում էական առաջնահերթություն է ստանում մրցակցային միջավայրի ձևավորումը, և կարևորվում են միջազգային գործարարության, մրցակցության պաշտպանության և միջազգային գների կարգավորման ժամանակակից մեթոդները և ձևերը: Համաշխարհային առևտրատնտեսական հարաբերությունների շարունակական ընդլայնումը նշանակում է ավելի շատ խելամիտ մրցակցություն, որը մշտական նորաստեղծությունը և նորարարությունը դարձնում է վճռորոշ՝ հաջողության հասնելու համար: Առավել ևս, որ մրցակցության մեջ այսօր վճռորոշ են ոչ թե հումքի պաշարները, այլ գիտելիքների անսահմանափակ ռեսուրսներն ու շուկայի ազդակներին արագ արձագանքելու ունակությունը: Երբ կա մրցակցություն, տնտեսությունը կարող է շահել, քանի որ դրա հետևանքով գները նվազում են, և հաղթում է ավելի բարձր որակով ապրանք կամ ծառայություն մատուցող ընկերությունը, և, որ ամենակարևորն է, շահում է սպառողը: Լինելով շուկայական տնտեսության առանցքային տարր՝ մրցակցությունն էական դեր է խաղում գնագոյացման մեխանիզմում: Որքան մրցակցությունը սաստիկ է, այնքան ակնառու է դրսևորվում դրա ներգործությունը գների իջեցման վրա: Եվ ընդհակառակը, մրցակցության թուլացումը, մանավանդ մենաշնորհային և գերիշխող դիրքի առկայությունը հող են ստեղծում գների արհեստական, պարտադիր բարձրացման համար:

Արցախի Հանրապետությունում մրցակցությունը տեսանելի է գյուղատնտեսական և գինեգործական արտադրանքի ապրանքային շուկաներում, որտեղ բազմաթիվ մասնակիցների առկայությունը հնարավորություն չի տալիս

գնային համաձայնություններ կնքել և մեծացնել կենտրոնացվածության աստիճանը:

Մրցակցությունը գների իջեցման, եկամուտների առավել համաչափ բաշխման, մենաշնորհների և գերիշխող դիրքի արգելակման, անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման գործառույթներից բացի, համարվում է տնտեսական գործունեության շարժիչ ուժը, որովհետև մրցակցության միջոցով է երաշխավորվում ազատ տնտեսական գործունեության իրականացումը: Մրցակցությունը տնտեսական ռեսուրսների բաշխման գործառույթի միջոցով խրախուսում է արտադրական գործունեների ռացիոնալ օգտագործումը և դրանով կատարում սպառողների ցանկությունները: Մրցակցության դերի կարևորությունը ապացուցել է նաև վերջին տարիների ֆինանսատնտեսական ճգնաժամը, որը ստիպել է պետություններին և Եվրամիությանը տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը դնել ավելի բարձր իրավական հիմքերի վրա:

Ըստ շոտլանդա-ամերիկյան բանկի ղեկավար Ջեյն Ֆրեյզերի և համաշխարհային առաջատար ֆինանսական կազմակերպության ֆինանսիստ, անգլիացի Ջերեմի Օպենհեյմի՝ մենք գտնվում ենք համաշխարհային տնտեսության գլխավոր՝ երկարատև վերափոխման եզրին՝ մի շարք ազգային տնտեսությունների տեղական արդյունաբերության ճյուղերից մինչև միջազգային խաղացողների կողմից վիճարկվող ինտեգրված խոշոր շուկաները: Մրցակցության դերը վճռորոշ է տեղի ունեցող վերափոխումներում և գործարար միջավայրի բարելավման գործընթացներում: Հանդիսանում է մասշտաբային գիտական ու տնտեսական հետազոտությունների օբյեկտ, երկարատև երկխոսությունների, պաշտոնական քննարկումների թեմա գործադիր և օրենսդիր մարմիններում, ինչպես դա տեղի է ունեցել, օրինակ, ԱՄՆ-ում 80-ական թվականներին, որտեղ արդյունքում 1988 թվականին ընդունվել է մրցունակության և առևտրի մասին հատուկ Համալիր օրենք, չնայած որ, 1890-1914 թվականներին ԱՄՆ-ն արդեն ուներ Շերմանի և Կլեյտոնի «հակատրեստային» և «հակամրցակցային» օրենքները: Նմանատիպ օրենքներ են ընդունվել նաև աշխարհի տարբեր երկրներում (մոտ հարյուր երկրում), որը միաժամանակյա չի եղել և կրում է շարունակական բնույթ: Իսկ Եվրոպայում՝ Գերմանիայի տարածքում, որտեղ վերահսկում էին բրիտանական և ամերիկյան իշխանությունները, 1947 թվականին է ուժի մեջ մտել թիվ 56 օրենքը, որը փաստորեն ուղղված էր համակենտրոնացումների դեմ՝ արգելելով կարտելների ստեղծումը: Հետագա փոփոխություններով (1950թ., 1951թ., 1952թ.), այնուհետև 1957 թվականին եվրոպական տնտեսական միության ստեղծման պայմանագրով է կարգավորվել ԵՄ-ի հակամենաշնորհային իրավունքը: Հակամենաշնորհային քաղաքականության և հակամենաշնորհային իրավունքի առկայությունը Եվրամիության մակարդակում չի խոչընդոտել, որպեսզի Եվրամիության անդամ պետությունները ունենան տնտեսական մրցակցությունը կարգավորող ազգային հակամենաշնորհային օրենքներ: Ավելին, եթե ուսումնասիրենք Եվրամիության և պետությունների ազգային հակամենաշնորհային իրավունքների միջև կապի պատմությունը, ապա տեսանելի կլինի, որ շատ դեպքերում հենց Եվրամիության հակամենաշնորհային իրավունքի առկայությունն է ստիպել, ԵՄ-ին անդամագրվող երկրները ունենան ազգային հակամենաշնորհային օրենսդրություն: Ավելին, վերջին տասնամյակներում «մոդայիկ» են դարձել մրցակցության մասին ազգային օրենքների ընդունումը:

Օրինակ, Իտալիայում համապատասխան օրենք ընդունվել է 1990 թվականին, որի համար հիմք է ընդունվել Եվրամիության հակամենաշնորհային իրավունքի դրույթները: Արցախի Հանրապետությունը, բարեփոխումներին զուգահեռ, 2006 թվականի մայիսի 12-ին նույնպես ընդունել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ԱՀ օրենքը, որը հիմնված է ԱՀ Սահմանադրության վրա, իսկ օրենսդրությունը բաղկացած է ԱՀ քաղաքացիական օրենսգրքից և այլ իրավական ակտերից: Այնուամենայնիվ, շատ երկրներ առ այսօր չունեն մրցակցային միջավայրը և հակամենաշնորհային գործընթացները կարգավորող իրավական ակտեր կամ օրենքներ (Աֆղանստան, Բոլիվիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Քաթար, Հոնկոնգ, Պարագվայ և այլն):¹

Մրցակցային հարցերի և գների կարգավորման համար շատ երկրներում ստեղծվել են, բնագավառը կարգավորող հանձնաժողովներ, խորհուրդներ և այլ ազգային մարմիններ, կառույցներ:

Մրցակցությունը և մրցակցային միջավայրը կարգավորող օրենքները տարբեր երկրներում տարբեր են և դա կախված է տվյալ երկրի տնտեսական պայմաններից ու մրցակցության նկատմամբ պետական մարմինների վերաբերմունքից:

Գործող կոնվենցիայի համաձայն, եթե անհամաձայնություններ են առաջանում ԵՄ և ազգային օրենսդրությունների միջև, առավելությունը տրվում է այն օրենսդրությանը, որտեղ ավելի խիստ դրույթ է նախատեսված: Սակայն հակասությունների դեպքում դատարանները հաճախակի են գերակա համարում Եվրամիության օրենսդրությունը՝ առանց հաշվի առնելու, թե որ օրենսդրությունն է պարունակում խիստ դրույթներ:

ԵՄ-ում մրցակցային իրավունքի նորմերով են որոշվում շուկայում մրցապայքարի շրջանակները, կարգերը և կանոնները: Ըստ աշխարհագրական տարածքի՝ մրցակցությունը տարբեր շուկաներում ընթանում է տարբեր ձևերով: Գոյություն ունեցող տեղական, տարածքային և ազգային շուկաներին զուգահեռ՝ աշխարհում ավելանում են այնպիսի գոբալ (անդրազգային) շուկաներ, որոնք դուրս են գալիս երկրի սահմաններից: Կարծես տրամաբանական հարց է ծագում. ի՞նչ չափով է մրցակցային իրավունքը ի վիճակի հետևել տնտեսական գործընթացների և շուկաների գլոբալացմանը: Արդյո՞ք կարելի է ասել, որ տեղի է ունենում նաև մրցակցության գլոբալացված կարգավորում:

Այսօր համաշխարհային տնտեսության մեջ գոյություն չունի մի այնպիսի նշանակալի գործընթաց, որը կընթանա առանց մրցակցության: Այդ գործընթացներում մրցակցությունը իրականացվում է տարբեր մակարդակներում:

Առաջին մակարդակը (մրցակցության պետական կարգավորում) պետությունների ազգային սահմաններում հակամենաշնորհային կարգավորումն է: Մրցակցության կարգավորումը ազգային մակարդակներում գոյություն ունի այն երկրներում, որոնք ԵՄ և տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության անդամ են, ինչպես նաև այն երկրներում, որոնք ցանկանում են միանալ Եվրամիությանը:

Հաջորդ մակարդակը (մրցակցության ինտեգրացիոն կարգավորում) մի քանի երկրները ընդգրկող տնտեսությունների մրցակցության կարգավորումն է և

¹ Конкурентное право, Материал из Википедии — свободной энциклопедии

կախված է, թե ինչ տարբեր խորությամբ են այդ երկրները տնտեսապես ինտեգրված:

Գոյություն ունեցող ազատ առևտրի մասին յուրաքանչյուր համաձայնագիր պարունակում է մրցակցության մասին դրույթներ. ազատ առևտրի մասին հյուսիսամերիկյան համաձայնագիրը (NAFT)¹, ազատ առևտրի մասին կենտրոնական եվրոպական համաձայնագիրը (CEFTA)²: Համաձայն առկա տեղեկատվության միակ իսկական, էֆեկտիվ գործող ակտը մրցակցության կարգավորման ոլորտում համարվում է ԵՄ հակամենաշնորհային և եվրոպական տնտեսական գոտու (ԵՏԳ) հակամենաշնորհային իրավունքը: ԵՄ-ի հակամենաշնորհային իրավունքը չի համարվում ընդունված պետական ակտ, այլ ինտեգրացիոն գործընթացների արդյունք է և տանում է շուկայի ունիֆիկացմանը: Դրանով է մեկնաբանվում, թե ինչու Հռոմի պայմանագիրը³ արգելում՝ ազգային կարգավորող օրենսդրություններով թույլատրված մրցակցությունը սահմանափակող առանձին համաձայնություններ:

Այսօր միջազգային մրցակցության գլոբալ խնդիրներից է.

-տնտեսապես ինտեգրված անդրազգային շուկաների համար նոր մակարդակին համապատասխանող մրցակցության կարգավորման իրավական նորմի բացակայությունը և գործող իրավական նորմերի ու դատարանների կողմից ընդունվող որոշումների հակասությունները:

Այսպես, միննույն գործարքի շուրջ տարբեր երկրների կողմից կարող են ընդունվել իրար հակասող որոշումներ (ինչն էլ տեղի է ունեցել 2009 թվականին ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջև՝ ստեղծելով լուրջ դիվանագիտական տարաձայնություններ):

- Շուկայի մասնակիցների (տնտեսավարող սուբյեկտների) վարքագծին վերաբերող նորմերի բացակայությունը:

Շուկայում դժվար լուծելի խնդիր կարող է հանդիսանալ բազմաթիվ միջազգային «համազարկը», օրինակ, գերիշխող դիրքի չարաշահմամբ: Դրա վառ օրինակն է AMD-ի հայտը INTEL-ի դեմ. AMD ընկերությունը մի քանի երկրներում INTEL-ի դեմ հակամենաշնորհային հայց է ներկայացրել, մրցակցին մեղադրելով գերիշխող դիրքի չարաշահման մեջ և պնդելով, որ INTEL-ը շանտաժի և կաշառակերության միջոցով ստիպել է անձնական համակարգիչների խոշոր արտադրողներին իրենց համակարգիչներում չօգտագործել մրցակիցների պրոցեսորները:

Վերջին ժամանակահատվածում ապրանքային շուկաները և արտադրանքը դարձել են ավելի մրցունակ, մանավանդ, որ չի մնացել որևէ ազգային տնտեսություն, որը գերծ լինի գլոբալ զարգացումների ազդեցությունից, որն էլ իր հերթին հանգեցրել է գլոբալ մրցակցության ուժեղացմանը համաշխարհային մասշտաբով և էական ազդեցություն է թողել գրեթե բոլոր երկրների տնտեսությունների զարգացման վրա:

Գլոբալ մրցակցությունը ներխուժել է գրեթե բոլոր ազգային տնտեսությունները՝ ստիպելով վերափոխվել, զարգանալ ու կատարելագործվել՝ ստեղծված հնարավորություններից օգտվելու և մշտապես սրվող մրցակցության մարտահրավերներին պատասխանելու համար:

¹ Тихамер Тотем, *Антимонопольное право Европейского Союза*, 2014, էջ 48

² Տե՛ս նույն տեղը

³ Տե՛ս նույն տեղը

Տնտեսական մրցակցությունը ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն է, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները ու հանդիսանում է շուկայական տնտեսական քաղաքականություն վարող ցանկացած պետության կարևոր բաղադրիչներից և մենաշնորհային ու գերիշխող դիրքի ստեղծման, համակենտրոնացման, անբարեխիղճ մրցակցության դրսևորումների կանխման և կենտրոնացվածության աստիճանի մեծացման դեմ պայքարի կարևոր միջոց:

Արցախի Հանրապետությունում մրցակցային շուկաներում առկա են մենաշնորհային և գերիշխող դիրք ունեցող չորս բնական մենաշնորհներ՝ գազի, էլեկտրաէներգիայի, ջրի, հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման ապրանքային շուկաներում, ինչի պատճառով էլ այդ ոլորտները դուրս են մնացել մրցապայքարից և այդ ապրանքային շուկաներում բացակայում է մրցակցությունը:

Մենաշնորհային և գերիշխող դիրք ունեցող ապրանքային շուկաները Արցախի Հանրապետությունում գտնվում են լիազոր մարմնի և ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի ուշադրության կենտրոնում, և որոշ սակագներ կարգավորվում են՝ «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», Արցախի Հանրապետության ջրային օրենսգրքով, «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ԱՀ օրենքների պահանջների համաձայն:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ԱՀ օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» նշված օրենքը կարգավորում է տնտեսավարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունները, որոնք կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը:

Օրենքի առանձնահատկությունն այն է, որ ներառում է.

- հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի համակենտրոնացման, անբարեխիղճ մրցակցության, պետական օժանդակության և իրավական ակտերի ու ստորագրված պայմանագրերի փորձաքննության, պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմնի, օրենքը խախտելու համար պատասխանատվությանը վերաբերող

հասկացությունները, դրանց կիրառման շրջանակները, կարգավորման ձևերը և տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմնի (Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով) պատասխանատվությունն ու լիազորությունները:

- Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված առաջին անհրաժեշտության (ռազմավարական) պարենային և ոչ պարենային ապրանքային շուկաներում իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված գների կարգավորման վերաբերյալ որոշումներ ընդունելու իրավասությունը:

- Ի տարբերություն մյուս երկրների՝ Արցախի Հանրապետությունում գերիշխող դիրքը բացահայտելու համար օրենսդրորեն կիրառվում են այլ չափանիշներ և չափորոշիչներ:

Օրինակ՝ ՀՀ-ում տնտեսավարող սուբյեկտը ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե՝

- տվյալ ապրանքային շուկայում ունի շուկայական իշխանություն, մասնավորապես, որպես իրացնող կամ ձեռք բերող չի հանդիպում էական մրցակցության և (կամ) իր ֆինանսական կարողությունից կամ այլ հատկանիշներից ելնելով՝ հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա և (կամ) դուրս մղելու այլ տնտեսավարող սուբյեկտին տվյալ ապրանքային շուկայից և (կամ) խոչընդոտելու տվյալ ապրանքային շուկա մուտք գործելուն, կամ

- որպես իրացնող կամ ձեռք բերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը, կամ

- ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը, կամ

- ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը, ապա Արցախի Հանրապետությունում տնտեսավարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե՝

- տվյալ ապրանքային շուկայում ունի շուկայական իշխանություն, մասնավորապես, որպես իրացնող կամ ձեռք բերող չի հանդիպում էական մրցակցության և (կամ) իր ֆինանսական կարողությունից կամ այլ հատկանիշներից ելնելով՝ հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա և (կամ) դուրս մղելու այլ տնտեսավարող սուբյեկտին տվյալ ապրանքային շուկայից և (կամ) խոչընդոտելու տվյալ ապրանքային շուկա մուտք գործելուն, կամ

- որպես իրացնող կամ ձեռք բերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ չորրորդը, կամ

- ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող ոչ ավելի, քան երեք տնտեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը, կամ

- ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող ոչ ավելի, քան չորս տնտեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը:

Համեմատելով ներկայացված կարգավորումների մասնաբաժինները՝ կարող ենք փաստել, որ Արցախի Հանրապետությունում գերիշխող դիրքի բացահայտման չափանիշները ավելի կոշտ են և ավելի են ընդլայնում կարգավորման դաշտը:

Ինչ վերաբերում է տնտեսական մրցակցության բնագավառում առկա խոչընդոտներին, ապա դա առավել նկատելի է դառնում միջազգային տնտեսության ներկա իրավիճակի ֆոնին: Մասնավորապես, մրցակցության զարգացման մակարդակը, գնաճի արագ տեմպերը, մատուցվող ծառայությունների ցածր մակարդակը և սպառողական ընտրության սահմանափակությունը հանգեցնում են ոչ կատարյալ մրցակցության և բերում են անհիմն կամ համաձայնեցված գների կիրառման:

ԱՀ-ում առանձնացվում են մրցակցության զարգացումը խոչընդոտող հետևյալ հիմնական գործոնները.

- «Ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» վիճակը: Չհաշված այն հանգամանքը, որ 1991-1994թթ. հակամարտությունը ամբողջությամբ քայքայել է ԱՀ տնտեսությունը և արտադրական պոտենցիալը, ներկա վիճակը ԱՀ տնտեսությունը դարձնում է ռիսկային և հնարավորություն չի տալիս ներգրավելու օտարերկրյա ուղղակի ներդրումներ:

- Արտաքին տնտեսական (բացի ՀՀ-ից) կապերի բացակայությունը: Արցախի աշխարհաքաղաքական դիրքը (եռակողմ շրջափակում) հնարավորություն չի տալիս ԱՀ տնտեսությանը լիարժեք մասնակցել և ինտեգրվել գլոբալ տնտեսական գործընթացներին: Մասնավորապես, անկախության ամբողջ ժամանակաշրջանում տնտեսական կապերը Ադրբեյջանի և Թուրքիայի հետ բացակայում են, իսկ Իրանին մի շարք երկրների կողմից հայտարարված է արտահանման և ներմուծման էմբարգո, ինչը այդ երկրի տարածքով բեռնափոխադրումը դարձնում է անարդյունավետ:

- Շուկայի փոքր ծավալը: Խոսքը վերաբերում է ոչ միայն համախառն պահանջարկին, այլ նաև տնտեսավարող սուբյեկտների քանակին: Շատ դեպքերում տնտեսավարողների փոքրաթիվ քանակը չի նպաստում մրցակցության զարգացմանը և հանգեցնում է գների անհիմն կիրառմանը:

ԱՀ-ում գործում են **513¹** ապրանքային շուկաներ, իսկ կարգավորվում են ընդամենը **30** ապրանքային շուկաներ, որից՝ մենաշնորհներ՝ **7** ապրանքային շուկաներ, գերիշխողներ՝ **27** ապրանքային շուկաներ, համակենտրոնացումներ չկան, այն դեպքում, երբ մրցակցություն ապահովելու համար ապրանքային շուկաներում պետք է գործեն հազարից ավելի տնտեսավարող սուբյեկտներ, իսկ կատարյալ

¹ ԱՀ ֆինանսների նախարարության պաշտոնական տեղեկատվություն

մրցակցության դեպքում անհրաժեշտ է շուկայի մասնակիցների թիվը լինի ոչ պակաս հինգ հազարից, չնայած «կատարյալ» մրցակցություն փաստացի գոյություն չունի, և դա կարելի է կոչել «վերացական» մրցակցություն:

● Տնտեսավարող սուբյեկտների և հասարակության իրազեկվածության ցածր մակարդակը: Առկա գիտակրթական պոտենցիալը և SS համակարգը ներդաշնակ չեն միջազգային շուկայի ներկա պահանջներին:

● Միջազգային և անդրազգային ֆինանսական և վարկային կազմակերպությունների կողմից ցածր տոկոսադրույթներով տրամադրվող վարկերից օգտվելու հնարավորության բացակայություն: ԱՀ-ի միջազգայնորեն չճանաչվածությունը հնարավորություն չի տալիս վարկեր և փոխառություններ ձեռք բերել միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններից:

Ներկա իրավիճակը ԱՀ տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն չի տալիս ինտեգրվել ՀՀ սահմաններից դուրս գործող ապրանքային շուկաներին, մասնակցելու միջազգային գլոբալ տնտեսական գործունեությանը և մրցակցելու արտաքին շուկաներում սեփական էկոլոգիապես մաքուր արտադրանքը իրացնելու ու բարձրորակ ծառայություններ մատուցելու համար: Դա խաթարում է առավելության հասնելու, որակ ապահովելու ձգտումը, և դանդաղեցնում է նոր տեխնոլոգիաների ներդրման, առաջատար փորձի կիրառման, զարգացման և մրցակցային գործընթացները:

Անկախ առկա խնդիրներից՝ Արցախի Հանրապետության տնտեսությունը բաց է մրցակցության համար, ինչն ամրագրված է Սահմանադրությամբ ու ապահովված է գործող օրենսդրությամբ:

Չնայած օրենքը լրիվությամբ համահունչ է պետության վարած տնտեսական քաղաքականությանը, այնուհանդերձ, կարելի է իրականացնել որոշ դրույթների հստակեցման աշխատանքներ՝ կապված հակամրցակցային համաձայնությունների բացահայտման և համակենտրոնացմանը վերաբերող հասկացություններին: Գործող օրենսդրությամբ հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը և դրա ապացուցողական բազան թույլ է և հիմնականում հնարավոր չի լինում ապացուցել համաձայնությունների փաստը:

Ներկայիս տնտեսավարման պայմաններում նորմալ մրցակցություն ապահովելու և այն պաշտպանելու համար անհրաժեշտ է.

● հստակեցնել տնտեսական բլոկում ներառված օրենսդրության մեջ կիրառվող մրցակցությանը վերաբերող հասկացությունները,

● ընդլայնել լիազոր մարմնի իրավասությունները հակամրցակցային համաձայնությունների և համակենտրոնացումների բացահայտման և ապացուցման մասով,

● հիմք ընդունելով զարգացած որոշ երկրների փորձը՝ կիրառել գնային քաղաքականության կարգավորման մեխանիզմներ սահմանային գների, շահույթի և շահութաբերության նորմաների, ֆիքսված գների համար,

● օրենսդրորեն սահմանել.

-առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների (այդ թվում՝ դեղերի) ցանկը ու դրանց գնային քաղաքականության մոտեցումները,

-մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցողների կողմից կիրառվող գների գնագոյացմանը վերաբերող չափորոշիչներ,

● սահմանափակել մենաշնորհային կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների մասնակցությունը պետական ծրագրերին և օժանդակությանը:

Տնտեսական մրցակցության բարենպաստ միջավայրի ստեղծման նպատակով անհրաժեշտություն է առաջանում հնարավորինս կանխել ապրանքային շուկաներում կենսորոնացվածության մակարդակի մեծացումը, որը կարող է որպես վերջնարդյունք հանգեցնել մրցակցության թուլացմանը, հնարավոր չարաշահումների կատարմանը, անբարեխիղճ մրցակցության դեպքերի դրսևորմանը և անհիմն գների կիրառմանը:

Աշխարհում մրցակցության շնորհիվ ձևավորվել են գերհզոր անդրազգային տնտեսություններ, որոնք այսօր վերածվել են մի այնպիսի հզոր ուժի, որ կանխորոշում են ժամանակակից և ապագա աշխարհի տնտեսության կառուցվածքն ու հաճախ էլ ուղղորդում համաշխարհային և տարբեր երկրների քաղաքական գործընթացները:

Այսօր իշխող տնտեսագիտական դպրոցները և հանրությունը ակնկալում են արդյունավետություն և բնակչության կենսամակարդակի բարձրացում մրցակցությունից և դրան պաշտպանող հակամենաշնորհային իրավունքի քաղաքականությունից (օրենսդրությունից): Այսօրվա դրությամբ մրցակցությունը և դրան պաշտպանող օրենսդրությունը այլ հավասար պայմաններում այն հիմնական չափորոշիչներից են, որոնց միջոցով որոշվում է ազդում է արդյո՞ք մրցակցային քաղաքականությունը (օրենսդրությունը) շուկայի վարքագծի վրա: Եթե դա փաստացի բերել կամ ապագայում բերելու է կենսամակարդակի իջեցման (վատթարացման), ապա մրցակցային քաղաքականությունը (օրենսդրությունը) ենթակա է վերանայման և (կամ) փոփոխման:

Գրականություն

1. Վարդանյան Գ. Ի. «Գիտելիքահենք տնտեսություն», Եր., 2008թ.
2. Կիրակոսյան Վ. Լ. «Միջազգային բիզնես», Եր., 2012թ.
3. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ԱՀ օրենք
4. Мальцева О. В. «Анализ проблем и оценка уровня развития конкуренции в России»
5. Тихамер Т., «Антимонопольное право Европейского Союза» 2014

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ. դոցենտ Շ.Շ. Ասրյանը:

ՀՏԴ 330.3

Տնտեսագիտություն

Մանուշ ՄԻՆԱՍՅԱՆ

ԱրՊՀ, տ.գ.թ, տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՇՈՒԿԱՑԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տնտեսական ճգնաժամը զարգացած շուկայական տնտեսության ուղեկիցն է: Հոդվածում ներկայացված է վարկի անսահմանափակ զարգացման և մարդկանց՝ իրենց կենսամակարդակի անընդհատ բարձրացման օբյեկտիվ ցանկության հետևանքները: Վարկային հարաբերությունները ապակոդմնորոշում են ամբողջ վերարտադրության գործընթացը, ուստի դրա օղակներից մեկում շեղումը հանգեցնում է տնտեսության համար բացասական հետևանքների և անխուսափելիորեն ծնում տնտեսական ճգնաժամ: Տնտեսական ցիկլի սկզբում տոկոսադրույքները ցածր են, և տնտեսական հարաբերությունների մասնակիցները ակտիվորեն վարկեր են վերցնում: Ընդհանուր լավատնտեսությունը պահպանվում է նոր վարկերով: Իրավիճակը փոխվում է, երբ տնտեսությունը մոտենում է վերելքի էտապին: Վարկային շղթան սարդոստայնի բնույթ է ստանում՝ թափանցելով ամբողջ տնտեսական օրգանիզմը: Տնտեսական վերելքի զագաթնակնտին վարկային բնոր կրիտիկական մակարդակ է ձեռք բերում, վրա է հասնում ճգնաժամը: Միայն կապիտալիզմն է իր ինովացիոն բնույթով վարկը հասանելի դարձնում ցանկացած տնային տնտեսության և կազմակերպության համար: Վարկը ստեղծարար ուժ ունի, երբ կարճ ժամկետում ապահովում է լայնամասշտաբ ծրագրերի ֆինանսավորման համար անհրաժեշտ ռեսուրսներ, սակայն տնտեսական կայունության համար ճնշվորում է ապառնալիքներ: **Բանալի բաներ.** շուկայական տնտեսություն, տնտեսական ճգնաժամ, վարկ, ավստրիական դպրոց :

М.Минасян

НЕИЗБЕЖНОСТЬ ЭКОНОМИЧЕСКИХ КРИЗИСОВ В РАЗВИТОЙ РЫНОЧНОЙ ЭКОНОМИКЕ

Экономический кризис сопутствует развитой рыночной экономике.

В статье представлены последствия неограниченного развития кредита и объективного желания людей периодически улучшать свое благосостояние.

Кредитные отношения опосредуют весь воспроизводственный процесс, поэтому нарушение в одном из его звеньев провоцирует негативные последствия для экономики и неизбежно ведет к экономическим кризисам. В начале экономического цикла процентные ставки являются низкими, и участники экономических отношений активно берут кредиты. Общий оптимизм поддерживается новыми кредитами. Ситуация меняется, когда экономика приближается к стадии бума. Кредитные цепочки

приобретают характер паутины, пронизывая весь экономический организм. На пике экономического бума кредитная нагрузка достигает критического уровня и наступает кризис. Только капитализм с его инновационным характером открывает доступ к кредиту практически любому домашнему хозяйству и предприятию. Кредит обладает созидательной силой, когда в короткие сроки позволяет получить необходимые ресурсы для финансирования масштабных проектов, однако создает угрозу экономической стабильности.

Ключевые слова: рыночная экономика, экономический кризис, кредит, австрийская школа.

M.Minasyan

INEVITABILITY OF ECONOMIC CRISES IN THE DEVELOPED MARKET ECONOMY

Economic Crisis is accompanied by the Developed Market Economy. The article deals with the consequences of unlimited credit expansion and the natural desire of people to improve their well-being systematically.

Credit relations mediate the entire reproduction process and thus a violation in one of its links provokes negative consequences for the economy and inevitably leads to an economic crisis. At the beginning of an economic cycle, interest rates are low, and economic agents actively take loans. General optimism is supported by new loans. The situation changes when the economy approaches a boom phase. Credit chains take form of a web permeating the entire economic organism. At the peak of the economic boom, the credit load reaches a critical level and a crisis begins. Only capitalism, with its innovative nature, opens access to credit for almost any household and firm. Credit has creative power because in a short time it allows to get the necessary resources to finance large-scale projects, but it creates a threat to economic stability.

Key words: market economy, economic crisis, credit, Austrian school.

Ցանկացած տնտեսական համակարգ գոյություն ունի միայն այն հիմքով, որ գոյություն ունեն շրջակա աշխարհը վերափոխելու ձգտումով մարդիկ: Պատմականորեն տնտեսավարման ձևերը տարբեր են եղել և փոխարինել են իրար տնտեսական համակարգի զարգացմանը զուգահեռ, ինչն էլ մարդու կարողությունների և հատկությունների իրացման համար նոր հնարավորություններ է բացել: Որպեսզի հասկանանք տնտեսության գործունեության օրենքները, անհրաժեշտ է նախ ընկալել մարդու էության և բնույթի հիմնարար առանձնահատկությունները, քանզի հենց նա է կանխորոշում տնտեսավարման համակարգի զարգացման ուղղությունը:

Հարցի նման մեկնաբանությունը նոր չէ, քանզի մարդու կողմից որոշումների ընդունման գործընթացում նրա բնույթին անդրադառնալը տնտեսական գիտությունների շրջանակում ավանդական մոտեցում է: Դա homo economicus մոդելն է և, ընդհանուր առմամբ, վարքագծային տնտեսագիտությունը:

Հոդվածում դիտարկվում է մարդու հիմնարար հատկություններից մեկը, որն ավելի լիարժեք է դրսևորվում շուկայական տնտեսությունում, քանզի վերջինս դրա զարգացման համար ակտիվորեն նոր գործիքակազմ է ստեղծում:

Նախորդ տնտեսական համակարգում այս գործիքակազմը սահմանափակվել է որոշակի շրջանակներով, ինչն էլ խոչընդոտել է

տնտեսավարման համակարգերի գործունեության օրնաչափությունների ձևավորմանը: Յուրաքանչյուր ոք ձգտում է հնարավորինս արագ բարելավել իր կեցությունը: Մեծամասնության համար այդ նպատակին հասնելու ուղին աշխատանքն է: Երիտասարդ տարիքում մարդկանց գերակշիռ մասի հմտություններն ու կարողությունները թույլ չեն տալիս շատ վաստակել, սակայն տարիների հետ նրանց փորձը, որակական մակարդակը աճում է, ընդլայնվում է բիզնեսը, ծառայողական աճ է արձանագրվում, որոնց զուգահեռ էլ աճում են եկամուտները: Սակայն տնտեսության զարգացմանը զուգընթաց՝ իրավիճակը փոխվում է արմատապես, քանզի ի հայտ է գալիս մի գործիք, որը կոչվում է «վարկ»: Այն թույլ է տալիս տնային տնտեսություններին սպառումը վերաբաշխել ժամանակի մեջ: Արդեն այսօր կարելի է փոխառություն անել ապագա եկամուտների կանխատեսումով և բարձրացնել բարեկեցության մակարդակը ոչ թե մի քանի տարի հետո, այլ անմիջապես:

Սպառման մակարդակի աճը հենց այսօր մարդու բնական գանկությունն է, սակայն միայն կապիտալիզմն է մարդուն այն իրականացնելու գործիք տալիս: Վարկը ձեռք է բերում զարգացման այնպիսի մակարդակ ու տարածում, որ դրանով ապրելը զարգացած կապիտալիզմի ժամանակ դառնում է տնտեսական մշակույթ, նորմ: Եվ հենց վարկի զարգացումը, տնային տնտեսությունների ամրապնդվող գանկությունը ընդլայնել իրենց սպառումը, հանգեցնում է շուկայական տնտեսության պարբերական ճգնաժամերի անխուսափելիությանը:

Նոր տնտեսական ցիկլի սկզբում ընթանում է կազմակերպությունների և տնային տնտեսությունների վարկային պարտավորությունների աճ: Պարտավորությունների աճը խթանվում է ընդհանուր լավատեսությամբ, որը ձևավորվում է ձեռքբերված վարկերի հիմքի վրա իրականացվող տնտեսական քաղաքականության համապատասխան քայլերով: Դրանք իրենց հերթին բարձրացնում են վճարունակ պահանջարկը և պարարտ հող են ստեղծում հաջորդ՝ նոր վարկերի ձեռքբերման համար: Ձևավորվում է վարկային պարույր:

Զարգացած ֆինանսական շուկայի պայմաններում այս գործընթացը էականորեն ուղեկցվում է կազմակերպությունների և տնային տնտեսությունների ֆինանսական ակտիվների արժույթային արժեքների աճով: Տնային տնտեսությունները հնարավորություն են ստանում ԱԹ-ի և անշարժ գույքի ապահովմամբ նոր փոխառություններ ներգրավվել: Ինչքան բարձրանում է դրանց գինը, այնքան աճում է նոր վարկերի ստացման հնարավորությունը: Ֆինանսական ոլորտում նորարարությունները թույլ են տալիս ընդլայնել վարկավորման գործիքակազմը և արագ կենտրոնացնել այդ նպատակի համար տնային տնտեսությունների և կազմակերպությունների ազատ ռեսուրսները: Վարկը գրավում է ողջ տնտեսությունը: Տնտեսական վերելքի գագաթնակետին վարկային բեռը հասնում է որոշակի ծայրահեղ մակարդակի և ամբողջ համակարգը փլուզվում է, վրա է հասնում ճգնաժամը: Պայթյունի դեռ խաղում են տնտեսավարող սուբյեկտները այն շուկայում, որտեղ ձևավորվել է ֆինանսական փուչիկը: Օրինակ, ինչպես նշվել է արժեթղթերի շուկայի կործանումը 1929թ. «ծագել է առևտրային բանկերի կողմից ներդրումային փաստաթղթերի վաճառքով այն նպատակով, որպեսզի ընդլայնվի անշարժ գույքի և ԱԹ-ի հետ կապված վարկավորման ծավալները»¹:

Այն գաղափարը, համաձայն որի տնտեսության զարգացման և ճգնաժամերի ցիկլայնության հիմքում ընկած է վարկը, նոր չէ: Մասնավորապես, այս դրույթը հանդիսանում է ավստրիական տնտեսական դպրոցի բիզնես-պարբերաշրջանի

¹ *St'u Sieron A. Disaggregating the Credit Expansion: The role of changes in Banks' Asset Structure in the Business Cycle. The Quarterly journal of Austrian Economics 2015. Vol 18. №3. P.247-271*

տեսական կարևոր հիմնադրույթ: Վարկի լայն զարգացումը խթանում է կենտրոնական բանկի մեղմ դրամավարկային քաղաքականությունը, որը հանգեցնում է տնտեսությունում տոկոսադրույքի բնական մակարդակից իջեցմանը: Արդյունքում տնտեսական հարաբերությունների մասնակիցները ստանում են ոչ ճիշտ գնային ազդակներ: Ձեռնարկատերերը սկսում են ակտիվորեն փոխառել միջոցներ և կատարել ներդրումներ: Այդ թվում ծագում են այսպես կոչված վատ ներդրումներ, որոնք հետագայում բարձր տոկոսադրույքի պայմաններում կդառնան ոչ շահութաբեր, երբ կենտրոնական բանկը սկսի պայքարել տնտեսական վերելքի դեմ (կոշտացնի դրամավարկային քաղաքականությունը): Տնային տնտեսությունները ևս կսկսեն ակտիվորեն միջոցներ փոխառել և ընդլայնել իրենց սպառումը: Ընդհանուր առմամբ ավստրիական դպրոցի բիզնես-պարբերաշրջանի տեսությունը ենթադրում է, որ կառավարության մոնետար ու ֆիսկալ ներարկումներն են կեղծում ներդրումները, սպեկուլյացիան ու հարաբերական գները:

Այսպիսով՝ ավստրիական դպրոցի բիզնես-պարբերաշրջանի տեսությունը ենթադրում է, որ եթե կենտրոնական բանկը թույլ տա տոկոսադրույքին համապատասխանել բնական տոկոսադրույքին և կառավարությունը չմիջամտի տնտեսության մեջ, կարելի է խուսափել ճգնաժամից: Կարծում ենք՝ տնտեսական ճգնաժամերը, սակայն, անխուսափելի են: Այս փաստը բացատրվում է նրանով, որ շուկայական տնտեսությունը հիմնված է վարկի վրա, որի ընդլայնումը պարտադիր կհանգեցնի ֆինանսական փուչիկների ձևավորմանն անգամ բնական տոկոսադրույքի գերակայության պայմաններում: Կենտրոնական բանկի գործողությունները կամ կառավարության տնտեսական այլ քայլերը կարող են խթանել կամ խաթարել վարկավորման սահմանային աստիճանի հասցված գործընթացը՝ դրանով ազդելով տնտեսական ցիկլի տևականության, հետագա անկման խորության և ռեցեսիայի վրա: Դրանք, սակայն, ի վիճակի չեն փոխելու մարդու լավ ապրելու մարդու ձգտումը, ինչն իր դրսևորումն է գտնում վարկավորման միջոցով օրվա սպառումն ընդլայնելու մեջ, մյուս կողմից հնարավոր չէ ֆինանսավորման նոր աղբյուրների և գործիքակազմի որոնման հարցում արգելափակել բանկերի ներդրումային ոգին:

Սույն վերլուծության շրջանակում վարկի տարբեր ձևերից կոդիտարկվի բնակչությանը և կազմակերպություններին տրվող վարկերը: Եթե բանկը կազմակերպությանը վարկ է տրամադրում, իսկ բնակչությունը վարկ չի վերցնում, այլ հավասար պայմաններում, տնտեսական համակարգը պետք է հարաբերականորեն կայուն լինի, քանի որ ապրանքների ու ծառայությունների վերջնական սպառողը՝ տնային տնտեսությունը, դրանք ձեռք է բերում առանց վարկի, ի հաշիվ իր աշխատանքային գործունեության: Տնտեսության հիմքը կսկսի խաթլվել, երբ տնային տնտեսությունների սպառումը գերազանցապես ստանա վարկավորումից կախվածություն: Խնդիրն այն է, որ վարկը հիմնվում է դեռևս չվաստակած միջոցների վրա: Ապագան հստակ չի կանխորոշված, ուստի եթե տնային տնտեսությունները ապագա եկամուտների հույսով են ավելացնում իրենց ներկա սպառումը, ապա հավանականությունը մեծ է, որ դրանք չեն իրագործվի: Եվ ինչքան աճում է ապագա եկամուտների ակնկալիքով ներկա սպառումն ընդլայնող տնային տնտեսությունների թիվը, այնքան ավելի շատ մարդիկ են սկսում ռիսկի ենթարկվել, և որպեսզի առանձին տնային տնտեսությունների տնտեսական գործունեության ձախողումը հանգեցնի տնտեսական անկման, անհրաժեշտ է վարկային բեռի որոշակի սահմանային մակարդակ:

Ներկայումս վարկը թափանցել է հասարակական կյանքի բազմաթիվ ոլորտներ՝ սկսած ուսանողական վարկերից մինչև պետական վարկավորում: Այստեղ կարելի է վկայակոչել այնպիսի «առաջանցիկ», ինչպիսին Իսլանդիան է, որի արտաքին պարտքը նախաճգնաժամային 2007թ. կազմել է ՀՆԱ-ի 550%-ը: 2004-2007թթ. երկիրը ունեցել է օտարերկրյա կապիտալի մեծ ներհոսք: Իսլանդական կրոնը ԱՄՆ դոլարի նկատմամբ թանկացել է 64%-ով: Երկրում վերելք է արձանագրվել, ինֆլյացիան զարգացած բոլոր երկրների ցուցանիշներից բարձր էր: Սակայն 2008թ. Իսլանդիան բախվել է լուծարայնության բարձր ճգնաժամի, իսլանդական կրոնը զգալիորեն արժեզրկվել է, նրա երեք խոշոր բանկերը սնանկացել են¹:

Վարկը շարունակում է նորանոր բնագավառներ գրավել, որոնք բավական հեռու էին թվում վարկային հարաբերություններից: Այսպես ձևավորվեցին միկրոֆինանսական կազմակերպություններ: Բիզնեսի այս բնագավառի վարկավորման հնարամտությունը դրսևորվեց նրանում, որ այն գտավ գոյատևելու և ընդլայնվելու նոր մեթոդ՝ փաստացի վարկավորելով անվճարունակ փոխառուների: Կարճաժամկետ վարկերի տոկոսադրույքի բարձր մակարդակը թույլ է տալիս փոքր քանակի վճարման հաճախականության հաշվին ծածկել նշանակալի փոխառությունների գծով վնասը, եթե դրանք չմարվեն:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև վարկային քարտեզի միջոցով վարկավորման գործընթացին: Դրանց պայմանները առաջին հայացքից հակասում են ֆինանսական տրամաբանությանը, փոխառուն վարկից կարող է օգտվել անվճար, եթե բանկին վերադարձնի ծախսած գումարը ժամանակի որոշակի հատվածում, օրինակ 50 օրում: Այս փաստը կարծես թե հակասում է ֆինանսական գործունեության նպատակին՝ շահույթի ստացմանը: Սակայն, բանկը, թերևս, հույս ունի, որ հաճախորդը, տարվելով «հեշտ» վարկերով, ինչ որ պահ չի կարողանա վարկը վերադարձնել արտոնյալ ժամանակահատվածում: Այս դեպքում բանկն արդեն կգանձի բավական բարձր տոկոսադրույք:

Հայտնի է, որ նույն դեղը, կախված դրա օգտագործման չափաքանակից, կարող է օգուտ կամ վնաս տալ: Նմանօրինակ պնդումը տեղ ունի նաև վարկի առումով. դրա ստեղծարար շնորքին զուգահեռ, երբ կարճաժամկետում մասսայական նախագծերի ֆինանսավորման համար անհրաժեշտ են ռեսուրսներ, այն կարող է երկրի տնտեսական կայունության համար վտանգ ներկայացնել, եթե հասնի մեծ մասշտաբների:

Ըստ որում, պոտենցիալ վտանգը ծագում է անգամ, երբ վարկային գործունեությունը ժամանակին կարգավորվում է, իսկ առաջատար ֆինանսական կազմակերպությունները հաջողությամբ են հաղթահարել սթրես-թեստավորումը: Վառ օրինակ է հանդիսանում վերջին համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որն անսպասելի էր ինչպես կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը կարգավորողների, այնպես էլ բազմաթիվ տնտեսագետների և փորձագետների համար: Վարկի հավանական վտանգը այն է նրանում, որ զարգացած տնտեսությունում վարկային հարաբերությունները միջնորդում են ամբողջ վերարտադրության գործընթացը: Ուստի դրա օղակներից մեկի գործունեության խաթարումը կարող է ծնել ամբողջ տնտեսության համար բացասական հետևանքներ: Փորձենք տեսնել օրինակի վրա: Ենթադրենք որևէ ձեռնարկատեր վարկ է վերցնում բանկից գործարանի կառուցման, վարձու

¹ *St'u* Doukas J. A., Zhang H. **The Performance of NDF Carry Trades:** Journal of International Money and Finance. 2013 vol. 36.P.172-190

աշխատողներին աշխատավարձ վճարելու համար: Վարձու աշխատողը, ունենալով աշխատատեղ, ձգտում է բարելավել իր նյութական կացությունը, և ինքը ևս վարկ է վերցնում բանկից: Բանկը նրան վարկ է տրամադրում աշխատավարձի գրավապահովվածությամբ: Սակայն վարկի փաստացի ապահովագրությունը այն փաստն է, որ մինչ այդ ձեռնարկատերն է վարկ վերցրել նրա աշխատավարձը տալու համար:

Ձեռնարկատերը վարկը ստացել է իր արտադրանքի ապագա իրացումից ստացվելիք եկամտի հիմքով, սակայն չմոռանանք, որ այդ արտադրանքի որոշակի մաս էլ կիրացվի վարկավորման միջոցով: Այսպիսով՝ և՛ ձեռնարկատիրոջ, և՛ վարձու աշխատողի վարկի փաստացի ապահովվածությունը այն բանի հույսն է, որ բանկն ապագայում նրանց արտադրանքի սպառողին վարկ կտրամադրի: Դատողությունների այս շղթան կարելի է անվերջ շարունակել:

Այսպես՝ արտադրանքի վարկավորման հիմքը աշխատավարձերն են, որոնք ապագա գնորդներին պետք է վճարեն ձեռնարկատերերը, որտեղ նրանք աշխատում են: Իրենց բիզնեսի զարգացման համար, սակայն, իրենց հերթին նրանք ևս վարկ են վերցնում: Դրանց վերադարձելիության հավանականությունը կախված կլինի այն հանգամանքից, թե այդ կազմակերպության արտադրանքի ապագա գնորդները կստանան վարկեր: Մեր օրինակում հարկ է նաև նշել, որ առաջին ձեռնարկատերը անհրաժեշտ սարքավորումներ է գնել այլ ձեռնարկատերից: Նրանք էլ իրենց հերթին են վարկ վերցրել իրենց արտադրության ընդլայնման համար:

Ստացվում է, որ վարկային հարաբերությունների լայն տարածման պայմաններում մի վարկի ապահովվածությունը ստանձնում են այլ վարկեր, այլ կերպ՝ արտադրանքի արտադրության ամբողջ գործընթացը՝ դրա արտադրության առաջին քայլից մինչև սպառումը, կապված է վարկավորման շղթայով: Ինչքան զարգացած է շուկայական տնտեսությունը, այնքան խորությամբ է գործում վարկավորման գործընթացը: Այլ կերպ՝ վարկն ինքն է վերաարտադրում իրեն՝ նոր վարկի ապահովվածության ձևավորումը իրականացնելով նախկինում տրված կամ ապագայում տրվելիք վարկերի հաշվին: Սակայն եթե այդ շղթան կտրվի, տնտեսությունում վրա կհասնի կոլապսը, ինչն էլ պարբերաբար դիտարկվում է տնտեսական ճգնաժամի պայմաններում:

Եթե համաձայնվենք ներկայացված դատողությունների հետ, այն կհանգեցնի հետաքրքիր եզրակացություն. վարկավորման ընդլայնման պայմաններում վարկառուի վարկունակության գնահատումը բանկի կամ վարկանիշային գործակալության կողմից իմաստազրկված է: Կարելի է «ստույգ» գնահատել ընկերության հուսալիությունը, որի վարկի ապահովվածությունը փաստորեն նրա արտադրանքի ապագա գնորդի վարկավորումն է, քանի որ վերջիններիս վարկի ստացման հնարավորությունը իր հերթին մեծ մասամբ կախված է ընկերության վարկերի տրամադրման հնարավորությունից, որտեղ նրանք աշխատում են, և այսպես շարունակ: Այստեղից էլ պարզ է, թե ինչու բարձր ներդրումային վարկանիշ ունեցող ընկերությունները կարող են հանկարծ սնանկանալ: Ըստ էության, վարկավորման ընդլայնված այսպիսի համակարգում հնարավոր չէ վստահությամբ գնահատել արտադրանքի ապագա գնորդների վարկունակությունը: Դրա վառ օրինակներից է, ինչպես գրում է հայտնի ամերիկյան բանկային վերլուծաբան Մարկ Մայոն դիտարկելով 2007-2008թթ. ճգնաժամը

«ԱՄՆ-ի 13 հազար բանկերից 12-ը կսնանկանան, եթե կառավարությունը չմիջամտեր»¹:

Տնտեսության մեջ վարկավորման ներկայացված պատկերը իր բնույթով նման է այնպիսի գործիքի ինվեստիցիոն հուսալիությանը, ինչպիսին է CDO,² ինչն էլ իրենից ներկայացնում է ակտիվների **արժեթղթավորման** միջոցով ներգրավված ֆինանսական ռեսուրսներ: Այն ֆինանսական գործիք է, որի բազիսային ակտիվի դերում հանդես է գալիս նրա ապահովվածությունը: CDO-ն թողարկվում է հատուկ ընկերության կողմից՝ SPV ³: Այն բանկից ձեռք է բերում անվանական արժեքով վարկեր և թողարկում CDO: CDO-ի թողարկումը բաժանվում է մի քանի վարկային գծերի, որոնք վաճառվում են վերջնական տերերին: SPV-ի կողմից վարկերի ձեռքբերման գծով ստացված տոկոսները փոխանցվում են CDO վարկային գծերի սեփականատերերին: Վարկային գծերը տարբերվում են վարկավորման ռիսկի մակարդակով և, համապատասխանաբար, ԱԹ-ի գծով վճարումների եկամտաբերությամբ ու աստիճանով: Վարկերի գծով չվճարումների ժամանակ սկզբում տոկոսները չեն վճարվում ցածր վարկանիշով *траншеё*-ների սեփականատերերին:

CDO-ը կարող են միավորել տարաբնույթ վարկերի մեծ քանակություն, ուստի համարվում է, որ բարձր վարկերով վարկային գծերը ներկայացված են հուսալի թղթերով: Սակայն հաճախ **արժեթղթավորման** գործընթացը տվյալ էտապում չի ավարտվում: Թողարկվում են նոր CDO-ներ, որոնք ունենում են CDO-ի բազմապատկիչ: Որպես դրանց ապահովվածություն, հանդես են գալիս արդեն շրջանառվող CDO-ը: Բացի դրանից՝ թողարկվում են նաև սինթետիկ CDO-ներ, որոնց բազիսային ակտիվների դերում հանդես են գալիս այնպիսի գործիքներ, ինչպիսիք են CDS, CLN և TRN ⁴:

Բերված շղթայից պարզ է, որ օրինակ բազմապատկիչ CDO-ի ներդրումային հուսալիության գնահատումը խիստ պայմանական է, քանզի այն փաստացի կախված է վարկերի գծով վճարումներից, որոնք հանդիսանում են սկզբնական CDO-ի ապահովվածությունը: Ավելի բարձր աստիճանի CDO-ն վերաբաշխում է այլ CDO-ի վարկային ռիսկը, որոնք իրենց հերթին վերաբաշխել են այլ ակտիվների գծով վարկային ռիսկերը: Հնարավոր է իրավիճակ, երբ նույն վարկային ռիսկը պայմանականորեն կհայտնվի CDO-ի հերթական թողարկումներում՝ ի հաշիվ տարբեր ԱԹ-ում նմանօրինակ ռիսկերի հատման: Այսպիսով, կառուցվում է վարկային բուրգ, երբ մի CDO-ի գծով չվճարումը իր ետևից տանում է իրար հետ կապված CDO-ի գծով չվճարումների շղթան: Թվում էր, թե դիվերսիֆիկացումը կհանգեցնի ոչ շուկայական ռիսկերի նվազմանը, սակայն հայտնի է, որ այս սկզբունքը աշխատում է միայն նորմալ գործող շուկաներում:

Ճգնաժամի պայմաններում դիվերսիֆիկացիան չի աշխատում: Հերթական տնտեսական ցիկլի սկզբում տոկոսադրույքները ցածր են, իսկ տնտեսական հարաբերությունների մասնակիցները ակտիվորեն վարկեր են վերցնում: Բանկերը հաճույքով են վարկ տրամադրում, քանզի վարկավորման համընդհանուր աճի պայմաններում վարկի տրամադրումը տնային տնտեսություններին և

¹ *St'u Mayo M. Exilio en Wall Street. La lucha de un analista por salvar a los grandes bancos de si mismos Madrid, Ediciones Anaya Multimedia, 2012 P.13*

² Collateralized Debt Obligation-պարտքային գործիքով ապահովված պարտավորություն

³ Special Purpose Vehicle-հատուկ իրավաբանական անձ

⁴ CDS-credit default swap(своп кредитного дефолта, CLN-credit linked note (վարկային վերջնագիր), TRS-total return swap (լրիվ եկամտի սվոպ)

կազմակերպություններին հանգեցնում է համախառն պահանջարկի աճին, և որպես հետևանք, տնտեսական միջավայրի **բարելավմանն** ու ձեռնարկությունների շահութաբերության աճին: Ուստի, տնտեսական ցիկլի տվյալ էտապում մեկ կամ մի քանի վարկավորման շրթանների վնասումը չի կարող ունենալ ճակատագրական հետևանքներ: Եթե այս հարցում շարունակեն համեմատությունները CDO-ի հետ, ապա ինչպես նշում են Դ.Չամբերգը, Մ.Կելլին, Կին Լուն, Ա.Բեյսենբախը, Ա.Կինգը, մինչև նախաձգնաժամային 2007թ. ԱԹ-ի **հետզման** իրավունքից հրաժարման դեպքերի տարեկան տոկոսադրույքը 1-3% է կազմել¹:

Նոր վարկերով ապահովվող պահանջարկի աճն ու ընդհանուր լավատեսությունը հարթում է տնտեսական գործունեության առանձին հետևանքներն ու ձախողումները: Սակայն իրավիճակն արմատապես փոխվում է, երբ տնտեսությունը մոտենում է վերելքի շրջանին: Այս էտապում տնտեսության վարկավորման մակարդակը հասնում է մեծ մասշտաբների: Բացի այդ, վարկային շրթանները իսկական սարդոստայնի բնույթ են ստանում՝ խաչաձև ներթափանցելով ամբողջ տնտեսության օրգանիզմը: Եթե տնային տնտեսությունների վարկավորումն հասնում է այնպիսի մասշտաբների, երբ նրանց համար նոր վարկերի ձեռքբերումը դառնում է անհնար, ապա կարող է առաջանալ ամբողջ վարկային բուրգի կոլլապս, քանզի տնային տնտեսությունները հանկարծ զրկվում են հին պարտավորությունները մարելու համար վարկերի նոր հնարավորություններից: Եթե վարկերով ընդգրկված են բնակչության և գործարար հատվածի մեծ մասը, ապա տնտեսությունը կծածկվի սնանկացումների նոր ալիքով:

Միքայել Պանզները 2007-2008թթ., ճգնաժամին ընդառաջ նշել է. «...ԱՄՆ-ի անձնական խնայողությունների մակարդակը առաջին անգամ Մեծ դեպրեսիայի ժամանակներից ի վեր դարձել է բացասական, տնային տնտեսությունների ընդհանուր պարտքը տնօրինվող եկամուտը գերազանցել է 150%-ով: Ամերիկյան սպառողները ծախսել են ոչ միայն այն, ինչ վաստակել են, այլև չաշխատածի զգալի մասը»²: Նա նաև նշել է. «...ընդահնուր պարտքի հարաբերակցությունը համախառն ներքին արտադրանքին ԱՄՆ-ում 2005թ. աճել է ավելի քան 300%-ով, գերազանցելով ռեկորդը 290%-ով, որը վերջին անգամ դիտարկվել է 1929թ. ֆոնդային շուկայի փլուզումից անմիջապես առաջ»³:

Աշխարհի զարգացած և զարգացող երկրների նախաձգնաժամային և հետձգնաժամային իրավիճակը բնութագրող որոշ ցուցանիշներ ներկայացված են հավելվածներով: Ներկայացված իրավիճակը դիտարկելով տնային տնտեսությունների վարկային բեռի բարձր մակարդակի տեսանկյունից՝ ավստրիական դպրոցի տնտեսագետները այն բացատրում են որպես էժան վարկի հետևանք, որը խթանվել է ԱՄՆ **ՖՈՀ կողմից** ցածր տոկոսադրույքի քաղաքականությամբ: Այստեղից կարելի է եզրահանգել, որ եթե ընդունենք դրամավարկային քաղաքականության իրականացման համապատասխան կանոններ, որի շրջանակում տոկոսադրույքները պետք է համապատասխանեն բնական տոկոսադրույքի մակարդակին, տնտեսությունը կարող է զարգանալ առանց ճգնաժամի, ինչպիսիք դիտարկվեցին 1929թ. կամ 2007թ.: Սակայն խնդիրը

¹ *Sh'u Chambers D. R., Kelly M. A., Lu Q., Biesenbach A., King A., Natsuki K., Sun Q. CDO Squared: The Case of Subprime Mortgages. The Journal of Structured Finance. 2011. Summer P.96-113*

² *Sh'u Panzner M. J. Financial armageddon : Protecting your future from economic collapse. N.Y. Kaplan Publishing 2008 p.*

³ *Sh'u* նույն տնդում էջ 7-8

այն է, որ շուկայական տնտեսության կենտրոնում կանգնած են բանկերն ու ֆինանսական ընկերությունները, իսկ ֆինանսական բնագավառում ինովացիաները նախ և առաջ կախված են վարկային հարաբերություններից: Մյուս կողմից, կապիտալիզմը հասարակարգ է, որը խթանում է տնային տնտեսությունների սպառումը, իսկ ֆինանսական ինովացիաները դրա համար աճող պարզունակությամբ ու մասշտաբներով հնարավորություններ են բացում:

Այսպիսով, ինչպես տեսանք, արևմտյան երկրներում հասարակության զարգացման արդի էտապում տնային տնտեսությունների ավելցուկային վարկավորման խնդիրը ոչ տեսականորեն, ոչ գործնականորեն լուծման ենթակա չէ: Հակառակը, կարելի է պնդել, որ ֆինանսական շուկաներում ինովացիաների զարգացմամբ այն միայն կսրվի: Ուստի այսուհետև ևս համաշխարհային տնտեսությունը որոշակի պարբերականությամբ ֆինանսական կործանումներ կարձանագրի, երբ վարկավորման մակարդակը հասնի սահմանային ինչ որ կետի: Միակ առաջարկությունը թերևս, այն է, որ տնտեսական գիտության զարգացումը, տնտեսական պատմության վերլուծությունն ու գիտակցումը տնտեսական իշխանություններին թույլ տան որոշակիորեն ավելացնել տնտեսական պարբերաշրջանի տևողությունը և բարձրացնել վարկավորման սահմանային մակարդակը, որից հետո կործանումն անխուսափելի է: Կարելի է որոշակիորեն լավարկել ֆինանսական շուկաների գործունեությունը, եթե հաշվի առնենք այն թերությունները, որոնք ի հայտ են եկել նախորդ էտապներում:

Գոյություն ունեն այլ խնդիրներ ևս, որոնք կարելի է կարգավորել կարգավորող մարմինների կողմից համապատասխան փաստաթղթերի ընդունմամբ: Սակայն դժվար է հուսալ, որ ապագայում տնային տնտեսությունները կնվազեցնեն իրենց հակումը փոխառու միջոցներով սպառման աճ ապահովելու առումով, իսկ բանկերն ու ֆինանսական ընկերությունները կսահմանափակեն իրենց ձգտումը ինովացիաների ֆինանսավորման ուղղությամբ, ինչը մասսայական վարկավորման համար մատչելի ճանապարհ է բացում:

Ժամանակակից գիտության շրջանակում տնտեսության ապագա իրավիճակի կանխատեսման տարրական մոտեցումը հանգեցնում է նախորդ էտապների վիճակագրական տվյալների վերլուծությանը: Սակայն հարկ է խուսափել շատ վաղ շրջանի դիտարկումներից, քանզի այն կարող է պատկերը խեղաթյուրել այն առումով, որ արդի տնտեսությունը ձեռք է բերել նոր որակներ: Վերջին 30 տարում առավել լուրջ համաշխարհային տնտեսական ճգնաժամերը դիտարկվել են 1987թ., 1997-1998թթ. և 2007-2008թթ. այսինքն դրանց վրա հասնելու պարբերականությունը կազմել է մոտ 10 տարի: Եթե առավել խորը վերլուծության չենթարկենք, կարելի է գալ հետևյալ հետևության. արդի գլոբալ վարկային մեխանիզմը պետության մակրոտնտեսական քաղաքականության միջոցառումների ճշգրտումով գործում է այնպես, որ համաշխարհային տնտեսության վարկավորման սահմանային մակարդակը վրա է հասնում մոտավորապես նշված պարբերականությամբ: Հետևաբար, եթե կիսենք այս դատողությունների տրամաբանությունը, հերթական ճգնաժամը կարելի է սպասել 2017-2018թթ.:

Գրականության

1. Chambers D. R., Kelly M. A., Lu Q., Biesenbach A., King A., Natsuki K., Sun Q. CDO Squared: The Case of Subprime Mortgages. The Journal of Structured Finance. 2011. Summer P.96-113
2. Doukas J. A., Zhang H. The Performance of NDF Carry Trades: Journal of International Money and Finance.2013 vol. 36.P.172-190
3. Mayo M. Exilio en Wall Street.La lucha de un analista por salvar a los grandes bancos de si mismos Madrid, Ediciones Anaya Multimedia, 2012
4. Panzner M. J. Financial armageddon : Protecting your future from economic collapse. N.Y. Kaplan Publishing 2008
5. Sieron A. Disaggregating the Credit Expansion: The role of changes in Banks' Asset Structure in the Business Cycle. The Quarterly journal of Austrian Economics 2015.Vol 18. N₀3. P.247-271

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., դոցենտ Շ.Շ. Ասրյանը:

Հավելվածներ

Աղյուսակ 1

Հիմնական զարգացած երկրներ. Պետական բյուջեի հաշվեկշիռը և պարտքը¹

(ՀՆԱ, %)

	1993 - 2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2014
Հիմնական զարգացած տնտեսություն ներ										
Փաստացի հաշվեկշիռ	-2.7	-4.7	-4.1	-3.3	-2.3	-2.2	-4.6	-10.1	-9.0	-5.7
ՀՆԱ-ի ճնշվածք	-0.4	-1.1	-0.3	0.0	0.5	0.7	-0.6	-4.6	-4.1	0.0
Կառուցվածք ային հաշվեկշիռ	-2.3	-3.3	-2.9	-2.5	-2.0	-1.7	-3.3	-5.2	-5.4	-3.9
ԱՄՆ										
Փաստացի հաշվեկշիռ	-1.6	-4.8	-4.3	-3.2	-2.2	-2.8	-5.9	-12.5	-10.0	-6.7
ՀՆԱ-ի ճնշվածք	-0.6	-1.2	0.1	0.8	0.9	0.7	-0.8	-4.5	-3.9	0.0
Կառուցվածք ային հաշվեկշիռ	-1.0	-2.4	-2.2	-1.7	-1.4	-1.4	-3.4	-5.1	-5.3	-3.1
Զուտ պարտք	45.9	40.8	42.4	42.7	41.8	42.3	47.9	58.2	66.8	84.9
Համախառն պարտք	64.4	60.2	61.2	61.4	60.9	61.9	70.4	84.8	93.6	108.2
Եվրոյի գոտու երկրներ										
Փաստացի հաշվեկշիռ	-2.9	-3.0	-2.9	-2.5	-1.2	-0.6	-1.8	-6.2	-6.6	-3.5
ՀՆԱ-ի ճնշվածք	-0.2	-0.8	-0.6	-0.6	0.7	1.8	1.2	-2.9	-3.1	0.0
Կառուցվածք ային հաշվեկշիռ	-2.7	-2.8	-2.7	-2.6	-2.0	-1.8	-2.5	-4.0	-4.2	-3.2
Զուտ պարտք	59.4	59.7	60.3	60.5	58.6	56.2	59.0	68.6	74.6	83.7
Համախառն պարտք	68.6	68.7	69.1	69.6	67.8	65.7	69.2	80.0	86.3	95.6
Գերմանիա										
Փաստացի հաշվեկշիռ	-2.4	-4.0	-3.8	-3.3	-1.5	-0.5	-0.1	-4.2	-4.6	0.0
ՀՆԱ-ի ճնշվածք	0.0	-1.7	-1.9	-2.3	-0.4	0.9	1.0	-3.6	-3.3	0.0
Կառուցվածք ային հաշվեկշիռ	-2.0	-3.2	-2.8	-2.3	-1.4	-0.7	-0.6	-2.2	-2.7	0.0
Զուտ պարտք	48.9	57.7	60.0	61.8	60.1	56.9	60.5	70.3	76.2	81.6
Համախառն պարտք	56.1	62.8	64.7	66.4	65.9	63.4	67.1	78.7	84.5	89.3
Ֆրանսիա										
Փաստացի հաշվեկշիռ	-3.5	-4.1	-3.6	-2.9	-2.3	-2.7	-3.4	-7.0	-7.1	-4.7
ՀՆԱ-ի ճնշվածք	-0.2	0.1	0.4	0.3	0.8	1.0	0.0	-3.2	-3.2	0.3
Կառուցվածք ային հաշվեկշիռ	-3.3	-4.0	-3.6	-3.4	-2.6	-3.1	-3.3	-4.0	-4.1	-4.7
Զուտ պարտք	46.6	53.2	55.3	56.7	53.9	54.1	57.8	67.0	72.9	82.9
Համախառն	56.0	62.9	65.0	66.4	63.6	63.8	67.5	76.7	82.6	92.6

¹ World Economic Outlook October 2009, Sustaining the Recovery, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p.183

պարտք										
Իտալիա										
Փաստացի հաշվեկշիռ	-4.7	-3.5	-3.5	-4.3	-3.3	-1.5	-2.7	-5.6	-5.6	-5.3
ՀՆԱ-ի ճնդրվածք	-0.3	-0.3	0.0	-0.4	0.8	1.6	-0.1	-3.4	-3.5	0.0
Կառուցվածք ային հաշվեկշիռ	-4.8	-3.5	-3.8	-4.3	-3.8	-2.4	-2.7	-3.7	-3.8	-5.3
Զուտ պարտք	111.1	102.5	102.0	103.8	104.4	101.3	103.6	112.8	117.0	125.7
Համախառն պարտք	115.0	104.4	103.8	105.8	106.5	103.5	105.7	115.8	120.1	128.5
Ճապոնիա										
Փաստացի հաշվեկշիռ	-5.5	-8.0	-6.2	-5.0	-4.0	-2.5	-5.8	-10.5	-10.2	-8.0
Բազառությամբ սոցիալական անվտանգությունը	-6.8	-8.1	-6.6	-5.4	-4.1	-2.4	-4.8	-9.1	-8.9	-6.6
ՀՆԱ-ի ճնդրվածք	-0.8	-2.2	-1.1	-0.8	-0.4	0.2	-1.7	-7.0	-5.5	-0.4
Կառուցվածք ային հաշվեկշիռ	-5.2	-7.1	-5.7	-4.7	-3.8	-2.6	-5.2	-7.6	-8.0	-8.0
Բազառությամբ սոցիալական անվտանգությունը	-6.8	-7.6	-6.4	-5.2	-4.0	-2.4	-4.5	-7.6	-7.7	-6.6
Զուտ պարտք	42.7	76.5	82.7	84.6	84.3	80.4	88.1	104.6	115.0	143.5
Համախառն պարտք	117.2	167.2	178.1	191.6	191.3	187.7	196.6	218.6	227.0	245.6
Միացյալ Թագավորություն										
Փաստացի հաշվեկշիռ	-2.5	-3.3	-3.3	-3.3	-2.6	-2.6	-5.1	-11.6	-13.2	-6.8
ՀՆԱ-ի ճնդրվածք	-0.3	-0.4	0.1	-0.3	0.0	0.4	-0.1	-4.9	-4.7	0.0
Կառուցվածք ային հաշվեկշիռ	-2.2	-2.8	-3.3	-3.0	-2.6	-2.9	-5.5	-9.0	-9.6	-6.2
Զուտ պարտք	37.6	33.7	35.5	37.3	38.0	38.3	45.6	62.1	75.1	91.8
Համախառն պարտք	43.1	38.5	40.2	42.1	43.2	44.1	52.0	68.7	81.7	98.3
Կանադա										
Փաստացի հաշվեկշիռ	-1.8	-0.1	0.9	1.5	1.6	1.6	0.1	-4.9	-4.1	0.0
ՀՆԱ-ի ճնդրվածք	0.0	-0.7	-0.1	0.5	1.0	1.2	-0.5	-4.6	-4.1	0.0
Կառուցվածք ային հաշվեկշիռ	-1.6	0.3	0.9	1.3	1.1	1.0	0.4	-2.2	-1.6	0.0
Զուտ պարտք	58.7	38.7	35.2	30.6	26.5	23.5	22.2	28.2	31.3	29.4
Համախառն պարտք	92.6	76.6	72.6	71.0	68.0	64.2	62.7	78.2	79.3	68.9

Աղյուսակ 2. Անցումային և զարգացող երկրների տնտեսություններ. Չուտ կապիտալ հոսքեր

[illegible]

կան և արևելյան եվրոպա											
Չուտ մասնավոր կապիտալ հոսքեր	28.8	16.1	16.5	39.0	52.3	103.4	118.8	185.5	154.7	6.4	47.1
Չուտ մասնավոր ուղղակի ներդրումներ	15.6	17.7	13.0	15.1	31.7	40.0	64.4	77.1	69.3	31.8	37.4
Չուտ մասնավոր պորտֆելայի ն հոսքեր	2.3	2.2	0.6	5.6	17.0	18.9	-0.4	-2.9	-9.9	-7.5	4.7
Չուտ այլ մասնավոր կապիտալ հոսքեր	10.9	-3.7	3.0	18.3	3.5	44.5	54.7	111.3	95.3	-18.0	5.0
Չուտ պաշտոնական հոսքեր	1.0	-4.2	-15.5	5.1	9.8	3.1	3.8	-6.4	21.1	34.5	14.7
Փոփոխություններ պահուստներում	-7.2	-1.7	-8.0	-10.8	-12.8	-44.1	-32.7	-36.3	-5.7	-1.9	-0.6
ԱՊՀ											
Չուտ մասնավոր կապիտալ հոսքեր	-5.9	-0.8	-1.6	22.9	1.6	22.9	56.2	124.9	-97.4	-98.5	-17.8
Չուտ մասնավոր ուղղակի ներդրումներ	4.2	4.9	5.1	5.4	13.2	11.7	21.4	28.3	49.1	16.6	25.7
Չուտ մասնավոր պորտֆելայի ն հոսքեր	0.1	0.9	0.6	0.8	-0.2	-3.7	12.7	15.8	-31.3	2.6	6.3
Չուտ այլ մասնավոր կապիտալ հոսքեր	-10.2	-6.6	-7.4	16.7	-11.4	14.9	22.1	80.9	-115.2	-117.8	-49.9
Չուտ պաշտոնական հոսքեր	-12.7	2.6	6.6	-13.2	-6.2	-11.9	-30.2	-1.6	-25.7	20.8	17.8
Փոփոխություններ պահուստներում	-4.8	-14.4	-15.1	-32.7	-54.9	-77.1	-127.8	-168.1	33.2	20.8	-78.3
Անցումային Ասիայի երկրներ											
Չուտ մասնավոր կապիտալ հոսքեր	-12.9	30,5	51,0	81,1	143,1	90,2	54,9	200,6	35,7	-54,3	-113,0
Չուտ մասնավոր	53,0	46,3	60,1	58,6	68,0	93,7	84,7	153,1	139,8	93,4	65,6

ուղղակի ներդրումներ											
Չուտ մասնավոր պորտֆելայի ն հոսքեր	-10,1	-18,5	-12,1	23,9	38,9	15,4	-50,9	63,2	7,9	-85,2	-127,5
Չուտ այլ մասնավոր կապիտալ հոսքեր	-55,8	2,7	2,9	-1,4	36,2	-18,9	21,0	-15,6	-112,1	-62,5	-51,1
Չուտ պաշտոնական հոսքեր	8,9	-2,7	-10,2	-17,8	0,8	0,5	-2,4	6,2	-0,3	3,6	5,4
Փոփոխություններ պահուստներում	-21,2	-58,8	-110,8	-166,8	-258,8	-235,2	-322,6	-629,5	-437,5	-329,3	-344,3
Միջին Կրկեր											
Չուտ մասնավոր կապիտալ հոսքեր	3,7	-8,1	-19,7	9,9	-3,7	2,0	-11,6	43,3	-58,9	48,0	25,8
Չուտ մասնավոր ուղղակի ներդրումներ	4,8	9,4	8,5	15,4	12,7	29,3	34,1	34,7	34,5	39,5	38,5
Չուտ մասնավոր պորտֆելայի ն հոսքեր	-5,4	-11,5	-18,3	-15,5	-24,3	-9,0	-22,5	-36,1	-10,7	1,5	-7,4
Չուտ այլ մասնավոր կապիտալ հոսքեր	4,3	-6,0	-9,8	10,0	7,8	-18,4	-23,2	44,7	-82,8	7,0	-5,3
Չուտ պաշտոնական հոսքեր	-11,4	-12,4	-7,8	-30,7	-43,8	-42,2	-74,4	-73,4	-110,2	-51,6	-76,1
Փոփոխություններ պահուստներում	-3,7	-5,9	-15,0	-47,8	-44,9	-108,5	-131,3	-199,3	-161,9	-44,4	-105,4
Արևմտյան աշխարհում ա											
Չուտ մասնավոր կապիտալ հոսքեր	57,9	38,5	6,4	20,9	15,7	50,3	36,9	112,2	67,0	24,8	40,4
Չուտ մասնավոր ուղղակի ներդրումներ	66,6	69,3	51,3	38,1	50,1	53,7	29,5	86,6	90,4	71,1	70,1
Չուտ մասնավոր պորտֆելայի ն հոսքեր	8,0	-13,8	-15,2	-12,5	-24,3	5,1	11,5	38,4	-20,6	-16,5	4,9
Չուտ այլ մասնավոր	-16,7	-16,9	-29,7	-4,8	-10,2	-8,5	-4,1	-12,8	-2,9	-29,7	-34,6

կապիտալ հոսքեր											
Զուտ պաշտոնական հոսքեր	8,6	27,7	16,4	3,5	-9,2	-41,1	-43,6	-0,9	3,6	27,5	7,6
Փոփոխություններ պահուստներում	2,5	1,8	1,5	-33,6	-22,2	-33,5	-50,3	-133,1	-51,5	-19,3	-18,1
Դասակարգումներ											
Վառելիք արտահանող երկրներ											
Զուտ մասնավոր կապիտալ հոսքեր	-6,8	-13,9	-30,0	21,8	-9,0	2,8	8,1	117,9	-223,1	-88,1	-22,3
Այլ երկրներ											
Զուտ մասնավոր կապիտալ հոսքեր	84,7	92,1	82,9	155,7	235,5	282,9	253,9	578,7	352,7	35,6	50,6

Աղյուսակ 3.

Կապիտալի շուկայի չափի վերաբերյալ ցուցանիշներ 2008¹

(մլրդ ԱՄՆ դոլարներով մինչև իրավիճակների փոփոխությունը)

	ՀՆԱ	Ընդհանուր պահուստներ	Արժեթղթերի շուկայի կապիտալիզացիա	պարտքի պարտատոմսներ			Բանկերի ակտիվներ	պարտատոմսներ, բաժնետոմսներ և բանկերի ակտիվներ	պարտատոմսներ, բաժնետոմսներ և բանկերի ակտիվներ (ՀՆԱ%)
				Հանրային	Մասնավոր	Ընդամենը			
Աշխարհ	60,917.5	6,787.8	33,513.1	31,665.9	51,863.7	83,529.6	97,381.4	214,424.0	352.0
Եվրոպական Միություն	17,037.4	278.4	7,262.8	8,845.3	20,291.7	29,137.0	46,802.4	83,202.1	488.3

¹ Global Financial Stability Report October 2009, Navigating the Financial Challenges Ahead, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p.191

Եվրոյի գրտու երկրներ	13,538.4	167.7	4,984.7	7,781.1	16,012.2	23,793.3	32,510.8	61,288.8	452.7
Հյուսիսային Ամերիկա	15,941.0	110.4	12,771.1	8,642.9	23,521.3	32,164.2	16,528.7	61,464.0	385.6
Կանադա	1,499.6	43.8	1,033.4	750.9	755.7	1,506.6	2,532.2	5,072.2	338.2
ԱՄՆ	14,441.4	66.6	11,737.6	7,892.1	22,765.6	30,657.7	13,996.5	56,391.8	390.5
Հաարնիա	4,910.7	1,009.4	3,209.0	9,116.3	2,362.1	11,478.4	10,027.0	24,714.4	503.3
Թվարկված երկրներ									
ԵՄ երկրներ									
Ավստրիա	414.8	8.9	76.3	216.4	480.1	696.5	719.5	1,492.4	359.8
Բնիգիա	506.2	9.3	167.4	501.0	612.2	1,113.2	1,908.8	3,189.5	630.1
Դանիա	340.0	40.5	140.0	100.4	631.4	731.8	1,333.5	2,205.3	648.6

Ֆինանսիա	271.9	7.0	157.5	119.0	123.5	242.5	410.5	810.5	298.1
Ֆրանսիա	2,867.0	33.6	1,490.6	1,481.6	3,052.8	4,534.3	10,469.0	16,494.0	575.3
Գերմանիա	3,673.1	43.1	1,110.6	1,646.7	3,842.9	5,489.6	6,540.9	13,141.0	357.8
Հունաստան	357.5	0.3	90.9	478.6	162.2	640.9	556.3	1,288.1	360.3
Իռլանդիա	267.6	0.9	49.5	106.5	488.8	595.3	1,360.0	2,004.8	749.3
Իտալիա	2,313.9	37.1	522.1	1,998.7	2,495.2	4,493.9	3,295.3	8,311.3	359.2
Լյուքսեմբուրգ	55.0	0.3	66.6	0.0	107.1	107.1	776.4	950.1	1,728.3
Նիդերլանդներ	877.0	11.5	206.6	402.8	1,655.1	2,057.9	3,044.0	5,308.5	605.3
Պորտուգալիա	244.6	1.3	74.8	188.9	292.7	481.6	277.2	833.5	340.7
Իսպանիա	1.602.0	12.4	948.4	634.0	2,692.4	3,326.4	2,954.5	7,229.2	451.3

Շվեդիա	479.0	25.9	270.0	128.6	512.8	641.4	616.5	1,527.9	319.0
Միացյալ Թագավոր- ություն	2,680.0	44.3	1,868.2	835.1	3,135.2	3,970.3	12,341.6	18,180.1	678.4
Զարգացող երկրներ	20,605.9	4,286.8	8,558.9	4,712.2	3,103.2	7,815.4	18,020.0	34,394.2	166.9
Այդ թվում՝									
Ասիա	8,902.0	2,356.3	5,326.7	2,735.7	2,097.2	4,832.9	11,708.4	21,868.0	245.7
Լատինա- կան Ամերիկա	4,209.0	497.2	1,456.6	1,153.8	654.3	1,808.1	2,189.8	5,454.4	129.6
Միջին Արևելք	2,087.0	320.8	689.6	44.8	76.3	121.1	1,363.6	2,174.2	104.2
Աֆրիկա	1,282.4	332.9	444.5	72.7	82.3	155.0	693.1	1,292.6	100.8
Եվրոպա	4,125.5	779.6	641.6	705.1	193.2	898.3	2,065.2	3,605.1	87.4

Աղյուսակ 4.

Համաշխարհային միջերկրային դերիվատիվների (արժեթղթերի ածանցյալների) շուկաներ.

Ենթադրյալ գումարների և համախառն շուկաներում կնքվող գործարքների ծավալը¹

(մլրդ ԱՄՆ դոլար)

	Ենթադրյալ գումարների շուկայի մեծություն/ծավալը/							Համախառն շուկայի մեծություն /ծավալը/		
	Դեկտեմբերի վերջ	Հունիսի վերջ	Դեկտեմբերի վերջ	Հունիսի վերջ	Դեկտեմբերի վերջ	Դեկտեմբերի վերջ	Հունիսի վերջ	Դեկտեմբերի վերջ	Հունիսի վերջ	Դեկտեմբերի վերջ
	2006	2007	2007	2008	2008	2006	2007	2007	2008	2008
Ընդամենը	418,131	516,407	595,341	683,726	591,963	9,791	11,140	15,813	20,353	33,889
Լծրաձևային կուրս	40,271	48,645	56,238	62,983	49,753	1,266	1,345	1,807	2,262	3,917
Փոխարժեքների փոխանցումներ	19,882	24,530	29,144	31,966	24,562	469	492	675	802	1,732
Արժույթային սվոփներ	10,792	12,312	14,347	16,307	14,725	601	619	817	1,071	1,588
Օպցիոններ	9,597	11,804	12,748	14,710	10,466	196	235	315	388	597
Տոկոսադրույք	291,581	347,312	393,138	458,304	418,678	4,826	6,063	7,177	9,263	18,420
Ֆյուչարային համաձայնագրեր	18,668	22,809	26,599	39,370	39,262	32	43	41	88	153

¹ Global Financial Stability Report October 2009, Navigating the Financial Challenges Ahead, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p.192

Սլոփներ	229,693	272,216	309,588	356,772	328,114	4,163	5,321	6,183	8,056	16,573
Օպերիաններ	43,221	52,288	56,951	62,162	51,301	631	700	953	1,120	1,694
Բաժնետոմսերով կապված	7,488	8,590	8,469	10,177	6,494	853	1,116	1,142	1,146	1,113
Ֆորվարդներ և սլոփներ	1,767	2,470	2,233	2,657	1,632	166	240	239	283	338
Օպերիաններ	5,720	6,119	6,236	7,520	4,862	686	876	903	863	775
Ապրանքային	7,115	7,567	8,455	13,229	4,427	667	636	1,899	2,209	955
Ոսկի	640	426	595	649	395	56	47	70	68	65
Այլ	6,475	7,141	7,861	12,580	4,032	611	589	1,829	2,142	890
Ֆորվարդներ և սլոփներ	2,813	3,447	5,085	7,561	2,471					
Օպերիաններ	3,663	3,694	2,776	5,019	1,561					

Վարկային սկզբների սկզբառումներ	28,650	42,581	57,894	57,325	41,868	470	721	2,002	3,172	5,652
Նույնանուն գործիքներ	17,879	24,239	32,246	33,334	25,730	278	406	1,143	1,889	3,695
Բազմանուն գործիքներ	10,771	18,341	25,648	23,991	16,138	192	315	859	1,283	1,957
Երկարաշխատ տեղաբաշխված	43,026	61,713	71,146	81,708	70,742	1,709	1,259	1,788	2,301	3,831
Թվարկված տարրեր										
Համախառն վարկային նույնանուն	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	տ/չ	2,036	2,672	3,256	3,859	5,004
Նվազանակառավար ստորակառավար առնչություններ	69,390	95,091	79,078	82,008	57,860					

Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕННЫЕ ЗАПИСКИ

Арцахского государственного университета

Artsakh State University's

PROCEEDINGS

1/2018



Հանձնված է տպագրության՝ 01.10.2018թ.:

Ստորագրված է տպագրության՝ 14.12.2018թ.:

Ծավալը 16 տպ. մամուլ: Տպաքանակ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14

E-mail: rector@asu.am

ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,

կայք: www.asu.am – Գիտական Հրապարակումներ – Գիտական տեղեկագիր

Основатель – Арцахский государственный университет
г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5,

тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14

Издательство АрГУ, e-mail: printery.asu@mail.ru,

сайт: www.asu.am – Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert

Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14

ASU Publishing house, e-mail: printery.asu@mail.ru,

website: www.asu.am – Scientific publications – Proceedings.

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Բումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Tumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am